

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՏԴ 941(479.25):341
ԳՄԴ 63.3(22)52+97.9
Հ 282

Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական փաստաթղթերում

Ժողովածու

Կազմող՝ Վ. Քոչարյան

Երևան
Հեղինակային հրատարակություն
2014

Ժողովածուն պատրաստված և հրատարակված է
ՀՀ սփյուռքի նախարարության պատվերով

Հ 282 Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական փաստաթղթե-
րում/ Կազմ.՝ Վ. Քոչարյան.– Երևան: 2014, 208 էջ:

Ժողովածուի մեջ ամփոփված են Հայոց ցեղասպանությանը վերաբերվող հիմնական միջազգային իրավական փաստաթղթերը, որոնք վերաբերվում են ցեղասպանության հասկացությանը, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին, խնդրին առնչվող միջազգային դատական ատյանների որոշումները: Փաստաթղթերի մեծ մասը ներկայացվում է հայերեն լեզվով առաջին անգամ:

Նախատեսված է իրավագետների, պատմաբանների, միջազգայնագետների, ինչպես նաև Հայոց ցեղասպանության իրավական հիմնահարցերով հետաքրքրված հանրության լայն շրջանակների համար:

ՀՏԴ 941(479.25):341
ԳՄԴ 63.3(22)52+97.9

ISBN 978-9939-0-1039-7

© Վ. Քոչարյան, 2014

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 4

Մաս 1

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ 8

Մաս 2

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱԶՈՒՄԸ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ..... 19

Մաս 3

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ
ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ 55

Հայոց ցեղասպանության միջազգային իրավական հիմնախնդիրների ուսումնասիրությունը ենթադրում է համապատասխան նորմատիվ հիմքի և տարիների ընդացքում տարբեր պետությունների և միջազգային կառույցների ընդունած փաստաթղթերի պատշաճ ուսումնասիրություն: Հայոց ցեղասպանության հետազոտմանը նվիրված բազմաթիվ աշխատությունները և հրապարակումները, որպես կանոն պատմագիտական կամ քաղաքագիտական բնույթի են: Սույն ժողովածուն խնդրին մոտենում է զուտ միջազգային իրավական տեսանկյունից և առաջին անգամ հայ ենթերցողին է ներկայացնում մի շարք միջազգային իրավական փաստաթղթեր¹, որոնք կարելի էր վերլուծել են հայերի ցեղասպանության իրավական որակման, միջազգային ճանաչման և ոճրագործության համար պատասխանատվության առումով:

Ժողովածուի մեջ ընդգրկված փաստաթղթերը բաժանված են երեք հիմնական խմբի՝ միջազգային իրավական ակտեր, պետությունների և միջազգային կառույցների կողմից ընդունված փաստաթղթերը:

Միջազգային իրավական ակտերը բաժնում ներառված են ցեղասպանություն միջազգային հանցագործության հանցակազմը և դրա կատարման համար պատասխանատվություն սահմանող հիմնարար միջազգային ակտը՝ Ցեղասպանություն հանցագործությունը կանխարգելելու և պաժեյու մասին 1948 թվականի կոնվենցիան: Հայոց ցեղասպանության միջազգային իրավական հիմնախնդիրների ենթատեքստում այս միջազգային նորմատիվ ակտը հատկապես կարևորվում է նրանով, որ հենց այս կոնվենցիաի նորմերով է ամրագրվում ցեղասպանության միջազգայնորեն չանաչված սահմանումը, հստակեցվում և իրավական որոշակիություն է տրվում այդ հասկացությանը: Ավելորդ չի լինի նաև նկատել, որ այդ սահմանումը և ցեղասպանություն որակվող համապատասխան գործողությունները կարելի է դիտարկել որպես XX դարի սկզբում հայերի հանդեպ կատարվածի իրավաբանորեն ձշգրիտ նկարագրություն:

1948 թվականի կոնվենցիայի առնչությամբ կարող է օրինաչափ հարց առաջանալ՝ կապված այդ փաստաթղթի ընդունման ժամանակի և հայերի ցեղասպանության նկատմամբ դրա կիրառելիության վերա-

¹ Ժողովածուի մեջ ներկայացված է փաստաթղթերի ոչ պաշտոնական թարգմանությունները:

բերյալ: Հարցի օրինաչափությունը պայմանավորված է նրանով, որ, ինչպես հայտնի է, իրավական ակտերը, և հատկապես պատասխանատվություն սահմանող ակտերը հետադարձ ուժ չունեն: Այսպիսով 1948 թվականին ընդունված կոնվենցիան ինչքանով է կիրառելի 1915 և հետայդու իրադարձությունների նկատմամբ: Այս հարցադրման պատասխանը միանշանակ է. եթե ոչ ինքը կոնվենցիան՝ որպես իրավական ակտ, ապա այնտեղ ամրագրված նորմերը՝ որպես այդպիսիք, այդ թվում ցեղասպանության հանցագործության հանցակազմը ամրագրող դրույթները լիովին կիրառելի են հայերի ցեղասպանության համար: Իրողությունը այն է, որ միջազգային իրավունքի նորմերը ամրագրվում են երկու հիմնական եղանակով՝ միջազգային սովորույթի և միջազգային պայմանագրի տեսքով: Ընդ որում, միջազգային իրավական նորմերը ձևավորվում են որպես սովորույթային նորմ, ապա հետագայում՝ հաճախ զգալի ժամանակ անց, դրանք կարող են կոդիֆիկացիայի ենթարկվել (հնարավոր է նաև, որ դա ընդհանրապես տեղի չունենա) միջազգային պայմանագրի տեսքով: Որպես ապացույց այն բանի, որ ցեղասպանությունը արգելող և այն միջազգային հանցագործություն ճանաչող սովորույթային նորմերը գոյություն են ունեցել մինչև 1948 թվականը՝ մինչ նշված կոնվենցիայի ընդունումը, կարելի է մատնանշել Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո տեղի ունեցած միջազգային դատավարությունների շարքը, որոնք հայտնի են որպես Նյուրբերգյան տրիբունալ, և որոնց ընթացքում ոճրագործները պատասխանատվության ենթարկվեցին մարդկության դեմ կատարած հանձագործությունների, ցեղասպանության համար:

Պատահական չէ նաև այն, որ «մարդկության դեմ հանցագործություն» հասկացությունը պատմության մեջ առաջին անգամ կիրառվել է հենց Հայոց ցեղասպանության նկատմամբ Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի՝ 1915 թվականի մայիսի 15-ի համատեղ հռչակագրում, որը նույնպես ներկայացված է ժողովածուի առաջին մասում: Այս փաստաթղթի հիմնարար միջազգային իրավական նշանակությունը պայմանավորված է նրանով, որ այն կարելի է դիտել որպես opinio juris-ի դրսևորում, ինչը, ինչպես հայտնի է, կարևոր պայման է միջազգային սովորույթային նորմի առկայությունը հաստատելու գործում:

Ցեղասպանության հանցագործությանը վերաբերվող ևս մի միջազգային իրավական ակտ՝ Պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետ չկիրառելու մասին 1968 թվականի կոնվենցիան,

տեղ է գտել ժողովածուի առաջին մասում: Չնայած կոնվենցիայի հեղինակները այն նախապատրաստելիս հիմնական շեշտը դրել են Երկրորդ աշխարհամարտի իրադարձությունների վրա, սակայն ընդհանուր իրավական մոտեցումները կարող են կարևորվել նաև Հայոց ցեղասպանության ենթատեքստում:

Ժողովածուի երկրորդ մասը նվիրված է առանձին պետությունների կողմից ընդունված բազմաբնույթ փաստաթղթերին, որոնք վերաբերում են Հայոց ցեղասպանության փաստի ճանաչելուն: Ներկայացված յուրաքանչյուր փաստաթուղթ յուրօրինակ դրվագ է վերջին տասնամյակներում ամբողջ աշխարհում հանուն պատմական ճշմարտության և արդարության ընթացող պայքարի: Տարբեր երկրներ ներկայացնող խորհրդարանների ընդունած որոշումները պատասխան են Թուրքիայի մերժողական դիրքորոշմանը և ապացույց այն բանի, որ, չնայած վերջինիս կողմից կիրառվող քաղաքական, տնտեսական և քարոզչական ճնշումներին, պատմական ճշմարտությունը և իրավական հստակ գնահատականը անշեղորեն իրենց ուղին հարթում են անգամ real politik դավանող ժամանակակից պրագմատիկ աշխարհում:

Ժողովածուի մեջ ներկայացված տարբեր պետությունների ընդունած փաստաթղթերը բազմաբնույթ են, սակայն նրանց միավորում են պատմական իրողությունների ճանաչումը և դրանց իրավական գնահատականի ամրագրումը: Որոշ դեպքերում օրենսդիրները (օրինակ՝ Գերմանիա, Շվեդիա) ներկայացրել են նաև բավականին ծավալուն և հետաքրքիր վերլուծություն, ինչը արժեքավորում է այդ փաստաթղթերը ինչպես իրավական, այնպես էլ փաստագրական դիտանկյունից:

Ժողովածուի երրորդ մասում՝ «Հայոց ցեղասպանությունը միջազգային կառույցների որոշումներում» տեղ են գտել ինչպես միջազգային միջպետական կառույցների (ՄԱԿ, Եվրոպական խորհրդարան, Եվրոպայի խորհուրդ, ՄԻԵԴ) ընդունած ակտերը, այնպես էլ միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների շրջանակում ընդունված փաստաթղթերը: Եթե միջպետական կառույցների ընդունած որոշումները կարևորվում են միջազգային իրավական նշանակությամբ, ապա միջազգային ոչ կառավարական կառույցների դիրքորոշումները պարունակում են առանձին պետությունների քաղաքական շահերից անկախ և անաչառ հետազոտություններ և եզրահանգումներ:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից «Փերինչեքն ընդդեմ Շվեդի»

ցարիայի» գործով 2013 թվականին ընդունված՝ հայերի ցեղասպանությանը ուղղակիորեն առնչվող միջազգային դատական ատյանի որոշումը: Չնայած դատական կազմը ոչ միանշանակ որոշում է կայացրել, որը, անկասկած, ենթակա է վերլուծության և քննադատության, նշված փաստաթղթի ուսումնասիրությունը կարևորվում է ոչ միայն այս դատական որոշման վերանայման գործընթացը նախապատրաստելու, այլև ժամանակակից պայմաններում հայերի ցեղասպանության միջազգային ճանաչման ընդհանուր գործընթացի խնդիրները և խոչընդոտները ընկալելու ու դիմակայելու տեսանկյունից:

Բացի դրանից՝ առանձնատուկ հետաքրքրություն է ներկայացնում որոշման բաղկացուցիչ մաս համարվող դատավորներ Վուցինիչի և դե Ալբյուքերքի հատուկ կարծիքը, որում նրանք մերժելով դատական կազմի մեծամասնության մոտեցումները, հիմնավորումում են Հայոց ցեղասպանության իրողությունը և միջազգային ճանաչումը, ընդգծում են դրա մերժումը քրեականացնելու անհրաժեշտությունը: Հատուկ կարծիքում ամրագրված իրավական դիրքորոշումները կարող են արժեքավոր դեր խաղալ Հայոց ցեղասպանության վերաբերյալ միջազգային իրավական մոտեցումների հիմնավորման առումով: Այս ենթատեքստում պետք է ի նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ միջազգային իրավական պրակտիկայում հայտնի են դեպքեր, երբ առանձին դատավորների հատուկ կարծիքները ավելի շատ են մեջբերվում տեսական աղբյուրներում և ավելի մեծ ազդեցություն են թողնում պրակտիկայի վրա, քան միջազգային դատական ատյանի բուն որոշումը, որին անհամաձայնություն են հայտնել հատուկ կարծիքի հեղինակները:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը ինքնանպատակ չի կարող լինել, սակայն դա անհրաժեշտ պայման է Հայոց ցեղասպանության համար պատասխանատվության և դրա հետևանքների վերացման միջազգային իրավական միասնական համադրույթ (կոնցեպցիա) մշակելու համար, ինչը իրատեսություն, հետևողականություն և ջանքերի համակարգում պահանջող առաջնահերթ քաղաքական և իրավական խնդիր է:

Վիզեն Քոչարյան

**ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի վարիչ
ՀՀ իրավաբանների ասոցիացիայի փողնախազահ
ԵՄ ռասիզմի և անհանդուրժողականության
դեմ պայքարի հանձնաժողովի անդամ**

Մաս 1

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

ՖՐԱՆՍԻԱՅԻ, ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ և ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՏԵՂ ՀՈՉԱԿԱԳԻՐԸ

1915 թվական, մայիսի 15

Գրեթե մեկ ամիս է, ինչ Հայաստանում քրդերը և թուրքերը օսմանյան իշխանությունների թողտվությամբ և հաճախ օժանդակությամբ, զանգվածային ջարդերի են ենթարկում հայերին: Նման ջարդեր են տեղի ունեցել ապրիլին (նոր տոմարով) Էրզրումում, Ակնում, Բիթլիսում, Մուշում, Սասունում, Զեյթունում և ողջ Կիլիկիայում: Վանին հարակից շուրջ հարյուր գյուղերի բնակիչներ սպանվել են: Այդ քաղաքում հայկական թաղամասերը շրջափակված են և հարձակումների են ենթարկվում քրդերի կողմից: Միևնույն ժամանակ կոստանդնուպոլսյան Օսմանյան կառավարությունը հետապնդումների է ենթարկում խաղաղ հայ բնակչությանը:

Հաշվի առնելով մարդկության և քաղաքակրթության դեմ ուղղված Թուրքիայի այդ նոր հանցագործությունները՝ Դաշնակից կառավարությունները հրապարակավ հայտարարում են Բարձր դռանը, որ իրենք պատասխանատվության են ենթարկելու օսմանյան կառավարության բոլոր անդամներին և այդ ջարդերում ներգրավված նրանց գործակալներին:

**ԿՈՆՎԵՆՏԻԱ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՆԽԱՐԳԵԼԵԼՈՒ ԵՎ ՊԱՏԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

9 դեկտեմբերի 1948 թ.

Պայմանավորվող կողմերը, հաշվի առնելով, որ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեան իր 1946թ. դեկտեմբերի 11-ի 96 (1) բանաձևում հայտարարել է, որ միջազգային իրավունքի համաձայն՝ ցեղասպանությունը հանցագործություն է և հակասում է Միավորված ազգերի կազմակերպության ոգուն ու նպատակներին, և որ քաղաքակիրթ աշխարհը դատապարտում է այն, ընդունելով, որ պատմության թափառ ժամանակաշրջաններում ցեղասպանությունը մեծ կորուստներ է պատճառել մարդկությանը, և համոզված լինելով, որ մարդկությունը այդ նողկալի արհավիրքից ազատելու համար անհրաժեշտ է միջազգային համագործակցություն,

սույնով համաձայնում են ներքոհիշյալի շուրջ.

Հոդված 1

Պայմանավորվող կողմերը հաստատում են, որ ցեղասպանությունը, անկախ նրանից՝ կատարվում է խաղաղ, թե պատերազմական պայմաններում, ըստ միջազգային իրավունքի, հանցագործություն է, որը նրանք պարտավորվում են կանխարգելել և պատժել այն կատարելու համար:

Հոդված 2

Սույն Կոնվենցիայում ցեղասպանություն նշանակում է հետևյալ գործողություններից ցանկացածը՝ կատարված ազգային, էթնիկական, ցեղային կամ կրոնական որևէ խմբի՝ որպես այդպիսին, լրիվ կամ մասնակի ոչնչացման մտադրությամբ.

a) այդ խմբի անդամների սպանությունը,

b) այդ խմբի անդամներին մարմնական լուրջ վնասվածքներ կամ մտավոր վնաս պատճառելը,

c) որևէ խմբի համար կյանքի այնպիսի պայմանների միտումնավոր ստեղծումը, որոնք ուղղված են նրա լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը,

d) այդ խմբի միջավայրում մանկածնությունը կանխելուն միտված միջոցների իրականացումը,

e) երեխաների խմբի փոխանցումը մարդկային մի խմբից մյուսին:

Հոդված 3

Պատժելի են հետևյալ արարքները՝

a) ցեղասպանությունը,

b) ցեղասպանություն կատարելու նպատակով դավադրությունը,

c) ցեղասպանության ուղղակի և հրապարակային հրահրումը,

d) ցեղասպանություն կատարելու փորձը,

e) հանցակցությունը ցեղասպանության կատարման մեջ:

Հոդված 4

Ցեղասպանություն կամ 3-րդ հոդվածում թվարկված որևէ արարք կատարած անձինք ենթակա են պատժի՝ անկախ այն բանից, նրանք սահմանադրությամբ պատասխանատու ղեկավարներ են, թե պաշտոնատար կամ մասնավոր անձինք:

Հոդված 5

Պայմանավորվող կողմերը պարտավորվում են սույն Կոնվենցիայի դրույթները գործողության մեջ դնելու համար ընդունել իրենց սահմանադրություններին համապատասխան անհրաժեշտ օրենսդրություն և, մասնավորապես, սահմանել արդյունավետ պատժամիջոցներ ցեղասպանության մեջ կամ 3-րդ հոդվածում նշված մյուս արարքներից որևէ մեկում մեղավոր անձանց համար:

Հոդված 6

Այն անձինք, որոնք մեղադրվում են ցեղասպանություն կամ 3-րդ հոդվածում թվարկված որևէ արարք կատարելու մեջ, դատվում են այն երկրի իրավասու դատարանի կողմից, որի տարածքում կատարվել է այդ հանցագործությունը, կամ այնպիսի միջազգային քրեական դատարանի կողմից, որը կարող է իրավագործություն ունենալ սույն Կոնվենցիայի՝ այդ իրավագործությունը ճանաչած կողմերի նկատմամբ:

Հոդված 7

Ցեղասպանությունը և 3-րդ հոդվածում թվարկված մյուս արարքները հանձնման հարցը լուծելու համար չեն դիտվում որպես քաղաքական հանցագործություններ:

Նման դեպքերում Պայմանավորվող կողմերը պարտավորվում են հանձնումն իրականացնել իրենց օրենսդրության և գործող պայմանագրերի համաձայն:

Հոդված 8

Յուրաքանչյուր պայմանավորվող կողմ կարող է դիմել Միավորված ազգերի կազմակերպության իրավասու մարմիններին՝ Միավոր-

ված ազգերի կազմակերպության կանոնադրությանը համապատասխան ձեռնարկելու այնպիսի գործողություններ, որոնք նրանք անհրաժեշտ են համարում ցեղասպանությունը և 3-րդ հոդվածում թվարկված որևէ այլ արարք կանխարգելելու և ճնշելու համար:

Հոդված 9

Պայմանավորվող կողմերի միջև վեճերը՝ կապված սույն Կոնվենցիայի մեկնաբանման, կիրառման և կատարման հետ, ներառյալ նաև ցեղասպանություն կամ 3-րդ հոդվածում թվարկված որևէ արարք կատարելու համար այս կամ այն պետության պատասխանատվության վերաբերյալ վեճերը, հանձնվում են Միջազգային դատարանի քննարկմանը՝ վեճի կողմերից յուրաքանչյուրի պահանջով:

Հոդված 10

Սույն Կոնվենցիան, որի անգլերեն, իսպաներեն, չինարեն, ռուսերեն և ֆրանսերեն տեքստերը հավասարազոր են, թվագրված է 1948թ. դեկտեմբերի 9-ին:

Հոդված 11

Սույն Կոնվենցիան բաց է ստորագրման մինչև 1949 թ. դեկտեմբերի 31-ը Միավորված ազգերի կազմակերպության ցանկացած անդամի և կազմակերպության անդամ չհանդիսացող ցանկացած պետության համար, որն ստացել է Գլխավոր ասամբլեայի հրավերը՝ ստորագրելու Կոնվենցիան:

Սույն Կոնվենցիան ենթակա է վավերացման, և վավերագրերն ի պահ են հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

1950 թ. հունվարի 1-ից սկսած՝ սույն Կոնվենցիային կարող են միանալ Միավորված ազգերի կազմակերպության ցանկացած անդամ և այդ կազմակերպության անդամ չհանդիսացող ցանկացած պետություն, որոնք ստացել են վերոհիշյալ հրավերը: Միանալու մասին փաստաթղթերն ի պահ են հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

Հոդված 12

Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը կարող է ցանկացած ժամանակ, Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ծանուցելու միջոցով, սույն Կոնվենցիայի կիրառումը տարածել այն ամբողջ կամ ցանկացած տարածքի նկատմամբ, որոնց արտաքին հարաբերությունների համար ինքը պատասխանատու է:

Հոդված 13

Այն օրը, երբ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ի պահ են հանձնվում վավերացման և միանալու մասին առաջին քսան փաստաթղթերը, Գլխավոր քարտուղարը պատրաստում է արձանագրություն, որի պատճեններն ուղարկում է Միավորված ազգերի կազմակերպության թափանցանքի անդամ պետություններին և անդամ չհանդիսացող թափանցանքի անդամ պետություններին, որոնք նախատեսված են 11-րդ հոդվածում:

Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում իննսուներորդ օրը՝ հաշված վավերացման կամ միանալու քսաներորդ փաստաթուղթը ի պահ հանձնելու օրվանից:

Դրանից հետո կատարված ցանկացած վավերացում կամ միանալու ուժի մեջ է մտնում վավերացման և միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո՝ իննսուներորդ օրը:

Հոդված 14

Սույն Կոնվենցիան ուժի մեջ է 10 տարի՝ սկսած նրա ուժի մեջ մտնելու օրվանից:

Հաջորդ հնգամյակներում Կոնվենցիան ուժի մեջ է մնում այն պայմանավորվող կողմերի համար, որոնք այն չեղյալ չեն հայտարարում նրա ուժի մեջ լինելու ընթացիկ ժամկետը լրանալուց առնվազն վեց ամիս առաջ: Չեղյալ հայտարարելը կատարվում է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ուղղված գրավոր ծանուցման միջոցով:

Հոդված 15

Եթե չեղյալ հայտարարելու հետևանքով սույն Կոնվենցիայի մասնակիցների թիվը տասնվեցից նվազի, Կոնվենցիան դադարեցնում է իր գործողությունը վերջին չեղյալ հայտարարումը ուժի մեջ մտնելու օրը:

Հոդված 16

Յուրաքանչյուր պայմանավորվող կողմ կարող է ցանկացած ժամանակ ներկայացնել սույն Կոնվենցիան վերանայելու պահանջ՝ Գլխավոր քարտուղարին գրավոր ծանուցելու միջոցով:

Գլխավոր ասամբլեան որոշում է, թե ինչ միջոցներ պետք է ձեռնարկել նման պահանջի առնչությամբ, եթե դրանց կիրառումն անհրաժեշտ է համարում:

Հոդված 17

Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը

Միավորված ազգերի կազմակերպության թափանցիկության անդամներին և Կազմակերպության անդամ չհանդիսացող այն պետություններին, որոնք նախատեսված են 11-րդ հոդվածում, ծանուցում է.

ա) 11-րդ հոդվածին համապատասխան ստացված ստորագրման, վավերացման և միանալու մասին փաստաթղթերի վերաբերյալ,

բ) 12-րդ հոդվածին համապատասխան ստացված թափանցիկության մասին,

գ) սույն Կոնվենցիայի՝ 13-րդ հոդվածին համապատասխան ուժի մեջ մտնելու մասին,

դ) 14-րդ հոդվածին համապատասխան ստացված չեղյալ հայտարարումների մասին,

ե) Կոնվենցիան 15-րդ հոդվածին համապատասխան չեղյալ հայտարարելու մասին,

զ) 16-րդ հոդվածին համապատասխան ստացված ծանուցումների մասին:

Հոդված 18

Սույն Կոնվենցիայի բնագիրն ի պահ է հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության արխիվ: Կոնվենցիայի վավերացված պատճեններն ուղարկվում են Միավորված ազգերի կազմակերպության անդամներին և Կազմակերպության անդամ չհանդիսացող այն պետություններին, որոնք նախատեսված են 11-րդ հոդվածով:

Հոդված 19

Սույն Կոնվենցիան գրանցում է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը՝ այն ուժի մեջ մտնելու օրը:

ԿՈՆՎԵՆՑԻԱ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՀԱՆՅԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԴԵՍ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՅԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿՍՏՄԱՄԲ ՎԱՂԵՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՉԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սույն Կոնվենցիայի մասնակից պետությունները,

վկայակոչելով Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի՝ պատերազմական հանցագործներին հանձնելու և պատժելու մասին 1946 թ. փետրվարի 13-ի 3(1) և 1947 թ. հոկտեմբերի 31-ի 170 (II) բանաձևերը, Նյուրնբերգի Միջազգային ռազմական դատարանի կանոնադրությամբ և Դատարանի դատավճռով ճանաչված միջազգային իրավունքի սկզբունքները հաստատող 1946 թ. դեկտեմբերի 11-ի 95 (I) բանաձևը և 1966 թ. դեկտեմբերի 12-ի 2184 (XXI) և 1966 թ. դեկտեմբերի 16-ի 2202 (XXI) բանաձևերը, որոնք, վճարականոթ են դատապարտում են մի կողմից որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություններ տեղական բնակչության տնտեսական և քաղաքական իրավունքների խախտումը և մյուս կողմից ապարտեիդի քաղաքականությունը, վկայակոչելով Միավորված ազգերի կազմակերպության Տնտեսական և սոցիալական խորհրդի՝ պատերազմական հանցագործներին և մարդկության դեմ ուղղված հանցագործություններ կատարած անձանց պատժի մասին 1965 թ. հուլիսի 28-ի 1074 D (XXXIX) և 1966 թ. օգոստոսի 5-ի 1158 (XLI) բանաձևերը,

նշելով, որ պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների համար հետապնդման և պատժի մասին հոչակագրերից, փաստաթղթերից կամ կոնվենցիաներից ոչ մեկը չի բովանդակում վաղեմության ժամկետին վերաբերող դրույթ, համարելով, որ պատերազմական հանցագործությունները և մարդկության դեմ ուղղված հանցագործությունները, միջազգային իրավունքի համաձայն, ծանրագույն հանցագործություններ են,

համոզված լինելով, որ պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների համար արդյունավետ պատիժը կարևոր գործոն է այդ օրինակ հանցագործությունները կանխելու, մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները պաշտպանելու, վստահությունը խրախուսելու, ժողովուրդների միջև համագործակցությանն աջակցելու և միջազգային խաղաղությանն ու

անվտանգությանը նպաստելու համար,

նշելով, որ պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետի՝ սովորական հանցագործությունների վերաբերող ներպետական իրավական նորմերի կիրառումը համաշխարհային հասարակական կարծիքի լուրջ մտահոգության հարց է, քանի որ դա խոչընդոտում է այդպիսի հանցագործությունների կատարման համար պատասխանատու անձանց հետապնդումն ու պատժիժը,

ընդունելով, որ անհրաժեշտ ու տեղին է սույն Կոնվենցիայի միջոցով միջազգային իրավունքում պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ սահմանել վաղեմության ժամկետ չկիրառելու սկզբունքը և ապահովելու դրա համընդհանուր կիրառումը,

համաձայնեցին ներքոհիշյալի շուրջ.

Հոդված 1

Վաղեմության ոչ մի ժամկետ, անկախ կատարման ժամանակից, չի կիրառվում հետևյալ հանցագործությունների նկատմամբ.

(ա) պատերազմական հանցագործությունների, ինչպես դրանք սահմանվել են Նյուրնբերգի Միջազգային ռազմական դատարանի 1945 թ. օգոստոսի 8-ի կանոնադրությամբ և հաստատվել են Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 1946 թ. փետրվարի 13-ի 3 (I) և 1946 թ. դեկտեմբերի 11-ի 95(I) բանաձևերով, մասնավորապես Պատերազմի զոհերի պաշտպանության մասին 1949 թ. օգոստոսի 12-ի Ժնևի կոնվենցիաներում թվարկված «լուրջ խախտումների»,

(բ) մարդկության դեմ ուղղված հանցագործությունների՝ անկախ նրանից, կատարվել են պատերազմի, թե խաղաղ ժամանակ, ինչպես դրանք սահմանվել են Նյուրնբերգի Միջազգային ռազմական դատարանի 1945 թ. օգոստոսի 8-ի կանոնադրությամբ և հաստատվել են Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 1946 թ. փետրվարի 13-ի 3(I) և 1946 թ. դեկտեմբերի 11-ի 95(I) բանաձևերով, զինված հարձակման կամ բռնազավթման միջոցով արտաքսման և ապարտեիդի քաղաքականության հետևանքով անմարդկային գործողությունների ու ցեղասպանության հանցագործության, ինչպես սահմանված է Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելե-

լու և պատժելու մասին 1948 թ. կոնվենցիայում, եթե անգամ այդ գործողությունները չեն համարվում այն երկրի ներպետական իրավունքի խախտում, որտեղ դրանք կատարվել են,

Հոդված 2

1-ին հոդվածում հիշատակված հանցագործություններից ցանկացածի կատարման դեպքում սույն Կոնվենցիայի դրույթները կիրառվում են պետական իշխանության ներկայացուցիչների և առանձին անձանց նկատմամբ, որոնք, որպես հանցագործություն կատարողներ կամ հանցակիցներ, մասնակցում են կամ անմիջականորեն դրդում են այլ անձանց՝ կատարելու այդ հանցագործություններից ցանկացածը, կամ հրահրում են դրանց կատարումը՝ անկախ ավարտվածության աստիճանից, և այն պետական իշխանության ներկայացուցիչների նկատմամբ, որը թույլ է տվել դրանց կատարումը,

Հոդված 3

Սույն Կոնվենցիայի մասնակից պետությունները պարտավորվում են ընդունել օրենսդրական կամ այլ բնույթի բոլոր անհրաժեշտ ներպետական միջոցները՝ հնարավոր դարձնելու սույն Կոնվենցիայի 2-րդ հոդվածում նշված անձանց հանձնումը միջազգային իրավունքի համաձայն:

Հոդված 4

Սույն Կոնվենցիայի մասնակից պետությունները պարտավորվում են իրենց սահմանադրական ընթացակարգին համապատասխան ընդունել ցանկացած օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են ապահովելու, որ վաղեմության կամ այլ ժամկետները չկիրառվեն սույն Կոնվենցիայի 1-ին և 2-րդ հոդվածներում նշված հանցագործությունների համար հետապնդման և պատժի նկատմամբ, և որպեսզի նման ժամկետները վերացվեն այնտեղ, որտեղ դրանք գոյություն ունեն,

Հոդված 5

Սույն Կոնվենցիան մինչև 1969 թ. դեկտեմբերի 31-ը բաց է ստորագրման Միավորված ազգերի կազմակերպության ցանկացած անդամ պետության կամ նրա մասնագիտացված հաստատությունների ցանկացած անդամի կամ Ատոմային էներգիայի միջազգային գործակալության անդամի, Միջազգային դատարանի ստատուտի մասնակից ցանկացած պետության և ցանկացած այլ պետության համար, որը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կող-

մից հրավիրվել է դառնալու սույն Կոնվենցիայի մասնակից,

Հոդված 6

Սույն Կոնվենցիան ենթակա է վավերացման: Վավերագրերն ի պահ են հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին,

Հոդված 7

Սույն Կոնվենցիան բաց է միանալու 5-րդ հոդվածում նշված ցանկացած պետության համար: Միանալու փաստաթղթերն ի պահ են հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին,

Հոդված 8

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում տասներորդ վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթը Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելուց հետո՝ իննսուններորդ օրը,

2. Յուրաքանչյուր պետության համար, որը վավերացնում է սույն Կոնվենցիան կամ միանում է նրան տասներորդ վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթը ի պահ հանձնելուց հետո, սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում իր վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվանից հետո՝ իննսուններորդ օրը,

Հոդված 9

1. Սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու օրվանից տասնամյա ժամկետը լրանալուց հետո ցանկացած Պայմանավորվող պետություն ցանկացած ժամանակ կարող է ներկայացնել սույն Կոնվենցիայի վերանայման խնդրանք՝ Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին ծանուցելու միջոցով,

2. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեան որոշում է, թե ինչպիսի միջոցներ պետք է ձեռնարկվեն այդպիսի խնդրանքի վերաբերյալ,

Հոդված 10

1. Սույն Կոնվենցիան ի պահ է հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին,

2. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը սույն Կոնվենցիայի հաստատված պատճեններն ուղարկում է 5-րդ հոդվածում նշված բոլոր պետություններին,

3. Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտու-

ղարը 5-րդ հոդվածում նշված բոլոր պետություններին տեղեկացնում է հետևյալի մասին.

(ա) սույն Կոնվենցիան ստորագրելու և 5, 6 և 7-րդ հոդվածներին համապատասխան ի պահ հանձնված վավերագրերի և միանալու վերաբերյալ փաստաթղթերի մասին,

(բ) սույն Կոնվենցիայի՝ 8-րդ հոդվածին համապատասխան ուժի մեջ մտնելու օրվա մասին,

(գ) 9-րդ հոդվածին համապատասխան ստացված հաղորդումների մասին.

Հոդված 11

Սույն Կոնվենցիան, որի անգլերեն, իսպաներեն, չինարեն, ռուսերեն և ֆրանսերեն տեքստերը հավասարազոր են, թվագրվում է 1968 թ. նոյեմբերի 26-ին:

Ի հավաստումն որի՝ այդ նպատակով պատշաճորեն լիազորված ներքոստորագրյալներն ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Մաս 2

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱԶՈՒՄԸ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂ- ՄԻՑ

ԱՄՆ ՄԵՆԱՏԻ 359-Ը ԲԱՆԱԶԵՎ

1920 թվական, մայիսի 11

Քննարկել և համաձայնել է

Բանաձև

Հաշվի առնելով Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի ենթահանձնաժողովի կողմից բերված ապացույցների լսումները՝ հստակ սահմանվել է հաղորդված ջարդերի և հայերի կրած այլ վայրագությունների տառապանքի ճշմարացիությունը, և

Հաշվի առնելով այն, որ Միացյալ Նահանգների ժողովուրդը խորապես մտահոգված է այժմ Հայաստանում տարածված անապահովության, քաղցի և թշվառության անմխիթար պայմաններով, և

Հաշվի առնելով այն, որ Հայաստանի Հանրապետության անկախությունը պատշաճորեն ճանաչվել է խաղաղության գիտաժողովի գերագույն խորհրդի և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության կողմից, այսպիսով

Որոշում է, որ Միացյալ Նահանգների Սենատը սույնով ճանաչում է Հայաստանի Հանրապետության անկախությունը՝ հարգելով նրա տարածքային սահմանները, այնուհետև

Որոշում է, որ Միացյալ Նահանգների Սենատը սույնով արտահայտում է այն հույսը, որ հայ ժողովուրդը շուտով կհասնի կայուն կառավարման, անհատի իրավունքների և ազատությունների պատշաճ

պաշտպանության և ազգային նկրտումների ամբողջական իրականացման, այնուհետև

Որոշում է, որ, Նախագահի խնդրանքով՝ հանրային շահերի գուրգակցմամբ, Միացյալ Նահանգների քաղաքացիների կյանքի ու սեփականության անհրաժեշտ պաշտպանության ապահովման նկատառումով Բաթում նավահանգստի և Բաքու տանող երկաթուղու գծի երկայնքով ուղարկել և տեղաբաշխել Միացյալ Նահանգների ռազմական և ծովային ուժեր՝ դրանց համապատասխան հրահանգներով՝ բեռնաթափելու և ամերիկացիների կյանքն ու սեփականությունը պաշտպանելու նպատակով:

ՈՒՐՈՒԳՎԱՑԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՆԱՏԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԲԱՆԱԶԵՎԸ 20 ԱՊՐԻԼԻ 1965թ., ԹԻՎ 13926 ՀԱՅ ՆԱՀԱՍԱԿՆԵՐԻ ՀԻՇՍԱՍԿԻ ՕՐՎԱ ՄԱՍԻՆ

Սենատը և Ներկայացուցիչների պալատը համատեղ Գլխավոր ասամբլեայում ընդունեցին բանաձև՝

Հոդված 1

Առաջիկա ապրիլի 24-ը հայտարարվում է «Հայ նահատակների հիշատակի Օր»՝ նվիրված 1915թ. այդ ազգության ներկայացուցիչների կոտորածներին զոհ գնացածներին:

Հոդված 2

Պաշտոնական ռադիոձայնարկությունների կայանները պետք է այդ օրը իրենց հաղորդումների մի մասը նվիրեն վերոհիշյալ ազգության զոհերի հիշատակին:

Հոդված 3

Հայկական ծագում ունեցող քաղաքացիներին, որոնք հանդիսանում են պետական ծառայողներ, թույլատրվում է այդ օրը աշխատանքի չներկայանալ:

Հոդված 4

Մոնտիդեյի շրջանի երկրորդ աստիճանի թիվ 156 դպրոցը անվանակոչել «Հայաստան»:

**ԿԻՊՐՈՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ
ՊԱԼԱՏԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ
Ապրիլի 29, 1982**

ԲԱՆԱԶԵՎ 74
29 ապրիլի 1982 թ.

Ներկայացուցիչների պալատը,

1915թթ. սկիզբ առած և թուրքական նախկին վարչակարգի կողմից կազմակերպված հայ ժողովրդի ցեղասպանության տարեկիցի կապակցությամբ՝

1. Սարսափով նշում է և անկեղծորեն դատապարտում հայ ժողովրդի հանդեպ կատարված ոճիրը, որը բնութագրվում է որպես ցեղասպանություն, և որ հայերին արմատախիլ արեց իրենց նախնիների հողերից:

2. Պաշտպանում է հայ ժողովրդի անխախտ իրավունքների լիարժեք վերականգնումը:

3. Ընդգծում է երկարատև բարեկամական համակեցությունը և եղբայրական համագործակցությունը Կիպրոսի հայերի հետ, ինչպես նաև նրանց ներդրումը մեր երկրի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքում:

4. Համարում է այս համակեցությունը Կիպրոսի բոլոր ժողովուրդների խաղաղ համակեցության իրական հնարավորության փաստը՝ անկախ լեզվի, կրոնի կամ ազգային ծագման:

5. Միաժամանակ անհրաժեշտ է համարում դատապարտել նույն ոճիրը, որը կատարվեց Կիպրոսի ժողովրդի հանդեպ, 1974 թ. թուրքական ներխուժումից հետո:

**ԱՄՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՊԱԼԱՏ.
ՀԱՄԱՏԵՂ ԲԱՆԱԶԵՎ 247**

1984 թվական, սեպտեմբերի 12
98 - րդ համագումար/ կոնգրես, 2 - րդ նիստ

Բանաձև
(247-րդ Պալատի համատեղ բանաձև)

Միացյալ Նահանգների Սենատում, 1984 թվական, սեպտեմբերի 12-ին.

Երկու ընթերցումով ընդունված և Իրավաբանական համատեղ բանաձևի հարցերով հանձնաժողովին ուղարկված

1985 թվականի ապրիլի 24-ը նշանակելու որպես «Մարդու կողմից մարդու դեմ դաժան վերաբերմունքի ազգային հիշատակի օր»

Կոնգրեսի ժողովում Ամերիկայի Միացյալ Նահանգները Սենատը և Ներկայացուցիչների պալատը որոշում են, որ

1985 թվականի ապրիլի 24-ը սույնով նշանակվում է որպես «Մարդու կողմից մարդու դեմ դաժան վերաբերմունքի ազգային հիշատակի օր» և Միացյալ Նահանգների նախագահը հաստատում և պահանջում է կազմել հռչակագիր՝ կոչ անելով Միացյալ Նահանգների ժողովրդին այդ օրը համարել ցեղասպանության բոլոր զոհերի, հատկապես 1915 - 1923 թվականներին Թուրքիայի կողմից իրականացված մեկ ու կես միլիոն հայերի ցեղասպանության զոհ դարձած և բոլոր հայերի և աշխարհում սփռված նրանց բարեկամների կողմից նշվող հիշատակության օր:

ՌԴ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ
1915-1922 թթ. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԴԱՏԱՊԱՐՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

14 ապրիլի 1995 թ.

Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի
Պետական դուման

- հենվելով անհերքելի պատմական փաստերի վրա, որոնք վկայում են Արևմտահայաստանի տարածքում 1915-1922 թթ. հայերի բնաջնջման մասին,

- հետևելով ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժելու մասին 1948 թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի ընդունած պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների վաղեմության ժամկետի մասին 1968 թ. նոյեմբերի 26-ի կոնվենցիաների ոգուն ու տառին,

- ձգտելով վերաճնել ռուսական պետության մարդասիրական ավանդույթները, հիշեցնելով, որ Ռուսաստանի նախաձեռնությամբ եվրոպական մեծ տերությունները դեռ 1915 թ. հայ ժողովրդի հանդեպ թուրքական կայսրության գործողությունները որակել են որպես «մարդկության դեմ ուղղված հանցագործություն»,

- նշելով, որ իր պատմական հայրենիքում եղբայրական հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջումը կատարվել է Ռուսաստանի քայքայման համար պայմաններ ստեղծելու նպատակով,

- դատապարտում է 1915-1922 թթ. հայերի բնաջնջումը կազմակերպողներին,

- իր կարեկցանքն է հայտնում հայ ժողովրդին և ապրիլի 24-ը համարում ցեղասպանության զոհերի հիշատակի օր:

ԼԻԲԱՆԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԲԱՆԱԶԵՎԸ ԱՊՐԻԼԻ 24-Ը
ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ
ՄԻԱՄՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՐ ՀՈՉԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3 ապրիլի 1997 թ.

Լիբանանի պատգամավորների պալատը՝

- զգալով 1915-1923 թթ. լիբանանյան հայ ժողովրդի տառապանքի ու ցավի տարողությունը, որը հար և նման է լիբանանցի և այլ ժողովուրդների տառապանքներին, և որոնք շարունակվում են մինչև օրս,

- նշելով, այս դարասկզբին գաղութատիրոջ կողմից մեր ժողովուրդների դեմ կազմակերպված ցեղասպանությունը,

- նկատի ունենալով, որ յուրաքանչյուր տարվա Ապրիլի 24-ն առիթ է ոգեկոչելու հայ ժողովրդի դեմ իրագործված ջարդերի արհավիրքի հիշատակը,

- Լիբանանի խորհրդարանը կոչ է անում լիբանանցի ժողովրդին այդ օրը հայտարարել հայ ժողովրդի հետ միասնականության օր:

ԲԵԼԳԻԱՅԻ ՄԵՆԱՏ
1997-1998թթ. ՆՍՏԱՇՐՁԱՆ
26 մարտի 1998թ.

ՈՐՈՇՈՒՄ 1-736/3
ԹՈՒՐԹԻԱՅՈՒՄ ԱՊՐՈՂ ՀԱՅԵՐԻ 1915 Թ.
ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մենատրք,
Նկատի ունենալով 20-րդ դարի սկզբին Թուրքիայում հայ ազգաբնակչության իրավիճակին նվիրված բազմաթիվ ուսումնասիրությունները,
Նկատի ունենալով Միացյալ Ազգերի կոնվենցիան՝ կանխելու և դատապարտելու ցեղասպանությունը,
Նկատի ունենալով դատական այն վճիռները, որոնք վերաբերում են 1915 թ. Թուրքիայում ապրող հայերին, մասնավորապես 1995 թ. հունիսի 21-ին Փարիզում գերագույն դատական ատյանի կայացրած որոշումը,
Նկատի ունենալով, որ չպետք է կասկածել այն պատմական իրողության վրա, որ վերաբերում է հայերի կազմակերպված և համակարգված սպանություններին,
Նկատի ունենալով, որ անցյալի սխալների և ոճիրների ճանաչումը հաշտություն կստեղծի ժողովուրդների միջև, և որ առանց արդարության չի կարող խաղաղություն լինել ոչ Հայաստանում և ոչ էլ այլ վայրում,
Նկատի ունենալով նաև, որ միայն անցյալի ոճիրների ճանաչումով կարելի է հասնել քաղաքական հաշտության,
Նկատի ունենալով, որ թուրք և հայ ժողովուրդների միջև տարածայնությունները շարունակվում են խորանալ և նույնիսկ այսօր այդ տարածաշրջանում տեղիք են տալիս մարդկային կյանքի կորուստների,
Նկատի ունենալով, որ թուրք և հայ ժողովուրդներն այլ ընտրություն չունեն, քան երկարատև խաղաղ գոյակցելը,
Նկատի ունենալով, որ բարեկամական կապերը և համագործակցությունը, որ առկա են մի կողմից Թուրքիայի, Բելգիայի և Եվրամիության և մյուս կողմից՝ Հայաստանի, Բելգիայի և Եվրամիության միջև,
Նշելով, որ 1987 թ. Եվրախորհրդարանի բանաձևը չպարտադրեց

թուրքական կառավարությանը ճանաչել 1915 թ. ցեղասպանության պատմական իրողությունը,
Կոչ է անում թուրքական կառավարությանը ճանաչել Օսմանյան կայսրության վերջին կառավարության կողմից 1915 թ. կազմակերպված ցեղասպանության պատմական ճշմարտությունը,
Կոչ է անում Եվրամիության անդամ պետությունների խորհրդարաններին նպաստել թուրք և հայ ժողովուրդների միջև համաձայնությանը,
Կոչ է անում Եվրամիությանը և նրա անդամ պետություններին նպաստել և սկսել երկխոսություններ հայ և թուրք ժողովուրդների միջև,
Խնդրում է կառավարությանը փոխանցել այս բանաձևը թուրքական կառավարության վարչապետին և Եվրախորհրդարանի նախագահին, Եվրամիության անդամ պետությունների խորհրդարանների նախագահներին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության խորհրդարանի նախագահին:

ՇՎԵԴԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԸ ԵՐԿԻՐ ՕՐԵՆՄԴՐԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ

29 մարտի 2000 թ.
Բազմակուսակցական Ս 651 բանաձևն արձանագրում է, որ 20-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրության հարավում, որն Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Գերմանիայի հետ միության մեջ էր, հայերը կազմում էին քրիստոնեական փոքրամասնություն: Օգտվելով Առաջին համաշխարհային պատերազմից այնտեղ իրականացվեցին հայ ժողովրդի զանգվածային սպանությունները: Զանգվածային ոչնչացումները տեղի ունեցան 1915 թ.: Այդ ողբերգության վերաբերյալ չկա ոչ մի ճշգրիտ վիճակագրություն: Սովորաբար ընդունված է համարել, որ ուղղակի ոչնչացման կամ էլ տեղահանության ժամանակ ստեղծված կենցաղային սարսափելի պայմանների հետևանքով զոհվեցին մեկից մինչև մեկուկես միլիոն հայեր: 250000 հայերի հաջողվեց ապաստան գտնել Ռուսաստանում, 200000-ը բռնի դարձան մուսուլմաններ, և 40000-ը հայտնվեցին Սիրիայում: Երբ Թուրքիան 1918 թ. ներխուժեց Կովկաս, սպանվեցին ևս 50000-ից մինչ 100000 հայեր:

Բանաձևի մշակմանը մասնակցողները ենթադրում են, որ թուրքական ժամանակակից կառավարությունը և քաղաքական համակարգը հավանաբար չեն կարող պատասխանատվություն կրել այդ ժամանակ տեղի ունեցան հայերի զանգվածային սպանությունների համար, սակայն գտնում են, որ թուրքական պետությունը առնվազն պիտի որ հատուցի կենդանի մնացածների (կամ ժառանգների) վնասները:

Հանձնաժողովի եզրահանգումները

Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է հայ ժողովրդի ցեղասպանության պաշտոնական ճանաչումը: 1985 թ. ՄԱԿ-ում և Եվրախորհրդարանում արձանագրվեց, որ Օսմանյան կայսրությունն այդ դարասկզբին իրակացրել է հայ ժողովրդի ցեղասպանություն: Հանձնաժողովը պաշտպանում է այն կարծիքը, որ եթե Թուրքիան իր անցյալի նկատմամբ հանդես բերի մեծ պատասխանատվություն, դրանով իսկ կնպաստի ժողովրդավարության ամրապնդմանը Թուրքիայում:

Այդ կապակցությամբ անհրաժեշտ է անցկացնել հայ ժողովրդի ցեղասպանության անկախ, անկողմնակալ միջազգային հետաքննություն, որպեսզի հասնենք 1915 թ. և հետագայի պատմական դեպքերի բացահայտմանը: Այդ բնագավառում առաջխաղացումը կարող էր նույնիսկ ընդհանուր առմամբ նշանակություն ունենալ Կովկասյան տարածաշրջանի կայունության և զարգացման համար:

ԼԻԲԱՆԱՆԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԲԱՆԱԶԵՎ

11 մայիսի 2000 թ.

Օսմանյան իշխանության կողմից 1915 թվականին կազմակերպված ջարդերի 85-ամյակի առթիվ, որի հետևանքով ոչնչացվեցին 1,5 միլիոն հայեր, Լիբանանի պատգամավորների Պալատը ճանաչում է և դատապարտում հայ ժողովրդի դեմ իրականացված ցեղասպանությունը և իր լիակատար համերաշխությունն հայտնում է իր երկրի հայ քաղաքացիներին:

Դրանից բացի, Պալատը գտնում է, որ ցեղասպանության միջազգային ճանաչումը անհրաժեշտ պայման է կանխելու նմանօրինակ հանցագործությունները, որոնք կարող են ձեռնարկվել սպազայում:

ԻՏԱԼԻԱ, ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՊԱԼԱՏ ԲԱՆԱԶԵՎ

16 նոյեմբերի 2000 թ.

Իտալիայի Պատգամավորների պալատը նշում է, որ 2000 թվականի նոյեմբերի 15-ին Եվրախորհրդարանը ձայների ճնշող մեծամասնությամբ ընդունել է Թուրքիայի՝ Եվրամիություն մտնելու համար իրականացրած առաջնության մասին պարբերական դիտարկումից բխող առաջարկը, դիտարկում, որ ավարտվել է 1999 թվականին: Թուրքիայի կառավարությունը հորդորվել է ուժեղացնելու ժողովրդավարացմանն ուղղված իր ջանքերը, մասնավորապես քրեական իրավունքի բարեփոխումների, դատական համակարգի անկախության, խոսքի ազատության և փոքրամասնությունների իրավունքների ոլորտներում:

Իտալիայի Պատգամավորների պալատը նշում է նաև, որ վերջին բանաձևը առնչվում է հայ ժողովրդի վերաբերյալ հարցերին՝ հատուկ նշանակություն ունեցող երեք կետերով՝ «մենք կոչ ենք անում հայ փոքրամասնությանը (Օսմանյան կայսրությունում) նկատմամբ ցեղասպանության ճանաչմանը, որն իրականացվել է մինչև ժամանակակից Թուրքիայի Հանրապետության ստեղծումը (կետ 10) ; Կովկասում գտնվող Թուրքիայի հարևանների հետ հարաբերությունների բարելավումը, որն առաջարկվել է իր՝ Թուրքիայի կառավարության կողմից (կետ 20) «և, ի նպաստ ԵՄ – Թուրքիա հարաբերությունների Երկկուսակցական խորհրդարանական հանձնաժողովի նախագահի կողմից 21-րդ կետում առաջ քաշված առաջարկությանը՝ հրավիրում է Թուրքիայի կառավարությանը՝ բանակցություններ սկսելու Հայաստանի Հանրապետության հետ, վերականգնելու դիվանագիտական հարաբերությունները և առևտուրը երկու պետությունների միջև, վերջ դնելու ներկայիս շրջափակմանը»:

Պատգամավորների պալատը, հետևաբար, կոչ է անում Իտալիայի կառավարությանը, վերը նշված առաջարկություններին համապատասխան, եռանդաբար հետամուտ լինել այդ տարածաշրջանի (այսինքն՝ Կովկասի) ժողովուրդների և փոքրամասնությունների միջև եղած լարվածությունների թուլացմանը՝ ստեղծելու երկու պետությունների տարածքային ամբողջականության պատշաճ պահպանում, խաղաղ համակեցություն՝ այդպիսով ավելի արագացնելով Թուրքիայի ինտեգրումը Եվրոպական համայնք:

ՖՐԱՆՍԻԱԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔ

29 հունվարի 2001 թ.

1915 թվականի Հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ 2001 թվականի հունվարի 29-ի թիվ 2001-70 օրենք

Ազգային ժողովը և Սենատն ընդունել են, իսկ Հանրապետության Նախագահը հրապարակում է հետևյալ օրենքը՝

Ֆրանսիան հրապարակավ ճանաչում է 1915 թվականի Հայոց ցեղասպանությունը:

Սույն օրենքը պետք է գործի որպես պետության օրենք:

Կատարված է Փարիզում 2001 թվականի հունվարի 29-ին:

Հանրապետության Նախագահ ժակ Շիրակ

Վարչապետ՝ Լիոնել ժոսպեն

ԿԱՆԱԴԱՅԻ ՄԵՆԱՏԻ ԲԱՆԱՁԵՎԸ

13 հունիսի 2002թ.

ՀԱՅԵՐԻ ԾԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

ՔԱՆԻ ՈՐ 1915 թ. ապրիլի 24-ին Օսմանյան Թուրքիայի իշխանություններն առանց որևէ պատճառի կամ հիմնավորման ձեռքակալեցին և հետո մահապատժի ենթարկեցին Ստամբուլի հայկական համայնքի 2300 ավելի նշանավոր ղեկավարների միայն նրանց ռասայական և կրոնական պատկանելիության պատճառով, դրանով իսկ 20-րդ դարի առաջին ցեղասպանության սկիզբը դրեցին,

ՔԱՆԻ ՈՐ օգտագործելով Առաջին համաշխարհային պատերազմը որպես քող իր գործողությունների համար, Օսմանյան Թուրքիայի իշխանությունները կարգադրեցին և իրագործեցին Հարավային Անատոլիայի և Կիլիկիայի վեց նահանգներում բնակվող հայերի ջարդերը, այդ տարածքներում հայերի ներկայությունն իսպառ բնաջնջելու փորձը,

ՔԱՆԻ ՈՐ օսմանյան Թուրքիայի իշխանությունները կոտորածներից հետո կենդանի մնացածներին տեղահանեցին իրենց տներից և հա-

յրական հողերից,

ՔԱՆԻ ՈՐ պատմական փաստերը հստակ վկայում են որ, 1915-1918 թթ. տեղ գտած դեպքերը, որոնք հանգեցրեցին Արևելյան Անատոլիայի և Կիլիկիայի հայ ազգաբնակչության կոտորածներին ու տեղահանությանը, նշանակում են ցեղասպանություն, ինչպես դա ձևակերպված է միջազգային սովորության իրավունքով և ցեղասպանության հանցագործության կանխարգելման և պատժի մասին 1948 թ. դեկտեմբերի 11-ի ՄԱԿ-ի կոնվենցիայում,

ՔԱՆԻ ՈՐ Թուրքիայի Հանրապետության կառավարությունը խեղաթյուրում է պատմական փաստերը և ժխտում է հայերի ցեղասպանության փաստը,

ՔԱՆԻ ՈՐ Արգենտինայի, Բելգիայի, Ֆրանսիայի, Հունաստանի, Իտալիայի, Լիբանանի, Ռուսաստանի, Շվեդիայի, Ուրուգվայի խորհրդարանները, Եվրախորհրդարանը և Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը դատապարտել են Օսմանյան կայսրությունում հայ ազգաբնակչության կոտորածները և ճանաչել են, որ դա ցեղասպանություն է նշանակում,

ՔԱՆԻ ՈՐ հայերի ցեղասպանությունը ճանաչվել են նաև Քվեբեկի Ազգային ասամբլեայի, Օնտարիոյի օրենսդրական Ասամբլեայի և Կանադայի եկեղեցիների խորհրդի կողմից,

ՔԱՆԻ ՈՐ ցեղասպանությունը վերապրած հազարավոր հայեր և նրանց սերունդները ներկայումս ապրում են Կանադայում որպես քաղաքացիներ և հարստացնում են Կանադայի բազմազգ մշակութային ժառանգությունը,

ՔԱՆԻ ՈՐ Կանադան մի երկիր է, որը հպարտանում է օրենքի գերակայությամբ և մարդու իրավունքների ու ազատությունների հարգելով,

ՔԱՆԻ ՈՐ ապրիլի 24-ը դարձել է կանադահայերի և ընդհանրապես ողջ աշխարհում հայկական ծագում ունեցող մարդկանց համար խորհրդանշանական տարեթիվ,

ՔԱՆԻ ՈՐ հայերի ցեղասպանության մասին հարցի լուծումը կարող է օգնել նաև Հարավային Կովկասի մի շարք հնագույն հակամարտությունների խաղաղ կարգավորմանը,

ՈՐՈՇՎՈՒՄ Է, որ այս պալատը կոչ է անում Կանադայի կառավարությանը՝

ա) ճանաչել հայերի ցեղասպանությունը և դատապարտել պատմա-

կան ճշմարտությունը խեղաթյուրելու կամ ժխտելու ամեն մի փորձ, երբ այն կներկայացվի պակաս մեղմ, քան ցեղասպանությունն է, քան մարդկության դեմ կատարված հանցագործությունը, և

բ) ապագայում յուրաքանչյուր տարի ողջ Կանադայում ապրիլի 24-ը նշել որպես քսաներորդ դարի առաջին ցեղասպանության գոհ դարձած 1,5 միլիոն հայերի հիշատակի օր:

ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ՄԵՆԱՏԻ ԲԱՆԱԶԵՎ

20 օգոստոսի 2003 թ.

ՀՈՉԱԿԱԳԻՐ

Պատվավոր Ազգային սենատը հայտարարում է

Մենք խորին ցավով հիշատակում ենք 1915 - 1923 թվականներին Թուրքիայի կողմից իրականացած 1.5 միլիոն հայերի ցեղասպանության 88-րդ տարելիցը:

Սա նաև մարդկության դեմ ուղղված հանցագործությունները մերժող կարեկցանքի մի մանիֆեստ է, այն հանցագործությունների, որոնք դեռևս անպատիժ են մնացել:

Ապրիլի 24-ը Թուրքիայի կառավարության կողմից ծրագրված և կանխամտածված ձևով իրականացված քսաներորդ դարի առաջին ցեղասպանության հիշատակային տարելիցն է: 1.5 միլիոն հայեր դարձան Թուրքերի ձեռքով իրականացած բարբարոսությունների և սարսափելի զանգվածային ջարդերի ու բռնի տեղահանությունների զոհ: Նրանք գրավել են հողերը և ոսնահարել հայերի՝ իրենց պատմական հայրենիքում ապրելու իրավունքը: Ոչնչացման քաղաքականությամբ և մի ազգի ամբողջովին բնաջնջելու մտադրությամբ, հետագայում նաև անցյալի հուշերը ջնջելու մոլեռանդությամբ Թուրքիայի կառավարությունը շատ հեռուն գնաց՝ ցեղասպանությունը և «Հայոց հարցը» հերքելու հարցում:

Միջազգային հանրությունը ունի պարտք՝ պատասխանատվության ենթարկելու հանցագործներին իրենց արարքների համար, քանի որ դա ցեղասպանություն միջազգային հանցագործություն է և մարդու իրավունքների խախտում: Եվրախորհրդարանը, ՄԱԿ - ի Մարդու իրավունքների հանձնաժողովը և մի քանի երկրներ ընդունել են Հայոց ցեղասպանությունը ճանաչելու անհրաժեշտությունը՝ այն համարելով

անհերքելի պատմական ճշմարտություն: Պարո՛ն Նախագահ, արդարությունը մարդկային արժանապատվության միակ երաշխիքն է, հետևաբար ես խնդրում եմ սույն օրինագծի մեր համատեղ հաստատումը:

**ՇՎԵՑՑԱՐԻԱ (ՇՎԵՑՑԱՐԻԱՅԻ ՀԱՄԱԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ),
ԱԶԳԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԲԱՆԱԶԵՎ**

16 դեկտեմբերի 2003 թ.

Պոստուլատ 02.3069

1915 թվականի Հայոց ցեղասպանության ճանաչում

Ուղարկել է Վոդրո Ժան-Կլոդը

Ընդունվել է Բուրնան Դոմինիկի կողմից

Ներկայացման ամսաթիվը՝ 18-03-2002

Ուղարկվել է Ազգային խորհուրդ

Ներկա կարգավիճակը՝ վերացված

Առաջադրված տեսքստը

Ազգային խորհուրդը ճանաչում է 1915 թվականի Հայոց ցեղասպանությունը: Այն խնդրում է Դաշնային խորհրդին նկատի ունենալ սա և ընդունված դիվանագիտական ուղիներով առաջարկել իր դիրքորոշումը:

Զարգացում

1. Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Օսմանյան կայսրությունում հայերի բնաջնջումը վերացրել է ավելի քան մեկ միլիոն մարդ, որոնք Օսմանյան իշխանությունների հրամանով ենթարկվել են բռնի տեղահանությունների և զանգվածային ջարդերի: Իրենց նշանակությամբ և չափերով անվիճելի Այս փաստերը Ռաֆայել Լեմկինի՝ ցեղասպանության հասկացությունը սահմանած իրավաբանի համար որպես հղում են ծառայել: 1948 թվականի կոնվենցիայում ՄԱԿ-ի սահմանած չափանիշները հստակորեն համապատասխանում են հայերի ոչնչացման ենթարկվելու գործընթացին:

2. Ճանաչելով Հայոց ցեղասպանությունը՝ Շվեյցարիան արդարություն կդրսևորի զոհերի, տուժածների և նրանց հետնորդների նկատմամբ և կնպաստի մարդկության դեմ ուղղված այլ հանցագործությունների կանխարգելմանը: Սա վճռորոշ գործողություն է, որով

Շվեյցարիան ցույց կտա իր հավատարմությունը մարդու իրավունքներին, փոքրամասնությունների հանդեպ հարգանքին և միջազգային քրեական արդարադատությանը: Դա նաև հիշեցում է մարդկության դեմ ուղղված հանցագործությունների անօտարելի բնույթի և հերքողականության դեմ պայքարին իր ավանդի մասին:

3. Հայոց Ցեղասպանությունը ճանաչվել է ՄԱԿ-ի կողմից 1985 թվականին՝ իր փորձագետների հանձնաժողովներից մեկի զեկույցի ընդունման միջոցով, խտրականության կանխարգելման և փոքրամասնությունների պաշտպանության ենթահանձնաժողովի կողմից, այնուհետև Եվրախորհրդարանի կողմից՝ 1987 թվականի մի բանաձևում: Վերջին տարիների ընթացքում նույն կերպ են վարվել նաև Ֆրանսիայի, Շվեդիայի և Իտալիայի, ինչպես նաև Եվրոպայի բազում խորհրդարանները և այլն: Ժնևի կանտոնը դա կատարել է երկու անգամ՝ 1998 թվականին Մեծ խորհրդի կողմից և անցած դեկտեմբերին Պետական խորհրդի կողմից: Ի վերջո, կարելի է ներառել նաև 1983 թվականին ընդունված հռչակագրի միջոցով Եկեղեցիների համաշխարհային խորհրդի արտահայտած դիրքորոշումը:

4. 2001 թվականի մարտի 13-ին Ազգային խորհուրդը Արտաքին գործերի հանձնաժողովների երկու պալատների միաձայն որոշումից հետո, Դաշնային խորհրդին է փոխանցել Ցեղասպանության հակառակորդների Ասոցիացիայի միջնորդությունը (Francfort-sur-le-Main), «որպեսզի նրանք գործողություններ ձեռնարկեն», և նրանց հրավիրել են «Շվեյցարիայի և Թուրքիայի միջև քաղաքական երկխոսության շրջանակներում անդրադառնալու Հայոց Ցեղասպանության հարցին»: Ուստի բնական է, որ Ազգային խորհուրդը հաստատել է այս դիրքորոշումը հանդիսավոր հայտարարությամբ:

5. Ազգային խորհուրդը, ընդունելով այս պոստուլատը, ցանկանում է նպաստել թուրքերի և հայերի միջև տևական խաղաղության ստեղծմանը, խաղաղություն, որը կարող է հիմնվել միայն պատմության միասնական և ճշմարտացի հայացքի վրա:

Դաշնային խորհրդի դիրքորոշումը 15-05-2002

Դաշնային խորհուրդն արդեն մի քանի անգամ խորհրդարանական հարցումների իր պատասխաններում՝ վերջերս 2000 թվականի հունիսի 6-ի պոստուլատում՝ Zisyadis 00.3245 «Հայոց ցեղասպանությունը: Շվեյցարիայի կողմից ճանաչումը», ավստանք է հայտնել և դատապարտել է ողբերգական զանգվածային տեղահանություններն ու կո-

տորածները, որոնք նշանավորել են Օսմանյան Կայսրության վերջը և պատճառ հանդիսացել Հայաստանի բնակչության բազմաթիվ զոհերի համար: Թուրքիան չի վիճարկում իր իրականացրած կոտորածները, սակայն դրանք վերագրում է այն ժամանակների իշխանությունների կանխամտածված կազմակերպմանը, որը չի համապատասխանում պատմաբանների դիրքորոշմանը: Դաշնային խորհուրդը գտնում է, որ այս հարցը պատմական հոտագոտության կարիք ունի: Շվեյցարիայի արտաքին քաղաքականությունը ձգտում է Կովկասում կայուն հավասարակշռության, մասնավորապես Հայաստանի և Թուրքիայի միջև: Այս համատեքստում նա կարևորում է այն, որ երկխոսությունը տեղի ունենա հենց տարածաշրջանում: Հայ-թուրքական հարցը Թուրքիայի հետ պաշտոնական երկկողմ շփումների ժամանակ բազմիցս է բարձրացվել: Օրինակ՝ բարձրացվել է հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի գործունեության և արխիվների հետազոտողների հարցը: Գերակշռում է այն համոզմունքը, որ ցավոտ պատմության մի դրվագի անդրադառնալով, կռիվակալ հիշողության ջանքերը պետք է իրականացվեն տեղում և ամենից առաջ շահագրգիռ երկրների կողմից: Շվեյցարիայի արտաքին քաղաքականությունը ցանկանում է նպաստել հայ-թուրքական համաձայնությանը քաղաքական երկխոսության միջոցով, որը տեղի է ունեցել 2000 թվականին Թուրքիայի և Շվեյցարիայի միջև, և որը մասնավորապես վերաբերում էր մարդու իրավունքներին: Պոստուլատի ընդունումը հնարավոր է վնաս հասցնել պաշտոնական երկխոսությանը և կայունության հաստատածը:

Պոստուլատի ներքոստորոգյալները կցանկանային, որ իրենց մոտեցումը նպաստեր Թուրքիայի և Հայաստանի միջև տևական խաղաղությանը՝ արդարության հաղորդագրություն դառնալով հայ զոհերի հետնորդների համար: Սակայն այդ պոստուլատի ընդունումը կարող է հակառակ ազդեցությունը ունենալ և ծանրացնել Թուրքիայի ու Հայաստանի միջև հարաբերությունների հուզական բեռը:

ՈՒՐՈՒԳՎԱՅԻ ՕՐԵՆՔ

26 մարտի 2004 թ.

**ՀԱՅ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՕՐ
ՕՐԻՆԱԳԻԾ ՀԱՄԱՐ 17.752**

Հոդված 1. Ապրիլի 24-ը հայտարարվում է «Հայ նահատակների ճանաչման օր»՝ ի հարգանք 1915 թվականի ազգային կոտորածի զոհերի:

Հոդված 2. Ուրուգվայի Ազգային հեռարձակող ծառայությունը (SODRE), ինչպես նաև այլ ռադիո և հեռուստատեսային ծառայություններ ունեն այդ օրվա հաղորդումների մի մասն այս իրադարձության իրազեկման նվիրելու առաքելությունը:

ԿԱՆԱԴԱՅԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՊԱՒԱՏ, ԲԱՆԱԶԵՎ

21 ապրիլի 2004 թվական,

«Այս պալատը ճանաչում է 1915 թվականի Հայոց ցեղասպանությունը և դատապարտում այն որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն»:

Ընդունված կարգի համաձայն 93 (1)՝ տիկին Դալֆոնդ- Գիրալի միջնորդության հիման վրա Պալատը հանձն է առել հետաձգված արձանագրության քվորումը (Լավալ Կենտրոն)՝ Պրն Ասատուրյանի (Բրամփթոն Կենտրոն), Պրն Քեննիի (Հարավարևելյան Կալգարի) և տիկին Մակդոնոհի (Հալիֆաքս) աջակցությամբ, որպեսզի Պալատը ճանաչի 1915 թվականի Հայոց ցեղասպանությունը և դատապարտի այն որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն: Հարցը դրվել է քննարկման և համաձայնություն ձեռք բերել հետևյալ ձայներով՝

Այո՝ 153, ոչ՝ 68:

ՆԻԴԵՈՒԱՆԴՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԲԱՆԱԶԵՎ

2004 ԹՎԱԿԱՆ, ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԱՍՍՄԲԼԵԱՅԻ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՒԱՏ
(ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՊԱՒԱՏ)**

Տարի՝ 2004-2005

Եվրոպայի խորհուրդ 21 501-20

Համար 270

Անդամ ROUVOET C.S.-ի միջնորդությունը

Ներկայացված է 2004 թվականի դեկտեմբերի 21-ին

Պալատ

քննարկումների խորհրդի հիման վրա,

Նշելով, որ Եվրոպայի խորհուրդը 2004 թվականի դեկտեմբերի 16-ին և 17-ին Բրյուսելում կայացած հանդիպմանը որոշում է ընդունել 2005 թվականի հոկտեմբերի 3-ին Թուրքիայի հետ անդամակցության մեկնարկման վերաբերյալ բանակցությունների առնչությամբ,

Նշելով, որ Եվրոպայի խորհուրդն իր եզրակացության մեջ սահմանել է, որ քաղաքական և մշակութային ինտենսիվ երկխոսություն է տեղի ունենալու Թուրքիայի հետ, որում ներգրավված է նաև քաղաքացիական հասարակությունը՝ մարդկանց համախմբելու միջոցով փոխըմբռնումներ նպաստելու համար (եզրակացություն 23),

Լինելով այն կարծիքին, որ սույն անխզելիորեն կապված խնդրին իր սեփական պատմությունը ազնվորեն ընդունող պետության թեկնածու անդամ է,

Խնդրում է կառավարությանը Թուրքիայի հետ իր երկխոսության շրջանակներում շարունակաբար և հստակ բարձրացնել Հայոց ցեղասպանության հարցը,

և անցնում օրակարգին:

**ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԲԱՆԱԶԵՎ
2005 ԹՎԱԿԱՆ, ՀՈՒՆԻՍԻ 15**

Գերմանիայի Բունդեսթագ, գրավոր հարց 15/5689, 15-րդ ընտրական ժամանակաշրջան, 2005 թվական, հուլիսի 15

SPD, CDU/CSU, BÜNDNIS 90/DIE GRÜNEN և FDP խորհրդարանական խմբերի՝ 1915 թվականի հայերի զանգվածային ջարդերը և տեղահանությունները հիշատակող միջնորդություն. Գերմանիան պետք է իր նպաստն ունենա հայերի և թուրքերի հաշտեցման մեջ

Բունդեսթագը որոշում է՝

Գերմանիայի Բունդեսթագը հարգում և հիշատակում է Առաջին համաշխարհային պատերազմից առաջ և հետո հայ ժողովրդի նկատմամբ բռնության, կոտորածի և տեղահանության ենթարկվածների հիշատակը: Բունդեսթագը դատապարտում է Օսմանյան կայսրությունում երիտթուրքերի կառավարության արարքները, որոնց հետևանքով բնաջնջվել է եղել են Անատոլիայի գրեթե ամբողջ հայությունը: Այն նաև դատապարտում է Գերմանիայի Ռեյխի անփառունակ դերը, որը, տեղեկացված լինելով հայերի կազմակերպված տեղահանությունների և բնաջնջման մասին, այս վայրագություններին միջամտելու և դրանք դադարեցնելու և ոչ մի փորձ չի ձեռնարկել:

Գերմանիայի Բունդեսթագը պատվում և հիշատակում է թուրքերի և գերմանացիների ջանքերը, ովքեր, աշխատելով բարդ հանգամանքներում և պայմաններում, ինչպես նաև ընդհանրապես իրենց կառավարությանը, խոսքով և գործով իրենց նվիրել են հայ կանանց, տղամարդկանց և երեխաների փրկությանը:

Դա մասնավորապես դոկտոր Յոհաննես Լեփսիուսի հիշատակն ու աշխատանքն է, ով եռանդագին պայքարել է հայ ժողովրդի գոյատևման համար, պահպանել և փայփայել հայերի, գերմանացիների և թուրքերի միջև հարաբերությունների բարելավումը:

Գերմանիայի Բունդեսթագը, իր սեփական փորձից ելնելով, խորին ցավով ընդունում է, թե որքան բարդ է յուրաքանչյուր ժողովրդի համար դեմ առ դեմ կանգնել իր անցյալի մութ կողմեր առջև: Բայց նաև կարծում է, որ սեփական պատմությանը արդարացիորեն և ճշմարտա-

ցիորեն առերեսվելն անհրաժեշտ է և հաշտեցման կարևոր հիմք է: Սա մասնավորապես ճիշտ է հիշատակման եվրոպական մշակույթի շրջանակներում, որին բնորոշ է յուրաքանչյուր ազգի պատմության մութ կողմերի բաց քննարկում:

Այս համատեքստում Գերմանիայի Բունդեսթագն ափսոսանք է հայտնում, որ Թուրքիայում Օսմանյան կայսրության անցյալի այդ իրադարձությունների վերաբերյալ մինչ այսօր հնարավոր չէ ամբողջական քննարկում իրականացնել և որ գիտնականներն ու գրողները, ովքեր ցանկանում են գործ ունենալ Թուրքիայի պատմության այս կողմերի հետ, ենթարկվում են հետապնդումների և զրպարտանքի: Այնուամենայնիվ, Գերմանիայի Բունդեսթագը նաև դրական նշաններ է նկատում. Թուրքիան աստիճանաբար մոտենում է վերը նշված հիշատակման եվրոպական մշակույթին: Օրինակները ներառում են՝

- Թուրքիայի Մեծ ժողովն առաջին անգամ հայկական ծագում ունեցող թուրքերի հրավիրել է քննարկումների, որոնցում ներառված էին հայերի հանդեպ իրականացրած հանցագործությունները և թուրք-հայկական հարաբերություններին առնչվող հարցերը:

- Վիեննայում մի թուրք և հայ կանանց երկխոսություն է կայացել:
- Թուրք և հայ պատմաբանների սկզբնական շփումների արդյունքում կայացել է փաստաթղթերի առաջին փոխանակումը:

- վարչապետ Էրդողանը հայոց պատրիարք Մեսրոպի հետ Ստամբուլում բացել է Թուրքիայի առաջին թանգարանը և հրապարակավ առաջարկել է հիմնել թուրք-հայկական պատմաբանների երկկողմ հանձնաժողով:

Ամեն դեպքում այս համատեքստում, Գերմանիայի Բունդեսթագը մեծ մտահոգությամբ գիտակցում է, որ համաշխարհային ճանաչում ունեցող գիտականների Հայկական գիտաժողովը, որը պետք է տեղի ունենար Ստամբուլում՝ 2005 թվականի մայիսի 25-27-ն կանխվել է Թուրքիայի արդարադատության նախարարի կողմից և որ գիտնականների դիրքորոշումները, որոնք տարբերվում էին կառավարության տեսակետից որակվեցին որպես «հարված թուրք ժողովրդի թիկունքին»: Վարչապետ Էրդողանի՝ պատմաբանների թուրք-հայկական համատեղ հանձնաժողով հիմնելու առաջարկը կարող է հաջողություն ունենալ եթե այն իրականացվի ազատ և հրապարակային քննարկման հիման վրա:

Գերմանիան, որը նույնպես իր ներդրումն է ունեցել մոռացության

մատնվող հայերի դեմ ուղղված հանցագործությունում, այժմ պարտավոր է բախվել իր սեփական պատասխանատվությունը: Այս պատասխանատվությունը ներառում է հայերի և թուրքերի նկատմամբ աջակցության ցուցաբերումը՝ ուղղված անցյալի շուրջ հաշտեցման և փոխըմբռնման եզրեր գտնելու:

Գերմանիայում երկու խոշոր եկեղեցիներ մասնավորապես բազում տարիներ ընթացքում հանդես են եկել Թուրքիայի հայերի ինտեգրացման պաշտպանությամբ: Հայկական համայնքները, որոնք հաստատվել են այստեղ, հաշտեցման և հիշատակման հնարավորություն են առաջարկում: Մասնավորապես, կապված Գերմանիայում ապրող թուրք մուսուլմանների մեծ թվի հետ, սա կարևոր է առաջադրանք ուղղված ի մի բերելու անցյալը և կատարելու հաշտեցման տանող առաջին քայլերը:

Սակայն այս պատմական իրադարձությունների հետ գործ ունենալն նաև ուղղակի նշանակություն ունի ներկայի համար: Թուրքիայի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև հարաբերությունների կարգավորումն այսօր առաջնային շահ և կարևորություն ունի ամբողջ տարածաշրջանի համար ապագաի համար: Այն՝ ինչ շտապ անհրաժեշտ է, երկու կողմերի համար վստահություն ձևավորող միջոցառումների մեկնարկումն է, ինչպես սահմանված է ԵԱՀԿ սկզբունքներում: Թուրքիայի՝ Հայաստանի հետ սահմանների բացումը կարող էր, օրինակ, օգնել Հայաստանի մեկուսացվածությունը նվազեցնելուն և նպաստեր դիվանագիտական հարաբերությունների սկսմանը:

Հայ-թուրքական հարաբերություններում ունեցած իր պատմական դերի շնորհիվ Գերմանիան պետք է հատուկ պատասխանատվություն ստանձնի՝ որպես ԵՄ նախաձեռնությունների շրջանակի մի մաս: Նպատակը պետք է լինի օգնել Հայաստանի և Թուրքիայի միջև եղած իրավիճակի բարելավմանն ու կարգավորմանը, այդպիսով նպաստելով Կովկասի տարածաշրջանի կայունացմանը:

Հիշատակմանն ուղղված մեկ այլ կարևոր նպաստում կարող է կատարվել Գերմանիայի դաշնային նահանգների կողմից: Տեղեկատվական և կրթական քաղաքականության առաքելությունը ներառում է այնպիսի գործողությունների ձեռնարկում նաև Գերմանիայում, որոնք բախվում են հայերի տեղահանությանն ու բնաջնջմանը՝ որպես 20-րդ դարի էթնիկ կոնֆլիկտների ամբողջ պատմության մի մաս:

Գերմանիայի Բունդեսթագը հայցում է Դաշնային Կառավարությանը

- օգնել հայերին և թուրքերին պատմական մեղքի հիշատակմամբ, հաշտությամբ և ներողամտությամբ հանգելու կարգավորման - Թուրքիայում ապահովելու Խորհրդարանի, Կառավարության և հասարակության՝ անցյալում և ներկայում հայ ժողովրդի հարաբերություններում առանց որևէ վերապահումների իրենց դերը կատարելը

- պաշտպանելու թուրք, հայ և միջազգային փորձագետներ ներառող պատմաբանների հանփնաժողովի ստեղծումը

- ապահովել ոչ միայն Օսմանյան Կայսրության՝ այս հարցին առնչվող արխիվների մատչելիությունը լայն մասշտաբների հանրության համար, այլև Գերմանիայի կողմից Թուրքիային տրված Գերմանիայի Արտաքին գործերի նախարարության արխիվների պատճենները

- պնդելու Ստամբուլում նախատեսված, բայց կառավարական ճնշման ներքո հետաձգված գիտաժողովի ներկայիս կազմակերպումը

- Թուրքիայում ճնշել կարծիքի ազատությունը, մասնավորապես հայերի ճակատագրի վերաբերյալ

- օգնել Թուրքիային և Հայաստանին կարգավորելու իրենց միջպետական հարաբերությունները

Բեռլին, 2005 թվական, հունիսի 15

Ֆրանց Մյունտֆերգը և Դոկտոր Անգելա Մերկելի խորհրդարանական խումբը, Մայքլ Գլոսը և Կատրին Գորինգ- Էքարթի խորհրդարանական խումբը, Քրիստա Մագերը և Դոկտոր Վոլֆգանգ Ջերարդի խորհրդարանական խումբը

Միջնորդության պատճառները

Իննսուն տարի առաջ՝ 1915 թվականի ապրիլի 24-ին, Երիտասարդ թուրքեր շարժումը, որը կառավարում էր Օսմանյան Կայսրությունը, հրամայեց ձերբակալել, երկրի ներքին շրջաններ արտաքսել Ստամբուլի հայկական մշակույթի և քաղաքականության վերնախավին և մեծ մասին էլ սպանել: Այս օրը աշխարհի բոլոր հայերի համար դարձել է հիշատակի օր՝ Օսմանյան Կայսրությունում հայ սուբյեկտների բռնի տեղահանության և զանգվածային կոտորածների համար, որոնք տեղի են ունեցել դեռ 19-րդ դարի վերջերին և ուժգնացել Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում:

Երբ Օսմանյան Կայսրությունը միացավ պատերազմին, հայ զինվորները գորակոչվեցին Օսմանյան բանակ, որտեղ խմբավորվեցին աշխատանքային գումարտակներում և նրանց մեծ մասը սպանվեց: 1915 թվականի գարնան սկզբին կանայք, երեխաներ և ծեր մարդիկ Սիբիրիայի անապատով ուղարկվեցին մահվան երթի: Նրանք, ովքեր դեռևս չէին մահացել կամ սպանվել ճանապարհին, այս ճակատագրին հանդիպեցին ամենավերջում, երբ հասան Դեր Ջոր անապատի մոտ գտնվող անմարդկային ճամբարները: Չանգվածային կոտորածներ իրականացվեցին նաև հատուկ այս նպատակի համար ստեղծված միավորների կողմից: Բարջրաստիճան թուրք պաշտոնյաների՝ այս գործողությունների նկատմամբ կիրառած դիմադրությունը, ինչպես նաև Օսմանյան խորհրդարանի քննադատությունը դաժանաբար ճնշվեցին Երիթրոթուրքերի ռեժիմի կողմից: Շատ տարածքներում, որտեղից արտաքսվել էին քրիստոնյա հայերը, հետագայում հաստատվեցին Բալկանյան պատերազմների քուրդ և մուսուլման փախստականները: Այլ էթնիկ քրիստոնյա խմբերի անդամներ, մասնավորապես, ասորիներ և քաղղեական քրիստոնյաներ, ինչպես նաև որոշակի մուսուլմանական փոքրամասնություններ նույնպես ենթարկվեցին բռնի տեղահանությունների և զանգվածային կոտորածների:

Ըստ անկախ հաշվարկների՝ ավելի քանի 1 միլիոն հայ տեղահանությունների և զանգվածային ջարդերի գոհ է դարձել: Բազմաթիվ անկախ պատմաբաններ, խորհրդարաններ և միջազգային կազմակերպություններ հայերի արտաքսումն ու բնաջնջումը նկարագրում են որպես ցեղասպանություն:

Մինչ օրս և հակառակ փաստերին՝ Թուրքիայի կառավարությունը, որպես Օսմանյան Կայսրության իրավահաջորդ, հերքում է, որ այս վայրագություններն եղել են լավ ծրագրած և կազմակերպված և/ կամ վերաբնակեցման երթերի ժամանակ տեղի ունեցած զանգվածային մահերն ու կոտորածները ցանկալի են եղել Օսմանյան կառավարության համար: Հայերի դեմ իրականացված գործողությունների ընդունված ծանրությունը միշտ արդարացվել է այն փաստով, որ թե՛ 1878 թվականին, թե՛ 1914/ 1915 թվականներին Ռուսաստանի կողմից շատ հայեր կռվել են Թուրքիայի դեմ և այդտեղ, ենթադրվում է, որ կա այն վտանգը, որ այս հայերը կարող են նաև ետ ընկնա՞ծ լինել Օսմանյան Կայսրությանը Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ: Այլ թուրքական պաշտպանություններ վկայակոչում են հայերի կողմից

թուրքերի դեմ իրականացրած բռնի գործողությունները, որոնք տեղի են ունեցել Թուրքիայի վերաբնակեցման միջոցառումների զինված դիմադրություն ցնցաբերելու ընթացքում:

Թուրքիայի դիքթորոշման համար որպես արդարացում են օգտագործվում նաև քսաներորդ դարի ութսունական թվականներին հայերի՝ թուրքերի դեմ իրականացրած ահաբեկչական հարձակումները:

Ընդհանուր առմամբ ջարդերի և տեղահանությունների իրական ծավալը դեռ նվազեցրած է և այսօր մեծապես վիճարկված Թուրքիայի կողմից: Թուրքիայի նման վերաբերմունքը դեմ է հաշտության գաղափարին, որն ուղղորդվում է Եվրամիության ընդհանուր արժեքներով: Նույնիսկ այսօր Թուրքիայում պատմաբաններն ազատ չեն հայերի տեղահանությունների և զանգվածային ջարդերի վերաբերյալ խոսք արտահայտելու հարցում. նրանք դեռևս մեծ ճնշման ներքո են գտնվում:

Գերմանական կայսրությունը, որպես Օսմանյան կայսրության խոշոր ռազմական դաշնակից, նույնպես խորապես ներգրավված է եղել այդ իրադարձություններում: Գերմանական կայսրության և՛ քաղաքական, և՛ ռազմական ղեկավարությունը հենց սկզբից տեղյակ է եղել հայերի հետապնդումների և սպանությունների մասին: Գերմանիայի դեսպանատան և Օսմանյան Կայսրության հյուպատոսությունների զեկույցներում մնացած Գերմանիայի արտաքին գործերի նյութերը ծրագրված և կազմակերպված զանգվածային ջարդերի և տեղահանությունների փաստաթղթում են:

Չնայած բազմաթիվ գերմանացի զիտնականների, քաղաքագետների և եկեղեցականների, այդ թվում այնպիսի քաղաքագետներ, ինչպիսիք են Ֆիլիպ Շեյդերմանը, Կարլ Լիբնեխտը կամ Մաթիա Էրցմբերգերը, ինչպես նաև բողոքական և կաթոլիկ եկեղեցին ներկայացնող նշանավոր անձանց, ինչպիսիք են Ադոլֆ վոն Հարնաքը և Լորենց Վերտմանը, հրատապ խնդրանքների՝ Գերմանական Ռեյխ կառավարությունը իր Օսմանյան դաշնակցի վրա վրա ճնշում չգործադրեց:

Երբ բողոքական աստվածաբան Դոկտոր Յոհաննես Լեպսիուսը 1915 թվականի հոկտեմբերի 5-ին Գերմանիայի Ռեյխսստագին ներկայացրեց Մտամբուլում անցկացրած իր հետազոտության արդյունքները, հայերի ողջ սուրբեկտային կազմը գրաքննության ենթարկվեց Գերմանիայի Ռեյխի կառավարության կողմից: 1916 թվականին Գերմանիայի ռազմական գրաքննությունը արգելեց և ազգրավեց Յոհաննես Լեպսիուսի «Թուրքիայում հայ ժողովրդի վիճակի մասին զեկույցը»: Այս

փաստաթղթերի պատճենները, որոնք Լեպսիուսն անմիջապես ուղարկել էր Գերմանիայի Ռեյխստագի պատվիրակներին, բռնագավթվեցին իշխանությունների կոմից և չհանձնվեցին պատվիրակներին մինչև 1919 թվականի պատերազմի ավարտը:

Այս Գերմանիայի Ռեյխի արդեն մոռացված ճնշողական քաղաքականությունը ցուց է տալիս, որ պատմության այս դրվագը դեռևս սպասվում էր բավարարող կերպով լուծում ստանալ այստեղ՝ Գերմանիայում:

**2005 ԹՎԱԿԱՆ, ՀՈՒԼԻՍԻ 14
ՎԵՆԵՍՈՒԵԼԱՅԻ ԲՈՒԻՎԱՐԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ**

Նախագահ՝ Նիկոլաս Մադուրո Մորոս
Բանաձև. Համաձայնագիր, որի միջոցով այս ժողովն արտահայտում է հայ ժողովրդի, նրա կառավարության և Հայաստան-Վենեսուելա ամուր և զարգացող համայնքի հանդեպ իր՝ արդար և հետաձգված մարդասիրական ջատագովության սատարումը:

Պաշտոնական տեղեկագիր՝ թիվ 38.230, 7/18/2005

Հաշվի առնելով, որ

Մարդկության պատմության առաջին գիտակցաբար ծրագրված, կազմակերպված և իրակացված ցեղասպանությունը տեղի է ունեցել 90 տարի առաջ՝ ուղղված հայ ժողովրդի դեմ, որ իրականացվել է «Երիտասարդ թուրքերի» ռեժիմի և իրենց «Պանթուրքիզմ» գաղափարախոսության կողմից՝ հանգեցնելով գրեթե երկու միլիոն ժողովրդի բնաջնջում:

Հաշվի առնելով, որ

Նման բնույթի հանցագործությունները պետք է դատապարտվեն՝ կանխելու դրանց կրկնությունը, վերականգնելու զոհերի մարդկային և ազգային իրավունքները, ինչպես նաև ապահովելու հանցագործների պատիժը:

Հաշվի առնելով, որ

Այս ցեղասպանությունը արժանի է թուրքերի և աշխարհի բոլոր ժողովուրդների կողմից մերժմանը:

Հաշվի առնելով, որ

Վենեսուելայի ժողովուրդը և պետությունը շարունակաբար դատապարտել են ահաբեկչությունը և ռասայական, էթնիկական, կրոնական ու քաղաքական խտրականությունը:

Հաշվի առնելով, որ

Վենեսուելայի ժողովուրդը և պետությունը մշտապես պայքարում են ահաբեկչության բոլոր ձևերի՝ ներառյալ պետական ահաբեկչության դեմ:

Հաշվի առնելով, որ

Քաղաքական պատճառներով և շահերով պայմանավորված՝ ցեղասպանությունը հերքելու միջոցով պատմությունը փոխելու շարունակական փորձ է կատարվում:

Ազգային ժողովը որոշում է

Առաջին՝ Կոչ անել հայ ժողովրդին, նրա կառավարությանը և Հայաստան-Վենեսուելա Համայնքին՝ սատարելու իրենց՝ արդարության գործող և հետաձգված մարդասիրական ձգտումներին:

Երկրորդ՝ դիմելու Եվրոպական միությանը հետաձգելու Թուրքիայի անդամակցությունը մինչև նրա կողմից Հայոց Ցեղասպանության ճանաչումը:

Երրորդ՝ Հանձնաժողով նշանակել՝ այս բանաձևը Հայաստանի խորհրդարանին և Հայոց կրոնական իշխանություններին հանձնելու լիազորությամբ:

Չորրորդ՝ Ձևավորել հայ ժողովրդի հետ բարեկամության խորհրդարանական խումբ:

Տրված, ստորագրված և կնքված Դաշնային օրենսդիր պալատում՝ Ազգային ժողովում, Կարակասայում, 2005 թվականի հուլիսի 14-ին, անկախության 195-րդ և դաշնության 146-րդ տարելիցին:

2005 թվական, դեկտեմբերի 15
ԼԻՏՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՅՄԻ
ԲԱՆԱԶԵՎԸ

Հայ ժողովրդի ցեղասպանությունը ճանաչելու մասին
Վիլնյուս, 2005-12-15

Լիտվայի Հանրապետության Մեյնը, նշելով հայ ժողովրդի ցեղասպանության 90-րդ տարելիցը,

Դատապարտելով 1915 թվականին Օսմանյան Կայսրության թուրքերի կողմից իրականացրած հայ ժողովրդի ցեղասպանությունը,

Կոչ է անում Թուրքիայի Հանրապետությանը՝ ճանաչելու պատմական այս փաստը:

ԱՐԳԵՆՏԻՆԱԻ ԱԶԳԱՅԻՆ ՕՐԵՆՔ 26.199

2007 թվական, հունվարի 11
ԱՊՐԻԼԻ 24 «ՄԱՐԴԿԱՆՑ ՄԻՋԵՎ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐԳԱՆՔԻ ՕՐ»՝
ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ
ԿՐԱՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՇՍԱԿԻՆ

Հոդված 1. Յուրքանայտուր տարի ապրիլի 24-ը հայտարարել որպես «Մարդկանց միջև հանդուրժողականության և հարգանքի օր»՝ ի հիշատակ այն ցեղասպանության, որի զոհն է դարձել հայ ժողովուրդը և այն ոգով, որ դրա հիշատակը մշտական դաս կլինի ներկայիս քայլերի և ապագայի նպատակների համար:

Հոդված 2. Լիազորել ծագումով հայ բոլոր աշխատողներին և պետական ծառայողներին՝ յուրաքանչյուր ապրիլի 24՝ հնարավորություն ունենալու մասնակցելու նրանց համայնքին հասցված ողբերգության հիշատակին նվիրված միջոցառումներին:

Հոդված 3. Լիազորել՝ նախնական և միջնակարգ հանրակրթական հաստատություններում սովորող ծագումով հայ բոլոր աշակերտներին՝ մասնակցելու հոդված 1-ով սահմանված հիշատակման օրվան:

Հոդված 4. Հրավիրել բոլոր մարզային կառավարություններին՝ աջակցելու սույն օրենքի բանաձևերին:

Հոդված 5. Ծանուցել Գործադիր իշխանությանը:

ԶԻԼԻՒ ՄԵՆԱՏԻ ԲԱՆԱԶԵՎ
2007 թվական, հունիսի 5
ՃԱՆԱԶԵԼՈՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մեծարգո Մենատը, հաշվի առնելով,

1. Որ 1915 թվականի ապրիլի 24-ին Կոնստանդնուպոլսում անարդարացի ձերբակալումից և հետագայում հայ համայնքի առաջատար դասի սպանությունից հետո սկիզբ է դնում հայ բնակչության համակարգված բնաջնջման քաղաքականությանը:

2. Որ դաժան ցեղասպանությունը իրականացվել է 1915 և 1923 թվականների միջև ընկած ժամանակահատվածում, որի արդյունքում մահացել են ավելի քան 1.5 միլիոն հայ քաղաքացիներ, որոնք հազարավոր տարիներ ապրում էին իրենց նախնիների հողերում,

3. Որ այս դատապարտելի արարքը 20-րդ դարի առաջին էթնիկ ոչնչացումն է, և ավելին՝ դրա վերաբերյալ ցանկացած մերժողական գանահատական կամ մեկնաբանում նշանակում է ազգի՝ մարդու իրավունքների կոպիտ խախտում:

4. որ, չնայած մարդկության հավաքական հիշողությունը ջնջելու մտադրությանը և գերտերությունների կողմից այս գործողություններին վերջ դնելու զգայունության կորստին, ամբողջ աշխարհի հայերը և մի քանի կազմակերպություններ գտել են միջազգային հանրության մի մաս, որը կարող է ճանաչել այն ցեղասպանությունը, որի զոհերն են դարձել իրենք:

5. որ նման ճանաչում է տեղի ունեցել 1985 թվականին ՄԱԿ-ի Խտրականության կանխման և փոքրամասնությունների պաշտպանության ենթահանձնաժողովը, որը Հայաստանում կատարված այս դեպքը որպես ցեղասպանություն է որակել:

6. Որ որոշ երկրներ, ինչպիսիք են Ուրուգվայը, Արգենտինան, Հունաստանը, Բուլղարիան, Բելգիան, Ռուսաստանը, Իտալիան, Լիբանանը, Շվեդիան, Շվեյցարիան, Հոլանդիան, Վենեսուելան, Լիտվան, Կանադան և Ֆրանսիան, Եվրախորհրդարանի նման ընդունել են իրենց սեփական բանաձևերը:

7. որ մեր ազգը դեռ պետք է զոջա մշտապես միջազգային հարաբերություններում՝ անկախ դրանց կարևորությունից, ցանկացած համաձայնագրերից կամ փոխզիջումից վեր կանգնած մարդու իրավունքների գերակայությունը վկայակոչելու համար:

8. Որ, հետևաբար, այն էթիկական կամ բարոյական հրամայական է, որը Չիլի ընդունում է բանաձև, որը ճանաչում է Օսմանյան կայսրության կողմից Հայաստանում իրականացված ցեղասպանությունը՝ անպաշտպան մարդկանց նկատմամբ, ովքեր այժմ միջազգային հանրության մի մասից, մասնավորապես Թուրքիայից բարոյական փոխհատուցում են պահանջում:

Վերոհիշյալ խնդիրների ուժով Հանրապետության Մեծարգո Մենատր որոշում է՝

1. *աջակցել հայերին՝ դատապարտելու իրենց ժողովրդի դեմ իրականացված ցեղասպանությունը*

2. *կոչ անել Չիլիի կառավարությանը՝ հավատարիմ լինել Միավորված ազգերի 1985 թվականի որոշմանը:*

ՇՎԵԴԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԲԱՆԱԶԵՎԸ 2010 թվական, մարտի 11

1. Առաջարկություն Խորհրդարանի որոշման համար

1. Խորհրդարանը հայտարարում է իր որոշումը թե ինչ է ամրագրված Շվեդիայի՝ 1915 թվականի հայերի, ասորիների, սիրիացիների, քաղղեականների և Պոնտոսի հույների դեմ կատարված ցեղասպանության վերաբերյալ միջնորդության մեջ:

2. Խորհրդարանը հայտարարում է իր որոշումը առ այն, որ միջնորդության մեջ Շվեդիան պետք է գործի ԵՄ-ի և ՄԱԿ-ի շրջանակներում՝ 1915 թվականի հայերի, ասորիների, սիրիացիների, քաղղեականների և Պոնտոսի հույների դեմ կատարված ցեղասպանությունը միջազգայնորեն ճանաչելու համար:

3. Խորհրդարանը հայտարարում է իր որոշումը առ այն, որ Շվեդիան պետք է գործի այնպես, որ Թուրքիան ճանաչի 1915 թվականի հայերի, ասորիների, սիրիացիների, քաղղեականների և Պոնտոսի հույների դեմ կատարված ցեղասպանությունը

2. Նախապատմություն

«Կենդանի պատմության համար ֆորում է հանդիսանում այն իշխանությունը, որը Հոլոքոստի հիման վրա ունի առաքելություն աշխատելու այնպիսի հարցերի հետ, որոնք վերաբերում են հանդուրժողականությանը, ժողովրդավարությանը և մարդու իրավունքներին: Լուսավորելով մարդկային պատմության մութ մասերը՝ մենք ցանկանում ենք ազդել ապագայի վրա»:

Այսպես կարելի է կարդալ մի գործակալության նկարագրությունը, որը Շվեդիայի կառավարության հրամանով 1915 թվականի ցեղասպանության մասին այլոց կրթելու առաքելություն ունի: Պատմության այս դասը այսօրվա ժողովրդավարության անկյունաքարերից մեկն է, որից մենք սովորել ենք մեր սխալները և մենք պայքարում ենք ավելի լավ ապագայի համար կանխելով վաղ ժամանակների սխալների կրկնությունը:

Ամեն դեպքում հետագա սխալ քայլերը կանխումը չի կարող իրականացվել, եթե որևէ մեկը բացահայտորեն չի ճանաչում իր կատարած սխալները: Այսպիսով, պատմության ռեկոնստրուկցիայի պատմության մութ էջերի կրկնությունը նպաստող վտանգավոր գործիք է:

1915 թվականի ցեղասպանությունն առաջին հերթին կործանեց հայերին, ասորիներին, սիրիացիներին, քաղղեականներին և Պոնտոսի հույներին, բայց հետագայում նաև այլ փոքրամասնությունների համար հետևանքներ ունեցավ: Դա մեծ Թուրանական կայսրության Մեծ Թուրանի երազանքն էր, որն իրականացվեց թուրք ղեկավարների կողմից, որոնք 19-րդ դարի սկզբին ցանկանում էին էթնիկապես գտել քայքայվող Օսմանյան կայսրության մնացորդը: Նրանք դրան հասան ընթացող համաշխարհային պատերազմի քողի տակ, երբ կայսրության հայ, ասորի, սիրիացի, քաղղեական և Պոնտոսի հույն բնակչությունը գրեթե ամբողջովին բնաջնջվեց: Հետագոտողների հաշվարկներով մոտավորապես 1,500,000 հայեր, 250,000-ից 500,000 ասորիներ, սիրիացիներ, քաղղեականներ և մոտավորապես 350,000 Պոնտոսի հույներ սպանվել կամ ոչնչացվել են:

1918 թվականի Թուրքիայի հաղթանակին հաջորդող կարճ ժամանակահատվածի ընթացքում՝ մինչև Մուստաֆա Քեմալի ղեկավարության ներքո գտնվող Թուրքական ազգայնական շարժման ժամանակները, ցեղասպանությունը բացահայտորեն քննարկվում էր: Քաղաքական և ռազմական առաջնորդները դատապարտվեցին՝ մեղադրվելով «պատերազմի հանցագործությունների» և «մարդկության դեմ ուղղված հանցագործությունների» համար: Նրանց մի քանիսը մեղավոր ճանաչվեցին և դատապարտվեցին մահապատժի կամ ազատազրկման: Այս դատավարությունների ժամանակ Օսմանյան կայսրության փոքրամասնությունների հետապնդումների վերաբերյալ սարսափելի մանրամասներ բացահայտվեցին: Այսպիսով Թուրքիան այն նույն փուլով անցավ, ինչ որ Գերմանիան՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում: Այնուամենայնիվ, դատական վարույթը կարճ կյանք ունե-

ցավ: Թուրքիայի ազգայնական շարժման առաջացումը և սուլթանության լուծարումը հանգեցրին դատավարությունների դադարեցմանը և մեղադրյալների մեծ մասը ազատ արձակվեց: Քրիստոնյա բնակչության գրեթե ամբողջ մնացած մասը՝ հայեր, ասորիներ, սիրիացիներ, քաղղեականներ և Պոնտոսի հույներ, աքսորվեցին այն վայրերից, որտեղ բնակվել էին հազարավոր տարիներ:

3. ՄԱԿ-ի Ցեղասպանության մասին 1948 թվականի Կոնվենցիան, Եվրախորհրդարանը և պաշտոնական ճանաչումները

Ռաֆայել Լեմկինը՝ լեհական հրեա իրավաբանը՝ ով 1940-ականների ընթացքում «ցեղասպանություն» տերմինի հեղինակը և ՄԱԿ-ի Ցեղասպանություն հանցագործության կանխման և պատժման մասին Կոնվենցիայի հայրը, լիովին տեղյակ էր 1915 թվականի ցեղասպանության և միջազգային հանրության միջամտության ձախողման մասին: Իր մշակած սահմանումը ընդգրկվել է ՄԱԿ-ի Կոնվենցիայի մեջ, որն արտահայտում է հետևյալը

Հոդված 2. Սույն Կոնվենցիայում ցեղասպանություն նշանակում է հետևյալ գործողություններից ցանկացածը՝ կատարված ազգային, էթնիկական, ցեղական կամ կրոնական որևէ խմբի, որպես այդպիսին, լրիվ կամ մասնակի ոչնչացման մտադրությամբ

- այդ խմբի անդամների սպանությունը,
- այդ խմբի անդամներին մարմնական լուրջ վնասվածքներ կամ մտավոր վնաս պատճառելը,
- որևէ խմբի համար կյանքի այնպիսի պայմանների միտումնավոր ստեղծումը, որոնք ուղղված են նրա լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը,
- այդ խմբի միջավայրում մանկածնությունը կանխելուն միտված միջոցների իրականացումը,
- երեխաների բռնի փոխանցումը մարդկային մի խմբից մյուսին:

Ավելին՝ սահմանված է, որ ներկայիս ՄԱԿ-ի 1948 թվականի Կոնվենցիան նոր օրենսդրություն չէ, այլ միմիայն գոյություն ունեցող «մարդկության դեմ ուղղված հանցագործությունների» մասին միջազգային օրենքների վավերացում է, որոնք շարադրված են 1920 թվականի Սևրի Պայմանագրի 230-րդ հոդվածում: Նույնիսկ կարևոր փաստ է այն, որ Պատերազմի Հանցագործությունների և Մարդկության Դեմ ուղղված Հանցագործությունների կանոնադրական սահմանափակում-

ների անընդունելիության մասին ՄԱԿ-ի Կոնվենցիան՝ ընդունված 1968 թվականի նոյեմբերի 26-ին, ուժի մեջ սկսած 1970 թվականի նոյեմբերի 11-ից վավերացնում է դրա հետադարձ ուժը և ոչ պարտադիր բնույթը: Հենց այս պատճառով, համաձայն ՄԱԿ-ի Կոնվենցիայի՝ և Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած ջարդերը, և Հոլոքոստը ցեղասպանության դեպքեր են՝ չնայած այն փաստին, որ դրանք տեղի են ունեցել մինչև կոնվենցիայի սահմանումը:

ՄԱԿ-ի պատմության ընթացքում ցեղասպանության մասին երկու խոշոր հետազոտություններ զեկույցներ են պատրաստվել: Առաջինը, այսպես կոչված, 1978 թվականի Ռուհաշյանկիկոյի զեկույցն էր և երկրորդը՝ Ուայթաքերի զեկույցը, որը քննարկվել է 1985 թվականին, (Մարդու իրավունքների հանձնաժողովի Տնտեսական և սոցիալական խորհուրդ, Խտրականության կանխման և փոքրամասնությունների պաշտպանության ենթահանձնաժողով, երեսուներորդ նստաշրջան, ժամանակավոր օրակարգի նյութ 4 E/CN.4/Sub.2/1985/6): 1915 թվականի ցեղասպանությունը մի քանի տեղերում հիշատակվում է որպես 20-րդ դարի ընթացքում տեղի ունեցած ցեղասպանության օրինակ: 1985 թվականի օգոստոսին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի ենթահանձնաժողովում զեկույցը քվեարկվել է 14 կողմ, 1 դեմ (4 ձեռնպահ) կարգով: 1987 թվականի հունիսի 18-ին Եվրախորհրդարանը պաշտոնապես ճանաչեց Հայոց ցեղասպանությունը: 1965 թվականին՝ ցեղասպանության 50-րդ տարելիցին, մի քանի երկրներ և կազմակերպություններ պաշտոնապես ճանաչեցին 1915 թվականի ցեղասպանությունը, այդ թվում՝ Ուրուգվայը (1965 թ.), Կիպրոսը (1982 թ.), Ռուսաստանը (1995 թ.), Հունաստանը (1996 թ.), Լիբանանը (1997 թ.), Բելգիան (1998 թ.), Ֆրանսիան (1998 թ.), Իտալիան (2000 թ.), Վատիկանը (2000 թ.), Շվեյցարիան (2003 թ.), Արգենտինան (2003 թ.), Կանադան (2004 թ.), Սլովակիան (2004 թ.), Նիդերլանդները (2004 թ.), Լեհաստանը (2005 թ.), Վենեսուելան (2005 թ.), Գերմանիան (2005 թ.), Լիտվան (2005 թ.) և Չիլին (2007 թ.):

4. 1915 թվականի Ցեղասպանության մասին հետազոտությունը և Շվեդիայի դիրքորոշումը

Հոլոքոստից հետո 1915 թվականի ցեղասպանությունը համարվում է արդի ժամանակների ամենաուսումնասիրված գործը: Այսօր ցեղասպանագետների ճնշող մեծամասնության մեջ մի լայն և միջառար-

կայական կոնսետուս գոյություն ունի, որոնք Առաջին Համաշխարհային պատերազմի ընթացքում Օսմանյան Կայսրությունում տեղի ունեցած զանգվածային ջարդերը ցեղասպանություն են համարում, և որը «ցեղասպանություն նախատիպ» է համարվում (մինչդեռ Հոլոքոստը կոչվում է «ցեղասպանություն հարացույց»)։ Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիան (IAGS) այս ոլորտում անկախ համաշխարհային առաջատար և միջառարկայական մարմինը, մի քանի առիթներով ժամանակ այս հարցի շուրջ մի կոնսետուս է վավերացրել՝ 1997 թվականի հունիսի 13-ին, 2005 թվականի հունիսի 13-ին, 2007 թվականի հոկտեմբերի 13-ին և 2008 թվականի ապրիլի 23-ին։ 2007 թվականի հուլիսի 13-ի բանաձևը շարադրված է հետևյալ կերպ՝

Հաշվի առնելով այն, որ ցեղասպանության հերքումը լայնորեն ճանաչված է որպես ցեղասպանության եզրափակիչ փուլ, որն ամրագրում է ցեղասպանության հանցագործների անպատժելիությունը և ակնհայտորեն ճանապարհ է հարթում ապագա ցեղասպանությունների համար;

Հաշվի առնելով այն, որ Օսմանյան կայսրության՝ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում կամ հետո փոքրամասնությունների դեմ իրագործած ցեղասպանությունը, որը սովորաբար անվանվում է որպես ցեղասպանություն միայն հայերի դեպքում՝ Օսմանյան կայսրության կողմից քրիստոնյա այլ փոքրամասնությունների դեմ որակապես քիչ տարբերվող ցեղասպանությունների առկայության ճանաչելը,

ՈՐՈՇՎՈՒՄ Է, որ դա Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիայի դատապարտում է, որ քրիստոնյա փոքրամասնությունների դեմ 1914 թվականից մինչև 1923 թվականը Օսմանյան կայսրության կողմից իրականացվել է ցեղասպանություն հայերի, ասորիների և Պոնտոսի ու Անատոլիայի հույների դեմ:

ԱՅՆՈՒՇԵՏԵՎ ՈՐՈՇՎՈՒՄ Է, որ Ասոցիացիան կոչ է անում Թուրքիային՝ ճանաչելու ժողովուրդների դեմ կատարած ցեղասպանությունները, խնդրելու պաշտոնական ներողություն և ռեստիտուցիայի (փոխհատուցման) հրատապ ու բովանդակալից քայլեր կատարել:

Հունիսի 8-ին ցեղասպանության ավելի քան 60 համաշխարհային առաջատար փորձագետներ դիմում են ստորագրել՝ ուղղված Խորհրդարանին, որտեղ նրանք ժխտել են 1915 թվականի ցեղասպանության վերաբերյալ գիտնականների միջև եղած տարակարծությունը: Հետագո-

տությունը պետք է շարունակվի և թե՛ Թուրքիան, թե՛ աշխարհը բաց, անկախ և անխափան հնարավորություններ պետք է ապահովեն, Թուրքիան կողմից պետք է իր արխիվների լիարժեք ուսումնասիրման, գիտնականների, հեղինակների, լրագրողների և հրատարակիչների կողմից նման քննարկումներ կատարելու թույլտվություն տա՝ կրելով ցեղասպանության իրականության մասին մեկնաբանություններ կատարելու համար մեղադրվելու ռիսկը:

Ուփսալայի համալսարանի նոր հետազոտությունը վկայում է նաև 1915 թվականի վերաբերյալ Շվեդիայի իրական գիտելիքի մասին: Շվեդիայի արտաքին գործերի նախարարը և Գլխավոր շտաբի աշխատակազմը լավատեղյակ էին ընթացող բնաջնջումների մասին Շվեդիայի դեսպան Պեր Գյուստավ Օգյուստ Կոսվա Անցկարսվարդի և Շվեդիայի Ռազմական կցորդ Էինար աֆ Վիրսենի (երկուսն էլ տեղակայված լինելով Կոստանդնուպոլսում)՝ Մտոկհոլմ ուղարկած զեկույցների միջոցով: Դրանց մեջ կարելի է ընթերցել հետևյալները՝

*Անցկարսվարդ, 1915 թվական, հուլիսի 6. «Պարոն նախարար, հայերի հետապնդումները սարսափելի չափերի են հասել և ամեն ինչ մատնացույց է անում այն փաստը, որ երիտթուրքերը ցանկանում են օգտվել այդ հնարավորությունից, քանզի որոշ պատճառների ուժով արտաքին ճնշումներ չկան, որոնցից նրանք կարող են վախենալ՝ ընդմիջտ վերջ դնելու հայկական հարցին»: Սրա համար միջոցները բավականին պարզ են, և դրանք կիրառվում են հայ ժողովրդի բնաջնջման ճանապարհով:

* Անցկարսվարդ, 1915 թվական, հուլիսի 22. «Ոչ միայն հայ, այլև հույն ազգությամբ թուրքական սևբյելուներն են այժմ ենթարկվում դաժան հետապնդումների... Պրն. Ծամադոսի համաձայն՝ [հունական գործերի ժամանակավոր հավատարմատար] դրանք (տեղահանությունները) չեն կարող լինել այլ բան, քան Թուրքիայում բնաջնջման պատերազմ հույն ժողովրդի դեմ...»:

* Անցկարսվարդ, 1915 թվական, սեպտեմբերի 2. «Վեց, այսպես կոչված, հայկական վիլայեթներ, թվում է, ամբողջովին մաքրվել են կաթոլիկ հայերից... Ակնհայտ է, որ թուրքերն օգտվում են այժմ՝ պատերազմի ժամանակ հայ ժողովրդին բնաջնջելու հնարավորությունից, այնպես որ, երբ խաղաղություն տիրի, հայկական հարցն այլևս գոյություն չունենա»:

* Վիրսեն, 1916 թվական, մայիսի 13. «Առողջական վիճակն Իրաքում սարսափելի է: Տիֆի տենդը բազմաթիվ գոհեր է պատճառում: Հա-

յերի տեղահանությունները զգալիորեն նպաստել են վարակի տարածմանը, քանի որ հարյուր հազարավոր արտաքսվածներ (հայեր) քաղցից կամ ճանապարհների զրկանքներից մահացել են»:

* Անցկարսվարդ, 1917 թվական, հունվարի 5. «Իրավիճակը բոլորովին այլ կլիներ, եթե Թուրքիան հետևեր Կենտրոնական իշխանությունների խորհրդին թույլ տալով նրանց կազմակերպելու պահուստավորման հարցը և այլն ... Նույնիսկ ավելի վատ է այն, որ սա ամեն դեպքում հայերի բնաջնջումն է, որը, թերևս, կարող էր կանխվել, եթե գերմանական խորհրդատուները ժամանակին իշխանություն ստանային քաղաքացիական աշխատակազմի նկատմամբ, քանի որ գերմանացի սպաներն իրականում զբաղվում են բանակով և նավատորմով»:

* Էնվոյ Ահլգրեն, 1917 թվականի օգոստոսի 20. «Բարձր գները շարունակում են աճել... Կան մի քանի պատճառներ: ... և, վերջապես, շատ է նվազում աշխատուժը, որը մասամբ պայմանավորված է մոբիլիզացումով, բայց մասամբ էլ հայ ցեղի բնաջնջմամբ»:

Իր հուշերում՝ «Խաղաղության և պատերազմի հուշեր» (1942), Wirsén-ը մի ամբողջ գլուխ նվիրել է ցեղասպանությանը: «Մի ազգի սպանություն» աշխատության մեջ Wirsén-ը գրում է.

«Պաշտոնապես սրանք (տեղահանությունները) հայ բնակչությանը Հյուսիսային Միջագետքի և Սիրիայի տափաստանների շրջանները տեղափոխելու նպատակ ունեն, բայց իրականում դրանք ուղղված են հայերի բնաջնջմանը, որի արդյունքում մաքուր թուրքական տարրը Փոքր Ասիայում գերիշխող դիրքի կարող է հասնել... Հայ ժողովրդի բնաջնջումը Փոքր Ասիայում կարող է խախտել մարդկային բոլոր զգացմունքները: Այն ճանապարհը, որով հայկական հարցը լուծվեց, սարսափելի էր»:

Բացի այդ, կան միսիոներների և դաշտային աշխատողների բազմաթիվ վկայություններ, ինչպիսիք են Ալմա Յոհանսոնի, Մարիա Ան-հոլմի, Լարս Էրիկ Հյոգբերգի, Է. Ջոն Լարսոնի, Օլգա Մոբերգի, Պեր Փեհրսոնի և այլ հրապարակումներում: Հյելմեր Բրենթինգը հենց առաջին մարդն է, ով Լեմկինից վաղ օգտագործեց ցեղասպանություն բառը («folk-mord»), երբ նա 1917 թվականի մարտի 26-ին հայության հալածանքները կոչեց «կազմակերպված և համակարգված ցեղասպանություն ավելի վատ, քան մի բան, որ մենք երբևէ տեսել ենք Եվրոպայում»:

1915 թվականի ցեղասպանության ճանաչումը ոչ միայն կարևոր է տուժած էթնիկական խմբերի ու փոքրամասնությունների փոխհատուցում ստանալու համար, որոնք շարունակում են ապրել Թուրքիայում,

այլև խթանելու Թուրքիայի զարգացումը: Թուրքիան չի կարող ավելի ժողովրդավարական դառնալ, եթե իր անցյալի ճշմարտությունը հերքվում է:

Հայ լրագրող Հրանտ Դինքը սպանվել է ցեղասպանության վերաբերյալ բացեիքաց արտահայտվելու համար և մի քանիսն էլ հետապնդվել են միննույն տխրահռչակ 301-րդ հոդվածով: Թուրքիայի կառավարության կողմից օրենքի վերջին փոփոխությունները զուտ կոսմետիկ բնույթ են կրում և որևէ փոփոխություն չեն ենթադրում: Ասում են պատմությունը պետք է պատմաբաններին թողնել և մենք լիովին համաձայն ենք: Սակայն, դա քաղաքագետների պարտականությունն է՝ գործել պատմական փաստերին և պատմական հետազոտություններին համապատասխան:

Բացի դրանից, Շվեդիայի՝ ճշմարտության և պատմական փաստի ճանաչումը չպետք է Թուրքիայի բարեփոխումների աշխատանքի կամ Թուրքիա-ԵՄ բանակցությունների համար որևէ խոչընդոտ ենթադրի: Վերոհիշյալ հիմքերով մենք համարում ենք, որ Շվեդիան պետք է ճանաչի 1915 թվականի հայերի, ասորիների /սիրիացիների/, քաղղեացիների և Պոնտոսի հույների ցեղասպանությունը: Մա խորհրդարանը Կառավարությանը պետք է ներկայացնի՝ որպես իր դիրքորոշում:

Բացի դրանից, մենք կարծում ենք, որը Շվեդիան պետք է գործի միջազգայնորեն՝ ԵՄ և ՄԱԿ-ի շրջանակներում՝ ճանաչելու 1915 թվականի հայերի, ասորիների /սիրիացիների/ քաղղեացիների և Պոնտոսի հույների ցեղասպանությունը: Մա խորհրդարանը Կառավարությանը պետք է ներկայացնի՝ որպես իր դիրքորոշում:

Քանի դեռ երկրները, ինչպիսին Շվեդիան է, ձեռքում ունեցած ճշմարտությամբ և փաստերով չեն դիմագրավում Թուրքիային, Թուրքիան չի կարող առաջ տանել իր ճանապարհը դեպի ավելի բաց հասարակություն, ավելի լավ ժողովրդավարություն և լիովին բացել ԵՄ-ին անդամակցելու իր հնարավորությունները: Հետևաբար, Շվեդիան պետք է գործի այնպես, որ Թուրքիան ճանաչի 1915 թվականի հայերի, ասորիների /սիրիացիների/ քաղղեացիների և Պոնտոսի հույների ցեղասպանությունը: Մա խորհրդարանը Կառավարությանը պետք է ներկայացնի՝ որպես իր դիրքորոշում:

Ստոկհոլմ, 2008 թվական, հոկտեմբերի 2

Մաս 3

**ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ**

**ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԶԵԿՈՒՅՑ**

1948 թվական, մայիսի 28

«... Եռյակ միության Կառավարությունների կողմից այս առիթով Թուրքիայի կառավարությանը տրված նախազգուշացումը հստակ գործ ուներ ժամանակակից տերմինով «մարդկության դեմ ուղղված հանցագործությունների» արարքներից մեկի հետ, որն ուղղված է սքոդելու կառավարության կողմից իր իսկ սուբյեկտների դեմ կատարած անմարդկային արարքները:

Միավորված ազգերի՝ Մարդու իրավունքների հանձնաժողովի Տնտեսական և սոցիալական խորհուրդ

Զեկույցը պատրաստվել է Միավորված ազգերի Պատերազմի հանցագործությունների հանձնաժողովի կողմից

Միավորված ազգերից ստացված խնդրանքի համաձայն
Սահմանափակված - E/CN.4/W.20 -1948 թվականի մայիսի 28

Պատերազմի հանցագործների դատավարություններից ծագող, մարդու իրավունքներին վերաբերող տեղեկատվություն

II. Զարգացումներն Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում

1. Հայերի զանգվածային ջարդերը Թուրքիայում

Թուրքիայում Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին տեղի ունեցած հայ բնակչության զանգվածային ջարդերի հետ կապված՝ Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի Կառավարությո-

յունները 1915 թվականի մայիսի 28-ին ընդունել են հռչակագիր՝ դրանք հայտարարելով որպես «մարդկության և քաղաքակրթության դեմ ուղղված հանցագործություններ», որի համար Թուրքիայի Կառավարության բոլոր անդամներն իրենց՝ այդ ջարդերում ներգրավված գործակալների հետ պետք է պատասխանատվության ենթարկվեին: Հռչակագրի համապատասխան մասում ասվում է հետևյալը.

«Հաշվի առնելով մարդկության և քաղաքակրթության դեմ ուղղված Թուրքիայի այդ նոր հանցագործությունները՝ Դաշնակից կառավարությունները հրապարակավ հայտարարում են Բարձր Դռանը, որ իրենք անձամբ են պատասխանատվության ենթարկելու Օսմանյան կառավարության բոլոր անդամներին և այդ ջարդերում ներգրավված նրանց գործակալներին»:

Ինչպես այնուհետև ավելի մանրամասն կերևա, Եռյակ միության կառավարությունների կողմից այս առիթով Թուրքիայի կառավարությանը տրված նախազգուշացումը հստակ գործ ուներ ժամանակակից տերմինով «մարդկության դեմ ուղղված հանցագործությունների» արարքներից մեկի հետ, որն ուղղված է սքոդելու կառավարության կողմից իր իսկ սուբյեկտների դեմ կատարած անմարդկային արարքները:

Թուրքիայի հետ առաջին հաշտության պահանագիրը՝ 1920 թվականի օգոստոսի 20-ին ստորագրված Մերի պայմանագիրը իր՝ պատերազմի օրենքների և սովորույթների խախտումների վերաբերյալ դրույթների հետ (Հոդվածներ 226-228, որոնք համապատասխանում էին Վերսալի պայմանագրի հոդվածներ 228-230) լրացուցիչ կերպով պարունակում էր մեկ այլ դրույթ՝ հոդված 230, որով Թուրքիայի կառավարությունը ստանձնեց Դաշնակից Պետություններին հանձնել Թուրքիայի տարածքում պատերազմի ժամանակ զանգվածային ջարդեր իրականացրած պատասխանատու անձանց: Հոդվածի համապատասխան մասերը հետևյալն են՝

Թուրքական կառավարությունը պարտավորվում է դաշնակից պետություններին հանձնել բոլոր նրանց, որոնց ձերբակալումը անհրաժեշտ կհամարեն նրանք, որպես պատասխանատուների 1914 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ Թուրքական կայսրության մաս կազմող տարածքի վրա շարունակվող պատերազմի պայմաններում իրականացված կոտորածների համար...":

«Դաշնակից պետությունների իրավասության տակ է դրվում այդ անձանց դատելու տրիբունալների հաստատումը, և թուրքական կա-

ռավարությունը պարտավորվում է ճանաչել այդ տրիբունալները»

«Այն դեպքում, եթե Ազգերի լիգան կարողանա ճիշտ ժամանակին ստեղծել նշված վայրագությունները դատելու իրավասություն ունեցող դատարան, Դաշնակից տերություններին իրավունք է վերապահվում հանձնել նշված մեղադրյալներին այդ դատարանին, իսկ օսմանյան կառավարությունը հավասարապես պարտավորվում է ճանաչել այդ դատարանը»:

Սևրի հաշտության պայմանագրի հոդված 230-ի դրույթները Դաշնակիցների 1915 թվականի նոտային համապատասխան, ակնհայտորեն մտադրված էին ծածկելու նախորդ բաժնին վերաբերող հանցագործությունները, որոնք իրականացվել էին Թուրքիայի տարածքում հայ կամ հույն ռասայի պատկանող Թուրքիայի քաղաքացիների դեմ: Այս հոդվածը, հետևապես, Նյուրենբերգի և Տոկիոյի Կանոնադրությունների Հոդված 6 գ և 5 գ-ի նախադեպերն են, և այն, ինչպես կարելի է հասկանալ այդ արարքներից, «մարդկության դեմ ուղղված հանցագործությունների» կատեգորիաների մեկ օրինակ է առաջարկում:

Այնուամենայնիվ Սևրի պայմանագիրը չվավերացվեց և ուժի մեջ չմտավ: Այն փոխարինվեց 1923 թվականի հուլիսի 24-ի Լոզանի պայմանագրով, որը պատերազմի հանցագործություններ պատժիժների վերաբերյալ դրույթներ չէր պարունակում, բայց ուղեկցվում էր «Ամենատիպի հռչակագրով» այն բոլոր հանցագործությունների համար, որոնք կատարվել էին 1914 թվականի օգոստոսի 1-ից մինչև 1922 թվականի նոյեմբերի 20-ը:

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ
ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎԻ ԲԱՆԱԶԵՎ
2001 թվական, ապրիլի 24

Հայոց ցեղասպանության ճանաչումը

Փաստաթուղթ 9056

Գրավոր հռչակագիր No. 320

Այս գրավոր հռչակագիրը պարտավորեցնում է միայն այն անդամներին, ովքեր ստորագրել են այն,

Այսօր հիշատակելով 20 - րդ դարի առաջին ցեղասպանության տարելիցը՝ Հայոց ցեղասպանությունը, և հարգանքի տուրք մատուցելով նրա զոհերի հիշատակին.

Դատապարտելով ցեղասպանության հանցագործության բոլոր դրսևորումները՝ որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություններ.

Հաշվի առնելով, որ Ցեղասպանության ակտերը միանշանակ մերժելը անհրաժեշտ միջոց է, որը կօգնի խուսափել դրա կրկնությունից.

Նկատի ունենալով այն փաստը, որ բազմաթիվ Եվրոպական հաստատություններ, Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների մի շարք խորհրդարաններ ընդունել են Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևեր և հայտարարություններ, Ֆրանսիայի Ազգային ժողովը՝ օրենք.

Հաշվի առնելով, որ միջազգային հանրության կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը ի վերջո թույլ կտա թուրքական իշխանություններին կատարել նմանատիպ ընդունում և որպես հետևանք կհանգեցնի հայ - թուրքական հարաբերությունների բարելավմանը և հետևաբար կնպաստի տարածաշրջանային խաղաղությանը, անվտանգությանն ու կայունությանը,

Ներստորոգյալները՝ Վեհաժողովի անդամները, դիմում են Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական Վեհաժողովի անդամներին՝ ձեռնարկել անհրաժեշտ քայլերը՝ ուղղված 20-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրության կողմից հայերի դեմ իրականացրած ցեղասպանության ճանաչմանը:

Ստորագրեցին

Ընդհանուր = 63

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ Բ Ա Ն Ա Ձ Ե Վ Ը

**«ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ»
18 ՀՈՒՆԻՍԻ 1987Թ.**

- Եվրոպական խորհրդարանը՝ նկատի ունենալով
- սոցիալիստների խմբի անունից պր. Սաբիի և մյուսների ներկայացրած առաջարկությունը Հայկական հարցի քաղաքական լուծման մասին (փաստաթուղթ 2-737/84թ.),
 - պր. Կոլոկոտրոնիսի ներկայացրած առաջարկությունը Հայկական հարցի և ապրիլի 24-ը Հայոց ցեղասպանության հիշատակի օր հայտարարելու մասին (փաստաթուղթ 2-360/85թ.),
 - Եվրոպական խորհրդարանի քաղաքական հանձնաժողովի զեկուցագիրը (փաստաթուղթ 2-33/87թ.),
 - ա) հաշվի առնելով՝
 - պր. Ժակեի և նրա համախոհների ներկայացրած առաջարկությունը հայ ժողովրդի կացության մասին (փաստաթուղթ 1-782/81թ.),
 - սոցիալիստների խմբի անունից տիկ. Դյուպորի և պրն. Գլինի ներկայացրած առաջարկությունը Հայկական հարցի քաղաքական լուծման մասին (փաստաթուղթ 1-735/83թ.),
 - տիկ. Դյուպորի գրավոր հարցումը Հայկական հարցի մասին,
 - Եվրոպական խորհրդի մշակութային գործերի մինիստրների խորհրդակցության 1986թ. նոյեմբերի 13-ին ընդունված որոշումը, որը վերաբերում է Եվրոպական ճարտարապետական ժառանգության պահպանությանը՝ ներառյալ Եվրոպական տնտեսական համագործակցության երկրների տարածքից դուրս գտնվող հուշարձանները,
 - բ) համոզմունք հայտնելով, որ Թուրքիայում բնակվող հայ ժողովրդի ճանաչումն իսկ ենթադրում է նրա ճանաչումը որպես ինքնատիպ էթնիկական, մշակութային, լեզվական և կրոնական փոքրամասնություն,
 - գ) նկատի ունենալով, որ հայերը ՄԱԿ-ի 1948 թ. կոնվենցիայի համաձայն այդ իրադարձությունները (1915 թ. կոտորածները) որակում են որպես կազմակերպված ցեղասպանություն,
 - դ) նկատի ունենալով, որ թուրքական պետությունը մերժում է ցեղասպանության մեղադրանքը համարելով անհիմն,
 - ե) հաստատելով, որ թուրքական կառավարությունը, մերժելով մինչև օրս՝ ճանաչել 1915թ. ցեղասպանությունը, շարունակում է այդ-

- պիսով գրկել հայ ժողովրդին իր սեփական պատմության իրավունքից,
- զ) նկատի ունենալով, որ պատմականորեն ապացուցված Հայոց ցեղասպանությունը մինչև այժմ ոչ ենթարկվել է քաղաքական դատապարտման և ոչ էլ ստացել է համապատասխան հատուցում,
 - ե) նկատի ունենալով, որ Թուրքիայի կողմից Հայկական ցեղասպանության ճանաչումը այսուհետև կդիտվի որպես հայերի նկատմամբ բարոյական իրավունքի վերականգման խորապես մարդկային ակտ, որը միայն պատիվ կարող է բերել թուրքական կառավարությանը,
 - ը) խորապես ավստանք հայտնելով և դատապարտելով 1973-ից 1986 թթ. ընթացքում հայկական խմբավորումների անիմաստ ահաբեկչությունը, ինչպես նաև բազմաթիվ մահափորձեր, որոնց հետևանքով զոհվեցին կամ վիրավորվեցին բազմաթիվ անմեղ մարդիկ, ինչը դատապարտվեց հայ ժողովրդի ճնշող մեծամասնության կողմից,
 - թ) նկատի ունենալով, որ իրարահաջորդ թուրքական կառավարությունների անհաշտ դիրքորոշումը Հայկական հարցի նկատմամբ ոչ մի կերպ չի նպաստել լարվածության թուլացմանը՝
 1. Այն կարծիքն է հայտնվում, որ Հայկական հարցը, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների հարցը պետք է քննարկվեն Թուրքիայի և Եվրոպական Տնտեսական Համագործակցության միջև գոյություն ունեցող հարաբերությունների շրջանակներում. ընդգծում է, որ ժողովրդավարությունը կարող է արմատապես հաստատվել երկրում (Թուրքիայում) այն պայմանով միայն, եթե այդ երկիրը ճանաչի և հարստացնի իր պատմությունը իր էթնիկական և մշակութային բազմազանությամբ:
 2. Գտնում է, որ ողբերգական իրադարձությունները, որ տեղի ունեցան 1915-1917թթ. Օսմանյան կայսրության տարածքում հայերի նկատմամբ, հանդիսանում են ցեղասպանություն՝ համաձայն ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1948թ. դեկտեմբերի 9-ին ընդունված «Ցեղասպանությունը կանխելու և դրա համար պատժելու մասին» կոնվենցիայի:
- Նշում է միաժամանակ, որ ժամանակակից Թուրքիան պատասխանատու չի կարող համարվել Օսմանյան կայսրության հայ բնակչության ողբերգության համար և ամենայն հաստատակամությամբ ընդգծում է, որ պատմական այդ իրադարձությունների ճանաչումը որպես ցեղասպանություն առիթ չի կարող հանդիսանալ քաղաքական, իրավական կամ նյութական որևէ պահանջի այսօրվա Թուրքիայի

նկատմամբ:

3. Պահանջում է (Եվրոպական) խորհրդից ճնշում գործադրել ներկայիս կառավարության վրա, որպեսզի վերջինս ճանաչի 1915-1917թթ. հայերի հանդեպ կազմակերպված ցեղասպանությունը և այդպիսով նպաստի քաղաքական երկխոսության հաստատմանը Թուրքիայի և հայերի լիազոր պատվիրակների միջև:

4. Ելնում է նրանից, որ հայ ժողովրդի դեմ անցյալում երիտթուրքական կառավարության իրականացված ցեղասպանության ներկայիս ճանաչումից հրաժարումը թուրքական կառավարության կողմից, Հունաստանի հետ գոյություն ունեցող վիճելի հարցերում միջազգային իրավական նորմերի կիրառումից հրաժարումը, Կիպրոսում թուրքական օկուպացիոն գործերի պահպանումը, ինչպես նաև քրդական իրադարձությունների ժխտումը, այդ երկրում (Թուրքիայում) իսկական պառլամենտական ժողովրդավարության բացակայությունը, անհատական, հասարակական ու հատկապես կրոնական ազատությունների ոտնահարումը՝ այս ամենը անհաղթահարելի արգելքներ են Եվրոպական Տնտեսական Համագործակցության կազմի մեջ Թուրքիայի հնարավոր ընդունման հարցի քննարկման համար:

5. Նկատի ունենալով տեղի ունեցած (հայ ժողովրդի) ողբերգությունը, միանում է ազգային ինքնատիպությունը զարգացնելու նրա ցանկությանը, երաշխավորելու իր իրավունքը որպես փոքրամասնություն և անարգել օգտվելու մարդու և քաղաքացու իրավունքներից, ինչպես որ դրանք սահմանված են մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի դրույթներում ու նրա համապատասխան արձանագրություններում:

6. Վճռականորեն պահանջում է, որ Թուրքիայում ապրող հայ փոքրամասնության ազգային ինքնության, նրա լեզվի, կրոնի, մշակութի և կրթության համակարգի նկատմամբ ցուցաբերվի արդար վերաբերմունք, նաև հանդես է գալիս պատմական հուշարձանների պահպանության գործի բարելավման, այդ թվում նաև՝ թուրքահայերի կրոնական-ճարտարապետական ժառանգության պահպանման ու կոնսերվացման օգտին և ցանկություն է հայտնում, որ Եվրոպական տնտեսական համագործակցությունն ուսումնասիրի այդ նպատակը օժանդակող հնարավոր միջոցներ ձեռնարկելու հարցը:

7. Այս կապակցությամբ կոչ է անում Թուրքիային անշեղորեն պահպանել իր երկրում ոչ մահմեդական փոքրամասնությունների իրավունքները, ինչպես որ այդ պարտադրում են նրան 1923 թ. Լոզանի

պայմանագրի 37-45-րդ հոդվածները, ստորագրված Եվրոպական տնտեսական համագործակցության անդամ պետությունների մեծամասնության կողմից:

8. Համարում է, որ հուշարձանների պահպանությունը, ինչպես նաև թուրքահայերի կրոնական ճարտարապետական ժառանգության պահպանումն ու կոնսերվացումը պետք է դիտել որպես ժամանակակից Թուրքիայի տարածքում դարերի ընթացքում զարգացում ապրած բոլոր քաղաքակրթությունների՝ մասնավորապես Օսմանյան կայսրությանը մաս կազմած քրիստոնյա փոքրամասնությունների մշակութային ժառանգության պահպանմանը ուղղված լայն քաղաքականության բաղկացուցիչ մաս:

9. Կոչ է անում, այսպիսով, Եվրոպական Տնտեսական Համագործակցությանը տարածել Թուրքիայի հետ համագործակցության համաձայնությունը նաև մշակութային ասպարեզի՝ այդ երկրում քրիստոնեական կամ այլ, ինչպես, օրինակ, դասական անտիկ շրջանի, իսթական, օսմանյան և այլն քաղաքակրթությունների ժառանգությունը պահպանելու նպատակով:

10. Իր մտահոգությունն է հայտնում այն դժվարությունների առթիվ, որոնց առնչվում է Իրանի հայ համայնքը մայրենի լեզվի գործածության և կրոնական կանոններին համապատասխան կրթության գործը կազմակերպելու հարցում:

11. Հանդես է գալիս ընդդեմ Խորհրդային Միությունում հայ ազգաբնակչության անհատական ազատությունների խախտումների համար:

12. Վճռականորեն դատապարտում է առանձին կազմակերպությունների կողմից կիրառվող բոլոր բռնի գործողություններն ու անաբեկչական դրսևորումները, որոնք հատկանշական չեն հայ ժողովրդին, և հաշտության կոչ է անում հայերին ու թուրքերին:

13. Կոչ է անում Եվրոպական տնտեսական համագործակցության անդամ երկրներին հռչակելու «20-րդ դարում գործադրված ցեղասպանությունների և մարդկության դեմ ոճրագործությունների հիշատակի օր», մասնավորապես այն ոճրագործությունների, որոնց զոհ գնացին հայերն ու հրեաները:

Վավերացնում է իր պարտավորությունը՝ իրապես նպաստելու հայ և թուրք ժողովուրդների միջև բանակցությունների իրականացման նպատակը հետապնդող նախաձեռնություններին:

14. Հանձնարարում է իր նախագահին՝ սույն բանաձևը փոխանցել-

լու (Եվրոպական պառլամենտի քաղաքական) հանձնաժողովին, Եվրոպական խորհրդին, Եվրոպական տնտեսական համագործակցության անդամ-երկրների արտաքին գործերի նախարարների խորհրդակցությանը, «ԵՏՀ-Թուրքիա» ընկերակցության խորհրդին, ինչպես նաև թուրքական, իրանական և խորհրդային կառավարություններին և ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Փաստաթուղթ 8091
24 ապրիլի, 1998

1915 Թ. ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Գրավոր հռչակագիր թիվ 275

Այս գրավոր հռչակագրի պատասխանատուները միայն այն անդամներն են, որ ստորագրել են այն.

1. 1915թ. Ապրիլի 24-ը նշվում է իբրև Օսմանյան կայսրությունում ապրող հայերի ոչնչացման ծրագրերի իրագործման սկիզբ:

2. Այսօր մենք հիշատակում ենք այն տարեկիցը, ինչը կոչվել է 20-րդ դարի առաջին ցեղասպանություն, և մենք ընդունում ենք հայ զոհերի հիշատակը իբրև հանցագործություն ընդդեմ մարդկության:

Ստորագրյալներ.

- Ռուդի, Ֆրանսիա, SOC
- Ջիմբրուն, Ֆրանսիա, LDR
- Մաթթեի, Ֆրանսիա, LDR
- Միշել, Ֆրանսիա, SOC
- Սքրեյներ, Ֆրանսիա, EDG
- Վրեթթոս, Հունաստան, SOC
- Ջիսսի, Հունաստան, SOC
- Կատսելի, Հունաստան, SOC
- Մագինաս, Հունաստան, EPP/CD
- Լոուլ, Հունաստան, UEL
- Ստեռլեա, Ռումինիա, EDG
- Լուկին, Ռուսաստան, LDR
- Մարմագով, Ուկրաինա, UEL
- Օլեյնիկ, Ուկրաինա, UEL

- Ջերրովսկի, Ռուսաստան, NR
- Սչայդեր, Ավստրիա, SOC
- Քրիստոֆոլիդես, Կիպրոս, UEL
- Ֆրահմ, Դանիա, UEL
- Կուլբակա, Ռուսաստան, UEL
- Լազարեսկու, Ռումինիա, LDR
- Վերսփագետ, Նիդերլանդներ, SOC
- Միզնոն, Ֆրանսիա, EDG
- Լենգագնե, Ֆրանսիա, SOC
- Դիս, Նիդերլանդներ, LDR
- Վոլթջեր, Նիդերլանդներ, SOC
- Սլոբոդնիկ, Սլովակիա, SOC
- Գոնգալես Լաքսե, Իսպանիա, SOC
- Գրոս, Շվեյցարիա, SOC
- Լորդ Ռասելլ-Ջոնսթոն, Միացյալ թագավարություն, LDR
- Լաուրիսելա, Իտալիա, SOC
- Թուրինի, Իտալիա, EDG
- Ամորուստ, Իտալիա, EDG
- Էլո, Ֆինլանդիա, SOC
- Պերիերա Մարկիզ, Պորտուգալիա, SOC
- Ստաս, Բելգիա, EPP/CD
- Մոտա Ամարալ, Պորտուգալիա, EPP/CD
- Վյուվադիլ, Չեխիայի Հանրապետություն, SOC
- Փլեչաթա, Չեխիայի Հանրապետություն, EDG
- Ստեպովա, Չեխիայի Հանրապետություն, SOC
- Ջանեսեք, Չեխիայի Հանրապետություն, EPP/CD
- Սվոբոդա, Չեխիայի Հանրապետություն, SOC
- Կալուս, Չեխիայի Հանրապետություն, EDG
- Սքուիմեր, Ավստրիա, EPP/CD
- Կուզմիկաս, Լիտվա, EDG
- Ջինգերիս, Լիտվա, EDG
- Գիլիս, Լիտվա, SOC
- Ռասկինիս, Լիտվա, EPP/CD
- Սյուփալիա, Լիտվա, LDR
- Միրվոլլ, Նորվեգիա, UEL
- Մաքսիմուս, Բելգիա, SOC
- Նովակովա, Չեխիայի Հանրապետություն, EPP/CD

ԵՎՐԱՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԲԱՆԱՁԵՎ

2000 թվական, նոյեմբերի 15

«... 10 Հետևաբար, կոչ է անում Թուրքիայի կառավարությանը և Թուրքիայի Ազգային Մեծ ժողովին նորովի աջակցություն ցուցաբերել հայկական փոքրամասնությանը՝ որպես թուրք հասարակության կարևոր մասի՝ մասնավորապես հրապարակավ ճանաչելով ցեղասպանությունը, որին այդ փոքրամասնությունը ենթարկվել է նախքան ժամանակակից Թուրքիայի ստեղծումը..»:

ԵՎՐԱՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԲԱՆԱՁԵՎ

2005 թվական, սեպտեմբերի 28

«5. Կոչ է անում Թուրքիային ճանաչելու Հայոց ցեղասպանությունը. համարում է, որ այս ճանաչումը կարող է Եվրամիությանը անդամակցելու նախապայման լինել»:

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ (ICTJ) . ԶԵԿՈՒՅՑ՝ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ՀԹՂԶ-Ի ՀԱՄԱՐ

2003 թվական, փետրվարի 10

ՄԱԿ-ի Ցեղասպանություն հանցագործության կանխման և պատժման մասին Կոնվենցիայի կիրառելիությունը վաղ քսաներորդ դարի ընթացքում տեղի ունեցած իրադարձությունների նկատմամբ

Դիվանագիտական հարթակներում թուրք պաշտոնյաներն ու նրանց փաստաբանները պնդում են, որ իրենք ճանաչում են «մեծ ողբերգությունը» և նրանք միայն առարկում են այն «ցեղասպանություն» անունով կոչելը: Դա չի համապատասխանում իրականությանը: Ամեն առիթով Թուրքիայում ոչ միայն Հայոց Ցեղասպանությունը, այլև հայ ժողովրդի մեծ հոգեվարք հերքվում են և փորձեր են արվում՝ արդարացնելու ցեղասպանությունը:

Անցումային շրջանի արդարադատության միջազգային կենտրոնի համար պատրաստված իրավաբանական վերլուծություն

Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովը (TARC)՝ ձևավորված 2001 թվականի հուլիսի 9-ին թուրքական և հայկական քաղաքա-

ցիական հասարակությունների ներկայացուցիչների կողմից, խնդրել է, որ Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովը (TARC) հեշտացնի վաղ քսաներորդ դարի ընթացքում տեղի ունեցած իրադարձությունների նկատմամբ 1948 թվականի հանցագործության կանխման և պատժման մասին Կոնվենցիայի կիրառելիության վերաբերյալ իրավաբանական հետազոտությունը: 2003 թվականի փետրվարի 4-ին ICTJ-ն TARC -ին այս առարկայի շուրջ ներկայացրել է հետևյալ վերլուծությունը: Այս վերլուծությունը հանրության համար մատչելի է դարձել 2003 թվականի փետրվարի 10-ին, TARC -ի կողմից:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԱՄՓՈՓՈՒՄ

Միջազգային իրավունքն ընդհանրապես արգելում է պայմանագրերի հետադարձ կիրառումը, եթե միայն պայմանագրում այլ մտադրություն չկա կամ հակառակը սահմանված չէ: Ցեղասպանության կոնվենցիան չի պարունակում որևէ դրույթ, որը պարտադրում է իր հետադարձ կիրառումը: Ընդհակառակը, Կոնվենցիայի տեքստը խստորեն ենթադրում է, որ այն նախատեսված է պարտադրելու հեռանկարային պարտավորություններ միայն դրա անդամ պետությունների համար: Հետևաբար, Իրադարձություններից դուրս ծագող ոչ մի իրավական, ֆինանսական կամ տարածքային պահանջ չի կարող հաջողությամբ դրվել որևէ անհատի կամ Կոնվենցիայի ներքո գտնվող պետության համար:

Ցեղասպանություն տերմինը, որը Կոնվենցիայի մեջ օգտագործված է նկարագրելու այդ անվան միջազգային հանցագործությունը, կարող է կիրառվել, այնուամենայնիվ, շատ ու բազում իրադարձությունների նկատմամբ, որոնք տեղի են ունեցել մինչև Կոնվենցիայի ընդունումը: Ցեղասպանության՝ որպես պատմական փաստ կատարված հղումները պարունակվում են Կոնվենցիայի տեքստում և դրա նախապատրաստական աշխատանքներում:

Քանի որ այն մշակվել է Միջազգային քրեական դատարանի կողմից (որի կանոնադրությունը ընդունում է Կոնվենցիայի ցեղասպանության սահմանումը), ցեղասպանության հանցանքն ունի չորս տարրեր՝ 1. հանցագործը սպանել է մեկ կամ մի քանի անձանց, 2. այդ անձը կամ անձինք պատկանում էին որևէ ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական խմբի, 3. հանցագործը ունեցել է այդ խմբին, որ-

պես այդպիսին, լրիվ կամ մասնակի ոչնչացնելու մտադրություն, 4. գործողությունը տեղի է ունեցել մի խմբի դեմ կատարված նմանատիպ համատեքստում կամ այդ գործողությունը կարող էր ունենալ ոչնչացման հետևանք ունենալ:

Այդ իրադարձությունների հետ կապված բազմաթիվ դիրքորոշումներ կան, իսկ նրանց միջև էական տարաձայնություններ՝ փաստի բազմաթիվ խնդիրների վերաբերյալ: Չնայած այդ տարաձայնություններին՝ Իրադարձությունների վերաբերյալ բոլոր դիրքորոշումների համար ընդհանուր համարվող փաստերը, որոնք մենք պարզեցինք, համապատասխանում են վերը նշված երեք տարրերին՝ 1. հանցագործը սպանել է մեկ կամ մի քանի անձանց, 2. այդ անձը կամ անձինք պատկանում էին որևէ ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական խմբի, 3. գործողությունը տեղի է ունեցել մի խմբի դեմ կատարված նմանատիպ համատեքստում կամ այդ գործողությունը կարող էր ունենալ ոչնչացման հետևանք ունենալ:

Գնահատելու համար այդ Իրադարձությունները, որոնք դիտարկվել են իրենց ամբողջության մեջ, արդյոք ցեղասպանություն են, թե ոչ, տարաձայնությունների միակ համապատասխան ոլորտն այն է, որ պետք է պարզվի արդյո՞ք այդ Իրադարձությունները տեղի են ունեցել որևէ ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական խմբի, որպես այդպիսին, լրիվ կամ մասնակի ոչնչացնելու մտադրությամբ:

Թեև այս իրավական հուշագիրը նախատեսված չէ միանշանակ լուծելու կոնկրետ փաստական վեճեր, մենք կարծում ենք, որ Իրադարձությունների վերաբերյալ դիրքորոշումներից առավել խելամիտ եզրակացության կարելի է գալ ասելով, որ գոնե Իրադարձություններն իրականացնող հանցագործներից ոմանք գիտեին, որ իրենց գործողությունները հետևանքը պետք է լինեին հայերի արևելյան Անատոլիայի լրիվ կամ մասնակի ոչնչացումը, որպես այդպիսին, կամ պետք է գործած լինեին միտումնավոր կերպով՝ դեպի այդ նպատակը և, հետևաբար, ունենային դրա համար անհրաժեշտ ցեղասպան մտադրությունը: Քանի որ մյուս երեք տարրերը հստակ վերը նշված էին, միասին դիտարկված Իրադարձություններն, այսպիսով, կարող ենք ասել, ներառում են ցեղասպանության հանցագործության բոլոր տարրերը, ինչպես սահմանված է Կոնվենցիայում, և իրավաբան - գիտնականները, ինչպես նաև պատմաբանները, քաղաքական գործիչները, լրագրողներն ու այլ մարդիկ արդարացված կլինեն՝ շարունակելով դրանք այդ-

պես նկարագրել:

**ՑԵՂԱՍՊԱՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ
1997 թվական, հունիսի 13
ԲԱՆԱԶԵՎ**

Ցեղասպանագետների ասոցիացիայի այս ժողովն իր՝ Մոնրեալում, 1997 թվականի հունիսի 11-13-ին կայացած գիտաժողովին վերահաստատում է, որ 1915 թվականում Թուրքիայում հայերի զանգվածային ջարդերը ցեղասպանություն են, որը համապատասխանում է ՄԱԿ-ի՝ Ցեղասպանություն հանցագործության կանխման և պատժման մասին Կոնվենցիայի կանոնադրությանը: Այն, այնուհետև, դատապարտում է Թուրքիայի Կառավարության և նրա պաշտոնական ու ոչ պաշտոնական գործակալներին ու աջակիցներին՝ հերքելու համար Հայոց Ցեղասպանությունը:

**ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԴՍՏԱԿԱՆ ԱՏՅԱՆ
1984 թվական, ապրիլի 16**

ԴՍՏԱԿԱՆ ԱՏՅԱՆԻ ՎՃԻՌԸ

Նախաբան

Ժողովուրդների իրավունքի ամենահիմնարար խախտումը ցեղասպանության հանցագործությունն է: Քրեականիմաստով չկա ավելի լուրջ բան, քան որոշակի էթնիկական ինքության պատճառով մարդկանց համակարգված բնաջնջման դիտավորյալ պետական քաղաքականությունը: Ժողովուրդների մշտական դատական ատյանի գործերում ցեղասպանությունը կենտրոնական դիրք է զբաղեցնում իր հիմնական օրենսդրական դաշտով, որոնք արադրված են Ժողովուրդների իրավունքների համընդհանուր հռչակագրում (Ալժիր, 1976 թվական, հուլիսի 4)

Ալժիրի հռչակագրի Հոդված 1-ը պնդում է. «Յուրաքանչյուր ժողովուրդ գոյության իրավունք ունի:

Հոդված 2. «Յուրաքանչյուր ժողովուրդ իրավունք ունի, որպեսզի հարգվի իր ազգային և մշակութային ինքնությունը»:

Հոդված 3 «Յուրաքանչյուր ժողովուրդ իր տարածքում խաղաղությամբ իր գույքը պահպանելու և վերադառնալու է իր արտաքսվելու

դեպքում վերդառնալու իրավունք ունի:

Եվ, վերջապես, Հոդված 4-ն անմիջականորեն բախվում է ցեղասպանության իրականությանը. «Ոչ ոք չպետք է իր ազգային կամ մշակութային ինքնության պատճառով ենթարկվի կոտորածի, խոշտանգումների, հալածանքի, տեղահանության, արտաքսման կամ կյանքի այնպիսի պայմանների, որոնք կարող են սպառնալ այն ժողովրդի ինքնության ամբողջականությանը, որին այն պատկանում է»:

Եվ դեռ հարց կարող է հնչել, թե ինչու ցեղասպանությունից այսքան տարիներ անց Դատարանը պետք է իր ուժերը նվիրաբերի հայ ժողովրդի պնդումների հետապնդմանը: Ի վերջո, կոտորածի և բնաջնջման հիմնականագծոնությունը ֆիքսված է 1915 թվականից 69 տարի առաջվա վրա: Դատարանը համոզված է, որ իր պարտականությունները ներառում են պատմական բողոքները, որոնք այդպես էլ պատշաճ կերպով արդարության առջև չեն կանգնեցվել և ներգրավված կառավարության կողմից պատշաճ կերպով չեն ճանաչվել:

Այս դեպքում բնաջնջումը և հայերի պնդումների գնահատականը հիմնականում համոզիչ է: Սկսած 1915 թվականից՝ թուրքական պետության յուրաքանչյուր կառավարություն մերժում է պայքարի մեջ մտնել ցեղասպանության իրադարձությունների պատասխանատու անձանց մեղադրանքի հետ:

Վերջին միջազգային ֆորումներին և գիտական հանդիպումներին Թուրքիայի կառավարությունը ջանքեր է գործադրել՝ խոչընդոտելու Հայոց Ցեղասպանության հարցումներն ու ճանաչումը: Բացի դրանից, Թուրքիայի ներկայիս կառավարությունը ուշադրություն չի դարձրել հայ ժողովրդի բնաջնջման համար ամենալուրջ պատասխանատվության մեղադրանքները: Ընդհակառակը, Թուրքիայի ներկայիս կառավարության բնաջնջման շարունակական քաղաքականության մեջ լրացուցիչ մեղադրանքներ են ներգրավված:

Մասնավորապես, սրան են վերաբերում հայկական մշակութային կոթողների և կրոնական շինությունների ոչնչացման, սրբապղծման անտեսման դատավորյալ արարքները: Դատարանը գտնում է, որ ցեղասպանության հանցագործությունը մնում է ներկա իրականություն, որը պետք է ուսումնասիրվի, իսկ հաստատվելու դեպքում՝ պետք է պատշաճ և հրապարակայնորեն ճանաչվի պատասխանատու պետությունների կողմից: Ցեղասպանության հանցագործության զոհերն ունեն դատական պաշտպանության իրավունք նույնպես այսքան մեծ

երկար ժամանակի համար՝ չնայած որ այս իրավունքն անպայման արտացոլվում է ներկայի հանգամանքներում:

Այստեղ նաև հայ տուժածների և նրանց հետնորդների վերաբերմունքն առնչություն ունեն: Յուրաքանչյուր ժողովուրդ իրավասու է պահանջելու կամ փնտրելու իրավական իշխանությունների կողմից իրենց նկատմամբ իրկանացրած հանցագործությունների կամ անարդարությունների պաշտոնական ճանաչումը: Որքան ծայրահեղ և երկար ժամանակ է անարդարությունը սքողված, այնքան կորն է դրա ճանաչման ցանկությունը: Դատարանը ցավով նկատում է, որ ճանաչման հերքումից բխող այդ վրդովմունքը կարծես նպաստել է թուրքական դիվանագետների կամ այլոց դեմ ուղղված ահաբեկչական գործողություններին դիմելուն: Դատարանի հույսը հայ իրականության հետ կառուցողական գործընթացի հեշտացումն է, որը կարող է հանգեցնել դրանից բխող կոնֆլիկտի լուծմանը կամ կանոնակարգմանը:

Ցեղասպանությունը պետության ամենավատ դիտավորյալ հանցագործությունն է: Հաճախ, պատասխանատու պետությունը պաշտպանված է այլ պետությունների և միջազգային կազմակերպությունների, այդ թվում միմիայն պետություններից բաղկացած Միավորված ազգերի շրջանակներում հաշվետվություններ տալուց:

Հայկական փորձի վառ առանձնահատկություններից մեկն էլ այլ պետությունների պատասխանատվությունն է, որոնք, աշխարհաքաղաքականության պատճառներով, միանում են Թուրքիայի կառավարությանը՝ իր ջանքերով, նույնիսկ այսքան ուշ, կանխելու մանրակրկիտ հարցումը և դատական, իրավաբանական պաշտպանության շնորհումը:

Ժողովուրդների մշտական դատարանը ստեղծվել է՝ մասամբ հաղթահարելու պետությունների բարոյական և քաղաքական անհաջողությունները՝ որպես արդարության գործիք: Դատարանը ավելի հստակ է հետաքրքրվել հայկական բողոքներով՝ կազմակերպված միջազգային հանրության և, մասնավորապես, առաջատար մեղսակից արևմտյան պետությունների (վերջերս բացառությամբ Ֆրանսիայի) երկարատև լռության պատճառով, ովքեր բազմաթիվ տնտեսական, քաղաքական և ռազմական կապեր ունեն Թուրքիայի հետ:

Դատարանը գործում է նաև այն պատճառով, որ խորապես մտահոգված է մեր աշխարհում ցեղասպանության տարածվածությամբ և ցեղասպանության նկատմամբ վերաբերմունքով: Որպես Դատարանի

անդամներ՝ մենք հավատում ենք, որ ցեղասպանության պնդումների բացահայտումը և օբյեկտիվ փաստաթղթավորումը նպաստում է ճանաչման գործընթացին: Ցեղասպան իրականությունը բացահայտելը այն ծածկելու մտադրություններ ունեցողներին ստիպում է դժվարությամբ պահպանել իրենց դիրքերը: Ձոռների դժգոհությունները վավերացնելով՝ Դատարանը նպաստում է իրենց տառապանքների արժանապատվությանը և աջակցություն ցուցաբերում նրանց շարունակական պայքարին: Իրոք, ցեղասպանությունը ճանաչելն ինքնին հիմնարար միջոց է ցեղասպանության դեմ պայքարում: Ճանաչումն ինքնին մի ժողովրդի՝ միջազգային իրավունքի ներքո ապահովագրված գոյության իրավունքի հաստատումն է:

Փաստերը

I. Պատմական Ներածություն

Հաստատված է, որ հայ ժողովրդը գոյություն է ունեցել արևելյան Անատոլիայում և Կովկասում դեռևս Ք. Ա. 6-րդ դարից: Երկու հազարամյակ հայ ժողովուրդը գտնվել է անկախության Դոմ վասալի ժամանակաշրջանների միջև: Չորրորդ դարի աթաջին մասում քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելով, ինչպես նաև սեփական այբուբեն ունենալով, որոնցից երկուսն էլ այս ժամանակաշրջանում նրանց ազգային ինքնությամբ օժտեցին, հայերն իրենց հավատքի պատճառով միշտ հետապնդվել են զավթիչների և սյուզերենների կողմից: Չնայած նրանք աշխարհագրական դիրք էին գրավում, որը, որպես ռազմավարական խաչմերուկ հատկապես արժեքավոր էր, հայերը մինչև Առաջին համաշխարհային պատերազմն ունակ էղան ստեղծելու և պաշտպանելու իրենց պատմական տարածքը, որը թուրքերը կոչում էին Էրմենիստան՝ մի լեզու, մի մշակույթ և մի կրոն, մի խոսքով՝ ինքնություն:

Վերջին թագավորության վերացումից հետո Հայաստանի ամենամեծ մասն ընկավ «թուրքերի տիրապետության տակ, այն ժամանակ, երբ դա Արևելյան շրջանների և առաջինը Պարսկաստանի հսկողության, այսինքն Ռուսաստանի հսկողության տակ էր, ովքեր տասնիններորդ դարում արտաքսեցին նրան»:

Ինչպես այլ կրոնական փոքրամասնությունները, հայկական համայնքը (կամ «միլլեթ») Օսմանյան կայսրությունում կրոնական և մշակութային ինքնավարություն էր վայելում և, իսկապես, կայսրության

պատմության դասական շրջանում մնացել էր քիչ թե շատ խաղաղ ժամանակներում՝ չնայած հայերի՝ որպես երկրորդ կարգի քաղաքացիների կարգավիճակ ունեցողների ('rayahs'):

Սակայն տասնիններորդ դարում կայսրության անկումով, պայմանները ակնհայտ վատացան, և կլիման ճնշողական բնույթի դարձավ: Բնակչության աճը և թուրք փախստականների հաջորդական ալիքների ժամանումը Ռուսաստանից և Բալկաններից, ինչպես նաև քոչվորների նստակեցությունը (քրդեր, չերքեզների և այլն) խախտել էին բնակչության հավասարակշռությունը և ավելացրել հողի համար մրցակցության ճնշումը՝ ստեղծելով բազմաթիվ խնդիրներ ագրարային ոլորտում պաշտոնավարման համար: Արդյունքը եղավ նրանում, որ Հայաստանի բնակչության ճակատագիրը գնաց դեպի վատթարացման, որի հիմնական կազմի մեջ մտնում էին գյուղացիներն ու ֆերմերները: Արդիականացում և բարեփոխումներ իրականացնելը դժվար էր կայսրության քարացած կառուցվածքի համար:

Բարեփոխումների մի քանի փորձեր (ժամանակակից բանակի ձևավորում, հուշադրամի հարկում) հետագայում զուտ աղքատացրեցին գյուղացիությանը: Միննույն ժամանակ Բալկաններում ազգային զգացմունքների առաջացումը տանում էր դեպի ժողովուրդների անկախության, ովքեր մինչ այդ օսմանյան տիրապետության ներքո էին գտնվում: Կայսրությունը բավականին թուլացել էր իր արտաքին պարտքերի պատճառով:

1878 թվականի ռուս-թուրքական պատերազմից հետո հայոց հարցը գործոն էր դարձել Արևելքի հարցի համար: Սան-Ստեֆանոյի պայմանագրի (1878) 16-րդ հոդվածը պայման էր նախատեսում, ըստ որի Ռուսաստանի երաշխավորության ներքո հայկական տարածքներում մի շարք բարեփոխումներ պետք է իրականացվեին: Մինչդեռ դաշինքների հակադարձումից հետո Բեռլինյան պայմանագիրը Թուրքիային ազատեց իր պատասխանատվությունների մի մասից (1878) և հանձնարարեց Մեծ Բրիտանիային՝ վերահսկելու բարեփոխումները, սակայն դրանք երբեք էլ չիրականացվեցին:

Հայ համայնքում սկսեց զարգանալ մի հեղափոխական շարժում (Դաշնակյան և Հնչակյան կուսակցությունները): 1894 թվականի Մասունի ապստամբությունից հետո, մոտավորապես 300,000 հայեր Սուլթան Համիդի հրամանով արևելյան մարզերում և Կոստանդնուպոլսում ենթարկվեցին զանգվածային ջարդերի: Իշխանությունների բողոքները

հանգեցրին բարեփոխումների ավելի շատ խոստումների, արանք կրկին չպահվեցին. պարտիզանական (ֆիդայիների) պայքարը շարունակվում էր: Մեկ դար դեպի առաջ սահմանին, հայ հեղափոխականները նույնպես սկսեցին համագործակցել Երիտթուրքերի կուսակցության հետ՝ Կայսրության համար ֆեդերալիստական ծրագիր սահմանելու համար: 1908 թվականի երիտթուրքերի գաղափարախոսական սահմանադրական հեղափոխությունից ծնված հույսերին հետևելով՝ իշխանության գործադրման և արտաքին իրադարձությունների ճնշման ներքո, ինչպես նաև շարժման ռադիկալ թևերից սկսեց զարգանալ բացառիկ ազգայնականության մի ձև, որը ստացավ Պանթուրքիզմ կամ Թուրանիզմ անունը:

Հայերի վիճակն Արևելյան մարզում չէր փոխվել նույնիսկ հեղափոխության կամ 1909 թվականին (Ադանայի կոտորածները) Աբդուլ համիդին տապալելու արդյունքում և հեղափոխությունների պահանջները կրկին սկսվեցին Եոյակ Միության կողմից: Այս պահանջները վերջնականապես ընդունվեցին 1914 թվականի փետրվարին և դրանց իրականացումը վերահսկելու համար երկու տեսուչներ նշանակվեցին: Այս նշանակումները Օսմանյան կառավարության կողմից որպես անընդունելի միջամտություն դիտվեցին:

Առաջին համաշխարհային պատերազմի բռնկման ժամանակ Օսմանյան Կայսրությունը չէր կողմնորոշվում, թե որ կողմին միանար: 1914 թվականի նոյեմբերի սկզբին, Գերմանիայի ճնշման տակ, նա միացավ Կենտրոնական Ուժերին: Մա հայերին բարդ դրության մեջ գցեց: Նրանք մի տարածք էին զբաղեցնում, որը Թուրքիայի համար իր Թուրանական իմպերիալիստական նկրտումների իրականացման համար կենսական նշանակություն ուներ՝ Անդրկովկասի և Կենտրոնական Ասիայի ժողովուրդների առնչությամբ: Բացի դրանից հայերի մասնատումը Օսմանյան Կայսրության (2,000,000 հայեր) և Ռուսաստանի միջև (1,700,000) անխուսափելիորեն նշանակում էր, որ բնակչության երկու մասերը ընդդիմադիր կողմերում էին հայտնվել: 1914 թվականին Երզրումում կայացած Հայ հեղափոխական դաշնակցության Ութերորդ Համագումարին Դաշնակյան կուսակցությունը մերժեց երիտթուրքերի՝ Ռուսաստանի հայերի շրջանում դիվերսիոն գործողություններով զբաղվելու խնդրանքները: Պատերազմի սկզբում Թուրքիայի հայերն ընդհանուր առմամբ իրենց որպես հավատարիմ հպատակներ էին պահում՝ զորակոչվելով թուրքական բանակ:

Ռուսաստանի հայերն էլ, իրենց հերթին, կանոնավոր կերպով զորակոչվում էին ռուսական բանակ և ուղարկվում Եվրոպայի ռազմաճակատներում կռվելու: Պատերազմի առաջին ամիսներին Ռուսաստանի հայերն ընդգրկված են կամավորական ջոկատներում, որոնք հանդես էին գալիս որպես ցարական բանակի հետախույզներ. Հայերի ներկայացրած Թուրքերի ծրագրին Ռուսաստանի պատասխանը տրվեց մի քանի ամիս անց՝ Երզրումում: Երզրումի մերժումը և այդ կամավորական գումարտակների ձևավորումը երիտթուրքերի կողմից որպես փաստարկներ էին օգտագործվում՝ պնդելու հայերի դավաճանությունը: Էնվերը, ով Թուրքիայի զինված ուժերի Գերագույն հրամանատար էր նշանակվել, ձևավորեց կեսին Անդրկովկասում բեկումնային առաջընթաց էր գրանցել, սակայն պարտվեց Մարիդամիշում այն նույն եղանակային պայմանների պատճառով, ինչ Ռուսաստանի բանակը: Թուրքիայի Երրորդ Բանակի 90,000 տղամարդկանցից միայն 15,000 մնացին: Կովկասում հետամնաց պարտությունից հետո հակահայկական միջոցառումներ սկսվեցին:

II. Ցեղասպանությունը

Սկսվելով 1915 թվականի հունվարին՝ հայ զինվորներն ու ոստիկանները զինաթափվեցին, բաժանվեցին 500-ից 1000 հոգուց բաղկացած աշխատանքային խմբերի, ստիպված եղան կատարելու ճանապարհաշինական աշխատանքներ կամ աշխատելու որպես բեռնակիրներ, այնուհետև փուլ առ փուլ տեղափոխվեցին ամայի շրջաններ և ոչնչացվեցին: Ապրիլը չկար, երբ կարգապահական հաջորդականությամբ փուլ առ փուլ սկսեց իրականացվել ծրագիրը: Ապրիլի սկզբին առաջին ազդանշանն ուղղված էր Ջեյթունում դեպի ոչ հրատապ ռազմավարական նշանակություն ունեցող վայրեր տեղահանություններ կատարելուն: Փոքր-ինչ ուշ տեղահանությունները ծավալվեցին դեպի սահմանամերձ մարզեր:

Ցեղահանություն կատարելու պատրվակն ընդհանուր առմամբ համարվում էր Վանի հայերի դիմադրության ցուցաբերումը:

Վանի նահանգապետ Ջևդեթ բեյը հայկական գյուղերի բնակչությանը հեռացրեց այդտեղից և Վանը կազմակերպեց քաղաքի ինքնապաշտպանությունը: Նրանք փրկվեցին հայ կամավորների գլխավորությամբ Կովկասից եկող ռուսական ճեղքումից: Վանը գրավելուց հե-

տո մայիսի 18-ին ռուսական բանակը շարունակում է առաջխաղացումը, բայց հունիսի վերջին թուրքական հակահարձակմամբ դադարեցնում այն: Այսպիսով, Վանի վիլայեթի հայերին հաջողվում է նահանջել և խուսափել բնաջնջումից:

Երբ Վանի ապստամբության լուր հասավ Կոստանդնուպոլիս, Միություն և առաջադիմություն կոմիտեն (Իթթիհադ) օգտվեց հնարավորությունից: Մոտ 650 անձինք՝ գրողներ, բանաստեղծներ, իրավաբաններ, բժիշկներ, քահանաներ և քաղաքական գործիչներ 1915 թվականի ապրիլի 24-ին և 25-ին ազատագրված ենթարկվեցին, այնուհետև տեղահանվեցին և հետագա ամիսների ընթացքում սպանվեցին: Այսպիսով իրականացվեց ժամանակի հայ գրեթե ամբողջ մտավորականության մանրակրկիտ և դիրավորյալ ոչնչացումը:

Ապրիլի 24-ից սկսած և, այնուհետև, հստակ սահմանված ժամանակացույցով, կառավարությունը հրամանաններ արձակեց՝ տեղահանելու հայերին արևելյան վիլայեթներից: Քանի որ Վանը պաշարված էր ռուսական բանակի կողմից, այդ միջոցառումները կիրառվեցին միայն վեց վիլայեթների հանդեպ, դրանք են՝ Տրապիզոնը, Էրզրումը, Բիթլիսը, Դիարբեքիրը, Խարբերդը և Սեբաստիան: Այդ ծրագրի իրականացումը վստահվել էր մի «հատուկ կազմակերպության» (SO), որը կազմված էր սովորական հանցագործներից և դատապարտյալներից, որոնց վերապատրաստել և համալրել էր Միություն և առաջադիմություն կոմիտեն: Կիսապաշտոնական կազմակերպությունը, որի ղեկավարը Բեհաեդդին Շաքիրն էր, գտնվում էր միայն Իթթիհադ Կենտրոնական կոմիտեի իշխանության ներքո: Կոստանդնուպոլիսը հրահանգներ էր արձակում վալիս (valis, kaymakans), ինչպես նաև ՀԿ տղամարդկանց, ովքոր հայեցողական լիազորություններ ունեին՝ տեղափոխելու կամ պաշտոնանկ անելու ցանկացած չհամագոչձակցող ոստիկանին կամ պաշտոնատար անձին:

Քաղաքների բնակչությանը տարհանելու մեթոդները, դրանց կարգը, ընտրված երթուղիները և տեղահանվածների սյունակները, ամեն ինչ հաստատում է հրամանների կենտրոնական կետի գոյությունը, որը վերահսկում էր ծրագրի դարձելիությունը: Տեղահանությունների հրամանները հայտարարվում էին հրապարակավ կամ տեղադրվում էին յուրաքանչյուր քաղաքում ու ավանում: Ընտանքիների թույլատրվում էր երկու օրում հավաքել անձնական մի քանի իրեր. նրանց գույքն առգրավվում էր կամ վաճառվում: Առաջին շարժումն, ընդհանուր առ-

մամբ, ազնվականների՝ հայ քաղաքական կուսակցությունների անդամների, հոգևորականների և երիտասարդ տղամարդկանց ձերբակալումն էր, ովքեր հարկադրաբար շինծու խոստովանություն էին ստորագրում, այնուհետև փաքր խմբերով վերացվում: Տեղահանվածների շարքերը համալրված էին ծերերով, կանանցով և երեխաներով: Ավելի հեռավոր գյուղերում ընտանքիներին կոտորում էին, իսկ նրանց տները այրում կամ պաշարում: Սև ծովի ափին և Տիգրիսի երկայնքով՝ Դիարբեքիրի մոտ, նավակները լեփ-լեցուն էին գոհերով և սուզվում էին: 1915 թվականի մայիսից հուլիս ընկած ժամանակահատվածում արևելյան մարզերը դատարկվել ու թալանվել էին թուրք զինվորների և ոստիկանների, ինչպես նաև ԿՀ ավագանների («չեթեներ») և այլնի կողմից: Այս գողությունները, թալաններն ու սպանությունները քաջալերվում և հանդուրժվում էին, մինչդեռ հայերի պաշտպանությանն ուղղված ցանկացած առաջարկ թուրքական իշխանությունների կողմից ենթակա էր պատժման:

Այդ գործողությունները գաղտնի պահելը հնարավոր չէր: Ահազանգեր ստանալով միսիոներներից և հյուպատոսներից՝ Եռյակ Միությունը մայիսի 24-ից Թուրքիայի կառավարությանը հրամայեց վերջ դնել զանգվածային ջարդերին, որի համար նրանք կառավարության անդամներին անձնական պատասխանատվության ենթարկեցին: Թուրքիան տեղահանությունը պաշտոնական դարձրեց՝ արձակելով հրամանագիր, որը, որպես պատրվակ պնդում էր հայերի կողմից իրականացրած դավաճանությունը, դիվերսիան և ահաբեկչական ակտերը:

Ոչ ավելի, քան 50.000 փրկվածներ, միանալով տեղահանվողների խմբերին, հասել էին Հալեպ:

Տեղահանությունն իրականում պարզապես բնաջնջման քողարկման ձև էր: Ամենաուժեղներն իրականացվել էին մինչև հեռացումը: Տեղահանվողների շարքերի քանակը նվազում էր քաղցից, ծարավից և կոտորածներից: Ճանապարհների երկայնքով հազարավոր մարմինների կույտեր կարելի էր տեսնել: Ծառերից ու հեռագրային ձողերից դիակներ էին կախված, անթիվ անշունչ մարմիններ լողում էին գետերի վրա կամ էլ քշվում-բերվում դրանց ափերին: Յոթ արևելյան վիլայեթների բուն հայ բնակչության 1,200,00-ից մոտավորապես 300,000-ին հաջողվեց օգտվել Ռուսաստանի պաշարումից և հասնել Կովկաս: Մնացածը սպանվել էին որտեղ էլ որ լինեին կամ էլ տեղահանվել, իսկ կանայք ու երեխաներն (մոտ 200,000 թվով) առևանգվել:

1915 թվականի հուլիսի վերջին կառավարությունը հայերին սկսեց տեղահանել Անատոլիա և Կիլիկիա՝ բնակչությանը տեղափոխելով այնպիսի հեռավոր վայրեր, որոնք մեծ հեռավորության վրա էին գտնվում ռազմաճակատից և որտեղ հայերի ներկայությունը Թուրքիայի բանակի համար չէր կարող սպառնալիք ներկայացնել: Տեղահանվողները շարքերով տարվում էին դեպի հարավ, որի ճանապարհին էլ ոչնչացվում էին: Ողջ մնացածներին Հալեպից ուղղեցին հարավ՝ դեպի Միրիայի և հարավարևելք՝ դեպի Միջագետքի անապատները: Միրիայում ճամբարներ էին ստեղծվել Համայում, Հոմսում և Դամասկոսի մոտ: Այդ ճամբարներում 120,000 փախստականներ էին տեղավորվել, որոնց մեծամասնությունը ողջ էր մնացել պատերազմում և 1919 թվականին վերադարձել իրենց հայրենիք՝ Կիլիկիա: Եփրատի երկայնքով, մյուս կողմից, հայերը քշվում էին դեպի Դեր-Ջոր, որոնցից մոտավորապես 200,000-ն էին հասել նպատակակետին: 1916 թվականի մարտի և օգոստոսի միջև ընկած ժամանակահատվածում Կոստանդնուպոլսից այդ ճամբարներում մնացած և Եփրատի ափերին ու երկաթգծերին գոյատևած վերջին մարդկանց վերացնելու մասին հրամաններ եկան:

Այնուամենայնիվ դեռ կային հայեր, ովքեր Թուրքիայում էին մնացել: Մի քանի մարզերի հայ ընտանիքներ, հիմնականում բողոքականներ և կաթոլիկներ, մահից փրկվել էին ամերիկյան առաքելությունների և Բողոքական նվիրակների կողմից: Որոշ դեպքերում հայերը խնայվել էին թուրք պաշտոնյաների վճռական միջամտությամբ կամ թաքնվել էին քուրդ և թուրք ընկերների կողմից: Կոստանդնուպոլսի և Ջմյուռնիայի հայերին նույնպես հաջողվել էր խուսափել տեղահանություններից: Վերջապես, եղել են նաև դիմադրության դեպքեր (Ուրֆա, Շապին-Գարահիսար, Մուսա լեռ):

Ընդհանուր առմամբ, այդ թվում նրանք, ովքեր ապաստանել էին Ռուսաստանում, 1916 թվականի գոյատևածների թիվը 1914 թ -ի 1,800,000 ընդհանուր բնակչության համեմատ հաշվվում էր 600,000՝ ըստ Ա. Թոյնբիի:

Արևելյան Անատոլիայի ողջ հայությունը ոչնչացել էր: Սպանդից մազապուրծ եղած մի քանիսը ապաստան էին գտել Միրիայում և Լիբանանում, մինչդեռ մյուսները ռուսական Հայաստան: 1918 թվականի ապրիլին շրջանցելու համար Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, որի համաձայն Ռուսաստանը Թուրքիային պետք է զիջեր Բաթումը, Կարսը և Արդահանը, Անդրկովկասն իրեն անկախ հայտարարեց՝ կազմե-

լով մի կարճ կյանք ունեցող Ֆեդերացիա, որը 1918 թվականի մայիսին պետք է բաժանվեր երեք հանրապետությունների՝ Վրաստան, Հայաստան և Ադրբեջան:

1918 թվականի նոյեմբերի իր պարտությամբ Թուրքիան ճանաչեց Հայաստանը և նույնիսկ հաջորդ տարի նրան զիջեց Կարսի և Արդահանի վիլայեթները:

Բոլոր դաշնակից կառավարությունները մի շարք առիթների ժամանակ հանդիսավոր կերպով, իրենց ներկայացուցիչներին՝ Լլոյդ Ջորջ, Կլեմանսո, Ուիլսոն և այլն, խոստացան, որ կապահովեն «նահատակ հայ ժողովրդի» «հանդեպ արդարությունը»:

1920 թվականի ապրիլին Ման-Ռեմոնի կոնֆերանսը Միացյալ Նահանգներին առաջարկեց հայկական մանդատ ընդունել, և, ինչ էլ որ լինեի Միացյալ Նահանգների որոշումը, Նախագահ Ուիլսոնը պետք է սահմաներ Հայաստանի սահմաններ և որ Թուրքիայի հետ ունեցած հաշտության պայմանագիրը պետք է նշանակի նրան որպես հայ-թուրքական սահմանների հարցի դատավոր:

Մերի պայմանագիրը (1920 թվականի օգոստոսի 10), որը ճանաչել է Հայոց պետականությունը և վավերացրել Նախագահ Ուիլսոնի կողմից որոշված սահմանները, այնուամենայնիվ, չի լուծել խնդիրը: Այս պայմանագիրը, որը ստորագրվել է կառավարության կողմից, Կոստանդնուպոլսում և որը Անատոլիայի մեծ հատվածներ կիսել է իտալացիների, անգլիացիների և ֆրանսիացիների հետ, ինչպես նաև Էգեյան ծովը հույների օգտին, անընդունելի է եղել Մուստաֆա Քեմալի կողմից, որն այն մերժել է: Հայաստանի Հանրապետությունը, սոցիալիստական Հայ հեղափոխական դաշնակցության (Դաշնակ) ղեկավարության ներքո շուտով: Երբ 1920 թվականի նոյեմբերի 20-ին Նախագահ Ուիլսոնը պաշտոնապես սահմանեց նոր պետության տարածքային սահմանները, Հանրապետության փլուզմանը մի քանի օր էր մնացել: Թուրքիան կրկին վերցրել էր Կարսի և Արդահանի վիլայեթները (Ալեքսանդրապոլի պայմանագիր) և ինչ, որ մնաց Հայաստանին (մոտավորապես 30,000 քառ. կմ) 1920 թվականին խորհրդայնացվեց:

1923 թվականի հուլիսի 24-ին Դաշնակից ուժերի և Թուրքիայի նոր Հանրապետության միջև ստորագրվեց Լոզանի պայմանագիրը, որնմ Հայաստանի կամ հայերի իրավունքների մասին որևէ նշում չկար: Հայոց հարցը փակվեց:

III. Ապացույց

Դատարանը հրավիրվում է հրապարակելու 1915-1915 թվականների դեպքերի վրա հիմնված ցեղասպանության պատասխանատվության վերաբերյալ որոշումը:

Դատարանը գտնում է, որ վերոնշյալ ներկայացված փաստերը հիմնված են էական և համահունչ ապացույցների վրա: Այս ապացույցը ստեղծվել և վերլուծվել է Դատարանի լսած բազում զեկուցներով, որոնց վերաբերյալ բազմաթիվ փաստաթղթեր են ներկայացվել:

Այս աղբյուրների գրեթե սպառիչ մատենագիտությունը մշակվել է Պրոֆեսոր Ռ. Գ. Հովհաննիսյանի կողմից, Հայոց Հոլոքոստ, Քեմբրիջ, Մասաչուսեթս, 1981 թ.:

Չհաշված Օսմանյան արխիվները, որոնք անմատչելի են հիմնական փաստաթղթերը հետևյալն են՝

- Գերմանական արխիվները, որոնք, հաշվի առնելով Գերմանիայի կարգավիճակը, որպես Օսմանյան կայսրության դաշնակից, ունեն առաջնային նշանակություն: Մասնավորապես արժանի է նշել Յոհաննես Լեփսիուսի, դոկտոր Արմին Վեգների, 'Deutscher Hilfsbund' բարեգործական կազմակերպության, դոկտոր Յակոբ Կյունցերի, լրագրող Stuermer, դոկտոր Մարտին Նիպաջի, միսիոներական Էրնեստ Քրիստոֆելի գեներալ Լիման Ֆոն Սանդերսի վկայություններն ու զեկույցները: Վերջինինս վերաբերում է նրան, թե ինչպես են խնայվել Չմյուռնիայի և Անդրիանապոլսի հայերը իր վճռական անձնական միջատության արդյունքում

- Գերմանիայի դիվանագիտական և հյուպատոսական աշխատակազմի զեկույցները, ովքեր հայերի՝ Էրզրումում, Հալեպում, Սամսունում և այլն ցրվածության պայմանների ակնատեսներն են եղել:

- Ամերիկյան արխիվները, որոնք նույնպես վերը նշվածները հաստատող լայնածավալ նյութ են պարունակում (միսիոներների, հյուպատոսների և բարեգործական կազմակերպությունների զեկույցները) և «Թուրքիայի նեքին գործերը, 1910-1919 թթ., Ռասայական խնդիրներ», Պետդեպարտամենտ և Կոստանդնուպոլսում Ամերիկայի դեսպանի հուշերը, Հենրի Մորգենթաու:

- Բրիտանական իշխանությունների՝ այս դեպքերի մասին Վիսկոնտ Բրիսի Կապույտ Գիրքը, հրատարակված 1916 թվականին

- Ունիոնիստների (Իթթիհադիստների) Դատավարության րոպե-

ները՝ բերված Օսմանյան Կայսրության պարտությունից հետո, Թուրքիայի կառավարության կողմից: Այս դատավարության ժամանակ, որը տեղի է ունեցել 1919 թվականի ապրիլ և հուլիս ամիսների միջև ընկած ժամանակահատվածում, Թուրքիայի կառավարությունը տեղահանությունների և կոտորածների ապացույցներ է հավաքել և փորձել մեծամասնությանը նաև բացակայությամբ դատել ռազմական դատարանի կողմից: Դատարանը մեղավոր է ճանաչել ամբաստանյալներին, այդ թվում՝ Թալեաթին, Էնվերին և Ջեմալին, ովքեր մահապատժի են դատապարտվել հեռակա կարգով:

- Ջարդերից չորս ողջ մնացածների կողմից Դատարանին ներկայացված զեկույցները, ովքեր այս իրադարձությունների միջով անցել են երեխա ժամանակ:

IV. Թուրքական փաստարկներ

Դատարանն ուսումնասիրել է իրեն ներկայացված փաստաթղթերում տեղ գտած փաստարկները:

Թուրքիայի կառավարության կողմից Հայոց Ցեղասպանության հերքումն էականորեն հիմնված է հետևյալ փաստարկների վրա՝ զոհերի ցածր գնահատականը, հայ հեղափոխականների պատասխանատվությունը, հակընդդեմ մեղադրանքները, դիտավորության ժխտումը:

- 1914 թ Օսմանյան կայսրությունում բնակվող հայերի թվաքանակը տարբեր կերպ է գնահատվել. Հայոց պատրիարքարանի կողմից՝ 2,100,000, Ա Թոյնբիի՝ 1,800,000, և մոտ 1,300,000՝ թուրքերի կողմից: Չնայած զոհերի թվի տարբեր գնահատականների, հայերն ու գրեթե բոլոր արևմտյան փորձագետները համաձայնության են գալիս այս համամասնությամբ բնակչության մոտ երկու երրորդը: Թուրքերը պնդում են, որ «փոխանցման» հետևանքները մի շատ ավելի փոքր մասշտաբի էին, որի արդյունքում բնակչության 20-25 տոկոսի անհետացման պատճառն, ընդհանուր առմամբ, պատերազմական վատ պայմաններն էին: Թուրքիան նաև նշում է, որ ծանր կորուստներ են եղել մահմեդական կողմում: Այս փաստարկն, ըստ երևույթին, անտեսել է այն փաստը, որ հայերը գրեթե ամբողջությամբ անհետացել են Անատոլիայից: Ներկայումս Թուրքիայի բնակչությունը շուրջ 45 միլիոն, որոնցից 100.000-ից քիչ հայեր են:

- Պատասխանատվությունն իր վրայից գցելու համար Թուրքիայի կառավարությունը պնդում է, որ հայերը պատերազմի ժամանակ խռո-

վության ապստամբության կոչեր, ինչպես նաև դավաճանություն են կատարել: Ամեն դեպքում, Դատարանը գտել է, որ միակ զինված գործողությունները, որոնք ձեռնարկվել են Օսմանյան Կայսրությունում, եղել են 1915 թվականի ապրիլի Մասունի ապստամբությունը և Վանի դիմադրությունը:

• Թուրքիայի կողմից բարձրացված մեկ այլ փաստարկ է հայերի հանդեպ այն մեղադրանք, որ նրանք են ենթադրաբար ցեղասպանություն գործել թուրքերի դեմ: Ճիշտ է, 1917 թվականին (այսինքն՝ հայերի տեղահանությունների և զանգվածային ջարդերի ավարտից մեկ տարի և ավել) մի շարք թուրքական գյուղեր ոչնչացվել են հայկական զորքերի կողմից: Դատարանը գտնում է, որ այս գործողությունները, չնայած դատապարտելի են, բայց չեն կարող ցեղասպանություն համարվել: Բացի դրանից, Դատարանը նշում է, որ այս գործողությունները կատարվել են հայերի նկատմամբ տառապալի կոտորածներից զգալի ժամանակ անց:

• Վերջապես, Թուրքիան մերժում է դատավորության առկայությունը՝ կասկածի տակ դնելով Ներքին գործերի նախարարի՝ Թալեաթի կեղմից ուղարկված հինգ հեռագրերի իսկությունը, որոնք Դատարանի կեղմից նշանակված փորձագետների կողմից որպես իսկական են վավերացվել 1921 թվականին, Բեռլին-Շարլոտենբուրգում՝ Սողոմոն Թեխլերյանի դատավարության ժամանակ: Թեխլերյանը արդարացվել է Թալեաթի սպանության համար՝ երիտթուրքերի կողմից մարդկության դեմ հանցագործությունների տեսանկյունից: Գերմանիայի դեսպան Վանգենհայմն իր հերթին է կասկած չի թողել, որ 1915 թվականի հուլիսի 7-ի դեպքը մտադրված էր. «այն հանգամանքները և այն ձևը, որով տեղահանությունները կատարվել են, այն փաստն են մատնացույց անում, որ կառավարությունն իսկապես հետապնդել է Օսմանյան Կայսրությունում հայոց ազգի բնաջնջման նպատակը» (նամակը վերաբերում է տեղահանության միջոցների ընդլայնմանն այն մարզերի նկատմամբ, որոնք չեն գտնվում թշնամու հարձակման սպառնալիքի տակ [No. 106 in the collection Deutschland und Armenien, 1914-1918] Վիլհելմստրաս, արխիվներ, հրատարակված Լեպսիուսի կողմից):

1971 թվականին, Միավորված ազգերի Մարդու իրավունքների հանձնաժողովը խնդրել է խտրականության դեմ պայքարի և փոքրամասնությունների պաշտպանության ենթահանձնաժողովին, ներառյալ փորձագետները, ստանձնել «ցեղասպանության հանցագործության

կանխման և պատժի հարցի ուսումնասիրումը»:

1973 և 1975 թվականներին երկու միջանկյալ հաշվետվությունները, որոնք ներկայացվել են հատուկ զեկուցողի ենթահանձնաժողովի կողմից պարունակում են մի պարբերություն 30, որը շարադրված է հետևյալ կերպ. «Մեր ժամանակներում ուշադրություն պետք է դարձվի հայերի կոտորածին՝ որպես քսաներորդ դարի առաջին ցեղասպանության վերաբերող բավականին առատ փաստաթղթերի գոյությանը»:

1979 թվականին Հանձնաժողովին ներկայացված վերջնական զեկույցի մեջ, վերոհիշյալ 30-րդ պարբերությունը հանված է:

Հանձնաժողովի նախագահը նկատել է, որ այդ բացթողումը տեղիք է տվել այնպիսի մի բողոքի ալիքի, որ դրա հետևանքներն այնպիսի չափերի էին հասնում, որոնք, հնարավոր է, չեն նախատեսվել հեղինակի կողմից: Ուստի, նա հրավիրել է զեկուցողին, իր զեկույցի վերջին գրառումներն կատարելիս՝ չմոռանալու այս արձագանքը և այդ բացթողմանը հետևող հանձնաժողովի պատվիրակների կողմից կատարված հայտարարությունները:

Հատուկ զեկուցողը երբեք չի ավարտել իր զեկուցման առաքելությունը և ենթահանձնաժողովը, Տնտեսական և սոցիալական խորհրդի թիվ 1983/33 Բանաձևի համաձայն, նշանակել է մեկ այլ զեկուցողի՝ տալով ամբողջովին վերանայելու և ցեղասպանության հանցագործության կանխման և պատժի հարցի ուսումնասիրությունը թարմացնելու հրահանգ:

Դատարանը գտել է, որ թուրքական պատվիրակությունը, հակառակվելով վերոհիշյալ 30-րդ պարբերության ընդունմանը, էականորեն առաջ է քաշել հետևյալ փաստարկները

• պնդված փաստերը պատմական ճամբարության խեղաթյուրում են

• ցեղասպանություն տերմինը կիրառելի չէ, քանի որ այդ դեպքերը ջարդեր չեն եղել, այլ պատերազմական գործողություններ

• և, վերջապես, որ վերադառնալով այն իրադարձություններին, որոնք տեղի են ունեցել այնքան վաղուց, որքան դարասկիզբն է, միայն վատ զգացողություններ կարող է առաջացնել:

Առաջին երկու կետերը, որոնք փաստերի և օրենքի հետ էին առնչվում, Դատարանն ուսումնասիրեց գործում ներկայացված փաստարկները մինչ այդ և վստահ է, որ նման կերպ նպաստել է Մարդու իրավունքների Հանձնաժողովի ցանկությանը՝ թույլ տալու ենթահանձնա-

ժողովին ամբողջովին կատարելու իր առաջադրանքը՝ հաշվի առնելով իրեն ներկայացված ամբողջ նյութը

Երրորդ կետի վերաբերյալ, Դատարանը կարող է միայն նշել, որ վերը մեջբերված 30-րդ պարբերությունն ընդունելուց հրաժարումը հենու է այն մտահոգությունից, որ այն կարող է բուռն արձագանքի տեղիք տալ:

I. Դատարանը հայ ժողովրդի իրավունքների մասին նշում է, որ հայ ժողովրդի առանձին խմբեր, որոնք ջարդերի և այլ վայրագությունների գոհերեն եղել կազմում են ժողովուրդների իրավունքի շրջանակների մեջ մտնող ազգ:

II. Այսօր, ՄԱԿ-ի կանոնադրության հոդված 1. S2 և 1976 թվականի հուլիսի 4-ին Ալժիրում ընդունված Ժողովուրդների իրավունքների Համընդհանուր հռչակագրի դրույթների համապատասխան՝ այս ժողովուրդն ունի ինքնորոշման իրավունք: Դա ընկած է միջազգային հանրության և առաջին հերթին Միավորված ազգերի կազմակերպության վրա՝ ձեռնարկելու բոլոր անհրաժեշտ միջոցները այս հիմնարար իրավունքի պահպանումն ապահովելու համար, ներառյալ այն միջոցառումները, որոնց առաջնային օբյեկտը պետք է լինի տվյալ իրավունքի արդյունավետ իրագործումը:

Դատարանը ցանկանում է շեշտել Թուրքիայի Հանրապետության վրա դրված հատուկ պարտավորությունները, որոնք բխում են ժողովուրդների իրավունքի ընդհանուր կանոնից, ինչպես նաև անհատական պայմանագրերից, որոնց նա մասնակից է դարձել և որոնք թվագրվում են գրեթե հարյուր տարի: Մրա հետ կապված, Դատարանը հատուկ ուշադրություն է դարձնում այն փաստին, որ Բեռլինյան պայմանագրի հոդված 61-ի ուժով վերը նշված Հանրապետությունը պարտավորությունների մեջ մտավ՝ դեռ 1878 թվականին՝ հայ ժողովրդի համար նախատեսելով Օսմանյան կայսրությունում միջազգային հանրության վերահսկողության և պաշտպանության ներքո գոյատևելու իր իրավունքի պահպանումն ապահովող ռեժիմ: Դատարանը նաև նշում է որ, Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հայ ժողովրդին տրված ինքնորոշման խոստումները չեն պահպանվել, քանի որ միջազգային հանրությունը անփութաբար թույլ տվեց հայկական պետության անհետացումը, որն ըստ էության ճանաչվել էր թե՛ դաշնակից պետությունների, թե՛ համագործակցող պետությունների և թե՛ Թուրքիայի կողմից Բաթումի պայմանագրում:

Այն փաստը, որ այս պետության՝ ճանաչված տարածքում որպես միջազգային հանրության անդամի խաղաղ գոյության իրավունքը չի պահպանվել ոչ ավելին, քան Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի խաղաղ գոյության իրավունքը, չի կարող, այնուամենայնիվ, համարվել հայ ժողովրդի իրավունքների արդյունավետ մարում կամ այս ժողովրդի նկատմամբ միջազգային հանրության պատասխանատվության վերացում:

Դատարանը նշում է, որ ժողովրդի ճակատագիրը երբեք չի կարող դիտարկվել որպես զուտ ներպետական խնդիր, ինքնիշխան պետությունների (չնայած, որ բարի նպատակներով են տոգորված) քմահաճույքին թողնելու առարկա: Այս ժողովրդի հիմնարար իրավունքներն ուղիղ կապ ունեն միջազգային հանրության հետ, որը կոչված է և պարտավոր է ապահովել այն, որ տվյալ իրավունքները հարգվեն, մասնավորապես, երբ դրանք բացեիքաց մերժվում են անդամ պետություններից մեկի կողմից:

Տվյալ դեպքում, այս եզրակացությունը ավելի է հաստատվում այն փաստով, որ նույնիսկ մինչև Միավորված ազգերի կազմակերպության կողմից ազգերի ինքնորոշման իրավունքի ուղղակիորեն ամրագրումը, հայ ժողովրդի իրավունքներն արդեն իսկ ճանաչվել էին մտահոգված պետությունների կողմից միջազգային հանրության ներկայացուցիչներին վերահսկողության ներքո:

III. Պատասխանատվությունը Ցեղասպանության համար

a) Ցեղասպանության համար պատասխանատվության համար կիրառելի ընդհանուր կանոններ:

Համաձայն Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիայի, որն ընդունվել է 1948 թվականի դեկտեմբերի 9-ին, Միավորված ազգերի Գլխավոր Վեհաժողովի կողմից, ցեղասպանությունը «միջազգային իրավունքի ներքո գտնվող հանցագործություն է», «անկախ նրանից կատարվել է այն խաղաղության, թե պատերազմի ժամանակ» (Հոդված 1):

Ցեղասպանություն նշանակում է հետևյալ գործողություններից ցանկացածը՝ կատարված ազգային, էթնիկական, ցեղական կամ կրոնական որևէ խմբի, որպես այդպիսին, լրիվ կամ մասնակի ոչնչացման մտադրությամբ:

1. այդ խմբի անդամների սպանությունը,
2. այդ խմբի անդամներին մարմնական լուրջ վնասվածքներ կամ մտավոր վնաս պատճառելը,
3. որևէ խմբի համար կյանքի այնպիսի պայմանների միտումնավոր ստեղծումը, որոնք ուղղված են նրա լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը,
4. այդ խմբի միջավայրում մանկածնությունը կանխելուն միտված միջոցների իրականացումը, (Հոդված 2)

Հոդված 3-ի համաձայն՝
Պատժելի են հետևյալ արարքները՝

1. ցեղասպանությունը,
2. ցեղասպանություն կատարելու նպատակով դավադրությունը,
3. ցեղասպանության ուղղակի և հրապարակային հրահրումը,
4. ցեղասպանություն կատարելու փորձը,
5. հանցակցությունը ցեղասպանության կատարման մեջ:

Եվ վերջապես 4-րդ հոդվածը նախատեսում է, որ անձն, ով մեղավոր է վերը նշված ակտերից և որևէ մեկով, պատժվում է անկախ նրանից, թե վերջինս համարվում է սահմանադրորեն պատասխանատու ղեկավար, պաշտոնատար թե մասնավոր անձ:

Դատարանը գտնում է, որ այս դրույթները պետք է ընդունվեն, որպես որոշիչ հանգամանքներ, որոնցով ցեղասպանությունը պետք է պատժվի ազգերի իրավունքի համապատասխան, անկախ այն այն ամենից, որ գոյություն ունեն որոշ, ավելի լայն սահմանումներ:

Մույն կոնվենցիան պաշտոնապես ուժի մեջ է մտել 1951 թվականի հունվարի 12-ին և Թուրքիայի կողմից վավերացվել է 1950 թվականի հուլիսի 31-ին: Մրանից, այնուամենայնիվ, չպետք է եզրակացնել, որ ցեղասպանության գործողությունները չեն կարող օրենքի մեջ մեղադրական եզրակացության օբյեկտ լինել, եթե նման գործողությունները տեղի են ունեցել կա՛մ մինչև կոնվենցիայի ուժի մեջ մտնելը, կա՛մ այն պետության տարածում, որը չի վավերացրել նշված Կոնվենցիան: Չնայած ճիշտ է, որ Կոնվենցիան պարտավորությունները ստորագրած պետության վրա է դնում հանցագործությունը կանխելու կամ պատժելու պարտականությունը, որը սահմանված չէ որևիցե այլ փաստաթղթով, այն, այնուամենայնիվ, պետք է գնահատվի որպես ղեկավարատիվ

օրենք այն առումով, որ ինքնին դատապարտում է ցեղասպանությունը:

Այս փաստաթղթի ղեկավարատիվ ուժը ծագում է բուն Կոնվենցիայի ձևակերպումից: Նախաբանում, պայմանագրի կողմերը ճանաչում են, որ «պատմության ընթացքում ցեղասպանությունը ծանր վնասներ է հասցրել մարդկությանը» և հոդված 1 «հաստատում», որ ցեղասպանությունը ազգերի իրավունքով հանցագործություն է հանդիսանում: Տվյալ հաստատումը պարտադիր ենթադրում է, որ այս հանցագործությունը գոյություն է ունեցել մինչև 1948 թվականի դեկտեմբերի 9: Ավելին, այն ընդհանուր առմամբ ընդունված է պետությունների միջազգային իրավական դոկտրինների կողմից, որն արտացոլում է պետությունների կոլեկտիվ գիտակցության անհերքելի իրողությունը: Այդքան էլ կարևոր չէ, որ «ցեղասպանություն» տերմինը միայն վերջերս է արժևորվել: Միակ կարևորություն ունեցող կետն այն է, որ նկարագրված գործողությունները արդեն վաղուց դատապարտվել են:

Երբ նման ղեկավարատիվ ուժն ընդունվի, Դատարանից չի պահանջվի սահմանել Կոնվենցիայի կողմից ամրագրված ցեղասպանությունն արգելող կանոնի ծագման ճշգրիտ ամսաթիվ: Բավարար կլինի Դատարանի նպատակների համար սահմանել, որ տվյալ կանոնը անվիճելիորեն ուժի մեջ է եղել, երբ տեղի են ունեցել դրանում նկարագրված ջարդերը: Իրոք, այն այդ գործողություններից, որոնք կատարվել են և հայտարարություններից, որոնք ծագել են Հայկական հարցից, որքան էլ որ արդարացված դրանք կարող են լինել կամ չլինել կամ եղել են տարբեր պատճառներով, հստակորեն պահանջում է, որ «մարդասիրական օրենքները» դատապարտեն Օսմանյան կառավարության սխտեմատիկ բնաջնջումների քաղաքականությունը:

Դատարանը ցանկանում է այս առումով ընդգծել, որ նման օրենքները, որքան էլ ներկա պահին ճնշող լինի անհրաժեշտությունը դրանց ձևականացման հանդեպ, արտացոլում են ոչ միայն իմպերատիվ բարոյական և էթիկայի կանոններ. դրանք նաև ցուցաբերում են պոզիտիվ իրավական պարտավորություններ, որոնք պետությունների կողմից չեն կարող անտեսվել այն ենթատեքստով, որ դրանք ձևականորեն ամրագրված չեն եղել պայմանագրում, ինչպես դա հաստատվում է պատերազմ վարելու Մարտենսի օրինակն իրավունքի այս բնագավառում: Դեռ ավելին, Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ կատարված հանցագործությունների դատապարտումը հաստատում է պետությունների հավատքը, որ նման հանցագործությունները չեն կա-

րող իրավաբանորեն հանդուրժվել չնայած, որ ոչ մի գրված օրենք ուղղակիորեն չի արգելում դրանք: Այս առումով Դատարանը հիշեցնում է, որ նման դատապարտումը իրականացվել է մարդկության դեմ հանցագործությունների նկատմամբ, ինչպես օրինակ պատերազմական հանցագործությունները: ավելին, պետք է ընդգծել, որ Սևրի պայմանագրի 230-րդ հոդվածը հստակորեն նշում է Թուրքիայի պատասխանատվությունը թուրքական տարածքներում հավերժացրած ջարդերի վերաբերյալ: Իհարկե այս պայմանագիրը չի վավերացվել, և հետևաբար պատժի պարտավորությունը, որն այն նախատեսում էր, երբեք չի իրագործվել: Սակայն, այս փաստը չի նվազեցնում այսօր այդ պայմանագրի բովանդակությամբ մեզ տրված հստակ դրսևորումից, որ այն ժամանակի պետություններն իրականում հասկացել են այն հանցագործության անօրինական բնույթը, որը մենք այժմ անվանում ենք ցեղասպանություն:

Այս պատճառների հիման վրա, Դատարանը գտնում է, որ ցեղասպանությունն օրենքով արգելված է եղել դեռ հայ ժողովրդի առաջին ջարդերի ժամանակներից, քանի որ 1948 թվականի կոնվենցիան ծառայում էր միայն դրան ձևական բնույթ հաղորդելու նպատակին և իրականում, օրենքի գերակայության որակյալ ձևակերպման մեջ, որը կիրառելի է այն փաստերի համար, որոնք ստեղծում են մեղադրանքի հիմքը, առաջ են քաշվել մինչև այս դատարանը:

բ) Հայ ժողովրդի ցեղասպանության մեղադրանք

Հետևյալ դիտարկումները, կարծես թե անհրաժեշտ են ապացույցների քննության ժամանակ, որոնք ներկայացված են Դատարանին, որոնց էությունը ներկայացված է ստորև՝

Ոչ մի կասկած չի կարող լինել, որ հայերը ցեղասպանության արգելման կանոնի սահմանման շրջանակներում որոշակի ազգային խումբ են կազմում: Այս եզրակացությունն էլ ավելի ակնհայտ է, քանի որ նրանք հանդիսանում են այն ժողովուրդը, որը պաշտպանված է ազգերի ինքնորոշման իրավունքով, որն անհրաժեշտաբար ենթադրում է, որ նրանք նաև կազմում են մի խումբ, որի ոչնչացումը արգելված է ցեղասպանության վերաբերյալ օրենքի ուժով:

Կասկած չկա նաև ցեղասպանությունը կազմող ֆիզիկական գործողությունների իրողության մեջ: Խմբի անդամների սպանության, նրանց ֆիզիկական և հոգեբանական ամբողջականության վրա հարձակումների, այդ խմբի ենթակայության փաստը այն պայմաններին,

որն անպայմանորեն տանում է մահվան, ուղղակիորեն ապացուցված է Դատարանի քննությանը հանձնված լիարժեք և հստակ ապացույցներով:

Խմբի ոչնչացման հատուկ մտադրությունը, որպես այդպիսին, որը ցեղասպանության հատկությունն է հանդիսանում, նույնպես սահմանվում է: Ջեկույցներն ու փաստաթղթային վկայությունները հստակորեն ցույց են տալիս հայ ժողովրդի մեթոդական բնաջնջման քաղաքականությունը, բացահայտելով 1948 թվականի դեկտեմբերի 9-ի Կոնվենցիայի 2-րդ հոդվածում հիշատակված անմիջական մտադրությունը:

Քաղաքականությունն ազդեցություն ունեցավ այն գործողությունների վրա, որոնք անհերքելիորեն պայմանավորված էին Թուրքական կամ Օսմանյան իշխանություններով, մասնավորապես 1915-1917 թթ. ջարդերի ժամանակ: Դատարանն այնուամենայնիվ մի կողմից նշում է, որ ի հավելումն պաշտոնական իշխանությունների կողմից իրագործած վայրագությունների, նրանք չարամտորեն տարածում էին նաև քարոզչություն և այլ միջոցներ քաղաքացիական բնակչությանը խրախուսելու համար՝ հայերի դեմ ցեղասպանություն իրականացնել: Այն նաև նշել է, որ իշխանություններն ընդհանուր առմամբ ձեռնպահ են մնացել միջամտությունից, որպեսզի կանխեն կոտորածը, չնայած՝ ունեցել են դրա իրավունքը, կամ մեղավորներին պատժելուց՝ բացառությամբ ունիոնիստների դեմ դատավարությունների: Այս մտեցումը կազմում է հանցագործության հրահրում և քրեական անփութության, և պետք է դատել արդեն իսկ կատարված և ցեղասպանության դեմ օրենքի գործողության առարկա հանդիսացող հանցագործությունների խստության չափով:

Ներկայացված փաստերի հիման վրա Դատարանը գտնում է, որ ջարդերն արդարացնելու նպատակով թուրքական կառավարության կողմից ներկայացված տարբեր մեղադրանքները (ապստամբություն, դավաճանություն և այլն) անհիմն են: Ամեն դեպքում, շեշտված է, որ նույնիսկ գոյություն ունեին այնպիսի հիմնավորված մեղադրանքներ, որոնք ոչ մի կերպ չէին կարող արդարացնել իրականացված ջարդերը: Ցեղասանությունը հանցագործություն է, որը չի ընդունում և ոչ մի արդարացում և հիմնավորվածություն:

Տվյալ պատճառներով Դատարանը գտնում է, որ թուրքական իշխանությունների վրա դրված հայ ժողովրդի ցեղասպանության մեղադրանքը հիմնված է որպես փաստացի հիմք:

ց) Յեղասպանության հետևանքները

Դատարանը հիշեցնում է, որ ինչպես մարդկության դեմ մյուս բոլոր հանցագործությունների դեպքում, ցեղասպանությունն ըստ սահմանման մի հանցագործություն է, որի նկատմամբ չի կարող կիրառվել ընդհանուր միջազգային իրավունքի ուժով սահմանված և ոչ մի վաղեմության ժամկետ, ինչպես ամրագրված է Պատերազմական և մարդկության դեմ հանցագործությունների համար վաղեմության ժամկետների կիրառման անթույլատրելիության վերաբերյալ Կոնվենցիայում, որն ընդունվել է 1968 թվականի նոյեմբերի 26-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից:

Բոլոր նրանք, ովքեր պատասխանատու են ջարդերի համար, անկախ նրանից նրանք սահմանադրորեն պատասխանատու ղեկավարներ են, պաշտոնատար անձինք թե մասնավոր անձինք, տույժերի ենթակա սուբյեկտներ են, որոնք պետությունները պարտավոր են իրականացնել, որպեսզի պահպանեն արդարադատության ապահովման իրականացմանը կցված երաշխիքները:

Տույժերի հարցից զատ, ցեղասպանությունը հանդիսանում է նաև ժողովուրդների իրավունքի խախտում, որոնց նկատմամբ թուրքական իշխանությունը պետք է իր վրա պատասխանատվություն վերցնի: Այս դիրքից բխող նրա առաջնային առաքելությունն ընկած է իր վրա դրված պարտավորությունների հիմքում, որպեսզի փաստերն ընդունվեն առանց դրանք կեղծելու փորձերի և որ դատապարտվի տվյալ ակտի իրականացումը:

Դատարանը կցանկանար հատուկ ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ միջազգային պրակտիկան թուրքիայի նկատմամբ կիրառվել է անհ ժամանակներից սկսած, որոնք ունեն իրավական հիմք՝ հաստատելու, որ պետության ինքնությունն ու շարունակականությունը չեն վնասվել նրա պատմության ցնցումներից մինչև Օսմանյան Կայսրության անկումը: Ոչ իր տարածքային կորուստները և ոչ էլ իր քաղաքական համակարգի ճանաչումը այնպիսին չէին, որ ուշադրությունը շեղեին իր՝ ժողովուրդների իրավունքի սուբյեկտ լինելու փաստից: Հետևաբար, չի կարող ենթադրվել, որ հաջորդող թուրքական կառավարությունները, սկսած քեմալական հանրապետության սահմանադրությունից իրավունք ունեն հրաժարվելու իրենց վրա պարտականություն վերցնելուց, որը մնում է այն պետության հետ, որ նրանք ներայացնում են միջազգային հանրությանը:

Դատարանը նաև նշում է, որ հայ ժողովրդի կամ իրենց իրավունքների պաշտպանության պատասխանատվությունը բաժանած պետությունների պահվածքի և հայտարարությունների մեջ ոչինչ չի կարող մեկնաբանվել որպես մեղադրանքի ալիք ցեղասպանության մեջ մեղավորների համար: Ինչպես իր նախորդները, ներկայիս թուրքական կառավարությունը հետևապես պարտավոր է իր վրա վերցնել այս պատասխանատվությունը:

Նմանատիպ հանցագործությունները խախտում են այն պարտավորությունները, որոնք այդքան անհրաժեշտ են միջազգային հանրության համար, որ պետությունների պատասխանատվության մասին վեջերս մշակված հոդվածի հեղինակները պետությունների պատասխանատվության օրենքի իմաստով արդարացիորեն բնութագրել են որպես «պետությունների միջազգային հանցագործություն», այլ կերպ ասած, որպես սովորական քրեական իրավունքի դաշտից դուրս հանցագործություն: Որպես հետևանք և ինչպես իսկապես հաստատվում է հայ ժողովրդի նկատմամբ ունեցած միջազգային հանրության հատուկ պարտավորություններով, տվյալ հանրության յուրաքանչյուր անդամ իրավունք ունի կոչ անելու Թուրքիային հետևել իր պարտավորություններին, և մասնավորապես, պետության կողմից ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչելուն: Բացի դրանից լիազորված է ձեռնարկելու օգնության և հոգուտ հայ ժողովրդի աջակցության ցանկացած միջոց, միաժամանակ չմեղադրվելով այլ պետության նեքին գործերին ապօրինի միջամտության մեջ, ինչպես նախատեսված է ժողովուրդների իրավունքով և Ալժիրի Դեկլարացիայով:

Եվ վերջապես ամբողջությամբ միջազգային հանրության և հատկապես ՄԱԿ-ի վրա է դրված ցեղասպանության ճանաչումը և հայ ժողովրդին այս առումով արակցություն ցուցաբերելը: Իրականում, դա չի կարող ամբողջությամբ արդարացված համարվել, ոչ կանխելով իր ժողովուրդներից մեկի նկատմամբ նման հանցագործության իրականացումը, որից նա պարտավոր է պաշտպանել իր բոլոր պետություններին նույն եղանակով, և ոչ էլ հանդուրժելով նման հանցագործության անարդարացի հերքումը մինչ այսօր:

Հայերի ցեղասպանությունը, որը տեղի է ունեցել Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ իր տեսակի մեջ առաջինն էր տվյալ դարում, որի ընթացքում ցեղասպանությունը և դրա հետ կապված սարսափը, ավաղ, լայն տարածում գտան:

Նմանատիպ վայրագությունների իրականացումը չի սահմանափակվել այն հասարակությունների համար, որոնք հստակորեն կարող են բնութագրվել որպես թերգարգացած: Ի հեճուկս, որոշ դեպքերում դրանք իրականացվել են ամենագարգացած և գիտականորեն առաջադիմած համարվող ազգերի կողմից: Իրականում, ամբողջ 20-րդ դարի առավել նշանակալից օրինակ է համարվում առաջադեմ տեխնոլոգիաների և բարդ կազմակերպվածության օգտագործմամբ նացիստների կողմից եվրոպայի հրեաների ցեղասպանությունը. ցեղասպանություն, որը հազիվ երևակայելի մակարդակի մարդկային տառապանքներ առաջացրեց և որը վերջին հաշվով հանգեցրեց գրեթե վեց միլիոն մարդկանց ոչնչացման:

Նախորդ նիստերի ժամանակ Դատարանն առիթ է ունեցել դատապարտել էլ Սալվադորի ժողովրդի (1981 թվականի փետրվարի 11-ի որոշմամբ), Արևելյան Թիմորի մարտերե ժողովրդի (1981 թվականի հունիսի 21-ի որոշմամբ) և Գվատեմալայի հնդիկ ժողովրդի (1983 թվականի հունվարի 31-ի որոշմամբ) ցեղասպանությունները:

Դատարանը նշում է, որ ցեղասպանության, դրա անմիջական գոհերին հասցված վնասների անդառնալի սխալներից վեր, առավել լուրջ հետևանքներ և առավել մտահոգիչ ազդեցություններ են ամբողջ մարդկության քայքայումն ու այլասերումը:

Այս պատճառներով ի պատասխան այն հարցերի, որոնք դրված են Դատարանի առջև, այն սույնով գտնում է, որ

- հայկական բնակչությունը հանդիսացել և հանդիսանում է այն ժողովուրդը, որի հիմնարար իրավունքները, և անհատական և կոլեկտիվ, պետք է հարգվեն և կհարգվեն միջազգային իրավունքին համապատասխան;

- տեղահանությունների և ջարդերի ընթացքում հայկական բնակչության խմբերի ոչնչացումը կազմում է ցեղասպանության հանցագործությունը, որի համար կիրառելի չեն որևիցե վաղեմության ժամկետներ 1948 թվականի դեկտեմբերի 9-ի Ցեղասպանության կանխման և հանցագործության պատժի մասին կոնվենցիայի իմաստով: Ինչ վերաբերում է տվյալ հանցագործության դատապարտմանը, վերը նշված Կոնվենցիան դեկլարացիան է այն գոյություն ունեցող իրավունքի, որը հաշվի է առել մեղադրվող գործողությունների իրականացման պահին արդեն իսկ ուժի մեջ մտած կանոնները;

- երիտթուրքական կառավարությունը մեղավոր է տվյալ ցեղաս-

պանության մեջ, 1915-1917 թթ. իրականացրած գործողությունների հետ կապված;

- հայերի ցեղասպանությունը նաև հանդիսանում է «միջազգային հանցագործություն», որի համար թուրքական կառավարությունը պետք է պատասխանատվություն կրի, առանց այդ պատասխանատվությունից խուսափելու նպատակով օգտագործելու այն պատրվակը, թե այդ պետությունն այլևս գոյություն չունի;

- այդ պատասխանատվությունը առաջին հերթին ենթադրում է ցեղասպանության և դրա հետևանքով հայ ժողովրդի կրած վնասների իրողության պաշտոնական ճանաչման պարտավորություն;

- Միավորված ազգերի կազմակերպությունը և դրա յուրաքանչյուր անդամ իրավունք ունի պահանջելու այս ճանաչումը և այս նպատակով աջակից լինել հայ ժողովրդին:

Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարան

Բաժին երկրորդ

Փերինչեքն ընդդեմ Շվեյցարիայի գործով (Բողոք No 27510/08)

Որոշում
Ստրասբուրգ

Դեկտեմբերի 17, 2013 թ.

Այս որոշումը վերջնական կդառնա Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանների առկայության դեպքում: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:

Փերինչեքն ընդդեմ Շվեյցարիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, որպես պալատ հանդես գալով հետևյալ կազմով՝ նախագահող՝ Գիդո Ռայմոնդի, դատավորներ՝ Պեր Լորենզեն, Դրագոլժուր Պոպովիկ, Անդրաս Սաժո, Նեբոյա Վուկիևիկ, Պատու Պինտո դե Ալբուքերք, Հելեն Կելլեր և Բաժնի ռեեստրավար՝ Սթեյնլի Նեյսմիթ 2013թ. նոյեմբերի 23-ին կայացած դռնփակ խորհրդակցությունների արդյունքում հանգել է հետևյալ վճռի՝ կայացված վերոհիշյալ թվականին.

Վարույթը

1. Գործի համար առիթ է հանդիսացել 2008 թվականի հուլիսի 10-ին ազգությամբ թուրք պրն Դոդու Փերինչեքի («դիմումատու») կողմից մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության վերաբերյալ կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 34-րդ հոդվածով Շվեյցարիայի Համադաշնության դեմ բերված դիմում-բողոքը (№ 27510/08):

2. Դիմումատուին ներկայացրել է Անկարայում աշխատող իրավաբան պրն. Չենգիզը: Շվեյցարիայի կառավարությունը (այսուհետ՝ Կառավարություն) ներկայացրել է նրանց փոխգործակալ, Արդարադատության Դաշնային Գրասենյակի Եվրոպական իրավունքի և մար-

դու իրավունքների միջազգային պաշտպանության միության անդամ Ադրիան Շեյդեգերը:

3. Դիմումատուն մասնավորապես բողոքել է, որ ինքը սխալ է դատապարտվել Շվեյցարիայի դատարանների կողմից բազմաթիվ միջոցառումների ժամանակ Հայոց ցեղասպանությունը հրապարակավ «Միջազգային սուտ» հայտարարելու համար:

4. 2010 թվականի սեպտեմբերի 10-ին դիմում-բողոքը ներկայացվել է Կառավարությանը: Ինչպես թույլատրվում է Կոնվենցիայի 29-րդ հոդվածի 1-ին մասով, որոշվել է նաև, որ Պալատը պետք է որոշում կայացնի գործի ընդունելիության և էության վերաբերյալ:

5. Օգտվելով Կոնվենցիայի 36-րդ հոդվածի 1-ին մասով իրեն վերապահված միջամտելու իրավունքից՝ 2011 թվականի սեպտեմբերի 15-ին Թուրքիայի կառավարությունը մեկնաբանություններ է ուղարկել:

ՓԱՍՏԵՐԸ

1. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

6. Դիմումատուն ծնվել է 1942 թվականին, ապրում է Անկարա քաղաքում:

7. Դիմումատուն իրավաբանական գիտությունների դոկտոր է, Թուրքիայի «Աշխատավորական» կուսակցության նախագահը: 2005 թվականի մայիսի 7-ին, հուլիսի 22-ին և սեպտեմբերի 18-ին համապատասխանաբար Լոզանում (Վոի կանտոն), Օպֆիկոնում (Յուրիխի կանտոն) և Կոնիգում (Բեռնի կանտոն) նա մասնակցել է տարբեր գիտաժողովների, որոնց ժամանակ հրապարակավ հերքել է 1915 թվականին և հետագա տարիներին Օսմանյան կայսրության կողմից հայ ժողովրդի դեմ ուղղված ցեղասպանության ցանկացած փաստի գոյությունը: Նա Հայոց Ցեղասպանության զաղափարը կոչել է «Միջազգային սուտ»: Նրա այս արտահայտություններն արվել են տարբեր համատեքստերում. նա արտահայտվել է Լոզանում կայացած մամուլի ասուլիսում (թուրքերեն), Օպֆիկոնում՝ 1923 թվականի Լոզանի պայմանագրի հիշատակման շրջանակներում կայացած գիտաժողովի ընթացքում և Կոնիգում՝ իր կուսակցության հանդիպման ժամանակ:

8. 2005 թվականի հուլիսի 15-ին Հայաստան-Շվեյցարիա ասոցիացիան դիմումատուի դեմ բողոք է ներկայացրել վերը նշված

մեկնաբանությունների բովանդակության շուրջ:

9. Լոզանի Ոստիկանության շրջանային դատարանն իր՝ 2007 թվականի մարտի 9-ի վճռով դիմումատուին մեղավոր է ճանաչել Շվեյցարիայի քրեական օրենսգրքի 261-րդ հոդվածի 4-րդ մասի (տե՛ս ստորև բերված 14-րդ պարբերությունը) համաձայն՝ ռասայական խտրականության համար, և դատապարտել 90-օրյա ժամկետի համար սահմանված՝ օրական 100 շվեյցարական ֆրանկ կազմող դրամական տուգանքի (ՇՖ) (մոտավորապես 85 եվրո), դատավճռի ի կատար ածումը հետաձգել 2 տարով, 3000 շվեյցարական ֆրանկ տուգանքի կամ 30 օր ազատազրկման, ինչպես նաև 1000 շվեյցարական ֆրանկ (մոտավորապես 850 եվրո)՝ որպես բարոյական վնաս՝ հօգուտ Շվեյցարիա-Հայաստան ասոցիացիայի: Այն գտել է, որ Հայոց Ցեղասպանությունը, համաձայն Շվեյցարիայի հասարակական կարծիքի, ինչպես նաև ընդհանրապես ապացուցված փաստ է:

Այն սրան անդրադարձել է խորհրդարանական տարբեր ակտերում (այդ թվում՝ Բուլոնի բանաձևում. տե՛ս ստորև բերված 16-րդ պարբերությունը), իրավաբանական հրապարակումներում, ինչպես նաև դաշնային և կանտոնալ քաղաքական իշխանությունների հայտարարություններում: Ավելին՝ այն նաև բազմաթիվ միջազգային կառույցների, ինչպիսիք են Եվրոպայի Խորհուրդը՝² և Եվրախորհրդարանը, մղել է Ցեղասպանության ճանաչմանը: Այնուհետև այն եզրակացրել է, որ դիմումատուի նման հետապնդումները ոչ թե պատմական, այլ ռասիստական դրդապատճառներ ունեն:

10. Դիմումատուն բողոքարկել է այս որոշումը: Նա հիմանականում պահանջել է վերջինիս չեղյալ հայտարարումը և հետագա քննություն՝ ներառյալ պետության կողմից տարվող հետազոտությունը և հայոց հարցի վերաբերյալ պատմաբանների դիրքորոշումը:

11. 2007 թվականի հունիսի 13-ին Վճռաբեկ քրեական դատարանի՝ Վո կանտոնի կանտոնալ դատարանը մերժել է դիմումատուի կողմից այդ վճռի դեմ բերված բողոքը: Ըստ դատարանի՝ ինչպես Հոլոքոստը, այնպես էլ Հայոց Ցեղասպանությունը՝ Շվեյցարիայի օրենսդրի կողմից որպես ապացուցված ճանաչված պատմական փաստ է, որը

² Եվրոպայի Խորհուրդը չի ճանաչել Հայոց Ցեղասպանությունը՝ որպես այդպիսին, ի տարբերություն Խորհրդարանական Վեհաժողովի որոշ անդամների (տե՛ս ստորև բերված 29-րդ պարբերությունը):

Շվեյցարիայի քրեական օրենսգրքի 261-րդ հոդվածի 4-րդ կետի ընդունման ժամանակ արդեն իսկ գոյություն է ունեցել: Հետևաբար, դրա գոյությունն ընդունելու համար դատարանները պարտավոր չեն օգտագործելու պատմաբանների աշխատանքը: Շրջանային դատարանը նաև ընդգծել է, որ դիմումատուն ընդամենը ժխտել էր Ցեղասպանության որակավորումը՝ առանց երբևէ կասկածի տակ դնելու հայերի զանգվածային ջարդերի ու տեղահանության գոյության հարցը:

12. Դիմումատուն բողոքարկել է այս վճռի դեմ քրեական գործերով Դաշնային դատարան: Նա դատարանին հիմնականում խնդրել է իր արդարացման, ինչպես նաև մեղադրական յուրաքանչյուր դատապարտումից ազատելու ուղղությամբ կատարել դատական որոշման բարեփոխում՝ հիմնվելով քրեական և քաղաքացիական օրենսդրության վրա: Ըստ էության, նա քննադատել է կանտոնալ երկու իշխանություններին՝ Շվեյցարիայի քրեական օրենսգրքի 261-րդ հոդվածի 4-րդ կետի կիրառման տեսանկյունից՝ որպես իր կողմից հայցված հիմնարար իրավունքների խախտում՝ 1915 թվականի դեպքերը որպես Ցեղասպանություն որակելու էական փաստերի բավարար ուսումնասիրություն չկատարելու համար:

13. 2007 թվականի դեկտեմբերի 12-ի վճռով (ATF 6B_398/2007), որի համապատասխան մասը բերված է ստորև, Դաշնային դատարանը մերժել է դիմումատուի բողոքը՝

3.1 «Քրեական օրենսգրքի 261-րդ հոդվածի 4-րդ կետը պատիժ է նախատեսում այն անձի նկատմամբ, ով կորսնորի այնպիսի վարքագիծ, որով հրապարակայնորեն՝ խոսքի, գրության, պատկերների, ժեստերի, հարձակման ճանապարհով կամ ցանկացած այլ կերպ կնսեմացնի կամ խտրականություն կդնի այնպիսի ձևով, որը ոտնահարում է անձի կամ մի խումբ անձանց արժանապատվությունը կախված ռասայից, էթնիկական կամ կրոնական պատկանելությունից կամ ով, միևնույն պատճառով կհերքի, չափազանց նվազագույնի կհասցնի կամ կփորձի արդարացնել ցեղասպանությունը կամ մարդկության դեմ ուղղված այլ հանցագործությունները: Տառացի և քերականական առաջին մոտեցմամբ կարող ենք նկատել, որ օրենքի ձևակերպումը (օգտագործելով անորոշ դերանուն՝ «ինչ-որ ցեղասպանություն») որևէ կոնկրետ պատմական իրադարձության հստակ չի վերաբերում: Օրենքը չի բացառում նացիստական ռեժիմի կողմից ցեղասպանության հերքմանն ուղղված գործողությունների ճնշումը, ինչպես նաև այն քրեա-

կան իրավունքում Հայոց Ցեղասպանության բացահայտ հերքումը չի որակում որպես ռասայական խտրականությանն ուղղված գործողություն:

3.2 Քրեական օրենսգրքի 261-րդ հոդվածի 4-րդ կետն ընդունվել է 1965 թվականի դեկտեմբերի 21-ի Ռասայական խտրականության բռնությունների վերացման մասին միջազգային կոնվենցիային (RS 0.104) Շվեյցարիայի անդամակցությունից հետո: Իր սկզբնական ձևակերպման մեջ Դաշնային խորհրդի օրենքի նախագծի տեքստը ցեղասպանությունների հերքման վերաբերյալ որևէ նշում չէր պարունակում (v. FF 1992 III 326):

Ռևիզիոնիզմի քրեականացումը, համապատասխանաբար Հոլոքոստի հերքումը, Քրեական օրենսգրքի 261-րդ հոդվածի 4-րդ կետում պետք է ներառված լիներ որպես գոհվածների հիշատակի անարգանք (Դաշնային խորհրդի 1992 թվականի մարտի 2-ի հաղորդագրությունը Շվեյցարիայի՝ 1965 թվականի Ռասայական խտրականության բռնությունների վերացման մասին միջազգային կոնվենցիային անդամակցելու մասին և կապված քրեական իրավունքի վերանայման հետ FF 1992 III 265 ss, spéc. 308 s): Այս հաղորդագրությունը 1915 թվականի իրադարձություններին ոչ մի բացահայտ հղում չի պարունակում:

Խորհրդարանական քննարկումների ընթացքում Ազգային Խորհրդի իրավական հարցերով հանձնաժողովը որոշել է Քրեական օրենսգրքի 261-րդ հոդվածի 4-րդ կետին ավելացնել հետևյալ տեքստը. «[...] կամ ով միևնույն պատճառով չափազանց նվազագույնի կհասցնի կամ կփորձի ցեղասպանությունը կամ մարդկության դեմ ուղղված այլ հանցագործությունները [...]»:

Ֆրանսերենով զեկուցող, ազգային Խորհրդատու Կոմբին հստակեցրել է, որ գերմաներեն և ֆրանսերեն տեքստերի միջև շփոթություն կա՝ նշելով, որ ակնհայտորեն ընդհանրապես ցեղասպանության մասին է խոսվել, այլ ոչ թե միայն Հոլոքոստի (BO/CN 1992 II 2675 s.):

Այնուամենայնիվ, հանձնաժողովի նախագիծն ընդունվել է Ազգային Խորհրդի կողմից այնպես, ինչպես առաջարկվել էր (BO/CN 1992 II 2676): Ազգային Խորհրդի կողմից ընդունված Քրեական օրենսգրքի 261-րդ հոդվածի 4-րդ կետի ձևակերպումը պահպանելու մասին Խորհրդի իրավաբանական հարցերով Հանձնաժողովի առաջարկին Պետությունների Խորհրդի առջև հակառակվել է Կուչլերը, որը, սակայն, կասկածի տակ չի դրել հետևյալ նախադասությունը «ով միևնույն

պատճառով կհերքի, չափազանց նվազագույնի կհասցնի կամ կփորձի արդարացնել ցեղասպանությունը կամ մարդկության դեմ ուղղված այլ հանցագործությունները» (BO/CE 1993 96; sur la portée de cette proposition, v. ATF 123 IV 202 consid. 3c p. 208 ainsi que Poncet, ibidem):

Այս առաջարկն ընդունվել է քննարկման ընթացքում՝ Հայոց Ցեղասպանության հերքման վերաբերյալ առանց հետագա անդրադարձի: Հակասությունների հաղթահարման ընթացքում Ազգային Խորհրդի իրավաբանական հարցերով հանձնաժողովը պրն. Կոմբինի միջոցով առաջարկել է ընդունել Պետությունների Խորհրդի ներկայացրած փոփոխությունները՝ բացառությամբ չորրորդ պարբերության, որտեղ առաջարկվում է խոսել «ինչ-որ ցեղասպանության» մասին՝ հղում կատարելով նրանց վրա, որոնք կարող են տեղի ունենալ: Ֆրանսերենով զեկուցողը նշել է, որ շատ մարդիկ են խոսել քրդերի կամ այլ ժողովուրդների, օրինակ՝ հայերի զանգվածային ջարդերի մասին, բայց այս բոլոր ցեղասպանությունները պետք է հաշվի առնվեն (BO/CN 1993 I 1075 s.):

Նույնիսկ համառոտակի հղում է կատարվել ցեղասպանության սահմանմանը, և թե ինչպես է թուրքն արտահայտվել հայկական ողբերգության մասին, և նրան, որ այս դրույթը ոչ թե պետք է ձգտի արտահայտելու մեկի, այլ բոլոր ցեղասպանությունների կատարումը, այդ թվում՝ Բոսնիայի եւ Հերցեգովինայի (BO/CN 1993 I 1077 ; Grendelmeier-ի պատասխանը):

Ի վերջո, Ազգային Խորհուրդը 4-րդ կետի տեքստն ընդունել է հետևյալ ձևակերպմամբ. «[...] ցանկացած այլ կերպ կնսեմացնի կամ խտրականություն կդնի այնպիսի ձևով, որը ոտնահարում է անձի կամ մի խումբ անձանց արժանապատվությունը՝ կախված ռասայից, էթնիկական կամ կրոնական պատկանելությունից կամ ով միևնույն պատճառով չափազանց նվազագույնի կհասցնի կամ կփորձի արդարացնել ցեղասպանությունը կամ մարդկության դեմ ուղղված այլ հանցագործությունները» (BO/CN 1993 I 1080): Խորհրդարանական ընթացակարգերից հետո Պետությունների Խորհուրդը պահպանել է իր դիրքը՝ ֆրանսերեն լեզվով տեքստում կատարելով ընդամենը մեկ՝ «ցեղասպանություն» արտահայտության խմբագրական փոփոխություն, իսկ Ազգային Խորհուրդը միացել Պետությունների Խորհրդի որոշմանը՝ առանց Հայոց Ցեղասպանության հերքման հարցը կրկին բարձրացնելու (BO/CN 1993 I 1300, 1451; BO/CE 1993 452, 579):

Այսպիսով, նախապատրաստական աշխատանքներից պարզ է,

որ Քրեական օրենսգրքի 261-րդ հոդվածի 4-րդ կետը ձգտում է ոչ միայն նացիստական հանցագործությունների, այլև մյուս ցեղասպանությունների հերքմանը:

[...]

3.4 Մինչդեռ մենք չենք կարող մեկնաբանել այդ նախապատրաստական աշխատանքներն այն իմաստով, որ քրեական նորմը ձգտում էր սահմանել որոշակի ցեղասպանություններ, որոնք օրենսդիրը ընդունելու ժամանակ նկատի ուներ, ինչպես առաջարկում է որոշումը:

3.4.1 Հոլոքոստի առնչությամբ հերքողների և ռեզիստանսիստների կարծիքների բախման կամքը, անշուշտ, Քրեական օրենսգրքի 261-րդ հոդվածի 4-րդ կետի մշակման կենտրոնական տարրն է կազմել: Իր իրականացրած արդարադատությունում, սակայն, Դաշնային դատարանը եզրակացրել է, որ Հոլոքոստի հերքումը նշանակում է օբյեկտիվորեն գիտակցել Քրեական օրենսգրքի 261-րդ հոդվածի 4-րդ կետով դատապարտված լինելը, քանի որ այն ընդհանրապես ճանաչված է այնպես, ինչպես սահմանված է, ասինքն՝ որպես պատմական փաստ (ATF 129 IV 95 consid. 3.4.4, p. 104 s.), իսկ օրենսդրի պատմական մտադրության վերաբերյալ այս որոշման ոչ մի հղում մեջ չի կատարվել:

Նույն իմաստով բազում հեղինակներ դրանում տեսնում են քրեական հեղինակության համար ընդհանուր մի փաստ (Vest, *Delikte gegen den öffentlichen Frieden*, n. 93, p. 157), պատմական մի փաստ, որը ենթակա չէ քննարկման (Rom, *op. cit.*, p. 140), մի որակավորում («ցեղասպանություն»), որը ոչ մի կասկած չի հարուցում (Niggli, *Ռասայական խտրականություն*, n. 972, p. 259, որը պարզապես ցույց է տալիս, որ ցեղասպանությունը եղել է այդ նորմի ստեղծման նախահիմքը՝ նույն իմաստով: Guyaz, *op. cit.* p. 305): Ընդամենը մի քանի ձայներ են, որ հղում են կատարում միայն փաստը պատմական ճանաչելու օրենսդրի կամքի վրա (v. p. ex.: Ulrich Weder, *Schweizerisches Strafgesetzbuch, Kommentar* [Andreas Donatsch Hrsg.], Zurich 2006, Art. 261bis al. 4, p. 327 ; Chaix/Bertossa, *op. cit.*, p. 184):

3.4.2 Մոտեցումները, որոնք փնտրում են նորմն ընդունելիս օրենսդրի նկատի ունեցած ցեղասպանությունները, բախվում են տառաջի մեկնաբանմանը (v. supra consid. 3.1), որը հստակ ցույց է տալիս, որ օրենսդիրը կամեցել է կենտրոնանալ բաց ձևակերպմամբ օրենքի կետի վրա՝ ի տարբերություն այն օրենքների, որոնք կոչվում են «հիշո-

ղության օրենքներ»՝ ընդունված, այդ թվում, նաև Ֆրանսիայում (օրենք No 90-615՝ ընդունված 1990 թվականի հուլիսի 13, կոչված նաև օրենք Gayssot; օրենք n° 2001-434՝ ընդունված 2001 թվականի մայիսի 21-ին՝ նվիրված թրաֆիքինգը և ստրկությունը որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն ճանաչելուն, կոչված նաև օրենք Taubira, օրենք No2001-70՝ ընդունված 2001 թվականի հունվարի 29-ին՝ 1915 թվականի Հայոց Ցեղասպանությունը ճանաչելու մասին):

Հոլոքոստի հերքման քրեականացումը Քրեական օրենսգրքի 261-րդ հոդվածի 4-րդ կետով ավելի քիչ է հիմնված օրենսդիր իշխանության մտադրության վրա, երբ նա ընդունել է քրեական նորմը՝ հատկապես ուղղված հերքմանն ու ռեզիստանսիզմին, որի ուսումնասիրությունը ցույց է տալիս մի ընդհանուր կոնստիտուցիոնալ գոյությունը, որին օրենսդրի մասնակցությունը, անկասկած, հնարավոր է:

Հետևաբար չկա պատճառ չճշտելու օրենսդրի ցուցաբերած մտադրությունը Հայոց Ցեղասպանության հարցի նկատմամբ (contra: Niggli, *Rassendiskriminierung*, 2e éd., Zurich 2007, n. 1445 s., p. 447 s.):

Ավելին՝ սրա վերաբերյալ անհրաժեշտ է նշել, որ եթե տեքստի ուրոշ տարրեր խորհրդարանականների կողմից բուռն քննարկման առիթ են դարձել, ապա 1915 թվականի իրադարձությունների որակումն այս համատեքստում ոչ մի քննարկման առարկա չի դարձել և ի վերջո միայն 2 բանախոսների կողմից է դրանց հղում կատարվել, որոնք ձգտում էին արդարացնել Քրեական օրենսգրքի 261-րդ հոդվածի 4-րդ կետի ֆրանսիական մի տարբերակ, որը թույլ չի տալիս տեքստի չափազանց սահմանափակ մեկնաբանում, այնուհետև նշում, որ գերմանական տարբերակն անհրաժեշտ չէ:

3.4.3 Դոկտրինան և դատական պրակտիկան, ընդհակառակը, Հոլոքոստին վերագրում են բացահայտ, անվիճելի կամ քննարկման ոչ ենթակա բնույթ՝ նշելով, որ այն քրեական դատավարությամբ ապացուցվելու կարիք չունի (Vest, *ibidem*; Schleiminger, *op. cit.*, art. 261bis CP, n. 60): Հետևաբար, դատարանները պատմաբանների աշխատանքների օգնությանն այս առումով դիմելու կարիք չունեն: (Chaix/Bertossa, *ibidem*; arrêt Non publié 6S.698/2001 consid. 2.1):

Հիմնական է սահմանվում Հոլոքոստի հերքման քրեականացումը, որն այդ պատճառով թելադրում է դատավոր պահանջելու մեթոդը, երբ հարցը վերաբերում է այլ ցեղասպանությունների հերքմանը: Առաջին հարցը, որը ծագում է, այն է, թե արդյոք կա նման կոնստիտուս, որը

վերաբերում է դիմումատուի կողմից փաստերի հերքմանը:

4. Այսպիսով, բարձրագված հարցը փաստի ուժով դուրս է մղվում: Այն ավելի պակաս ուղղակիորեն է կրում Օսմանյան Կայսրության կողմից իրականացված ցեղասպանության, զանգվածային ջարդերի և տեղահանումների որակումը, քան հասարակության մեջ և պատմաբանների շրջանում եղած ընդհանուր գնահատականը: Ահա թե ինչպես պետք է հասկանալ ոստիկանական դատարանի մոտեցումը, որը մատնացույց է անում, որ իր պարտավորությունը պատմություն ստեղծելը չէ, այլ պարզելը, թե արդյոք ք ցեղասպանությունը «հայտնի և ճանաչված է» կամ «ապացուցված» (jugement, consid. II, p. 14) մինչև վերջին կետի նկատմամբ դատապարտում սահմանելը, որը կանտոնային որոշման անբաժանելի մասն է կազմում (arrêt cantonal, consid. B p. 2):

4.1 Փաստի նման հաստատումը պարտադիր է Դաշնային դատարանի համար [...]:

4.2 Ինչ վերաբերում է փաստը սահմանելուն, ոստիկանական դատարանն իր դատապարտումը հիմնել է ոչ միայն քաղաքական ճանաչման հայտարարությունների գոյության վրա, այլև այն ընդգծել է, որ իշխանությունների դատապարտումը, որոնցից դրանք բխում են, հիմնվելով փորձագետների խորհրդատվության (այդ թվում՝ հարյուր պատմաբանների մի քույր, որոնք աշխատել են նաև Ֆրանսիայի Ազգային ժողովի՝ 2001 թվականի հունվարի 29-ի օրենքն ընդունելիս) կամ բարձր որակավորում ունեցող մասնագետների վիճաբանության և փաստաթղթավորման վրա(Եվրախորհուրդ), կեղծվել է:

Բացի դրանից, այս վիճաբանությունը, հիմնվելով քաղաքական ճանաչման գոյության վրա, ըստ էության գտնում է, որ կա համայնքի մի մեծ կոնսեսուս, ինչպես ասվում է քաղաքական հայտարարություններում, որն էլ իր հերթին հիմնվում է 1915 թվականի գործողությունները որպես ցեղասպանություն որակող ավելի լայն գիտական կոնսեսուսի վրա: Սրան կարելի է ավելացնել այն, որ նույն իմաստով, Ազգային խորհրդի կողմից վարված՝ Հայոց Ցեղասպանության պաշտոնապես ճանաչմանն ուղղված քննարկման ժամանակ հղում է կատարվել միջազգային հետազոտությունների աշխատանքներին՝ «Der Völkermord an den Armeniern und die Shoah» վերտառությամբ (BO/CN 2003 2017; intervention Lang): Վերջապես Հայոց Ցեղասպանությունը միջազգային քրեական իրավունքին նվիրված ընդհանուր գրականության, ինչպես նաև ցեղասպանությունների հետազոտությունների «դասական» օրի-

նակներից մեկն է (v. Marcel Alexander Niggli, Rassendiskriminierung, n. 1418 s., p. 440 և մեջբերված բազում հղումներ, նաև n. 1441 p. 446 և հղումներ):

Քանի որ դիմումատուն փորձում է վիճարկել ցեղասպանության գոյությունը կամ 1915 թվականի իրադարձությունները որպես ցեղասպանություն իրավաբանորեն որակելը՝ մասնավորապես ընդգծելով դատարանի կամ միջազգային մասնագիտական հանձնաժողովների որոշումների բացակայությունը, համապատասխան հիմնավոր ապացույցների բացակայությունը, որոնք վկայում են Քրեական օրենսգրքի 261-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխանող օբյեկտիվ և սուբյեկտիվ պայմանները կամ ՄԱԿ-ի 1948 թ. Կոնվենցիայում շարադրված այն պայմանները, որոնք պնդում են, որ գոյություն ունեն երեք ճանաչված ցեղասպանություններ: Սա վեճի հետ ոչ մի առնչություն չունի, քանի որ առաջին հերթին վերաբերում է այն հարցին, թե արդյոք կա՞ ընդհանուր, մասնավորապես պատմական մի կոնսեսուս, որը բավարար կլինի բացառելու քրեական բնույթի քննարկումները (1915 թվականի իրադարձությունները որպես ցեղասպանություն որակելու մասին պատմական քննարկումները) Քրեական օրենսգրքի 261-րդ հոդվածի 4-րդ կետն ընդունելու վերաբերյալ:

Դա նույնն է, ինչ դիմումատուն բողոքի, թե կանտոնալ դատարանը կամայականություն է դրսևորել չլիտարկելով անվավերության հիմքերը, որոնք ծագել են կանտոնալ բողոքարկման մեջ և վերաբերում են իր պահանջած նույն փաստերին և քննության միջոցառումներին: Հետևաբար, անհրաժեշտ է հաշվի առնել իր փաստարկը, որը, մասնավորապես, վերաբերում է այդ կոնսեսուսի ճանաչմանը:

4.4 Դիմումատուն պնդում է, որ ինքը խնդրել է, որ քննություն անցկացվի՝ պարզելու հետազոտության ներկա դրությունը և աշխարհի պատմաբանների ներկա դիրքորոշումը հայոց հարցի վերաբերյալ: Նա իր այս կամ այն գրություններում նշում է նաև, որ մի կողմից պետությունների, մյուս կողմից՝ պատմաբանների միջև 1915 թվականի դեպքերի որակման շուրջ միաձայնություն կամ կոնսեսուս չկա: Մինչդեռ իր փաստարկը հակասում է ինչպես իր սեփական, այնպես էլ կանտոնային իշխանությունների համոզմանը: Նա մասնավորապես չի մեջբերում որևէ հստակ տարր, որը ցույց կտար ոստիկանական դատարանի կողմից հաստատված կոնսեսուսի բացակայությունը, նամանավանդ այն կոնսեսուսի, որը ցույց կտար որոշման մեջ տեղ գտած

կամայականությունը: Դիմումատուն նշում է, որ բազմաթիվ պետություններ հրաժարվել են Հայոց Ցեղասպանության գոյությունը ճանաչելուց: Մինչդեռ անհրաժեշտ է նշել, որ նույնիսկ ՄԱԿ-ի 2007 թվականի հունվարի 61/L.53 բանաձևը և Հոլոքոստի հերքման դատապարտումը հավաքել են 192 անդամ- պետությունների ձայներից ընդամենը 103-ը:

Միակ փաստը, որի հաստատումից միջազգային ասպարեզում հրաժարվում են մի քանի պետություններ, դա Հոլոքոստի հերքման դատապարտումն է, որն ակնհայտորեն բավարար չէ հարցականի տակ դնելու ցեղասպանական բնույթի այլ գործողություններին առնչվող շատ լայն մի կոնսետուսի գոյությունը: Կոնսետուսը միաբանություն չի նշանակում:

Որոշ պետությունների ընտրությունը՝ հրապարակավ չդատապարտելու ցեղասպանության գոյությունը կամ ցեղասպանության հերքումը դատապարտող բանաձևի չմիանալը կարող է թելադրված լինել քաղաքական նկատառումներով՝ առանց անմիջական առնչություն ունենալու պետությունների իրական գնահատականներին, որոնք պետք է պատմական փաստերը որակեն այնպես, որ այս առումով կոնսետուսը կասկածի տակ չառնվի, հատկապես գիտական շրջանակներում:

4.5 Դիմումատուն նաև նշում է, որ իր կարծիքը հակասական կլինե՞ր Շվեյցարիայի համար, եթե այն ճանաչեր Հայոց Ցեղասպանությունը և Թուրքիայի հետ ունեցած իր հարաբերությունների հետ մեկտեղ աջակցեր պատմաբանների հանձնաժողովի ստեղծմանը: Սա, ըստ նրա, ցույց կտար, որ ցեղասպանության գոյությունը հաստատված չէ:

Ամեն դեպքում մենք կարող ենք հաշվի առնել կա՛մ Դաշնային խորհրդի կողմից Հայոց Ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչելու բազմիցս հերքումը, կա՛մ այն ընտրված մոտեցումը, որն աջակցում է Թուրքիայի իշխանությունների կողմից փորձագիտական հանձնաժողովի ստեղծմանը և այն փաստի հաստատումը, որ ցեղասպանության սահմանման վերաբերյալ գոյություն ունեցող ընդհանուր կոնսետուսը կամայական է:

Դաշնային խորհրդի պարզ արտահայտված կամքի համաձայն՝ նա ձգտում է Թուրքիային մղել իր պատմության հուշերի վերաբերյալ խմբային աշխատանք կատարելուն: (BO/CN 2001 168: réponse du Conseiller fédéral Deiss au postulat Zisyadis; BO/CN 2003 2021 s.: réponse de la Conseillère fédérale Calmy-Rey au Postulat Vaudroz - Reconnaissance du génocide des Arméniens de 1915):

Երկխոսության նկատմամբ նման թափանցիկությունը չի կարող մեկնաբանվել որպես ցեղասպանության գոյության հերքում և ոչ մի բան չի մատնանշում, որ Դաշնային խորհրդի կողմից 2001 թվականին միջազգային հետազոտության հանձնաժողով ստեղծելուն ուղղված աջակցությունը չի ունենա միևնույն ընթացքը:

Չի կարելի եզրակացնել, որ ընդհանրապես որևէ շրջանակում, հատկապես գիտականում չկա բավարար կասկած 1915 թվականի ցեղասպանության դեպքերի իրական լինելու վերաբերյալ, որից կարելի է եզրակացնել, որ կոնսետուսը կամայական է:

4.6 Համենայնդեպս, դիմումատուն չի մատնանշում, թե ոստիկանական դատարանը ինչպես կարող էր կամայականություն դրսևորել՝ հաստատելով, որ գոյություն ունի 1915 թվականի դեպքերը որպես ցեղասպանություն որակող մի ընդհանուր, մասնավորապես մի գիտական կոնսետուս: Հետևաբար, կանտոնալ իշխանությունները իրավացիորեն հրաժարվել են բավարարելու դիմումատուի՝ այս ամենի շուրջ պատմաիրավական քննարկում սկսելու ցանկությունը:

5. Քր. օր. 261-րդ հոդվածի 1-ին և 4-րդ կետերով պատժելի համարվող արարքների մեջ սուբյեկտիվորեն ներառված է միտումնավոր վարքագիծը: Դաշնային դատարանը (ATF 123 IV 202 consid. 4c p. 210 et 124 IV 121 consid. 2b p. 125) սահմանել է, որ այդ միտումնավոր վարքագիծը պետք է թելադրված լիներ ռասայական խտրականության շարժառիթներով: Քննարկվող այս հարցը դոկտրինալ էր, որը, սակայն, հետագայում բաց է մնացել (ATF 126 IV 20 consid. 1d, spéc. p. 26 et 127 IV 203 consid. 3, p. 206): Ինչպես կտեսնենք, այս դեպքում նույնպես այն կարող է բաց մնալ:

5.1 Ինչ վերաբերում է միտումնավորությանը, քրեական դատարանը վճռել է, որ իրավաբանական գիտությունների դոկտոր, քաղաքագետ, ինքնակոչ գրող և պատմաբան դիմումատուն գործել՝ գիտակցելով բոլոր հետևանքները՝ հայտարարելով, որ երբեք չի փոխի իր դիրքորոշումը, նույնիսկ եթե մի չեզոք հանձնաժողով օրերից մի օր հաստատի, որ Հայոց Ցեղասպանությունը իրոք գոյություն է ունեցել:

Դիմումատուի ցեղասպանությունը հերքելուն ուղղված ներքին կամքը (ATF 110 IV 22, consid. 2, 77, consid. 1c, 109 IV 47 consid. 1, 104 IV 36 consid. 1 et cit.) Դաշնային դատարանի համար այս առումով պարտավորեցնող բնույթ է կրում (art. 105 al. 1 LTF):

Դիմումատուն, ի դեպ, սրա շուրջ ոչ մի բողոք չի ներկայացնում:

Նա չի փորձում ցույց տալ, թե այս փաստական եզրահանգումները կամայական են կամ կոտնահարեն իր իրավունքները Մահմանադրության կամ կոնվենցիայի մակարդակով, այնպես որ այս հարցը քննարկելու կարիքը չկա (art. 106 al. 2 LTF): Ավելին՝ չենք կարծում, որ կանտոնալ իշխանությունները, որոնք մտադիր էին օգտագործելու դիմումատուի արտաքին « հատկանիշները» (cf. ATF 130 IV 58 consid. 8.4 p. 62) արհամարհած լինեին դաշնային օրենքի հասկացության այս կետը:

5.2 Ինչ վերաբերում է դիմումատուի շարժառիթներին, Քրեական դատարանը գտել է, որ դրանք ռասիստական և ազգայնական շարժառիթներ են և դուրս են պատմական քննարկումներից և, մասնավորապես, շեշտել է, որ նա հայերին համարել է թուրք ժողովրդի ագրեսորներ, իսկ ինքն իրեն կոչել Թալեաթ Փաշա, որը պատմականորեն իր երկու եղբայրների հետ եղել է Հայոց Ցեղասպանության նախաձեռնողն ու դրա իրականացման շարժիչ ուժը (jugement, consid. II, p. 17 s.):

Այս պարագայում վիճարկելի փաստ չէ, որ հայ համայնքը մի ժողովուրդ է կամ առնվազն մի էթնիկ խումբ (sur la Notion, v.: Niggli, *Rassendiskriminierung*, 2e éd., n. 653 p. 208), որն իրեն մասնավորապես ճանաչում է 1915 թվականին տեղի ունեցած պատմական իրադարձություններով: Մրանից հետևում է, որ Հայոց Ցեղասպանության հերքումը, համապատասխանաբար դիմումատուի կողմից հայ ժողովուրդին որպես ագրեսոր ներկայացնելն արդեն իսկ նշանակում է հարձակում այդ համայնքի անդամների ինքնության վրա (Schleiminger, op. cit., art. 261bis CP, n. 65 et la référence à Niggli):

Ավելին՝ քրեական դատարանը, որը գտել է ռասիզմին նմանվող շարժառիթներ, բացառել է դիմումատուի կողմից պահանջվող պատմական քննարկման անհրաժեշտությունը:

Այս եզրահանգումները, որոնց դեմ դիմումատուն բողոք (art. 106 al. 2 LTF) չի ներկայացրել, կաշկանդող հանգամանք են Դաշնային դատարանի համար (art. 105 al. 1 LTF):

Նրանք ցույց են տալիս, որ բացի ազգայնականությունից գոյություն ունեն նաև այլ շարժառիթներ, որոնք կարող են լինել միայն ռասայական և էթնիկական խտրականությունները: Հետևաբար, վերը նշված 6-րդ դիտարկման մեջ արտացոլված դոկտրինալ քննարկումների վերաբերյալ որոշում կայացնելու անհրաժեշտություն չկա: Ավելին՝ դիմումատուն այլևս ոչ մի բողոք չի բարձրացնում այս առումով դաշնա-

յին օրենքը կիրառելու վերաբերյալ:

6. Դիմումատուն նաև հղում է կատարում ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածով երաշխավորված խոսքի ազատության իրավունքի վրա կապված կանտոնալ իշխանությունների կողմից Քր. Օր. 261-րդ հոդվածի 4-րդ կետի մեկնաբանության հետ:

Սակայն, պարզվում է, Winterthur/Unterland –ի դատախազության կողմից բողոք ներկայացնելուց հետո (2005 թ. հուլիսի 23), Glattbrugg-ում հանրության առջև դիմումատուն արտահայտվել է «Շվեյցարիայի ժողովրդին և Ազգային խորհրդին իրենց սխալները շտկելուն օգնելու» մտադրությամբ (nдр: Հայոց Ցեղասպանության ճանաչում): Ի դեպ, նա գիտեր ցեղասպանության հերքումը պատժող նորմի գոյության մասին և հայտարարել է, որ երբեք չի փոխի իր դիրքորոշումը, նույնիսկ եթե մի չեզոք հանձնաժողով օրերից մի օր հաստատի, որ Հայոց Ցեղասպանությունը իրոք տեղի է ունեցել (jugement, consid. II, p. 17):

Այս ամենից կարելի է եզրակացնել, որ դիմումատուն, Հայոց Ցեղասպանությունը «Միջազգային սուտ» անվանելով և 1915 թվականի դեպքերը որպես ցեղասպանություն որակելը բացահայտորեն ժխտելով, նա գիտակցել է, որ կատարել է Շվեյցարիայի քրեական օրենքով պատժելի արարք:

Հետևաբար, դիմումատուն հոգուտ իրեն ոչինչ չի կարող եզրակացնել իր վկայակոչած օրենքի կանխատեսելիության բացակայության պատճառաբանությամբ:

Բացի սրանից, այս տարրերը թույլ են տալիս նշել, որ դիմումատուն էականորեն փորձում է սադրանքների միջոցով Շվեյցարիայի դատական իշխանություններից ձեռք բերել իր բերած դրույթների հաստատումը՝ ի վնաս հայ համայնքի անդամների, որոնց ինքնություն համար այս հարցը կենտրոնական դեր է խաղում: Դիմումատուի դատապարտումն ուղղված է նաև պաշտպանելու հայ համայնքի այն անդամների մարդկային արժանապատվությունը, ովքեր 1915 թվականի Ցեղասպանության գոհ են դարձել: Վերջապես, ցեղասպանության հերքման նկատմամբ ճնշումը 1948 թվականի դեկտեմբերի 9-ին Նյու Յորքում ընդունված, 2000 թվականի մարտի 9-ին (RS 0.311.11) Գլխավոր Ասամբլեայի կողմից հաստատված ցեղասպանություն հանցագործության կանխման և պատժման մասին կոնվենցիայի 1-ին հոդվածի իմաստով ցեղասպանության կանխմանն ուղղված միջոցառում է:

7. Պետք է նաև նշել, որ դիմումատուն չի ժխտում ո՛չ զանգվածա-

յին ջարդերի, ո՛չ տեղահանումների գոյության փաստը (v. supra consid. A), որոնք նույնիսկ զուսպ ձևակերպմամբ կարող են որակվել որպես ոչ այլ ինչ, քան մարդկության դեմ ուղղված հանցագործություններ (Nigglı, Discrimination raciale, n. 976, p. 262):

Այնուամենայնիվ, նման հանցագործությունների արդարացումը նույնիսկ պատերազմի իրավունքի կամ ենթադրյալ պաշտպանության անվան տակ արդեն իսկ պատժվում է Քր. Օր. 261-րդ հոդվածի 4-րդ կետով, նույնիսկ այդ լույսի ներքո հարցը դիտարկելը և անկախ նման դեպքերը որպես ցեղասպանություն որակելուց, դիմումատուի դատապարտումը Քր. օր. 261-րդ հոդվածի 4-րդ կետի կիրառումն իր ելքով կամայական չի դիտվում, ոչ էլ խախտում է դաշնային օրենքը»:

II. ՆԵՐՊԵՏԱԿԱՆ և ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՄԽԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ և ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՊՐԱԿՏԻԿԱ

Ա. Համապատասխան իրավունք և իրավակիրառ պրակտիկա

14. Քրեական օրենգրքի 261-րդ հոդվածում, որտեղ պատժվում է ռասայական խտրականությունը, ասվում է՝

«Նա, ով հրապարակավ ասելություն կամ խտրականություն է հրահրում մեկ կամ մի քանի անձանց նկատմամբ՝ կախված իրենց ռասայից, էթնիկական կամ կրոնական պատկանելիությունից,

նա, ով հրապարակային քարոզչությամբ որոշակի ռասայի, ազգի կամ կրոնի պատկանող անդամներին մշտապես նսեմացնում կամ վարկաբեկում է,

նա, ով նույն պատճառով քարոզչության ակտեր է կազմակերպում, քաջալերում կամ մասնակցում դրանց,

նա, ով բռնի, գրության, պատկերի, ժեստի, վիրավորանքի կամ ցանկացած այլ կերպ հրապարակավ նվաստացնի կամ խտրականություն դնի մեկ կամ մի քանի անձանց նկատմամբ՝ կախված ռասայից, էթնիկական կամ կրոնական պատկանելիությունից, որը կրում է մարդու արժանապատվությունը հարցականի տակ դնող բնույթ, կամ նա, ով միևնույն պատճառով կհերքի, չափազանց կմեղմացնի կամ կփորձի արդարացնել ցեղասպանություն կամ մարդկության դեմ ուղղված այլ հանցագործություններ, նա, ով մեկ կամ մի քանի անձանց իրենց ռասայի, էթնիկական կամ կրոնական պատկանելիության պատճառով կմերժի հանրային օգտագործման համար նախատեսված ծառայութ-

յուններ տրամադրելուց, պատժվում է մինչև երեք տարի ժամկետով ազատազրկմամբ կամ տուգանքով:

15. Քրեական օրենսգիրքը «Ցեղասպանություն» վերտառությունը կրող 264-րդ հոդվածը սահմանում է՝

«Ցմահ կամ առնվազն տասը տարի ժամկետով ազատազրկմամբ կպատժվի նա, ով ազգային, ռասայական, կրոնական կամ էթնիկ խումբը ամբողջապես կամ մասնակի ոչնչացնելու մտադրությամբ՝

Ա. Սպանել է խմբի անդամներին կամ պատճառել է ֆիզիկական կամ մտավոր լուրջ վնասվածք,

Բ. Խմբի անդամներին ենթարկել է կյանքի այնպիսի պայմանների, որոնք ուղղված են նրանց լրիվ կամ մասնակի ոչնչացմանը,

Գ. Հրամայել կամ միջոցառումներ է ձեռնարկել կանխելու մանկածնությունը խմբի ներսում,

Դ. Երեխաներին բռնի ուժով փոխանցել կամ ստիպել է փոխանցել մի խմբից մյուսին:

Պատժի ենթակա է նաև նա, ով գործել է արտասահմանում, սակայն գտնվում է Շվեյցարիայում և չի կարողանում ենթարկվել հանձնման (էքստրադիցիայի): Հոդված 6-ի մաս 2-ը կիրառելի է:

Դրույթները, որոնք վերաբերում են հետևյալների բովանդակության թույլատրմանը, կիրառելի չեն ցեղասպանության նկատմամբ. դրանք են՝ պարտավորությունների մասին 1958 թվականի մարտի 14-ի օրենքի 366-րդ հոդվածի 2-րդ կետի բ տառը, 14-րդ և 15-րդ հոդվածները և քաղաքական երաշխիքների մասին 1934 թվականի մարտի 26-ի օրենքի 1-ին և 4-րդ հոդվածները:

16.Պրն Դոմինիկ Բումանի կողմից 2002 թվականի մարտի 18-ին Ազգային խորհուրդ ներկայացրած թիվ 02.3069 պոստուլատը՝ ընդունված Ազգային խորհրդի կողմից 2003 թվականի դեկտեմբերի 16-ին՝ 107 կողմ, 67 դեմ ձայներով, հետևյալն է ասում՝

«Ազգային խորհուրդը ճանաչում է 1915 թվականի Հայոց Ցեղասպանությունը: Նա խնդրում է Դաշնային խորհրդին նկատի ունենալ և իր սովորական դիվանագիտական ուղիներով առաջ քաշել իր դիրքորոշումը»:

17. 2001 թվականի սեպտեմբերի 14-ի որոշմամբ դիմումատուն և Թուրքիայի 11 քաղաքացիներ Բեռն-Լոպենի շրջանային դատարանի կողմից արդարացվել են Քրեական օրենսգրքի 261-րդ հոդվածի՝ ցեղասպանության հերքման իմաստով: Դատարանը գտել է, որ մեղադր-

յալների՝ խտրականության ցուցաբերման մտադրությունը բավարար չի եղել: Բեռն կանտոնի վերաքննիչ դատարանը, այնուհետև նաև 2002 թվականին Դաշնային դատարանը բողոքը ճանաչել է անընդունելի, և այս վճռի դեմ համապատասխանաբար ներկայացվել է բողոք:

Բ. Միջազգային իրավունք և իրավակիրառ պրակտիկա

18. 1948 թվականի դեկտեմբերի 9-ի Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիան ասում է՝

ՀՈՂՎԱԾ 1

«Պայմանավորվող կողմերը հաստատում են, որ ցեղասպանությունը, անկախ այն բանից՝ կատարվում է խաղաղ, թե պատերազմական պայմաններում, ըստ միջազգային իրավունքի հանցագործություն է, որը նրանք պարտավորվում են կանխարգելել և պատժել այն կատարելու համար»:

ՀՈՂՎԱԾ 2

Սույն Կոնվենցիայում ցեղասպանություն նշանակում է հետևյալ գործողություններից ցանկացածը՝ կատարված ազգային, էթնիկական, ցեղային կամ կրոնական որևէ խմբի, որպես այդպիսին, լրիվ կամ մասնակի ոչնչացման մտադրությամբ.

1. այդ խմբի անդամների սպանությունը,
2. այդ խմբի անդամներին մարմնական լուրջ վնասվածքներ կամ մտավոր վնաս պատճառելը,
3. որևէ խմբի համար կյանքի այնպիսի պայմանների միտումնավոր ստեղծումը, որոնք ուղղված են նրա լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը,
4. այդ խմբի միջավայրում մանկածնությունը կանխելուն միտված միջոցների իրականացումը,
5. երեխաների բռնի փոխանցումը մարդկային մի խմբից մյուսին:

ՀՈՂՎԱԾ 3

Պատժելի են հետևյալ արարքները՝

6. ցեղասպանությունը,
7. ցեղասպանություն կատարելու նպատակով դավադրությունը,
8. ցեղասպանության ուղղակի և հրապարակային հրահրումը,
9. ցեղասպանություն կատարելու փորձը,
10. հանցակցությունը ցեղասպանության կատարման մեջ:

ՀՈՂՎԱԾ 5

«Պայմանավորվող կողմերը պարտավորվում են սույն Կոնվենցիայի դրույթները գործողության մեջ դնելու համար ընդունել իրենց սահմանադրություններին համապատասխան անհրաժեշտ օրենսդրություն և, մասնավորապես, սահմանել արդյունավետ պատժամիջոցներ ցեղասպանության մեջ կամ 3-րդ հոդվածում նշված մյուս արարքներից որևէ մեկում մեղավոր անձանց համար»:

19. Միջազգային քրեական դատարանի Կանոնադրության 6-րդ հոդվածը, կցված 1945 թվականի օգոստոսի 8-ի Լոնդոնի համաձայնագրին, դատապարտում է խաղաղության դեմ ուղղված հանցագործությունները (պարբերություն a), պատերազմի (պարբերություն b) և մարդկության դեմ ուղղված հանցագործությունները (պարբերություն c): Դրա համապատասխանը մասում շարադրված է հետևյալը՝

Հոդված 6

«Հետևյալ արարքները, որոնցից յուրաքանչյուրը հանցագործություն է, գտնվում են Դատարանի իրավասության ներքո և ենթակա են անհատական պատասխանատվության՝

Գ) Մարդկության դեմ ուղղված արարքները, այսինքն՝ սպանությունը, բնաջնջումը, ստրկացումը, բռնի տեղահանությունը և քաղաքացիական անձանց դեմ ուղղված ցանկացած այլ անմարդկային արարք, պատերազմից առաջ կամ հետո, կամ քաղաքական, ռասայական կամ կրոնական դրդապատճառներով հետապնդումները, որոնք կատարվել են հանցագործությունը կատարած երկրում ներպետական օրենքը խախտելով կամ չխախտելով, բայց գտնվում են Դատարանին ընդդատյա հանցագործությունների շարքում կամ դրանց հետ առնչություն ունեն»:

20. 1998 թվականի հուլիսի 17-ին ընդունված Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությունը, որը ուժի մեջ է մտել 2002 թվականի հուլիսի 1-ին Շվեյցարիայի համար իր դրույթները շարադրում է հետևյալ կերպ՝

Հոդված 5՝ դատարանին ընդդատյա հանցագործությունները

Դատարանի իրավագործությունը սահմանափակվում է միջազգային ողջ հանրությանը մտահոգող առավել ծանր հանցագործություններով:

(...)

1. Դատարանին, սույն Կանոնադրությանը համապատասխան, ընդդատյա են հետևյալ հանցագործությունները՝

- ա) ցեղասպանության հանցագործությունը,
- բ) մարդկության դեմ ուղղված հանցագործություններ,
- գ) պատերազմական հանցագործություններ,
- դ) ագրեսիայի հանցագործություն:

2. Դատարանն ագրեսիայի հանցագործության նկատմամբ իր իրավագործությունը կիրականացնի, երբ 121 և 123-րդ հոդվածներին համապատասխան կընդունվի այդ հանցագործությունը սահմանող և այն պայմաններն ամրագրող դրույթը, որոնք դեպքում Դատարանը կիրականացնի իր իրավագործություններն այդ հանցագործության նկատմամբ: Այդ դրույթը պետք է համատեղելի լինի Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության համապատասխան դրույթների հետ:

Հոդված 6. Ցեղասպանության հանցագործություն

Սույն Կանոնադրության նպատակների համար «ցեղասպանություն» նշանակում է ստորև բերվող գործողություններից ցանկացածը՝ կատարված ազգային, էթնիկական, ռասայական, կրոնական, որևէ խմբի՝ որպես այդպիսին, լրիվ կամ մասնակի ոչնչացման մտադրությամբ՝

ա) այդ խմբի անդամների սպանություն,

բ) այդ խմբի անդամներին մարմնական լուրջ վնասվածքներ կամ մտավոր խանգարում պատճառելը,

գ) որևէ խմբի համար կյանքի այնպիսի պայմանների միտումնավոր ստեղծում, որոնք ուղղված են նրա լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը,

դ) խմբի միջավայրում մասնկաճությունը կանխելուն միտված միջոցների իրականացում,

ե) երեխաների բռնի փոխանցում մարդկային մի խմբից մյուսին:

Հոդված 7. Մարդկության դեմ ուղղված հանցագործություններ

1. Սույն Կանոնադրության նպատակների համար «մարդկության դեմ ուղղված հանցագործություն» նշանակում է ստորև բերվող գործողություններից յուրաքանչյուրը, որոնք կատարվում են իբրև քաղաքացիական անձանց դեմ ուղղված լայնածավալ կամ կանոնավոր հարձակում, եթե նման հարձակումը տեղի է ունենում գիտակցված.

ա) սպանություն,

բ) բնաջնջում,

գ) բնակչության բռնագաղթ կամ բռնի տեղահանություն,

դ) բանտարկություն կամ ֆիզիկական ազատությունից զրկում այլ խիստ միջոցներով՝ միջազգային իրավունքի հիմնարար նորմերի խախտմամբ,

ե) խոշտանգում,

զ) բռնաբարություն, սեքսուալ ստրկացում, պոռնկության հարկադրում, հարկադրական հղիություն, հարկադրական ամուսնացում կամ համանման ծանրության սեքսուալ բռնության այլ տեսակներ,

է) նույնականացված ցանկացած խմբի կամ հանրույթի հետապնդում քաղաքական, ռասայական, ազգային, էթնիկական, մշակութային, կրոնական, սեռային, ինչպես սահմանված է 3-րդ կետում, կամ այլ դրդապատճառներով, որոնք միջազգային իրավունքով ճանաչված են անընդունելի՝ կապված սույն կետում նշված ցանկացած հանցագործության հետ,

ը) մարդկանց բռնի անհետացում,

թ) ապարտեիդի հանցագործություն,

ժ) մեծ տանջանքներ կամ մարմնական լուրջ վնասվածքներ պատճառող, կամ հոգեկան կամ ֆիզիկական առողջությունը քայքայող նմանաբնույթ այլ անմարդկային միտումնավոր գործողություններ (...):

21. Դատախազն ընդդեմ Ակայեսուի թիվ ICTR-96-4-T գործով Միջազգային քրեական դատարանի Ռվանդայի Դատական պալատը ընդգծել է ցեղասպանության տարբերակիչ չափանիշը՝

«498. Ցեղասպանությունը մյուս հանցագործություններից տարբերվում է նրանով, այն պարունակում է հատուկ մտադրություն կամ *dolus speciali*: Հանցագործության հատուկ մտադրությունը այն առանձնահատուկ մտադրությունն է, որը հանցագործության անհրաժեշտ տարր է կազմում, և որը պահանջում է, որ իրավախախտը լիովին ցանկանա պատժելի արարքի վրա հասնելը: Հետևաբար, ցեղասպանության մեջ հատուկ մտադրությունը հիմնված է լրիվ կամ մասնակի ոչնչացնելու ազգային, ռասայական, կրոնական կամ նմանատիպ մի խմբի»:

22. Բացի դրանից նույն գործում այդ դատարանը ցեղասպանությունը կապել է Դատարանի Կանոնադրությամբ պատժելի այլ հանցագործությունների հետ (իրավախախտումների մրցույթ).

«469. Հաշվի առնելով Կանոնադրությունը՝ Պալատն այն կարծիքին է, որ Կանոնադրությամբ նշված իրավախախտումները՝ ցեղասպանությունը, մարդկության դեմ ուղղված հանցագործությունները և Ժնևյան Կոնվենցիաների ու 2-րդ Լրացուցիչ արձանագրության հետ ընդհանուր համարվող 3-րդ հոդվածի խախտումներն ունեն տարբեր բաղադրիչներ, մասնավորապես դրանց պատժումն ուղղված է առանձին շահերի պաշտպանությանը: Հետևաբար, մենք իրավասու ենք դրանք պահպանելու միևնույն փաստերի առնչությամբ: Բացի դրանից, կախված գործից՝ հնարավոր է անհրաժեշտություն լինի դատելու մեկից ավելի իրավախախտումներ՝ մեղադրյալի կատարած հանցագործությունների աստիճանը որոշելու համար: Օրինակ՝ գեներալը, որը բնաջնջելու նպատակով կիրամայի սպանել ռազմագերիներին, որոնք որոշակի էթնիկ խմբի են պատկանում, արարքը կատարած խումբը մեղավոր կձանաչվի թե՛ ցեղասպանության, թե՛ հոդված 3-ի ընդհանուր իրավախախտումների համար, որոնք չնայած նախատեսված չեն մարդկության դեմ ուղղված հանցագործությունների համար: Ցեղասպանության և հոդված 3-ի ընդհանուր իրավախախտումների համար դատապարտելը, այսպիսով, ամբողջովին թույլ կտա որոշել մեղադրյալ գեներալի արարքի աստիճանը:

470. Մակայն Պալատը չի գտնում, որ որևէ ցեղասպանության ակտ, մարդկության դեմ հանցագործություն և կամ Ժնևյան կոնվենցիաների և 2-րդ Լրացուցիչ արձանագրության համար ընդհանուր 3-րդ հոդվածը միմյանց նկատմամբ մանր տեսակներ են: Դատարանի կանոնադրությունը նորմերի հիերարխիա չի սահմանել. այն բոլոր երեք իրավախախտումներն իրար հավասար է համարում: Եթե մենք ցեղասպանությունը համարենք ամենալուրջ հանցագործությունը, Կանոնադրության մեջ ոչինչ իրավասու չէ ասել, որ մարդկության դեմ ուղղված հանցագործությունները կամ ընդհանուր հոդված 3-ի և 2-րդ Լրացուցիչ արձանագրության իրավախախտումները ցեղասպանության բաղադրիչներ են և, ավելին, դրա սուբսիդիար իրավախախտումներն են կազմում: Եվ, ինչպես ասվում է, սա վիճելի է և այս իրավախախտումները տարբեր տարբերից են բաղկացած: Եվս մեկ անգամ, այս նկատառումը թույլ է տալիս նույն փաստերի վրա հիմնվելով իրականացնել այդ իրավախախտումների դատապարտումը»:

23. Միջազգային քրեական դատարանը (ՄՔԴ) 2007 թվականի փետրվարի 26-ի՝ Ցեղասպանություն հանցագործության կանխման և

պատժման մասին կոնվենցիան կիրառելու վերաբերյալ գործի (Բոսնիա և Հերցեգովինան ընդդեմ Սերբիայի և Մոնտեգրոյի) (ՄՔԴ գեկույց-նեք, 2007թ.) որոշման մեջ նշել է հետևյալը.

«8) Ցեղասպանություն գործելու մտադրության հարցը

186. Դատարանը գտնում է, որ ցեղասպանությունը, ինչպես սահմանված է Կոնվենցիայի 2-րդ հոդվածով, միաժամանակ և՛ «արարք» է, և՛ «մտադրություն»: Հանրահայտ է, որ հետևյալ արարքները՝

ա) խմբի անդամների սպանությունը,

բ) խմբի անդամներին մարմնական լուրջ վնասվածքներ կամ մտավոր խանգարում պատճառելը,

գ) խմբի համար կյանքի այնպիսի պայմանների միտումնավոր ստեղծումը, որոնք ուղղված են նրա լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը,

դ) խմբի միջավայրում մանկածնությունը կանխելուն միտված միջոցների իրականացումը,

ե) երեխաների բռնի փոխանցումը մարդկային մի խմբից մյուսին

պարունակում են նաև բարոյական տարրեր: «Սպանությունը» անպայման կանխատեսված է, ինչպես «խմբի անդամներին մարմնական լուրջ վնասվածքներ կամ մտավոր խանգարում պատճառելը»: Գրականության մեջ՝ գ) և դ) 2-րդ հոդվածից, այս բարոյական տարրերը ակնհայտորեն արտահայտում են «կանխատեսված» և «ուղղված» բառերը, ինչպես նաև անուղղակիորեն արտահատում են «ներկայացում» և «իրականացում» տերմինները: Հենց այդպես էլ միտումնավոր, կանխատեսված արարքներից է բռնի փոխանցումը: ՄԻՀ-ի տերմինների համաձայն՝ այս արարքներն իրենց բնույթով գիտակցված, միտումնավոր կամ դիտավորյալ արարքներ են (1996 թվականի մարդկության խաղաղության և անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների օրենսգրքի նախագծի 17 - րդ հոդվածի մեկնաբանություն, ՄԻՀ-ի 1996 թ. Չեկույց, Միջազգային իրավունքի հանձնաժողովի 1996 թվականի տարեգիրք, հատոր II, մաս II, էջ 47, կետ 5):

187. Բարոյական այս տարրերին, 2-րդ հոդվածն ավելացնում է մեկ ուրիշը: Այն պահանջում է, որ սահմանվի «լրիվ կամ մասնակի ոչնչացնելու մտադրությունը, խումբ [ը] [պաշտպանված է]..., որպես այդպիսին»: Բավարար չէ գրական տերմիններով սահմանել, օրինակ, ա) որը կատարել է խմբի անդամների սպանություն, այսինքն՝ մեղադրվողի՝ այլ անձանց դեմ խտրականություն ցուցաբերելու դիտավորյալ

յամբ: Անհրաժեշտ է շատ հստակ սահմանել նաև լրացուցիչ մտադրություն կամ *dolus specialis*: Տվյալ գործում այն ընդհանրապես կորակվի որպես «առանձնահատուկ մտադրություն (*dolus specialis*)»: Բավարար չէ այն, որ խմբի անդամները նպատակամղված լինեն խմբին անդամակցելու պատճառով, այսինքն՝ իրավախախտի խտրականություն ցուցաբերելու մտադրության պատճառով: Անհրաժեշտ է նաև, որ 2-րդ հոդվածով սահմանված արարքներն ուղղված լինեն լրիվ կամ մասնակի ոչնչացնելու նմանատիպ խմբի պատկանող անձանց: «Նմանատիպ» տերմինն ընդգծում է պաշտպանվող խմբին ոչնչացնելու այդ մտադրությունը:

188. Մտադրությունների և չափանիշների առանձնահատկությունը հստակ երևում է այն ժամանակ, երբ ցեղասպանությունը փոխարինվում է, ինչպես եղել է նախկին Հարավսլավիայի է Բոսնիայի և Հերցեգովինայի ատյանի դատարանի (այսուհետ՝ ՀԲԱԴ կամ Դատարան) Kupreskić-ի և մյուսներ գործով, հանցավոր արարքների համատեքստում՝ այդ թվում կապված մարդկության դեմ ուղղված հանցագործությունների և հետապնդումների հետ. «Հետապնդման համար mens rea տարրը ավելի խիստ է, քան մարդկության դեմ ուղղված սովորական հանցագործությունների համար, որը միաժամանակ ավելի քիչ անհրաժեշտություն ունի, քան ցեղասպանությունը:

Այս համատեքստում Դատական Պալատը ցանկանում է շեշտել այն փաստը, որ հետապնդումը՝ որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն, այնպիսի իրավախախտում է, որը պատկանում է այն նույն տեսակին, որին պատկանում է և ցեղասպանությունը: Երկու դեպքում էլ խոսքը վերաբերում է որոշակի խմբի պատկանող անձանց դեմ ուղղված հանցագործությունների, որոնց պատճառը նրանց՝ այդ նույն խմբին պատկանելիությունն է: Այն, ինչ երկու դեպքում էլ հաշվի է առնվում, խտրականություն ցուցաբերելու միտվածությունն է՝ անձանց գրոհելու իրենց էթնիկական, ռասայական կամ կրոնական պատկանելիության պատճառով (հետապնդման դեպքերում նաև իրենց քաղաքական կարծիքի պատճառով): Այնինչ հետապնդման դեպքերում խտրականություն ցուցաբերելու միտվածությունը կարող է դրսևորվել անմարդկային բազում ձևերով և արտահայտվել բազմաթիվ գործողությունների միջոցով, որոնցից են սպանությունը, իսկ ցեղասպանության մտադրությունը պետք է պարտադիր ուղեկցվի այն խմբի լրիվ կամ մասնակի ոչնչացմամբ, որին գոհերը պատկանում են: Բարո-

յական առումով, փաստորեն, կարող ենք ասել, որ ցեղասպանությունը հետապնդման առավել ծայրահեղ և անմարդկային ձևն է: Այլ կերպ ասած՝ երբ հետապնդումը հասնում է իր ծայրահեղ ձևին՝ ներառելով խմբի լրիվ կամ մասնակի ոչնչացմանն ուղղված մտադրություններ և դիտավորություններ, այն կարելի է որակել որպես ցեղասպանություն (IT-95-16-T, 2000 թվականի հունվարի 14-ի որոշում, պարբերություն)»:

24. Միավորված ազգերի կազմակերպության՝ Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիան ընդունվել է 1965 թ. Դեկտեմբերի 21-ին՝ Նյու- Յորքում: Շվեյցարիան այդ փաստաթուղթը վավերացրել է 1994 թվականի նոյեմբերի 29-ին, որը ուժի մեջ է մտել 1994 թվականի դեկտեմբերի 29-ին: Դրա 2-րդ և 3-րդ հոդվածներն այսպես են շարադրված՝

1. Մասնակից պետությունները դատապարտում են ռասայական խտրականությունն ու պարտավորվում են անհապաղ, բոլոր հնարավոր եղանակներով վարել ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման քաղաքականություն և նպաստել բոլոր ռասաների միջև փոխըմբռնմանը. այդ նպատակով՝

(ա) յուրաքանչյուր մասնակից պետություն պարտավորվում է չներգրավվել ռասայական խտրականության որևէ գործողության կամ կիրառման մեջ՝ ընդդեմ անձանց, անձանց խմբերի կամ հաստատությունների և երաշխավորել, որ պետական բոլոր մարմիններն ու հաստատությունները՝ ինչպես ազգային, այնպես էլ տեղական, կգործեն այդ պարտավորությանը համապատասխան,

(բ) յուրաքանչյուր մասնակից պետություն պարտավորվում է չխրախուսել, չպաշտպանել և չաջակցել որևէ անձի կամ կազմակերպության կողմից իրականացվող ռասայական խտրականությունը,

(գ) յուրաքանչյուր մասնակից պետություն ազգային ու տեղական մասշտաբով ձեռնարկում է արդյունավետ միջոցներ՝ կառավարության քաղաքականության վերանայման, ինչպես նաև խտրականության առաջացմանը կամ պահպանմանը հանգեցնող ցանկացած օրենք և ենթաօրենսդրական ակտ փոփոխելու, վերացնելու կամ չեղյալ հայտարարելու համար,

(դ) յուրաքանչյուր մասնակից պետություն, օգտագործելով բոլոր համապատասխան այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում օրենսդրական միջոցները, պետք է արգելի կամ վերացնի ցանկացած անձի, անձանց խմբի կամ կազմակերպության կողմից իրականացվող ռասա-

յական խտրականությունը,

(ե) յուրաքանչյուր մասնակից պետություն պարտավորվում է համապատասխան դեպքերում խրախուսել ինտեգրացիոն բազմառասայական կազմակերպություններն ու շարժումները և ռասաների միջև անջրպետների վերացմանն ուղղված այլ միջոցները և չպաշտպանել այն, ինչը նպաստում է ռասայական պառակտման ամրապնդմանը:

2. Մասնակից պետությունները, հաշվի առնելով հանգամանքներին, սոցիալական, տնտեսական, մշակութային և այլ բնագավառներում ձեռնարկում են հատուկ ու կոնկրետ միջոցներ՝ ապահովելու ռասայական որոշ խմբերի կամ այդ խմբերին պատկանող անձանց պատշաճ զարգացումն ու պաշտպանությունը՝ նրանց կողմից մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների լիարժեք ու հավասար օգտագործումը երաշխավորելու նպատակով: Այդպիսի միջոցները ոչ մի դեպքում չպետք է հանգեցնեն ռասայական տարբեր խմբերի համար անհավասար կամ հատուկ իրավունքների պահպանմանը այն նպատակների իրագործումից հետո, հանուն որոնց դրանք ձեռնարկված են եղել:

Հոդված 3

Մասնակից պետությունները մասնավորապես դատապարտում են ռասայական սեգրեգացիան ու ապարտեիդը և պարտավորվում են իրենց իրավագործության ներքո գտնվող տարածքներում կանխարգելել, արգելել ու վերացնել նման բնույթի ցանկացած գործողության կիրառում:

25. 1996 թվականի դեկտեմբերի 16-ին Նյու-Յորքում ընդունվել է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը: Շվեյցարիան այդ փաստաթուղթը վավերացրել է 1992 թվականի հունիսի 18-ին, որը ուժի մեջ է մտել 1992 թվականի սեպտեմբերի 18-ին: Դրա 19-րդ և 20-րդ հոդվածներն այսպես են շարադրված.

«1. Յուրաքանչյուր ոք օժտված է առանց միջամտության սեփական կարծիք ունենալու իրավունքով :

2. Յուրաքանչյուր ոք ունի ազատ արտահայտվելու իրավունք. այդ իրավունքը, անկախ պետական սահմաններից, ընդգրկում է ցանկացած տեսակի տեղեկատվություն և գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը, լինեն դրանք բանավոր, գրավոր, թե տպագիր, լինի արվեստի, թե իր ընտրած ցանկացած այլ միջոցով:

3. Սույն հոդվածի 2-րդ կետում նախատեսված իրավունքների իրականացումը հանգեցնում է հատուկ պարտավորությունների և պատասխանատվության:

Ուստի այն ենթակա է որոշ սահմանափակումների, որոնք, սակայն, պետք է սահմանվեն միայն օրենքով և լինեն անհրաժեշտ.

ա) այլ անձանց իրավունքները կամ հեղինակությունը հարգելու համար,

բ) պետական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության պաշտպանության համար:

Հոդված 20

1. Պատերազմի ցանկացած քարոզչություն արգելվում է օրենքով:

2. Ազգային, ռասայական կամ կրոնական առեւտրության ցանկացած քարոզչություն, որն իրենից ներկայացնում է խտրականության, թշնամանքի կամ բռնության հրահրում, արգելվում է օրենքով»:

ՄԱԿ-ի՝ մարդու իրավունքների կոմիտեն իր 102-րդ նստաշրջանում (2011 թ.) Դաշնագրի 19-րդ հոդվածի վերաբերյալ ընդունել է թիվ 34 Ընդհանուր Դիտարկումը: Համապատասխան հոդվածներն այս դեպքում շարադրվել են հետևյալ կերպ

Կարծիքի ազատություն

«9. 19-րդ հոդվածի առաջին մասը պարտավորեցնում է պահպանել «առանց միջամտության սեփական կարծիք ունենալու իրավունքը»: Սա այնպիսի իրավունք է, որի համար Դաշնագիրը ոչ չ բացառություն է մտցնում, ոչ էլ սահմանափակում: Կարծիքի ազատությունը անհատին իրավունք է վերապահում ազատորեն փոխելու իր կարծիքը՝ իր իսկ որոշած ժամանակ և պատճառով: Ոչ ոք չի կարող իր իրական, ընկալած կամ պատկերացրած կարծիքի պատճառով ենթարկվել Դաշնագրով օժտված իր որևէ իրավունքի ոտնահարման: Բոլոր տեսակի, այդ թվում՝ քաղաքական հայացքներին վերաբերող, գիտական, պատմական, բարոյական և կրոնական կարծիքները պաշտպանված են: Կարծիք ունենալու համար քրեական պատասխանատվություն նախատեսելը անհամատեղելի է 19-րդ հոդվածի առաջին մասի հետ³: Անձի կողմից կարծիքի դավանելու պատճառով ճնշման գործադրումը, ա-

³ Տե՛ս ծանուցում No 550/1993, Ֆուլիսոնն ընդդեմ Ֆրանսիայի, որոշումն ընդունվել է 1996 թվականի նոյեմբերի 8-ին:

հարեկումը կամ պարսավումը, այդ թվում՝ ձերբակալումը, կալանքը, դատապարտումը կամ ազատագրվումը համարվում են 19-րդ հոդվածի առաջին մասի խախտում⁴:

11. Արգելվում է հարկադրանքի կիրառման ցանկացած փորձ ուղղված որևէ մեկի կարծիքը ձեռք բերելուն կամ այն արտահայտելուն խոչընդոտելուն:⁵ Կարծիքների արտահայտման ազատությունը անպայման ներառում է կարծիքները չարտահայտելու ազատությունը:

12.

Խոսքի ազատություն

11. Մասնակից պետությունները 2-րդ կետով պարտավորվում են երաշխավորել յուրաքանչյուրի ազատ արտահայտվելու իրավունքը՝ ներառյալ ցանկանացած տեսակի տեղեկատվություն և գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը՝ անկախ պետական սահմաններից:

Այս իրավունքը տարածվում է ցանկացած տեսակի գաղափարի և կարծիքի վերաբերյալ տեղեկությունների հավաքագրմանը, արտահայտմանը և ուրիշներին փոխանցմանը՝ 19-րդ հոդվածի 3-րդ կետի և 20-րդ հոդվածի⁶ դրույթների պարտադիր պահմանմամբ:

Այն վերաբերում է քաղաքական քննարկմանը⁷, սեփական գործերի⁸ և հանրության հարցերի⁹ մեկնաբանմանը, նախընտրական քարոզ-

⁴ Տե՛ս ծանուցում No 157/1983, Մպակա-Նսուսուն ընդդեմ Զաիրի, որոշումն ընդունվել է 1986 թվականի մարտի 26-ին և No 414/1990, Միկա Միհան ընդդեմ Հասարակածային Գվինեայի, որոշումն ընդունվել է 1994 թվականի հուլիսի 8-ին:

⁵ Տե՛ս ծանուցում No 878/1999, Կանգն ընդդեմ Կորեայի Հանրապետության, որոշումն ընդունվել է 2003 թվականի հուլիսի 15-ին:

⁶ Տե՛ս փաստաթղթեր No՝ 359/1989 և 385/1989, Բելախայն, Դելիդսոն և Մաքինթայերն ընդդեմ Կանադայի, որոշումն ընդունվել է 1990 թվականի հոկտեմբերի 18-ին:

⁷ Տե՛ս ծանուցում No 414/1990, Միկա Միհան ընդդեմ Հասարակածային Գվինեայի:

⁸ Տե՛ս ծանուցում No 1189/2003, Ֆեռնանդոն ընդդեմ Շրի Լանկայի, որոշումն ընդունվել է 2005 թվականի մարտի 31-ին:

⁹ Տե՛ս ծանուցում No 1157/2003 Կոլմանն ընդդեմ Ավստրալիայի, որոշումն ընդունվել է 2006 թվականի հուլիսի 17-ին:

չությամբ¹⁰, մարդու իրավունքների վերաբերյալ բանավեճերին¹¹, լրագրությանը¹², մշակութային և գեղարվեստական խոսքին¹³, կրթությանը¹⁴ և կրոնական քննարկմանը¹⁵: Այն կարող է վերաբերել նաև առևտրային գովազդին: 2-րդ կետի կիրառման ոլորտն ընդգրկում է նաև այն արտահայտությունները, որոնցում կարելի խորը վիրավորանք¹⁶ նկատել, որը, սակայն, կարող է սահմանափակվել 19-րդ հոդվածի 3-րդ կետի և 20-րդ հոդվածի դրույթներին համապատասխան:

(...).

19-րդ հոդվածի 3-րդ կետի կիրառումը

(...)

28. 3-րդ կետի սահմանափակումների օրինական շարժառիթներից առաջինը մեկ այլոց իրավունքների և հեղինակության հարգումն է: «Իրավունքներ» տերմինն ուղղված է այն հիմնարար իրավունքներին, որոնք ճանաչված են Դաշնագրում և ընդհանրապես, մարդու իրավունքների միջազգային իրավունքում: Օրինակ խոսքի ազատության սահմանափակումը օրինական կարող է լինել 25-րդ, ինչպես նաև 17-րդ հոդվածներով սահմանված ընտրության իրավունքի պաշտպանության համար (տե՛ս կետ 37)¹⁷:

Այս սահմանափակումները պետք է զգուշորեն մեկնաբանվեն. օրինական կարող է լինել ընտրողներին պաշտպանել խոսքի ազատության այն տեսակներից, որոնք իրենցից ահաբեկում կամ հարկադրանք են ներկայացնում: Նման սահմանափակումները չպետք է խոչըն-

¹⁰ Ճապոնիայի գեկույցին վերաբերող եզրափակիչ դիտարկումներ (CCPR/C/JPN/CO/5):

¹¹ Տե՛ս ծանուցում No 1022/200, Վելիչկինն ընդդեմ Բելառուսի, որոշումն ընդունվել է 2005 թվականի հոկտեմբերի 20-ին:

¹² Տե՛ս ծանուցում No 1334/2004, Մայլադով և Մադին ընդդեմ Ուզբեկստանի, որոշումն ընդունվել է 2009 թվականի մարտի 19-ին:

¹³ Տե՛ս ծանուցում No 926/2000, Շինը ընդդեմ Կորեայի Հանրապետության, որոշումն ընդունվել է 2004 թվականի մարտի 16-ին:

¹⁴ Տե՛ս ծանուցում No 736/1997, Ռոսսն ընդդեմ Կանադայի, որոշումն ընդունվել է 2000 թվականի հոկտեմբերի 18-ին:

¹⁵ Նույնը

¹⁶ Նույնը

¹⁷ Տե՛ս ծանուցում No 927/2000, Սվետիկն ընդդեմ Բելառուսի, որոշումն ընդունվել է 2004 թվականի հուլիսի 8-ին

դոտեն քաղաքական քննարկումներին նույնիսկ ոչ պարտադիր¹⁸ ընտրությունները բոյկոտելու դեպքում: «Այլոց» տերմինն ուղղված է անհատապես այլ անձանց կամ մի համայնքի¹⁹ անդամների:

Այսպիսով, այն կարող է ուղղված լինել որոշակի կրոնական²⁰ դավանանքի կամ էթնիկ²¹ ծագման պատկանող համայնքի անդամների:

27. Թիվ 34 Ընդհանուր դիտարկման հետևյալ պարբերությունը նվիրված է հատկապես պատմական փաստերի վերաբերյալ կարծիքի արտահայտման համար նախատեսված քրեական պատիժներին.

« 49. Այն օրենքները, որոնք քրեականացնում են պատմական փաստերի վերաբերյալ կարծիքի արտահայտումը, հակասում են Դաշնագրում ամրագրած այն պարտավորություններին, որոնք սահմանվում են անդամ պետությունների նկատմամբ և վերաբերում են կարծիքի արտահայտման ու խոսքի ազատության²² հարգմանը: Դաշնագիրը չի ընդունում թյուր կարծիքի արտահայտման ընդհանուր արգելքները կամ անցյալի իրադարձությունների սխալ մեկնաբանումը: Սահմանափակումները երբեք չպետք է ուղղվեն կարծիքի ազատությանը, իսկ ինչ վերաբերում է խոսքի ազատությանը, սահմանափակումները չպետք է դուրս լինեն 3-րդ կետով թույլատրված կամ 20-րդ հոդվածով պարտադրված շրջանականերից»:

28. 1997 թվականի հոկտեմբերի 30-ին Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն ընդունել է «Ատելության խոսք» վերտառությամբ 97/20 Հանձնարարականը»:

«Նախարարների կոմիտեն, Եվրոպայի խորհրդի կանոնադրության 15-րդ հոդվածի «բ» կետի համաձայն,

Հաշվի առնելով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն է իր անդամ-

¹⁸ Նույնը

¹⁹ Տե՛ս ծանուցում No 736/1997, Ռոսսն ընդդեմ Կանադայի, որոշումն ընդունվել է 2000 թվականի հոկտեմբերի 18-ին:

²⁰ Տե՛ս ծանուցում No 550/1993, Ֆուլիսոնն ընդդեմ Ֆրանսիայի, Ավստրիայի գեկույցին վերաբերող եզրափակիչ դիտարկումներ (CCPR/C/AUT/CO/4):

²¹ Սլովակիայի գեկույցին (CCPR/CO/78/SVK) և Իսրայելի գեկույցին (CCPR/CO/78/ISR) վերաբերող եզրափակիչ դիտարկումներ:

²² «Հիշողության մասին օրենք» անվանումով: Տե՛ս ծանուցում No 550/1993, Ֆուլիսոնն ընդդեմ Ֆրանսիայի: Տես նաև՝ Հունգարիայի գեկույցին վերաբերող եզրափակիչ դիտարկումներ (CCPR/C/HUN/CO/5), կետ 19:

ների միջև առավել սերտ միասնության հասնել՝ իրենց ընդհանուր գաղափարներն ու սկզբունքները պահպանելու և իրագործելու համար,

Հիշեցնելով պետությունների գլուխների և Եվրոպայի Խորհրդի անդամ պետությունների կառավարությունների՝ Վիեննայում 1993 թվականի հոկտեմբերի 9-ին ընդունված Հռչակագիրը,

Հիշեցնելով, որ Վիեննայի հռչակագիրը ահագանգել է ներկայիս ռասիզմի վերածննդի, այլատյացության և հակասեմիտականության, ինչպես նաև տիրող անհանդուրժողականության մթնոլորտի զարգացման մասին, հիշեցնելով նաև, որ այս հռչակագիրը պարունակում է պարտավորություն գործելու ընդդեմ բոլոր գաղափարախոսությունների, քաղաքականության և պրակտիկայի, որոնք մղում են ռասայական ատելության, բռնության և խտրականության, ինչպես նաև ընդդեմ տարբեր ռասայական, սոցիալական, էթնիկ, ազգային կամ կրոնական խմբերի միջև վախն ու լարվածությունը սաստկացնող բնույթի ցանկացած գործողությունների և խոսքի,

Վերահաստատելով իր խորին նվիրվածությունը 1928 թվականի ապրիլի 29-ի՝ խոսքի և տեղեկատվության ազատության մասին Հռչակագրում արտացոլված խոսքի և տեղեկատվության ազատությանը:

Վիեննայի Հռչակագրի և ժողովրդավարական հասարակությունում լրատվամիջոցների մասին Հռչակագրի 4-րդ Եվրոպական նախարարական համաժողովին ընդունված (1994թ. Դեկտեմբերի 7-8, Պրահա) զանգվածային լրատվամիջոցների քաղաքականության մասին Հռչակագրի համապատասխան դատապարտելով արտահայտվելու բոլոր ձևերը, որոնք հրահրում են ռասայական ատելություն, այլատյացություն, հակասեմիտականություն և անհանդուրժողականության բոլոր ձևերը, որովհետև դրանք վտանգում են ժողովրդավարական անվտանգությունը, մշակութային համախմբվածությունը և բազմակարծությունը,

Նշելով, որ արտահայտվելու նման ձևերը, տարածվելով լրատվամիջոցներով, կարող են ավելի մեծ և ավելի վնասակար ազդեցություն ունենալ,

Հաշվի առնելով, որ լարվածության իրավիճակներում, պատերազմների և զինված հակամարտությունների այլ տեսակների ընթացքում արտահայտվելու այս տեսակների դեմ պայքարի անհրաժեշտությունն էլ ավելի հրատապ է,

Գտնելով, որ անհրաժեշտ է ուղղորդել կառավարություններին և

անդամ պետություններին այն մասին, թե ինչպես է պետք մոտենալ արտահայտվելու այդ ձևերին՝ ընդունելով, որ լրատվամիջոցների մեծամասնությունը չի կարող մեղադրվել արտահայտվելու նման ձևերի համար,

Հաշվի առնելով Անդրսահմանային հեռուստատեսության Եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին կետը, ինչպես նաև Մարդու իրավունքների մասին Եվրոպական կոնվենցիայի դատական պրակտիկան այս Կոնվենցիայի 10-րդ և 17-րդ հոդվածների առնչությամբ,

Հաշվի առնելով այն ռասայական, ազգային, կրոնական ատելություն բողոքելու դեմ ձեռնարկելի միջոցառումների մասին ՄԱԿ-ի ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին Կոնվենցիան և Նախարարների կոմիտեի (68) 30 բանաձևը,

Նշելով, որ ոչ բոլոր անդամ պետություններն են ստորագրել, վավերացրել և ընդունել այս Կոնվենցիան իրենց ազգային օրենսդրության շրջանակներում,

Ընդունելով ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի միջև հավասարակշռություն գտնելու, ինչպես նաև խոսքի ազատությունը պաշտպանելու անհրաժեշտությունը՝ ժողովրդավարությունը պաշտպանելու շարժառիթով այն խարխուլելուց խուսափելու համար,

Ընդունելով նաև լրատվամիջոցների՝ խմբագրական անկախությունը և ինքնավարությունը ամբողջապես հարգելու անհրաժեշտությունը,

Առաջարկում է անդամ պետություններին՝

1. սույն հանձնարարականում շարադրված սկզբունքների հիման վրա համապատասխան քայլեր ձեռնարկել՝ ուղղված խոսքի ատելության դեմ պայքարին,

2. ապահովել այնպիսի գործողությունների ներառումը համակողմանի մոտեցման շրջանակներում, որոնք կբացահայտեն այս երևույթի հիմնական սոցիալական, տնտեսական, քաղաքական, մշակութային և այլ պատճառները,

3. եթե ներպետական իրավունքում դեռևս չի կատարվել, ապա ստորագրել, վավերացնել և արդյունավետորեն գործի դնել Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային Կոնվենցիան՝ ռասայական, ազգային և կրոնական թշնամանք հրահրելու դեմ ձեռնարկելի միջոցների մասին Նախարարների կոմիտեի (68) 30 բանաձևին համապատասխան,

4. վերանայել իրենց օրենսդրությունը և ներպետական պրակտիկան՝ ապահովելու դրանց համապատասխանությունը սույն հանձնարարականում շարադրված սկզբունքներին

(...)»

29. Հայ ժողովրդի դեմ ուղղված վայրագությունների մասին հարցը Եվրոպայի խորհրդի շրջանակներում բազմիցս է քննարկվել: Օրինակ՝ 2013 թ. ապրիլի 24-ի Հռչակագրում (No 542, Doc. 13192) Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի քսան անդամներ այսպես են արտահայտվել՝

Հայոց Ցեղասպանության ճանաչումը

«(Այս հռչակագիրը պարտադիր է միայն այն ստորագրած կողմերի համար)

Ցեղասպանության ճանաչումը ակտ է, որը մեծ դեր ունի մարդու արժանապատվության հարգման և մարդկության դեմ հանցագործությունների կանխման գործում: Օսմանյան կայսրության կողմից Հայոց ցեղասպանության իրականացումը ներկայացվել, ճանաչվել և ամրագրվել է ՁԼՄ-ների հաղորդումների և վկայությունների, օրենքների, Միավորված Ազգերի Կազմակերպության, Եվրախորհրդարանի և Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների խորհրդարանների բանաձևերի և հռչակագրերի տեսքով, որոնցից են Շվեդիան, Լիտվան, Գերմանիան, Լեհաստանը, Նիդեռլանդները, Սլովակիան, Շվեյցարիան, Ֆրանսիան, Իտալիան, Բելգիան, Հունաստանը, Կիպրոսը և Ռուսաստանի Դաշնությունը, ինչպես նաև Ներկայացուցիչների պալատի և Միացյալ Նահանգների 43 նահանգների, Չիլիի, Արգենտինայի, Վենեսուելայի, Կանադայի, Ուրուգվայի և Լիբանի կողմից:

Ներքոստորագրյալները Խորհրդարանական վեհաժողովի անդամներ են, որոնք Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի բոլոր անդամներին կոչ են անում 20-րդ դարի սկզբին Օսմանյան Կայսրությունում հայերի և այլ քրիստոնյաների դեմ իրականացված ցեղասպանության ընդունմանն ուղղված անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել, ինչը մեծապես կնպաստի հետագայում մարդկության դեմ այդ սարսափելի հանցանքի նմանատիպ ակտի ճանաչմանը թուրքական իշխանությունների կողմից, և որպես հետևանք, կհանգեցնի Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների կարգավորմանը՝ այդպիսով նպաստելով տարածաշրջանում խաղաղության, անվտանգության և կայունության ամրապնդմանը:

Գ) Օրենքն ու պրակտիկան՝ համեմատված

30. 2006 թվականի դեկտեմբերի 19-ին մի համեմատական ուսումնասիրություն (06-184 կարծիքներ) է կատարվել դատարանի առջև պատասխանող կառավարության կողմից, և Շվեյցարիայի համեմատական իրավունքի ինստիտուտը (ISDC, Swiss Institute of Comparative Law) վերլուծել է եվրոպական 14 երկրների (Գերմանիա Ավստրիա, Բելգիա, Դանիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Իռլանդիա, Իտալիա, Լյուքսեմբուրգ, Նորվեգիա, Նիդերլանդները, Մեծ Բրիտանիա և Շվեդիա) օրենսդրությունները, ինչպես նաև ԱՄՆ –ինն ու Կանադայինը՝ կապված մարդկության դեմ ուղղված հանցագործությունների, մասնավորապես ցեղասպանության, հերքման իրավախախտման հետ: Ահա դրա ամփոփումը՝

«Տարբեր երկրներում մարդկության դեմ ուղղված հանցագործությունների և ցեղասպանության հերքման վերաբերյալ մեր ուսումնասիրության արդյունքում մի շատ խառը պատկեր է ստացվել:

Իսպանիան, Ֆրանսիան և Լյուքսեմբուրգը՝ երեքն էլ այս հանցագործությունների հերքման արգելքի վերաբերյալ լայն մոտեցում են ցուցաբերել: Իսպանական օրենքն ընդհանուր առմամբ է հերքում այդ գործողությունները, որոնք նա սահմանում է որպես էթնիկ, ռասայական կամ կրոնական խմբի լրիվ կամ մասնակի ոչնչացում: Հեղինակը ենթակա է երկու տարվա ազատազրկման: Ֆրանսիայում և Լյուքսեմբուրգում օրենսդրությունը ձգտում է մարդկության դեմ ուղղված այն հանցագործությունների հերքմանը, որոնք սահմանված են Նյուրեմբերգի քրեական դատարանի կանոնադրության 6-րդ հոդվածով՝ կցված 1945 թվականի օգոստոսի 8-ի Լոնդոնի համաձայնագրին (...):

Մարդկության դեմ ուղղված հանցագործությունների հերքման քրեականացման այս մեխանիկական սահմանափակումը Լյուքսեմբուրգի դեպքում մեղմացվում է այն փաստով, որ գոյություն ունի ցեղասպանությունը հերքող հատուկ դրույթ: Նման հանցագործությունների հերքումը պատժվում է այն նույն չափով, ինչով որ պատժվում է մարդկության դեմ ուղղված այն հանցագործությունների հերքումը (8 օրից մինչև 6 ամիս ազատազրկում և/ կամ 251-ից 25 000 եվրոի չափով տուգանք), սակայն ցեղասպանության սահմանումը պահպանված է, այս անգամ, ինչպես 1985 թվականի օգոստոսի 8-ի լյուքսեմբուրգյան օրենքը, որը ընդհանրապես վերացական է և սահմանափակված չէ Համաշխարհային երկրորդ պատերազմի ժամանակ կատարված գործո-

ղություններով:

Ֆրանսիական դրույթների սահմանափակ շրջանակը քննադատության է արժանացել և, դրա հետ կապված, անհրաժեշտ է նշել, որ Հայոց Ցեղասպանության հերքումը քրեականացնող նախագիծն ընդունվել է առաջին ընթերցմամբ՝ 2006 թվականի հոկտեմբերի 12-ին, Ֆրանսիայի Ազգային ժողովի կողմից: Այդ պատճառով, թվում է, թե միայն Լյուքսեմբուրգն ու Իսպանիան են ընդհանուր առմամբ իրենց օրենսդրության մեջ քրեականացնում ցեղասպանության հերքումը՝ առանց կոնկրետ պատմական դրվագների սահմանափակման: Բացի դրանից, գլոբալ առումով ոչ մի երկիր մինչ օրս չի քրեականացնում մարդկության դեմ ուղղված հանցագործությունների հերքումը:

Մրա առնչությամբ, մի խումբ երկրներ, որոնց շարքին, ըստ որոշ տեքստերի վերլուծության, կարելի է դասել նաև Ֆրանսիան, քրեական պատասխանատվություն են նախատեսում Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ գործած եզակի հանցագործությունների հերքման համար: Գերմանիան նախատեսում է 5 տարվա ազատազրկում կամ տուգանք այն անձի նկատմամբ, ով հրապարակավ կամ հանդիպման ժամանակ կհերքի կամ նվազագույնի կհասցնի նացիստական ռեժիմի ժամանակ կատարված ազգային, կրոնական կամ էթնիկ խմբի մասնակի կամ լրիվ ոչնչացումը: Ավստրիան 10 տարվա ազատազրկման պատիժ է նախատեսում այն անձի համար, ով շատ մարդկանց համար կարող է հայտնի լինել և հերքում կամ նվազագույնի է հասցնում նացիստական ռեժիմի ժամանակ կատարված մարդկության դեմ ուղղված հանցագործությունները կամ ցեղասպանությունը:

Նման մի մոտեցումով էլ հանդես է գալիս Բելգիան, որն իր օրենսդրության մեջ պատասխանատվություն է նախատեսում 8 օրից 1 տարի ազատազրկման չափով այն անձի համար, ով հերքում կամ նվազագույնի է հասցնում, փորձում է արդարացնել կամ պնդել նացիստական Գերմանիայի օրոք կատարված ցեղասպանությունը:

Այլ երկրներում, եթե օրենքով ամրագրված են առանձին ծանր հանցագործություններ, ապա դատավորը պետք է ապահովի դրանց հերքման համար նախատեսված պատիժը: Մասնավորապես, Հոլանդիայի Գերագույն դատարանը որոշել է, որ Քրեական օրենսգրքի այն դրույթները, որոնք արգելում են խտրական գործողությունները, պետք է կիրառվեն՝ պատժելու մարդկության դեմ ուղղված հանցագործությո-

յունների հերքումը: Բացի դրանից, այդ երկրում հերքումը քրեականացնող օրենքի նախագիծը քննարկման ընթացքում է գտնվում:

Գանադայում մարդու իրավունքների Դատարանը հիմնվել է Մարդու իրավունքների մասին կանադական օրենքում տեղ գտած այլոց հանդեպ աստեղծությամբ կամ արհամարհանքով վերաբերվելու քրեականացման վրա՝ դատապարտելու մի հերքողական կայքի բովանդակությունը: Միացյալ Նահանգներում դատավորների դիրքորոշումը ավելի քիչ է պարզ. այս երկիրը խոսքի ազատությունը չափազանց խստորեն է պաշտպանում, որը պայմանավորված է պատմական և մշակութային պատճառներով: Ամեն դեպքում կարելի է նշել, որ ընդհանուր առմամբ վիրավորանքի հռետորությամբ զբաղվողները մինչև այսօր կկարողանային ստանալ վնասների հատուցում, եթե օրինական սպառնալիք զգացային իրենց ֆիզիկական անձեռնմխելիության նկատմամբ:

Բացի այդ, կան մի շարք երկրներ, որոնցում մարդկության դեմ ուղղված հանցագործությունների հերքումը ուղղակիորեն նախատեսված չէ օրենքով: Այդ երկրներից մի քանիսում կարելի է կասկածի տակ դնել ավելի ընդհանուր քրեական իրավախախտումների որակումը: **Իտալական օրենքը պատժում է նաև ցեղասպանություն հանցագործությունների արդարացումը, սակայն հանցագործությունների արդարացման, նվազեցման և հերքման միջև գտնվող սահմանը չափազանց քիչ է: Նորվեգական օրենքը պատասխանատվություն է նախատեսում այն անձի համար, ով խտրականություն և ատելություն պարունակող պաշտոնական հայտարարություն է անում: Նման հերքումը քրեականացնելու կիրառելիությունը հնարավոր է:**

Գերագույն արդարադատությունը մինչ այսօր հնարավորություն չի ունեցել որոշում կայացնելու այս հարցի շուրջ: Մյուս երկրներում, ինչպիսիք են Դանիան և Շվեդիան, ստորին ատյանների դատարաններ այնպիսի դիրքորոշում են ընդունել, որի համաձայն իրենք պատրաստ են վերահսկելու հերքման դեպքերում խտրականություն և ատելություն պարունակող հայտարարությունների քրեական պատասխանատվության կիրառելիությունը: Ֆինլանդիայում քաղաքական իշխանությունը հերքման վերաբերյալ նման դրույթների կիրառելիությունը դեմ է արտահայտվել: Եզրափակելու համար նշենք, որ Միացյալ Թագավորության և Բուլանդիայի օրենքը հերքմանը չի անդադառնում»:

31. 2006 թվականին այս ուսումնասիրության հրապարակման

պահից Ֆրանսիայում և Իսպանիայում էական զարգացումներ են նկատվել: Նախ, ինչ վերաբերում է Ֆրանսիային, հարկ է նշել, որ 2001 թվականի հունվարի 29-ին այս երկիրն ընդունել է 1915 թվականի Հայոց Ցեղասպանությունը մեկ հողվածով ճանաչող մի օրենք (loi No 2001-70)։

Հողված 1

«Ֆրանսիան հրապարակավ ճանաչում է 1915 թվականի Հայոց Ցեղասպանությունը»:

32. 2012 թվականի հունվարի 23-ին ընդունվել է օրենքով ճանաչված ցեղասպանությունների հերքումը պատժող օրենքը՝

Հողված 1

«Մամուլի ազատության մասին 1881 թվականի հուլիսի 29-ի օրենքի 24-րդ հոդվածի առաջին կետը փոխարինվում է ստորև շարադրված հինգ կետերով՝

«24-րդ հոդվածի վեցերորդ կետը՝ պատժի կենթարկվեն նրանք, ովքեր հրապարակավ կարդարացնեն, կհերքեն կամ մեծապես կնսեմացնեն ցեղասպանության, մարդկության դեմ ուղղված և պատերազմի հանցագործությունները, որոնք թեև սահմանված են, սակայն սահմանափակված չեն՝

1) 1998 թվականի հուլիսի 17-ին ստեղծված Միջազգային քրեական դատարանի կանոնադրության 6, 7 և 8-րդ հոդվածներով,

2) Քրեական օրենսգրքի 211-1 և 212-1 հոդվածներով,

3) 1945 թվականի հուլիսի 8-ի Լոնդոնյան համաձայնագրին կցված Միջազգային ռազմական դատարանի կանոնադրության 6-րդ հոդվածով,

և նրանք, որոնք Ֆրանսիայի կողմից ճանաչված օրենքի, ստորագրած և վավերացված միջազգային կոնվենցիայի կամ դրան միջազգային կամ համայնքային հաստատության կողմից կայացված որոշման առարկա են կամ այդպիսին են որակվել Ֆրանսիայի դատարանների իրավակիրառ պրակտիկայի արդյունքում»»:

Հողված 2

«Մամուլի ազատության մասին 1881 թվականի հուլիսի 29-ի օրենքի 48-2 հոդվածը հետևյալ փոփոխությունների է ենթարկվել՝

1° «տեղահանվածներ» բառից հետո տեղադրված են հետևյալ բառերը՝ «կամ ցեղասպանության, մարդկության դեմ ուղղված, պատերազմի կամ թշնամու հետ համագործակցության հանցագործությունները»:

2° «արդարացում» բառից հետո տեղադրված է «ցեղասպանություններ» բառը»:

33. Ֆրանսիայի Սահմանադրական խորհուրդը 2012 թվականի փետրվարի 28-ին այդ օրենքը հակասահմանադրական է ճանաչել հետևյալ բառերով՝

1. «Հաշվի առնելով, որ պատգամավորները և սենատորները դիմում են Սահմանադրական խորհրդին՝ քրեականացնելու օրենքով ճանաչված ցեղասպանությունների հերքումը,

2. հաշվի առնելով, որ վերոնշյալ օրենքի հոդված 1-ը տեղադրվում է մամուլի ազատության մասին 1881 թ. հուլիսի 29-ի օրենքի 24-րդ հոդվածում, որը առաջնահերթ 1 տարի ազատագրված և 45 000 եվրո տուգանքի չափով պատիժ է նշանակում նրանց նկատմամբ, ովքեր «վիրավորական ձևով վիճարկում կամ նվազագույնի են հասցնում», ինչպիսին էլ որ լինեն արտահայտվելու և հրապարակավ տեղեկացնելու միջոցները, «քրեական օրենսգրքի հոդված 211-1-ում սահմանված կամ ֆրանսիական օրենքով այդպիսին ճանաչված, ցեղասպանության մեկ կամ բազմաթիվ հանցագործությունների գոյությունը» ; որ վերոհիշյալ օրենքի 2-րդ հոդվածը փոփոխության է ենթարկում 1881 թվականի հուլիսի 29-ի նույն օրենքի 48-2-րդ հոդվածը ; որ այն տարածվում է իրավունքը ճանաչած որոշ ասոցիացիաների վրա՝ մասնավորապես այս նոր պատժի ստեղծման հետևանքների քաղաքացիական հայց հարուցելու համար,

3. հաշվի առնելով, որ, ըստ հղումների հեղինակների, վերոհիշյալ օրենքը խախտում է 1789 թվականի Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրի 11-րդ հոդվածով հռչակված Խոսքի և տեղեկատվության ազատությունը, ինչպես նաև այս Հռչակագրի 8-րդ հոդվածում ամրագրված քրեական իրավախախտումների և պատիժների օրինականության սկզբունքը; որ այս դրույթները, ճնշելով մի կողմից ֆրանսիական օրենքով ճանաչված ցեղասպանությունները, մյուս կողմից՝ մարդկության դեմ ուղղած այլ հանցագործությունների բացառմամբ ցեղասպանությունները, խախտում են նաև հավասարության սկզբունքը; որ դիմումատու Եվրախորհրդարանական պատգամավորները նաև պնդում են, որ օրենսդիրը խախտել է իր սեփական իրավասությունները և իշխանությունների բաժանման սկզբունքը՝ ամրագրված 1789 թվականի Հռչակագրի 16-րդ հոդվածում, հետազոտություններ կատարելու ազատությունը, ինչպես նաև Սահմանադրության 4-

րդ հոդվածով սահմանված այն սկզբունքը, որի համաձայն՝ կողմերն իրենց գործողություններն իրականացնում են ազատորեն,

4. հաշվի առնելով, որ, մի կողմից, համաձայն 1789 թվականի Հռչակագրի 6-րդ հոդվածի՝ «Օրենքը ընդհանուր կամքի արտահայտումն է...» ; որ այն հանդիսանում է այս հոդվածի, ինչպես նաև մյուս բոլոր սահմանադրական նորմերի առարկան՝ հատկապես պահպանելով Սահմանադրությամբ ամրագրված դրույթները, օրենքն ուղղված է սահմանելու կանոններ, այնուհետև դրանք մտցնելու նորմատիվ տիրույթ,

5. հաշվի առնելով, որ մյուս կողմից, համաձայն 1789 թվականի Հռչակագրի 11-րդ հոդվածի՝ «Մտքերի և կարծիքների ազատ հաղորդակցումը մարդու ամենաթանկ իրավունքներից մեկն է՝ յուրաքանչյուր քաղաքացի կարող է, այսպիսով, ազատորեն խոսել, գրել, տպագրել՝ բացառությամբ օրենքով նախատեսված այս ազատության սահմանափակումների» ; որ համաձայն Սահմանադրության 5-րդ հոդվածի՝ «Օրենքը կանոններ է սահմանում... քաղաքացիների քաղաքացիական իրավունքներ և հիմնարար երաշխիքներ տալու վերաբերյալ՝ իրականացնելու համար իրենց քաղաքացիական ազատությունները» ; որ դրա հիման վրա օրենսդիրն ազատ է՝ ընդունելու ազատ հաղորդակցման և ազատորեն խոսելու, գրելու, տպագրելու իրավունքների իրականացման վերաբերյալ կանոններ, որ նա նաև իրավասու է, որպես այդպիսին, պատիժներ սահմանել խոսքի և հաղորդակցության ազատության այն չարաշահումների համար, որոնք խախտում են հասարակական կարգը և այլոց իրավունքները ; որ, այնուամենայնիվ, խոսքի և հաղորդակցության ազատությունը շատ ավելի արժեքավոր է, քան դրա իրականացումը, այն ժողովրդավարության նախապայման է և այլոց իրավունքների ու ազատությունների հարգման երաշխիքներից մեկը, որ այդ ազատության իրականացման խախտումը հետապնդած նպատակի համար պետք է լինի անհրաժեշտ, տեղին և համաչափ,

6. հաշվի առնելով, որ օրենսդրության նպատակն է «ճանաչել» ցեղասպանություն հանցագործությունը, չի կարող ինքնին նորմատիվ նշանակություն ունենալ, որը վերապահված է օրենքին ; որ, այնուամենայնիվ, վերը նշված օրենքի 1-ին հոդվածը պատժում է մեկ կամ բազմաթիվ ցեղասպանություն հանցագործությունների՝ «որպես այդպիսի ճանաչված ֆրանսիական օրենքով», գոյության այլակարծությունը կամ նվազագույնի հասցնելը; որ պատժելով նաև հանցագործություն-

ների գոյության այլակարծությունը կամ նվազագույնի հասցնելը և իրավաբանական որակումը, որոնք ճանաչվել և որակվել են այդպես՝ օրենսդիրը խոսքի և հաղորդակցության իրականացման հակասահմանադրական խախտում է թույլ տվել; որ, այսպիսով, վերոհիշյալ օրենքի 1-ին հոդվածը պետք է հակասահմանադրական ճանաչվի՝ առանց այլ բողոքներ ուսումնասիրելու անհրաժեշտության; որ դրա 2-րդ հոդվածը, որը դրանից առանձին չէ, նույնպես պետք է հակասահմանադրական ճանաչվի,

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հոդված 1. Օրենսդրությամբ ճանաչված ցեղասպանությունների գոյության հերքումը պատժող օրենքը հակասահմանադրական է,

Հոդված 2. Այս որոշումը կիրառարակվի Ֆրանսիայի Հանրապետության Պաշտոնական տեղեկագրում:

(...):»:

34. Կարևոր առաջխաղացումներ են գրանցվել նաև Իսպանիայում: Իրականում 2007 թվականի նոյեմբերի 7-ի (թիվ 235/2007) որոշմամբ Սահմանադրական դատարանը հակասահմանադրական ճանաչեց Քրեական օրենսգրքի 607.2 հոդվածի առաջին ենթակետով սահմանված ցեղասպանության հերքումն իրավախախտում համարող նորմը:

35. Ցեղասպանության հանցագործությունը սահմանված է Քրեական օրենսգրքի 607-րդ հոդվածով:

Սահմանադրական դատարանի՝ ավելի վաղ ընդունած (թիվ 235/2007) որոշման մեջ այս դրույթը ձևակերպած է եղել հետևյալ կերպ՝

«1. Ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական խմբի լրիվ կամ մասնակի ոչնչացման նպատակի հետապնդումը պատժվում է՝

• անդամներից մեկին սպանելու դեպքում տասնհինգից քսան տարի ազատազրկմամբ

(...):

• անդամներից մեկի հանդեպ սեռական բռնություններ գործադրելու կամ 149-րդ հոդվածով սահմանված վնասների պատճառման դեպքում տասնհինգից քսան տարի ազատազրկմամբ

(...):

3. Ցանկացած եղանակով տվյալ դրույթի՝ նախորդ հոդվածով

սահմանված հանցագործությունները ժխտող կամ արդարացնող գաղափարների և դոկտրինների կամ այնպիսի ռեժիմների կամ ինստիտուտների վերականգնման տարածման ձգտումը, որոնք նման իրավախախտումներ կազմող փորձ են քարոզում, ենթակա է մեկից երկու տարվա ազատազրկման»:

36. Սահմանադրական դատարանի (թիվ 235/2007) որոշմամբ ցեղասպանության զուտ «հերքումը» այլևս չի արգելվում, և 607.2 հոդվածի փոփոխված տարբերակը ներկայացված է հետևյալ կերպ՝

«Ցանկացած եղանակով տվյալ դրույթի նախորդ հոդվածով սահմանված հանցագործությունները ժխտող կամ արդարացնող գաղափարների և դոկտրինների կամ այնպիսի ռեժիմների կամ ինստիտուտների վերականգնման տարածման ձգտումը, որոնք նման իրավախախտումներ կազմող փորձ են քարոզում, ենթակա կլինի մեկից երկու տարվա ազատազրկման»:

37. Սահմանադրական դատարանն իր՝ թիվ 235/2007 որոշման մեջ տարանջատում է մտցրել մի կողմից ցեղասպանության «հերքման», որը կարող է հասկացվել որպես որոշ փաստերի նկատմամբ սեփական կարծիքի արտահայտում, հաստատելով, որ դա տեղի չի ունեցել կամ չի իրականացվել այնպես, որ դա հնարավոր լինի որակել որպես ցեղասպանություն, և մյուս կողմից «արդարացման» միջև, որը ներառում է ցեղասպանության՝ որպես կոնկրետ հանցագործության գոյության ոչ թե բացարձակ հերքումը, այլ դրա հարաբերականության կամ դրա անօրինականության հերքումը այլ հանցագործությունների հետ որոշ նույնականացումների միջոցով: Այն դեպքերի համար, երբ սանկցավորված վարքագիծը պարտադիր ենթադրում է որոշ խմբերի դեմ ուղղված բռնության անմիջական հրահրում կամ ցեղասպանության զոհերի նկատմամբ անհարգալից վերաբերմունք, օրենսդիրը ցեղասպանության արդարացման հայեցակարգին առնչվող հատուկ պատժամիջոցներ է նախատեսել՝ ի ճանաչումն Քրեական օրենսգրքի 615 հոդվածի, որն արգելում է ցեղասպանության հրահրումը, դավադրություններն ու առաջարկները (la provocación, la conspiración y la proposición): Այն փաստը, որ 607.2 հոդվածով սահմանված պատիժը պակաս խիստ է, քան այն, որ նախատեսված է ցեղասպանության արդարացման համար, բացառում է այն, որ օրենսդիրը նպատակ է ունեցել սահմանել որակում ունեցող պատիժ:

38. Սահմանադրական դատարանին նույնպես հարց է ուղղվել այն

մասին, թե արդյո՞ք 607.2 հոդվածով պատժելի վարքագիծը դասակարգվում է որպես «խոսքի ատելություն»: Դատարանը վճռել է, որ զուտ ցեղասպանության հերքումը ինքնին չի ենթադրում քաղաքացիների, ռասաների կամ համոզմունքների դեմ անմիջական բռնության հրահրում: Այն սահմանել է, որ հատուկ փաստերի գոյություն ունենալու կամ չունենալու մասին եզրակացությունների տարածումը, առանց սրա կամ նրա անօրինակ բնույթի վերաբերյալ արժեքավոր փաստարկներ բերելու, ընկնում է Սահմանադրության 20.1 հոդվածի բ կետով սահմանված գիտական ազատության բնագավառ: Այն արտահայտել է, որ այդ սահմանադրական ազատությունը սկսել է ավելի մեծ հռչակ վայելել, քան տեղեկատվության կամ խոսքի ազատությունը: Եվ, վերջապես, Սահմանադրական դատարանը սահմանել է, որ այս դիրքորոշումն արդարացված է եղել պատմական հետազոտությունների անհրաժեշտությամբ, որը վիճահարույց հարց է եղել, քանի որ այն ստեղծվել է պահանջների և արժեքավոր դատողությունների հիման վրա, որոնց օբյեկտիվ ճշմարտությունը բացարձակ վստահությամբ պարզելն անհնար է:

(Դատարանի որոշման համառոտ ներկայացում):

1. Անհրաժեշտ է նաև հիշեցնել Լյուքսեմբուրգի դեպքը, որը Շվեյցարիայի համեմատական իրավունքի ինստիտուտի ուսումնասիրության մեջ հաշվի առնված այն միակ պետությունն է, որն ընդհանուր առմամբ քրեական պատասխանատվություն է նախատեսում ցեղասպանության հերքման համար: Ահա քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածները՝

Հոդված 457-3

1. «Պատժվում է ութ օրից երկու տարի ազատազրկմամբ կա՛մ 251 եվրոյից 25.000 եվրոյի չափով տուգանքի, կա՛մ այս պատիժներից որևէ մեկով միայն նա, ով (...)

2. Պատժվում է միննույն պատիժներով կամ այս պատիժներից որևէ մեկով միայն նա, ով նախորդ կետով սահմանված միջոցներով վիճարկել, արդարացրել կամ հերքել է Քրեական օրենսգրքի 136-րդ հոդվածով սահմանված մեկ կամ բազմաթիվ ցեղասպանությունները, ինչպես նաև Քրեական օրենսգրքի 136 բ-ից մինչև 136 դ հոդվածներով սահմանված և լյուքսեմբուրգյան կամ միջազգային դատարանների կողմից ճանաչված մարդկության դեմ ուղղված և պատերազմների հանցագործությունները»:

Հոդված 136^ա

«Ցեղասպանություն է որակվում հետևյալ գործողությունից այն, որն իրականացվել է ազգային, ռասայական, կրոնական կամ էթնիկ խումբը ամբողջապես կամ մասնակի ոչնչացնելու մտադրությամբ

1. Խմբի անդամների սպանությունը,
 2. Ֆիզիկական կամ մտավոր լուրջ վնասվածքի պատճառումը,
 3. Խմբի անդամներին կյանքի այնպիսի պայմանների ենթարկումը, որոնք ուղղված են նրանց լրիվ կամ մասնակի ոչնչացմանը,
 4. Խմբի ներսում մանկածնությունը կանխելուն ուղղված միջոցառումների ձեռնարկումը,
 5. Երեխաներին մի խմբից մյուսին բռնի ուժով փոխանցումը:
- Ցեղասպանության հանցագործությունը պատժվում է ցմահ ազատազրկմամբ»:

ՕՐԵՆՔ

I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 10-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄ

40. Հղում կատարելով Կոնվենցիայի 10-րդ հոդվածին՝ դիմումատուս նշում է, որ, իրեն դատապարտելով քրեական պատասխանատվության նրա համար, որ հրապարակայնորեն ասել է, թե Հայոց ցեղասպանություն երբեք տեղի չի ունեցել, շվեյցարական դատարանները խախտել են իր խոսքի ազատության իրավունքը: Նա, մասնավորապես, պնդում է, որ Շվեյցարիայի քրեական օրենսգրքի 261-րդ հոդվածի 4-րդ կետի կանխատեսելիության աստիճանը բավարար չէ, պնդում է, որ իր դատապարտումը չի հետապնդում օրինական դրդապատճառներ և որ խոսքի ազատության իրավունքի խախտումը, որի գոհն է ինքը, «անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում»: 10-րդ հոդվածն արտահայտում է հետևյալը՝

1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: Այս հոդվածը չի խոչընդոտում պետություններին՝ սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում:

2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված

է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով»:

21. Կառավարությունն առարկել է այդ փաստարկը:

Ա. Ընդունելիության մասին

1. Կոնվենցիայի 17-րդ հոդվածի կրթառելիության մասին

ա. Կիրառելի սկզբունքները

42. Դատարանը հիշեցնում է, որ 17-րդ հոդվածն իրեն թույլատրում է ոչ ընդունելի համարել հայցը, եթե ինքը գտնում է, որ դատավարության մասնակիցներից որևէ մեկը խախտում է Կոնվենցիան՝ չարաշահելով իր իրավունքները: Այդ հոդվածը շարադրված է հետևյալ կերպ

«Սույն Կոնվենցիայի ոչ մի դրույթ չի կարող մեկնաբանվել այն իմաստով, թե որևէ պետության, անձանց խումբ կամ որևէ անձ իրավունք ունեն զբաղվելու այնպիսի գործունեությամբ կամ կատարելու այնպիսի գործողություն, որն ուղղված է այս Կոնվենցիայում շարադրված ցանկացած իրավունքի և ազատության վերացմանը կամ դրանց սահմանափակմանը ավելի մեծ չափով, քան նախատեսված է Կոնվենցիայով»:

43. Դատարանը գտնում է, որ պատասխանող կառավարությունը դեմ չէ նրան, որ բողոքն ընկնում է 17-րդ հոդվածի կիրառելիության տիրույթում: Նա, այնուամենայնիվ, կարծում է, որ նպատակահարմար է ուսումնասիրել, թե արդյո՞ք սույն դրույթին համապատասխան պետք է բացառել դիմումատուի խոսքի ազատության պաշտպանությունը:

44. Դատարանն ի սկզբանե հիշեցնում է, որ «17-րդ հոդվածը, պայ-

մանով, որ վերաբերում է խմբերի կամ անհատների, ունի նպատակ՝ նրանց համար անհնարին դարձնելու Կոնվենցիայից բխեցնելու այնպիսի իրավունք, որը նրանց թույլ կտա զբաղվելու այնպիսի գործունեությամբ կամ կատարելու այնպիսի գործողություն, որն ուղղված է այս Կոնվենցիայում շարադրված ցանկացած իրավունքի և ազատության վերացմանը, ինչպես նաև ոչ ոք չպետք է ունենա հնարավորություն հիմնվելու Կոնվենցիայի այնպիսի դրույթների վրա, որը նրան թույլ կտա զբաղվելու այնպիսի գործունեությամբ կամ կատարելու այնպիսի գործողություն, որն ուղղված է այս Կոնվենցիայում շարադրված ցանկացած իրավունքի և ազատության վերացմանը»: *Lawless c. Irlande*, 1961, § 7, série A No 3).

45. Դատարանը մասնավորապես գտնել է, որ «Կոնվենցիայի հիմքում ընկած արժեքների դեմ ուղղված նշումը» ընկնում է 17-րդ հոդվածի տակ՝ ի պաշտպանություն 10-րդ հոդվածի (տե՛ս *Lehideux et Isorni c. France*, 23 septembre 1998, § 53 et 47, *Recueil des arrêts et décisions* 1998-VII, ou *Orban et autres c. France*, No 20985/05, § 34, 15 janvier 2009): Այսպես, *Garaudy c. France* ((déc.), No 65831/01, CEDH 2003-IX (extraits)) գործում, որը վերաբերում էր մարդկության դեմ ուղղված հանցագործությունների հերքումը դատապարտելուն, և որը ներկայացվել էր մի հեղինակի կողմից, որն իր գրքում կասկածի տակ էր առել նացիստների կողմից պարբերաբար մարդկության դեմ ուղղված հանցագործությունները ի դեմս հրեական համայնքի, Դատարանը հանգել է այն եզրակացության, որ *ratione materiae* չի համապատասխանում Կոնվենցիայի դրույթներին, որոնք անձի մոտ բողոք էին առաջացրել Կոնվենցիայի 10-րդ հոդվածի վերաբերյալ:

Նա իր եզրակացությունը հիմնել է այն պնդման վրա, որ դիմումատուի աշխատանքի բովանդակության և ընդհանուր բնույթի ամենամեծ մասը, այսպիսով, նրա «նպատակն» է, որն ունեթ բացահայտ ժխտողականություն և, հենց այդ պատճառով էլ, նա դեմ էր գնացել Կոնվենցիայի հիմնարար արժեքներին, որոնք են արդարությունը և խաղաղությունը: Այնուհետև նա այս դիտարկումից եզրակացրել է, որ դիմումատուն, օգտագործելով իր խոսքի ազատության իրավունքը, փորձում էր շեղել 10-րդ հոդվածն իր կոչումից՝ Կոնվենցիայի տառին ու ոգուն հակասող նպատակներով: Նա նույն եզրահանգմանն է եկել նաև *Norwood c. Royaume-Uni* (No 23131/03, նոյեմբերի 16, 2004թ.) և *IvaNov c. Russie* ((déc.), No 35222/04, 20, փետրվարի 2007թ.) որոշումներում, որոնք վե-

րաբերում էին խոսքի ազատության իրավունքի օգտագործմանը՝ համապատասխանաբար իսլամաֆոբ և հակասեմիտական նպատակներով:

46. Դատարանը հիշեցնում է, որ կարևորության ամենաբարձր կետը զբաղեցնում է պայքարը ռասայական բոլոր ձևերի և դրսևորումների դեմ (*Jersild c. Danemark*, 1994թ., սեպտեմբերի 23, § 30, série A No 298): Նա այդ առումով գտնում է, որ ատելության հրահրությունը իրենից անպայմանորեն այս կամ այն բռնության կամ այլ հանցավոր արարքի կոչ չի ներկայացնում: Մարդկանց դեմ ուղղված այն հանցագործությունները, որոնք, վիրավորելով, ծաղրելով կամ զրպարտելով բնակչության մի մասին կամ դրա առանձին խմբերին, կամ խտրականությանն ուղղված հրահրումները բավարար են իշխանությունների համար՝ պայքարելու ռասիզմի դեմ՝ ուղղված անպատասխանատու խոսքի ազատությանը, արժանապատվությունը ոտնահարելուն, անձանց այդ խմբերի կամ բնակչության մի մասի անվտանգությանը: Քաղաքական այն ելույթները, որոնք մղում են ատելության վրա հիմնված կրոնական, էթնիկական կամ մշակութային նախապաշարմունքների, ժողովրդավարական պետություններում սպառնալիք են ներկայացնում սոցիալական խաղաղության և քաղաքական կայունության համար (*Féret c. Belgique*, No 15615/07, § 73, 2009թ., հունիսի 16):

47. *Leroy c. France* (No 36109/03, հոկտեմբերի 2, 2008թ.) գործում Դատարանը վճռել է, որ վիճարկվող արտահայտությունը չի ընկնում այն հրապարակումների շրջանակներում, որոնք կազատվեն Կոնվենցիայի 17-րդ հոդվածով՝ ի պաշտպանություն 10-րդ հոդվածի: Մի կողմից, հրատարակվելով հումորիստական ձևով, իհարկե վիճելի ծաղրանկարի տեսքով, դիմումատուի կողմից ֆոնին պատկերված հաղորդագրությունը՝ ամերիկյան իմպերիալիզմի ոչնչացումը, ուղղված չէր հիմնարար իրավունքների հերքմանը և իրեն հավասարը չունեի այն դիտողությունների առումով, որոնք ուղղված են Կոնվենցիայի հիմքում ընկած արժեքների դեմ, ինչպիսիք են ռասիզմը, հակասեմիտականությունը (*Garudy*, տե՛ս *u* վերևում *et IvaNov*, տե՛ս *u* վերևում) կամ իսլամաֆոբիան (*Norwood*, տե՛ս *u* վերևում):

Մյուս կողմից, չնայած ազգային դատարանների կողմից ահաբեկչության արդարացման որակմանը, Դատարանը վճռել է, որ հումորիստական նկարը և դրան ուղեկցող մեկնաբանությունը արդարացում չէր կարող լինել միանշանակ ահաբեկչական գործողության համար, որը

շրջանցել է 10-րդ հոդվածով երաշխավորված պաշտպանությանը և մամուլի ազատությանը (§ 27): Վերջապես, 2001 թվականի սեպտեմբերի 11-ի հարձակումների՝ հումորիստական հրապարակման միջոցով գոհերի հիշատակին հասցված վիրավորանքը պետք է ուսումնասիրվեր իրավունքի լույսի ներքո և ոչ բացարձակ կերպով պաշտպանված Կոնվենցիայի 10-րդ հոդվածով: Դատարանն արդեն ուսումնասիրել էր նմանատիպ դիտարկումների բովանդակությունը՝ այդ դրույթի տեսանկյունից (*Kern c. Allemagne* (déc.), No 26870/04, մայիսի 29, 2007 թ.):

48. Վերջապես, *Molnar c. Roumanie* ((déc.), No 16637/06, 23 octobre 2012) գործում Դատարանը պետք է որոշում կայացնեի մի անձի գործով, որը դատապարտվել էր ատելություն, խտրականություն և անարխիա հրահրող բովանդակությամբ ցուցադրական (պաստառներ) քարոզչության նյութեր տարածելու համար:

Դատարանը վճռել է, որ դիմումատուի մոտ հայտնաբերված պաստառները պարունակում էին շահագրգիռ անձանց արտահայտած կարծիքները: Եթե այս հաղորդագրությունների բովանդակությունը ցնցող չէր, մյուսներինը կարող էր նպաստել, հիմնականում ռումինական համատեքստում, բնակչության մեջ լարվածությունը պահպանելուն: Այս առումով, դատարանը նշել է, մասնավորապես, որ հաղորդագրությունները վերաբերում էին Ռոմա փոքրամասնությանը և միասեռականների փոքրամասնությանը: Իրենց բովանդակությամբ այդ հաղորդագրությունները նախատեսված էին փոքրամասնությունների դեմ ատելություն հրահրելուն, հասարակական կարգը լրջորեն խախտելու բնույթի էին և հակառակ Կոնվենցիայի ու ժողովրդավարական հասարակության հիմնարար արժեքներին: Խախտելով այլոց իրավունքները՝ նման գործողությունները անհամատեղելի էին ժողովրդավարության և մարդու իրավունքների հետ, այնպես որ, համաձայն 17 - րդ հոդվածի դրույթների՝ դիմումատուն չի կարող հիմնվել Կոնվենցիայի 10 - րդ հոդվածի դրույթների վրա:

Բ. Մկզբունքների կիրառումը սույն գործի նկատմամբ

49. Այս դատական նախադեպի լույսի ներքո Դատարանը կքննարկի, թե արդյո՞ք նպատակահարմար է բացառել Կոնվենցիայի 17-րդ հոդվածով դիմումատուի հանդեպ 10-րդ հոդվածի կիրառումը, չնայած, որ պատասխանող կողմ կառավարությունը նմանատիպ հայց չի ներկայացրել: Նշված վճիռներից և որոշումներից հետևում է, որ դա մի միջոց է, որը Դատարանը շատ հազվադեպ է կիրառում:

50. Թուրքական կառավարությունը հենց սկզբից համարում էր, որ ներկայացված հայքը չի կարող անթույլատրելի հայտարարվել Կոնվենցիայի 17-րդ հոդվածին համապատասխան, որի մասին շվեյցարական կառավարությունը նույնպես երբեք դիմում չի պահանջել:

51. Դատարանն ընդունեց, որ դիմող կողմի որոշ հայտարարություններ հրահրող են եղել: Այն շարժառիթները, որոնցով դիմումատուն կատարել էր իրավախախտումը, ներպետական դատական աստիճանների կողմից որակվել էին որպես “ազգայնականներ” և “ռասիստներ” (Դաշնային դատարանի որոշում, դիտ. 5.2, վերոհիշյալ կետ 13): Անդրադառնալով վիճելի իրադարձություններին՝ դիմող կողմն իր կոնֆերանսի ժամանակ մասնավորապես հղում է կատարել “միջազգային սուտ” հասկացությանը: Դատարանը առաջին հերթին հիշեցնում է, որ այն գաղափարները, որոնք վախեցնում, ցնցում կամ անհանգստություն են պատճառում, նույնպես պաշտպանվում են 10-րդ հոդվածով: Այնուհետև, դատարանը կարևոր է համարում այն, որ դիմող կողմը երբեք չի հերքել, որ տարիների ընթացում տեղի են ունեցել ջարդեր և բռնի տեղահանություններ: Այն, ինչ նա հերքում է, միայն այս իրադարձություններին տրված իրավաբանական որակումն է՝ “ցեղասպանություն”:

52. Վերը նշված դատական նախադեպից (կետ 44-50) պարզ է դառնում, որ այն տանելի սահմանը, որի շրջանակներում դիմումատուի դիտարկումները կարող են ընկնել 17-րդ հոդվածի ներքո, հարց է առաջացնում, թե արդյո՞ք ելույթը նախատեսված էր ատելություն կամ բռնություն հրահրելու նպատակով: Դատարանը գտնում է, որ 1915 թվականի իրադարձություններին տրված իրավաբանական որակումը հերքելը ինքնին չի կարող ատելություն հրահրել հայ ժողովրդի նկատմամբ: Ամեն դեպքում, անձը չի հետապնդվել և չի պատժվել ատելություն հրահրելու համար, որը Քրեական օրենսգրքի 261 հոդվածի առաջին կետով առանձին իրավախախտում է հանդիսանում (վերոհիշյալ 14 –րդ կետը): Այն առաջ չի գալիս, քանի դեռ դիմող կողմը իրադարձությունների գոհերի նկատմամբ անհարգալից վերաբերմունք չի արտահայտել: Հետևաբար, Դատարանը գտնում է, որ դիմումատուն բացեիքաց չի չարաշահել տարբեր, նույնիսկ խոցելի և դժգոհություններ առաջ բերող հարցեր քննարկելու իր իրավունքը: Այս իրավունքի ազատ իրականացումը արտահայտվելու ազատության հիմնարար ասպեկտներից մեկն է և սրանով տարբերակում է մտցնում ժողովրդավարական, հանդուրժողական և բազմակարծիք հասարակության և տո-

տալիտար ու բռնապետական ռեժիմների միջև:

53. Իհարկե, Վերաքննիչ Դատարանը գտել է, որ դիմումատուն իրեն Թալեթ Փաշա է կոչել, ով Հայոց ցեղասպանության նախաձեռնողներից, հրահրողներից և իրագործողներից մեկն է եղել: Դատարանը չի բացառում, որ այդ ոճրագործություններն իրագործողների հետ այդ նույնականացումն ինչ- որ չափով Օսմանյան կայսրության կողմից կատարված գործողություններն արդարացնելու փորձեր են: (Տե՛ս Իսպանիայի սահմանադրական դատարանի թիվ 235/2007 որոշումը, վերը նշված 38-40 կետերը): Այնուամենայնիվ, նա իրեն պարտավորված չի զգում պատասխանելու տվյալ հարցին, քանի որ դիմումատուն չի հետապնդվել և պատասխանատվության չի ենթարկվել Քրեական օրենսգրքի 261 հոդվածի 4-րդ կետի իմաստով ցեղասպանության «արդարացում» փնտրելու համար:

54. Հաշվի առնելով վերը նշվածը՝ չի կարելի պնդել, որ դիմումատուն օգտվել է իր խոսքի ազատության իրավունքից Կոնվենցիայի տառին և ոգուն հակասող, հետևաբար նաև 10-րդ հոդվածի նշանակությունից շեղում համարվող նպատակների համար: Հետևաբար, Կոնվենցիայի 17-րդ հոդվածը կիրառելու կարիք չկա:

2. Ընդունելիության վերաբերյալ եզրակացություններ

55. Դատարանը նաև նշում է, որ 10-րդ հոդվածով սահմանված բողոքը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի § 3 a) իմաստով չի համարվում ակնհայտորեն անհիմն: Այն նշում է նաև, որ այն չի գործում որևէ այլ անընդունելի հիմքով: Այդ իսկ պատճառով այն պետք է ճանաչվի ընդունելի:

Բ. Գործի էությունը

1. Միջամտության առկայություն:

56. Դատարանը նշում է, որ դիմումատուի խոսքի ազատությանը միջամտության առկայությունը կողմերը չեն վիճարկում: Այն նաև գտնում է, որ, անկասկած, դիմումատուի վիճարկվող դատապարտումը «միջամտություն» է նրա խոսքի ազատության իրավունքի իրականացմանը:

2. Միջամտության հիմնավորում:

57. Նման միջամտությունը խախտում է 10-րդ հոդվածը, միայն ե-

թե այն ներառված է տվյալ դրույթի 2-րդ կետով սահմանված միջատությունների շարքում: Մտում է պարզել, թե արդյո՞ք միջատությունը «նախատեսված է եղել օրենքով», արդյո՞ք դա հետապնդել է տվյալ կետում տեղ գտած մեկ կամ ավելի իրավաչափ նպատակներից որևէ մեկը և արդյո՞ք դա «անհրաժեշտ է եղել ժողովրդավարական հասարակությունում» դրանց հասնելու համար:

a. «Օրենքով նախատեսված»

i. Կողմերի դիրքորոշումները:

- *Դիմումատուն*

58. Դիմումատուն պնդում է, որ Քրեական օրենսգրքի 261 հոդվածի 4-րդ կետը «ցեղասպանության» հերքում է հանդիսանում՝ առանց նշելու, թե խոսքը «հայե՞րի ցեղասպանության», թե՞ «հրեաների ցեղասպանության» մասին է: Ավելին՝ նա հայտարարել է, որ Դաշնային դատարանը առաջին ատյանում Բեռն Լոպենի կողմից գործը քննելիս իրեն ազատել է նույն մեղադրանքից (վերը նշված 17-րդ կետ): Այդ իսկ պատճառով նա պնդում է, որ ինքը չէր կարող կանխորոշել, որ միևնույն օրենքը կարող էր տարբեր հետևանքներ ունենալ և դառնալ սույն հայցի առարկա: Վերջում նա ավելացնում է, որ վիճարկվող դրույթը քննադատության է արժանացել Շվեյցարիայի կառավարության մի անդամի, իսկ ավելի կոնկրետ՝ արդարադատության նախկին նախարարի կողմից 2006 թվականի հոկտեմբերի սկզբին Թուրքիա կատարած այցի ժամանակ:

- *Կառավարությունը:*

59. Կառավարությունը նշում է, որ դիմող կողմի դատապարտումը հիմնված էր Շվեյցարիայի քրեական օրենսգրքի 261 հոդվածի 4-րդ կետի վրա (տե՛ս վերը նշված 14 - րդ կետը), որը ամբողջությամբ հրապարակվում է դաշնային օրենքների Համակարգված հավաքագրում (RS) և Պաշտոնական հավաքագրում (RO): Նա նշել է, որ Դաշնային Խորհուրդն իր ծրագրում առաջարկել է նվազեցնել Հոլոքոստի քրեական պաշտպանությունը՝ առանց արտահայտված հղում կատարելու ցեղասպանությանը, սակայն օրենսդիրը չի հետևել սրան: Խորհրդարանը կրնալայնի հայցադիմումների տրամադրման հարցն ընդհանրապես ցեղասպանության և / կամ մարդու դեմ հանցագործությունների հերքման, նվազեցման կամ արդարացման փորձերի վերաբերյալ (տե՛ս՝ 2007 թվականի դեկտեմբերի 12-ի դաշնային դատարանի որոշումը, դիտ.

3.2): Ազգային խորհրդի քննարկումների սկզբին հանձնաժողովի զեկուցողը նշել է, որ հայերի ջարդերը նույնպես համարվում են «ցեղասպանություն», բայց փոփոխված դրույթի իմաստով:

60. Կառավարությունը պնդում է, որ այն ժամանակ, երբ Շվեյցարիան վավերացրել է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, նա վերապահում էր նախատեսել, որով հաստատում էր, որ 1965 թվականի դեկտեմբերի 21-ի Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին Կոնվենցիային իր անդամակցության կապակցությամբ նա ուներ քրեական դրույթ ընդունելու իրավունք, որն արտացոլում է 20-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջները, որոնք սահմանում են, որ «ազգային, ռասայական կամ կրոնական ատելության ցակացած կոչ, որը ներառում է խտրականության, թշնամության կամ բռնության հրահրում, արգելվում է օրենքով»: Քրեական օրենսգրքի 261 հոդվածի ուժի մեջ մտնելով՝ նշված վերապահումը վերացվել է:

61. Կառավարությունը գտնում է, որ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից 1997 թվականի հոկտեմբերի 30-ին նույն համատեքստով ընդունված (97)20 Հանձնարարականը վերաբերում է ատելություն հրահրելուն՝ դատապարտելով ռասայական ատելության ցակացած տեսակ, այլատյացության, հակասեմիտական ուղյակի և անհանդուրժողականության բոլոր ձևերի դրսևորմանը:

62. Բացի դրանից, Կառավարությունը նշում է, որ ավելի քան 20 երկրների խորհրդարաններ ճանաչել են, որ 1915-1917 թվականներին տեղի ունեցած զանգվածային տեղահանություններն ու կոտորածները ցեղասպանություն են հանդիսանում՝ դրա պաշտպանության և ճնշման նպատակով 1948 թվականին ընդունված Կոնվենցիայի իմաստով: Բացի այդ, 2000 թվականի նոյեմբերի 15-ին Եվրախորհրդարանը կոչ է արել Թուրքիային հրապարակայնորեն ճանաչելու Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին իրականացրած հայերի ցեղասպանությունը:

63. Հաշվի առնելով միջազգային այս զարգացումները և Քրեական օրենսգրքի 26 հոդվածի 4-րդ կետի փաստացի ձևակերպումը՝ դիմումատուն կարող էր կանխատեսել, որ իր հայտարարությունները Շվեյցարիայում կհանգեցնեն քրեական պատասխանատվության: Կառավարությունը ավելացնում է, որ 2005 թվականի սեպտեմբերի 20-ի լուսնների ժամանակ դիմումատուն հայտարարել է, որ նա չի հերքել

որևիցե ցեղասպանություն, քանի որ ցեղասպանություն երբեք չի էլ եղել, նա միայն պայքարել է միջազգային ստի դեմ:

64. Հետևաբար Կառավարությունը գտնում է, որ Քրեական օրենսգրքի 261 հոդվածի 4-րդ կետը բավականին հստակորեն է ձևակերպված, առավել ևս, որ դիմողի կողմից հերքվող փաստերը ներառում են մարդկության դեմ հանցագործությունների բոլոր եղանակները (Դաշնային դատարանի 2007 թվականի դեկտեմբերի 12-ի որոշում, դիտ. 7, վերոգրյալ 13-րդ կետ), որոնք նաև ներառված են 261 հոդվածի 4-րդ կետում:

Թուրքական կառավարությունը՝ երրորդ միջամտողը

65. Ինչպես դիմումատուն, թուրքական կառավարությունը գտնում է, որ վիճարկելի քայլը անկանխատեսելի է եղել դիմումատուի համար: Վերջինս չէր կարող ողջամտորեն ակնկալել, որ կարող էր դատապարտվել միջազգային կամ շվեյցարական իրավունքի հիման վրա, իսկ Շվեյցարիայում հասարակական կարծիքը միաձայն չի եղել: Հետևաբար, իր խոսքի ազատության միջամտությունը իրավական բավարար հիմքի վրա հիմնված չի եղել:

ii. Դատարանի գնահատականը

- Կիրառելի սկզբունքները

66. Դատարանը հիշեցնում է իր իրավակիրառ պրակտիկան, որի համաձայն՝ «նախատեսված է օրենքով» բառերը ոչ միայն պահանջում են, որ վիճարկվող միջոցը ներպետական օրենսդրության մեջ որոշակի հիմք ունենա, այլև վերաբերում են օրենքի որակի հարցին. պահանջում են նաև, որ այն լինի մատչելի դատավարության կողմերի համար և կանխատեսելի՝ հետևանքների առումով (տե՛ս բազմաթիվ ուրիշների մեջ *Vgt Verein gegen Tierfabriken c. Suisse*, No 24699/94, § 52, CEDH 2001-VI ; *Rotaru c. Roumanie* [GC], No 28341/95, § 52, CEDH 2000-V ; *Gawęda c. Pologne*, No 26229/95, § 39, CEDH 2002-II, et *Maestri c. Italie* [GC], No 39748/98, § 30, CEDH 2004-I):

Մակայն դա ազգային իշխանությունների, մասնավորապես դատարանների լիազորությունն է՝ մեկնաբանելու և կիրառելու ներպետական օրենսդրությունը (*Kopp c. Suisse*, 1998 թվականի մարտի 25, § 59, *Recueil* 1998-II, et *Kruslin c. France*, 1990 թվականի ապրիլի 24, § 29, série A No 176-A):

67. «Նախատեսված է օրենքով» արտահայտության պահանջներից մեկն էլ դրա կանխատեսելիությունն է: Հետևաբար, մենք կարող «օ-

րենք» համարել միայն այն նորմը, որն արտահայտված է հստակության այն բավարար աստիճանով, որը թույլ է տալիս քաղաքացուն՝ կարգավորելու իր վարքագիծը: Շրջապատելով իրեն համապատասխան խորհուրդներով՝ նա պետք է կարողանա գործի ողջամիտ պայմաններում կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող են ծագել տվյալ գործողության արդյունքում: Պարտադիր չէ, որ դրանք բացարձակ վստահությամբ կանխատեսված լինեն. փորձը ցույց է տալիս, որ նման վստահությունը անմատչելի է: Բացի վստահությունից, խիստ ցանկալի է գոնե որոշակիությունը՝ երբեմն ավելորդ խստությամբ ուղեկցվող, իսկ օրենքը պետք է ի վիճակի լինի հարմարվելու փոփոխվող պայմաններին: Նաև, շատ օրենքներ ինքնին, ըստ որոշակի հանգամանքների ուժով շատ կամ քիչ աղոտ են և դրանց մեկնաբանումն ու կիրառումը փորձից են կախված (*Rekvenyi c. Hongrie* [GC], No 25390/94, § 34, CEDH 1999-III ; *Sunday Times c. Royaume Uni (No 1)*, 1979 թվականի ապրիլի 26, § 49, série A No 30 ; et *Kokkinakis c. Grèce*, 1993 մայիսի 25, § 40, série A No 260-A):

68. Ներպետական օրենսդրության պահանջվող հստակության մակարդակը, որը ոչ մի կերպ չի կարող կանխատեսել բոլոր ենթադրությունները, մեծապես կախված է վիճարկելի օրենքի բովանդակությունից, այն դաշտից, որը ենթադրաբար պետք է ծածկի և նրանց քանակն ու կարգավիճակը, ում այն հասցեագրված է (*Rekvenyi*, précité, § 34, et *Vogt c. Allemagne*, 26 septembre 1995, § 48, série A No 323): Հաշվի առնելով սահմանադրական դրույթների ընդհանուր բնույթը՝ ճշգրտության մակարդակը, որը պահանջվում է այդ դրույթների համար կարող է ավելի քիչ լինել, քան անհրաժեշտ է սովորական օրենսդրությանը (տե՛ս վերոշարադրյալը, *Rekvenyi* § 34):

- Սկզբունքների կիրառումը սույն գործի նկատմամբ

69. Ինչ վերաբերում է գործի հանգամանքներին, չի վիճարկվում, որ դիմումատուի դատապարտումը հիմնված է բոլորի համար մատչելի տեքստի վրա, այն է՝ քրեական օրենսգրքի 261-րդ հոդվածի 4-րդ կետը (տե՛ս վերը նշված 14-րդ կետը): Մինչդեռ դիմումատուն պնդում է, որ տվյալ դրույթը գուրկ է Դատարանի կողմից պահանջվող հստակությունից և կանխատեսելիությունից: Այդ պատճառով անհրաժեշտ է քննարկել, թե գործի կոնկրետ հանգամանքներում արդյո՞ք դիմումատուն կարող էր կանխատեսել, որ Շվեյցարիայում կատարված գիտաժողովների ընթացքում արված իր հայտարարությունները կարող էին

հանգեցնել հետաքննության կամ նշված դրույթի հիման վրա քրեական գործ հարուցելու:

70. Ըստ Դաշնային դատարանի՝ վիճարկելի դրույթի տառացի և քերականական մեկնաբանությունը թույլ է տալիս պնդելու, որ օրենքը որևէ հստակ պատմական իրադարձության վրա հղում չի կատարում: Իրականում քրեական օրենսգրքի 261-րդ հոդվածի 4-րդ կետում նշվում է «մի» ցեղասպանություն և «մարդկության դեմ ուղղված այլ հանցագործություններ»:

Օրենքը չի բացատրում այն ցեղասպանությունների հերքման դատապարտումը, որոնք նացիստական ռեժիմի կողմից չեն իրականացվել; այն քրեական իրավունքի շրջանակներում Հայոց Ցեղասպանությունը ուղղակիորեն չի էլ որակում որպես ռասայական խտրականության ակտ (Տե՛ս Դաշնային դատարանի վճռի դիտ. 3.1-ը՝ վերոհիշյալ 13-րդ կետը): Թվում է՝ նույն եզրահանգմանը կարելի է գալ նորմի պատմական մեկնաբանման արդյունքում (տե՛ս Դաշնային դատարանի վճռի դիտ. 3.2-ը):

71. Դատարանը գտնում է, որ քրեական օրենսգրքի 261-րդ հոդվածի 4-րդ մասում օգտագործված «մի ցեղասպանություն» տերմինը, հնարավոր է, կասկածներ հարուցի Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասով պահանջվող հստակության վերաբերյալ: Նա, այնուամենայնիվ, այն կարծիքին է, որ տվյալ գործի հանգամանքներում, դիմումատուի համար քրեական պատիժը կանխատեսելի է եղել: Իրականում, նա, լինելով իրավաբանական գիտությունների դոկտոր և քաղաքականապես տեղեկացված անձնավորություն, կարող էր պատկերացնել, որ Շվեյցարիայում նման քննարկում վարելով՝ կարող էր ենթարկվել քրեական պատժի: Շվեյցարիայի Ազգային խորհուրդը ճանաչել է Հայոց Ցեղասպանության գոյության փաստը 2002 թվականին (տե՛ս վերոհիշյալ 16-րդ կետը): Բացի դրանից, դիմումատուն ինքն էր գիտակցում, որ գիտեր շվեյցարական այն նորմի մասին, որը պատժում է ցեղասպանության հրապարակային հերքումը, ավելացնելով, որ «երբեք չի փոխի իր դիրքորոշումը, նույնիսկ եթե մի չեզոք հանձնաժողով օրերից մի օր հաստատի, որ Հայոց Ցեղասպանությունը իրոք գոյություն է ունեցել» (տե՛ս Դաշնային դատարանի վճռի դիտ. 6-ը): Ըստ այդմ, Դատարանը համաձայն է Դաշնային դատարանի կարծիքի հետ, ըստ որի՝ այս պարագայում, դիմումատուն տեղյակ էր, որ Հայոց ցեղասպանությունը «միջազգային սուտ» անվանելով՝ նա Շվեյցարիայի տարածքում ենթարկվում է

քրեական պատասխանատվության (նույն տեղում):

72. Եզրափակելով՝ Դատարանը եզրակացնում է, որ միջամտությունը “նախատեսված է եղել օրենքով” Կոնվենցիայի 10-րդ հոդվածի երկրորդ կետի իմաստով:

Ա. Իրավական նպատակը:

73. Կառավարությունը պնդել է, որ դիմումատուի դատապարտումը հետապնդել է մի քանի իրավաչափ նպատակներ, մասնավորապես այլոց իրավունքների և արժանապատվության պաշտպանությունը՝ ի դեմս հանցագործության զոհերի հեշտակի, որը դիմողը հրապարակայնորեն որակում է որպես Թուրքերի դեմ իմպերիալիստական տերությունների ձեռքում գործիք, որոնց հարձակումները զուտ հայրենիքի պաշտպանություն էին և ուրիշ ոչինչ: Այն հավելում է, որ դիմողի՝ հրապարակայնորեն արտահայտած հայտարարությունների դատապարտումը արդարացված է նաև 10-րդ հոդվածի § 2-ով սահմանված կարգով:

74. Թուրքական կառավարությունը գտնում է, որ դիմումատուի դատապարտումը չի հետապնդում 10-րդ հոդվածի 2րդ կետով թվարկված և ոչ մի իրավական նպատակ: Պատասխանող կառավարությունը ամեն դեպքում չի ապացուցել, որ կիրառված միջոցները անհրաժեշտ են եղել հասարակական անվտանգության դեմ հատուկ և օբյեկտիվորեն գոյություն ունեցող վտանգը կանխելու համար:

75. Դատարանը գտնում է, որ վիճարկվող միջոցառումները ուղղված են եղել այլոց՝ ի դեմս 1915 թվականին հայ ժողովրդի նկատմամբ Օսմանյան կայսրության կողմից իրականացված վայրագությունների զոհերի ընտանիքների և հարազատների իրավունքների պաշտպանությանը: Այնուամենայնիվ այն գտնում է, որ Կառավարության փաստարկը այն մասին, որ դիմումատուի առաջարկները լուրջ վտանգ են ներկայացնում «կարգի» պահպանման համար բավականաչափ հիմնավորված չեն:

Բ. «Կարիքը՝ ժողովրդավարական հասարակությունում»

i. Կողմերի դիրքորոշումները:

- Դիմումատուն

76. Դիմումատուն գտնում է, որ իր՝ խոսքի ազատության իրավունքի սահմանափակումը չի համապատասխանում հետապնդվող նպատակներին և, մասնավորապես, ռասայական խտրականության և այ-

լատյացության կանխարգելմանը: 1948 թվականի ցեղասպանության հանցագործության կանխարգելման և ճնշման մասին Կոնվենցիայի 6-րդ հոդվածի վրա հիմնվելով՝ նա նաև պնդում է, որ հարցն այն է, որ իրավական տերմին հանդիսացող «ցեղասպանության» գոյությունը կարող է որոշվել միայն դատարանի կողմից:

77. Դիմումատուն կարծում է, որ վիճարկվող միջոցառումները անհրաժեշտ չեն եղել ժողովրդավարական հասարակությունում և որ իր հայտարարությունները դատապարտելը չի հետապնդել որևիցե սոցիալական գերակա շահ: Նա անհրաժեշտ չի համարում իր խոսքի ազատության սահմանափակումը այլոց իրավունքների և արժանապատվության և, մասնավորապես, հայ հասարակության արժանապատվության պաշտպանության համար: Բացի դրանից, դատապարտելով Շվեյցարիան կարող էր խախտել թուրքական հասարակության արժանապատվությունը, որը հերքում է «Հայոց ցեղասպանության» թեզիսը:

78. Դիմումատուն մերժում է ներքին գործերի մարմինների կարծիքը, որոնք իր ելույթի մեջ ազգայնական և ռասիստական առաջարկություններ են տեսնում: Ոգեշնչված միջազգային իրավունքով և, մասնավորապես, 1948 թվականի Կոնվենցիայով՝ նա շեշտադրում է կատարում այս թեզիսի իրավական բնույթի վրա:

79. Դիմումատուն, վկայակոչելով Հոլոքոստի հերքման վերաբերյալ Դատարանի մի շարք գործեր, պնդում է, որ էական տարբերությունն այն է, որ Հոլոքոստը Նյուրեմբերգյան դատարանի կողմից որակվել է որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն: Ավելին՝ այդ գործերի շրջանակներում Դատարանը հայտարարել է, որ դա տեղի է ունեցել հստակ սահմանված պատմական փաստերի առկայությամբ: *Լեհիդոն և Բսորնին ընդդեմ Ֆրանսիայի* գործի ժամանակ (1998 թվական սեպտեմբերի 23, § 55, Ժողովածու 1998-VII) Դատարանը նշել էր, որ բոլոր երկրները պետք է ջանք գործադրեն խաղաղ և թափանցիկորեն իրենց պատմությունը քննարկելու և բացահայտելու նպատակով: Տվյալ դեպքում վկայակոչելով 10-րդ հոդվածով սահմանված իրավախախտումը՝ Դատարանը պաշտպանում էր դիմումատուի հայտարարությունները, որի ներկայացուցիչը ավելի բարենպաստ լույսի ներքո գտնվող Մարշալ Պետեն էր: Նույն կերպ եղել էր նաև *Մինիսկին ընդդեմ Ֆրանսիայի* (No 64016/00, ECHR 2006) գործի ժամանակ, որը ծագել էր մի հրապարակման մեջ, որտեղ դիմումատուն ցանկանում էր

դոգմաների շրջանակների և դրանց՝ Հոլոքոստի ծագման հետ հնարավոր կապերի մասին դիրքորոշում առաջ բերել: Տվյալ գործով Դատարանը նշեց նաև, որ դա արտացոլումն է այն բանի, որ դիմումատուն՝ որպես լրագրող և պատմաբան ցանկացել է արտահայտել, և որ դա առաջնային է ժողովրդավարական հասարակությունում, որ մարդկության դեմ հացագործությունների կարևոր բաղադրիչ հանդիսացող փաստերի ծագմանը վերաբերող և դրանց հետ կապ ունեցող բանավեճերը հնարավոր լինի ազատորեն լուծել (§ 51): Նույն գործով Դատարանը նշել է, որ այն հայտարարությունները և տեքստերը, որոնք պարունակում են եզրակացություններ և ձևակերպումներ, որոնք կարող են վիրավորել, ցնցել կամ նույնիսկ որոշակի անհանգստություններ պատճառել, որպես այդպիսին, չեն կորցնում խոսքի ազատության օգուտը (*§ 52, տես նաև՝ De Haes և Gijssels ընդդեմ Բելգիայի, 1997 թվականի Փետրվարի 24-ի որոշում, § 46, Ժողովածու 1997-I*):

80. Դիմումատուն նշում է, որ Դաշնային դատարանի որոշումը հիմնականում հղում էր կատարում այն բանին, որ Շվեյցարիայի հասարակական կարծիքով և միջազգային մակարդակով Հայոց ցեղասպանությունը համարվում էր հստակ սահմանված փաստ: Մակայն, հաշվի առնելով, որ այս հարցի շուրջ կարծիքները տարբեր են, այդ ատյանի դատավորները փորձել են իրենց հանգստացնել կիրառելով «կոնսենսուսը միաբանություն չի նշանակում» արտահայտությունը (վճռի դիտ. 4.4): Դիմումատուն գտնում է, որ, ելնելով այս ձևակերպումից, Դաշնային դատարանը անտեսել կամ գոնե նվազագույնի է հասցրել այս դիրքորոշման կողմնակիցների կարծիքը և աշխատանքը: Ընդ որում, «կոնսենսուսի» այս հայեցակարգը պետք է զգուշությամբ օգտագործվեր գիտության ոլորտում, որի արդյունքները ենթակա են փոփոխության, մարտահրավերների և հաստատուն առաջընթացի:

81. Դիմումատուն պնդում է, որ իրենց կողմնակից շատ մարդիկ իր նման գտնում են, որ 1915 թվականի ողբերգական դեպքերը «ցեղասպանություն» որակվել չեն կարող (նա մեջբերում է 20 անձանց անուններ): Այդ անձինք պաշտպանում էին իրենց դիրքորոշումը: Մակայան Դաշնային դատարանը անտեսել է նրանց տեսակետները և բավարարվել է՝ ասելով, որ պատմություն գրելն իր գործը չէ: Վերջապես, դիմումատուն ընդգծում է, որ եզրակացնել, որ Դաշնային դատարանի կողմից Հայոց ցեղասպանությունը պաշտոնական հայտարարությամբ որպես «ցեղասպանություն» որակման ճանաչումից բազմիցս հրաժարվե-

լը կամայական էր:

82. Դիմումատուն հղում է կատարում նաև 2009 թվականի հոկտեմբերի 10-ին Ցյուրիխում կնքված «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման մասին արձանագրությանը» (դեռ ուժի մեջ չի մտել), որի համաձայն՝ երկու պետությունները պայմանավորվել են ստեղծել միջկառավարական հանձնաժողով եւ ենթահանձնաժողովներ, իրականացնել երկու ժողովուրդների միջև փոխվստահության վերականգնմանն ուղղված պատմական հարթության երկխոսություն, այդ թվում՝ պատմական փաստաթղթերի և արխիվների անկողմնակալ գիտական ուսումնասիրություն՝ առկա խնդիրների սահմանմանն ու առաջարկների ձևակերպման համար: Դրա համաձայն՝ պատմական հարցերի քննարկման համար հանձնաժողովների ստեղծումը նշանակում է, որ մենք չենք կարող խոսել «հստակ սահմանված փաստերի» մասին:

83. Դիմումատուն պնդում է, որ «ցեղասպանությունը» հստակ սահմանված միջազգային հանցագործություն է: Դրա իրավական հիմքն այսօր կլինեն 1948 թվականի Կոնվենցիայի 2-րդ հոդվածը, որի դրոյթների համաձայն՝ պետք է առկա լինի թվարկված գործողություններից որևէ մեկը, և որը պետք է կատարված լինի «ազգային, ռասայական, կրոնական կամ էթնիկ խումբը ամբողջապես կամ մասնակի ոչնչացնելու մտադրությամբ» (*dolus specialis*): Կոնվենցիայի կիրառումը ցեղասպանություն հանցագործությունը կանխելու և պատժելու վերաբերյալ գործով 2007 թվականի փետրվարի 26-ին կայացրած իր որոշման մեջ ՄՔԴ-ն հստակեցրել է «ցեղասպանություն» հասկացությունը: Այդ որոշման մեջ ՄՔԴ-ն նաև ընդգծել է, որ, օրինակ, խմբի կամ խմբի մի մասի տեղահանումը կարող է կազմել պատերազմի կամ մանդկության դեմ ուղղված հանցագործությունը, բայց որ այն անպայմանորեն չի համապատասխանում «ցեղասպանության» տարրերին: ՄՔԴ-ն նաև հիշեցրել է, որ ցեղասպանությունը ապացուցելու պնդումը դիմումատուին է պատկանում, և որ ապացուցման չափորոշիչները բարձր են:

84. Դիմումատուն հղում է կատարում նաև 2008 թվականի նոյեմբերի 18-ին թվագրված և Ազգային ժողովի նախկին նախագահ Բերնարդ Ակկոյերի (զեկուցող) կողմից ներկայացված Ֆրանսիայի Ազգային ժողովի հիշատակի հարցերի մասին տեղեկատվական զեկույցի (No 1262): Այս փաստաթղթի համաձայն՝ օրենսդիր իշխանությունը,

ընդունելով օրենքներ, չպետք է պետք է փոխարիներ դատարաններին՝ կապված որոշակի պատմական իրադարձությունների բաշխման հետ:

Զեկուցողը Ֆրանսիայի Սահմանադրության հետ անհամատեղելի է համարում պատմական փաստերը դատելը ննջում, որ դա կարող է վնաս հասցնել խոսքի և մտքի ազատությանը, ինչպես նաև պատմության գիտական հիմքին, պառակտել Ֆրանսիայի ժողովրդին և դիվանագիտական խնդիրներ առաջացնել: Նա ավելացնում է, որ Ֆրանսիայի սահմանադրական խորհրդի նախկին նախագահ Ռոբերտ Բադինտերի կարծիքը համընկնում է այս մտքին՝ հատկապես հաշվի առնելով, որ այն օրենքները, որոնք պատժում են «Հայոց ցեղասպանությունը» հերքողներին, հակասում են Ֆրանսիայի Սահմանադրության 34-րդ հոդվածին:

85. Դիմումատուն, վկայակոչելով Ստամբուլում ծնված Ստեֆան Յերասիմոսին, որը Փարիզի համալսարանի դասախոս է, կարծում է, որ «իրավունք» (*law*) և «պատմություն» հասկացությունների միջև տարբերակում մտցնելը շատ կարևոր է, որ առաջինի նպատակն է ապացուցել և դատել ինչ - որ բան, իսկ երկրորդը փորձում է բացատրել բաներ՝ առանց արժեքավոր դատողությունների: Նա պնդում է, հետևաբար, որ պատմական այս կամ այն փաստը միջազգային իրավունքի համաձայն որակելու իրավասությունը դատարաններին է պատկանում, և իրադարձությունները պետք է համակողմանի քննարկել՝ հաշվի առնելով հակասական փաստաթղթերի վրա հիմնված տեսակետների տարբերությունը: Ըստ իրենց անձնական համոզմունքների, այնուհետև համապատասխան հարցերի խորացման արդյունքում, ոմանք կարող են զգալ, որ պետք է ներողություն խնդրել կամ այլ նախաձեռնություններ կատարել, սակայն մյուսները կարող են այլ կերպ արձագանքել: Դիմումատուն գտնում է, որ սեփական համոզմունքները «ստանդարտացնելը» և «շղթայելը» ոչ մեկին չեն ծառայի, ավելին՝ չեն փոխի անհատների անձնական համոզմունքները:

86. Այս տարրերի հիման վրա, դիմումատուն պնդում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում:

- *Կատարությունը*

87. Ինչ վերաբերում է միջամտության անհրաժեշտությանը, կատարությունը նշում է, որ շվեյցարական դատարանները պետք է որոշեն, թե արդյո՞ք դիմումատուն ժխտել կամ նվազագույնի է հասցրել այն իրադարձությունները, որոնք միջազգային իրավունքի շրջանակ-

ներում միջազգային հանցագործություն են որակվում և ենթադրվում են հաստատված: Այս նպատակով, դատարանները ոչ թե հիմնված են միայն ճանաչման մասին քաղաքական հայտարարությունների վրա, այլ նրանք նաև գտնում են, որ փորձագիտական կարծիքներով կամ հաշվետվություններով կեղծված իշխանությունների համոզմունքը, որոնցից նրանք ծագում են, համարվում են հաստատականորեն պնդված և փաստաթղթավորված:

Նրանք նաև փորձում են հասկանալ՝ եղե՞լ է արդյոք համայնքի շրջանակներում մի ընդարձակ կոնսետուս, և եթե այո, ապա այդ կոնսետուսը 1915 թվականից մինչև 1917 թվականը կատարված ցեղասպանության փաստերի որակման վերաբերյալ մի լայն գիտական կոնսետուսի վրա է հիմնված եղել: Նրանք նաև նշել են, որ միջազգային քրեական իրավունքին նվիրված ընդհանուր գրականությունում, մասնավորապես ցեղասպանությունների ուսումնասիրմանը վերաբերողի մեջ, ներկայացված օրինակներից «դասականը» հենց հայոց ցեղասպանությունն է (Դաշնային դատարանի որոշում, դիտ. 4.2, վերոհիշյալ կետ 13):

Այդ պատճառով, չենք կարող մեղադրել ո՛չ կանտոնալ դատարաններին՝ ցեղասպանության 1915 թվականից 1917 թվականն ընկած ժամանակահատվածում կատարված բռնի տեղահանություններն ու ջարդերը որակելու և պատմական փաստերը հստակորեն սահմանելու համար, ո՛չ էլ Դաշնային դատարանին՝ այն եզրահանգմանը գալու համար, որ ընդհանուր կոնսետուսի գոյությունն այդ առումով կամայական էր և որ այդ պնդմանն ու պատմաբանների հանձնաժողով ստեղծելուն հավակնող Դաշնային խորհրդի թափանցիկ երկխոսության վերաբերյալ վերաբերմունքի միջև հակասություն չի եղել (Դաշնային դատարանի որոշում, դիտ. 4.4-ից 4.6):

88. Ինչ վերաբերում է դիմումատուի վարքագծին, վերջինս հրապարակայնորեն հայերին կոչել է թուրք ժողովրդի վրա հարձակվողներ, «միջազգային սուտ» անվանելով այն, ինչ որը լայն կոնսետուսի առարկա է և նույն մակարդակի վրա դնելով ԱՄՆ ը,Եվրոպայի Խորհուրդը և Ֆյուրերը: Բացի այդ, ըստ առաջին ատյանի դատարանի դատավորի դիմումատուն իրեն Թալեաթ Փաշա է անվանում, ով հարցականի տակ դրված իրադարձությունների համատեքստում առանցքային դեր է խաղացել: Ինչպես բացահայտել է Դաշնային դատարանը, հայկական համայնքն իրեն ճանաչում է որպես այդ իրադարձությունների մասնակից, այնպես, որ դիմումատուի փաստարկները վիրավոր

ում են նրա անդամների ինքնությունը (Դաշնային դատարանի որոշում, դիտ. 5.2):

89. Կառավարությունը գտնում է, որ այս ամենը բավարար է ցույց տալու դիմումատուի ռասիստական և ազգայնական շարժառիթները, որոնք ձգտում են վերականգնել կատարված գործողությունները և դրանց գոհերին մեղադրելու պատմությունը նենգափոխելու մեջ: Տվյալ գործի էությունը տարբերվում է այն իրավիճակից, որին Դատարանը ծանոթ էր *Jersild c. Danemark* (23 septembre 1994, série A No 298) իր որոշումից: Այդ գործում դիմումատուն ինքնին վիրավորական հայտարարություններ չի կատարել (§ 31) և իր գեկույցը չի կարող օբյեկտիվորեն համարվել ռասիստական գաղափարների և կարծիքների քարոզչության նպատակներ հետապնդող (§ 33):

90. Ավելին՝ Կառավարությունը նշել է, որ դիմումատուն ինքն է պնդել, որ երբեք չի փոխի իր դիրքորոշումը, նույնիսկ եթե մի չեզոք հանձնաժողով օրերից մի օր հաստատի, որ Հայոց Ցեղասպանությունը իրոք տեղի է ունեցել: Դիմումատուի կողմից պաշտպանվող փաստարկները նաև ցույց են տալիս, որ պատմական հարցման աշխատանք չի կատարվել: Ընդհակառակը, դրանք կասկածի տակ են առնում ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի հիմքում ընկած արժեքները: Վիրավորելով այդ թվում գոհերի հարազատներին, դրանք հակասում են Կոնվենցիայով հռչակված և երաշխավորված արժեքներին, մասնավորապես հանդուրժողականությանը, սոցիալական խաղաղությանը և անխտրականությանը:

91. Կառավարությունը նշում է նաև, որ դիմումատուին չեն խոչընդոտել՝ հրապարակավ արտահայտելու իր կարծիքը, և որ նմանատիպ բազմաթիվ միջոցառումներ են տեղի ունեցել: Ի հավելումն, Կառավարության աչքի առջև, դիմումատուի պատիժը սահմանվել է հետևյալ կերպ՝ 90- օրյա տուգանքի վճարումը 100 ՇՖ և 3 000 ՇՖ չափով, որոնցից առաջինը կասեցվել է, մինչդեռ քրեական օրենսգրքի 261-րդ հոդվածը որպես պատիժ նախատեսում է երեք տարվա ազատազրկում կամ 360-օրյա տուգանք՝ 3 000 ՇՖ չափով (քրեական օրենսգրքի 34-րդ հոդված): Հետևաբար, պատիժը չէր կարող համաչափ լինել հետապնդվող օրինական նպատակներին:

92. Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ ազգային դատարանները չէին գերազանցի իրենց օժտած հայեցողությունների սահմանը և, հետևաբար, 10-րդ հոդվածը չէր խախտվի:

- Թուրքական կառավարությունը՝ որպես երրորդ կողմ

93. Թուրքական կառավարությունը գործում ներգրավված երրորդ կողմը, էական է համարում հիշեցնել, որ դիմումատուն երբեք չի ժխտել 1915 թվականին նախկին Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած ջարդերը և բռնի տեղահանությունները:

Այն, ինչը կարելի էր վիճարկել, սակայն, միայն «ցեղասպանության» իրավաբանական որակումն էր՝ միջազգային և շվեյցարական իրավունքի իմաստով: Ըստ Թուրքական կառավարության 1915 թվականի իրադարձությունների իրավաբանական ասպեկտների վերաբերյալ շարունակական բանավեճի և «հստակ սահմանված պատմական փաստերի» հերքման միջև էական տարբերություն կա:

Թուրքական կառավարությունը հիշեցնում է, որ ոչ պատմական իրադարձությունների վերաբերյալ շարունակվող բանավեճի առարկայի հետ կապված հարցերը դատելն է Դատարանի խնդիրը, ոչ էլ դրանց մեկնաբանումը (տե՛ս մյուսների մեջ *Lehideux et Isorni c. France*, 23 septembre 1998, § 47, *Recueil* 1998-VII): Սակայն, ըստ նրա, 1915 թվականի իրադարձությունների որակումը միշտ էլ պատմաբանների միջև վեճի առարկա է:

94. Երրորդ կողմը նաև համոզված է, որ այդ քայլը անհրաժեշտ չէր ժողովրդավարական հասարակության համար: Նա պնդում է, որ դիմումատուն միակ անձնավորությունը չէ, որը գտնում է, որ դա իրավաբանական առումով ցեղասպանություն չէր: Այս կտրվածքով, երրորդ կողմը մեջբերում է 2008 թվականի մարտի 8-ին բրիտանական կառավարության ներկայացուցչի պատասխանի մի պարբերությունը բրիտանական խորհրդարանի ուղղած հարցին՝ «կառավարության դիրքորոշումն այդ հարցի վերաբերյալ վաղուց է կայացված: Կառավարությունը գիտակցում է պատմության այդ ողբերգական դրվագի մեծագույն վիշտը և ընդունում է, որ 1915-1916 թվականների գանգվածային ջարդերը ողբերգություն են »:

Մինչդեռ ո՛չ նա, ո՛չ իր նախորդները չեն գտնում, որ ապացույցները միանշանակ բավարար են մեզ համոզելու, որ այդ իրադարձությունները պետք է որպես ցեղասպանություն որակվեն, ինչպես որ սահմանված է Ցեղասպանության մասին ՄԱԿ-ի 1948 թվականի կոնվենցիայում» (ռեեստրի պարբերության թարգմանությունը վերարտադրվել է *British Year Book of International Law-nul*, հատոր 79, 2008 թ., էջ 706-707):

95. Թուրքական կառավարությունը նաև նշում է, որ ռասայական կամ այլ տեսակի խտրականության ներքո «Հայոց ցեղասպանության» հերքման համար Եվրոպայի խորհրդի ոչ մի անդամ պետությունում քրեական պատասխանատվություն չի կիրառվել: Նա ավելացնում է, որ ոչ մի պետություն «Հայոց ցեղասպանության» հերքման համար քրեական պատասխանատվություն նախատեսող օրենք չունի և որ, բացի Շվեյցարիայից, եվրոպական միայն երկու պետություններ՝ Լյուքսեմբուրգն ու Իսպանիան, ընդհանուր առմամբ ցեղասպանության հերքումը քրեականացնող օրենսդրություն ներդրել:

Ըստ երրորդ կողմի՝ սա հստակ ցույց է տալիս, որ մենք չենք կարող խոսել մի «հրատապ սոցիալական անհրաժեշտության» մասին 10-րդ հոդվածի 2-րդ մասին առնչվող Դատարանի իրականացրած արդարադատության իմաստով: Բացի դրանից, Շվեյցարիան, 1915 թվականին նախկին Օսմանյան Կայսրության տարածքում տեղի ունեցած իրադարձությունների հետ կապված, որևէ հատուկ պատմական նախադեպ չի ունեցել, որը կարող էր «հրատապ սոցիալական անհրաժեշտություն» ծնել՝ պատժելու մի մարդու, ով, հաշվի առնելով այս փաստերը, ռասայական խտրականության նկատառումով «ցեղասպանության» իրավաբանական որակումը վիճարկող հայտարարություններ է արել: Վերջապես, թուրքական կառավարությունը պնդում է, որ այն փաստը, որ դիմումատուն պատժվել է՝ առանց իր կարծիքը հրապարակավ արտահայտելու և նմանատիպ այլ միջոցառումներ իրականացնելուն խոչընդոտների, նույնպես նման անհրաժեշտության առկայությունը հերքող մի ապացույց է:

96. Թուրքական կառավարությունը կասկածում է, որ միջամտությունը դիմումատուի խոսքի ազատությանը համաչափ է եղել հետապնդվող նպատակներին: Այն չի ժխտում ռասայական խտրականության բոլոր ձևերի և դրսևորումների դեմ պայքարելու կենսական նշանակությունը: Այնուամենայնիվ, նա համոզված է, որ դիմումատուի դիտողությունները Շվեյցարիայում հայ համայնքի նկատմամբ բռնություն, թշնամանք և ռասայական ատելություն հրահրելու նպատակ չեն հետապնդել: Այստեղ հնարավոր չեղավ 1915 թվականի իրադարձությունների տրված իրավական բնորոշման՝ «ցեղասպանության» դիմումատուի կողմից հերքումը կապել ռասիստական և ազգայնական պատճառների կամ ռասայական ու էթնիկական նկատառումների վրա հիմնված խտրականության մտադրության հետ, ինչպես դա արել էին

շվեյցարական դատարանները: Այս առումով թուրքական կառավարությունը պնդում է, որ եթե Հոլոքոստի հերքումն այժմ հակասեմիտականության հիմնական շարժիչ ուժն է, 1915 թվականի իրադարձությունների համար նախատեսված «ցեղասպանություն» բնորոշման հերքումը չի կարող ունենալ նույն ազդեցությունը: Նմանատիպ իրավական բնորոշումներին մարտահրավեր նետելն ինքնին ոչ հրահրում և ոչ էլ քարոզում է համայնքի դեմ ատելություն: Եվ, վերջապես, ի տարբերություն Հոլոքոստի համար պատասխանատու ազգային սոցիալիստական ռեժիմի՝ դիմումատուի դեպքում բացակայում է այս կամ այն կառավարության վերականգնման ցանկությունը:

97. Հաշվի առնելով վերոհիշյալը՝ թուրքական կառավարությունը եզրակացնում է, որ տեղի է ունեցել 10-րդ հոդվածի խախտում:

- ii. *Դատարանի գնահատականը:*
 - *Կիրառելի սկզբունքները:*
 - α) Ընդհանրապես

98. Ընդհանուր սկզբունքները, որոնք թույլ են տալիս գնահատել խոսքի ազատության իրականացմանը միջամտության անհրաժեշտությունը, ամփոփված են *Մթուն ընդդեմ Շվեյցարիայի* ([GC], No 69698/01, § 101, CEDH 2007-V) որոշման մեջ և վերջերս կրկին նշվել են *Mouvement raëlien suisse ընդդեմ Շվեյցարիայի* ([GC], No 16354/06, § 48, CEDH 2012) և *Animal Defenders International ընդդեմ Մեծ Բրիտանիայի* [GC], No 48876/08, § 100, 22 ապրիլ 2013) որոշման մեջ:

«i. Խոսքի ազատության իրավունքը համարվում է ժողովրդավարական հասարակության էական հիմնաքարերից, դրա առաջընթացի և յուրաքանչյուրի զարգացման առարկայական պայմաններից մեկը: Հնդված 10-ի 2-րդ մասի համաձայն՝ դա վերաբերում է ոչ միայն այն «տեղեկատվությանը» կամ «գաղափարներին», որոնք դրական ազդեցություն ունեն, այլ նաև նրանց, որոնք վիրավորում, ցնցում կամ բխվում են. այդպիսիք են բազմակարծության, հանդուրժողականության և հայացքների ազատության պահանջները, առանց որոնց դա «ժողովրդավարական հասարակություն» համարվել չի կարող: Ինչպես ամրագրված է 10-րդ հոդվածում, հնարավոր է լինեն բացառություններ, որոնք, սակայն, պետք է ենթարկվեն նեղ և խիստ մեկնաբանության, և սահմանափակման ցակացած անհրաժեշտություն պետք է համոզիչ

կերպով սահմանված լինի:

ii. 10-րդ հոդվածի § 2-ի իմաստով «անհրաժեշտ» ածականը ենթադրում է «գերակա հանրային շահ»: Պայմանագրի կողմ հանդիսացող պետությունները նման անհրաժեշտության գնահատման դեպքում վայելում են հայեցողության որոշակի ազատություն, բայց դրանով կրկնապատկվում է եվրոպական վերահսկողությունը, որն արտահայտվում է ինչպես օրենսդրության և ի կատարումն դրա ընդունված որոշումների, այնպես էլ անկախ դատարանների որոշումների մեջ: Դատարանն այդպիսով իրավասություն է ձեռք բերում ընդունելու վեջնական որոշում այն մասին, որ «սահմանափակումը» համապատասխանեցված է խոսքի ազատությանը, որը պաշտպանվում է 10-րդ հոդվածով:

iii. Իր վերահսկողությունն իրականացնելիս Դատարանը խնդիր ունի ոչ թե փոփոխելու համապատասխան ներպետական մարմինները, այլ քննարկելու այդ մարմինների՝ իրենց հայեցողությամբ 10-րդ հոդվածի ներքո ընդունած որոշումները: Մրանից չի հետևում, որ այն պետք է սահմանափակվի այն հարցի գնահատմամբ, թե արդյոք պատասխանող պետությունը բարեխղճորեն, խնամքով և հիմնավորված կերպով է իրականացնում իր իրավունքը. նա պետք է ամբողջ գործի լույսի ներքո ուսումնասիրի վիճարկվող միջամտությունը, որպեսզի պարզի, թե արդյոք դա եղել է «հետապնդվող իրավաչափ նպատակին համապատասխան» և արդյոք որպես արդարացում տեղական իշխանությունների կողմից բերված պատճառները «տեղին են եղել և բավարար» (...) Ընդ որում, Դատարանը պետք է համոզվի, որ ազգային իշխանությունները կիրառում են օրենքները 10-րդ հոդվածով սահմանված սկզբունքներին համապատասխան և առավել ևս, հիմնվելով համապատասխան փաստերի ընդունելի գնահատման վրա (...):

β) Ինչ վերաբերում է պատմական հետազոտություններին և քննարկումներին

99. Դատարանը նաև նշում է, որ եթե պատմական ճշմարտության բացահայտմանն ուղղված հետազոտությունները հանդիսանում են խոսքի ազատության անբաժանելի մաս, ապա այդ պատմական հարցերի պարզումը իր խնդիրը չէ պատմաբանների՝ անընդհատ շարունակվող քննարկումների ժամանակ (տես, համապատասխան փոփոխություններով, Chauvy և այլոք, վերը նշված § 69, և Lehideux և Isorni, վերը նշված, § 47): Այնուամենայնիվ, տվյալ դեպքում Դատարանը

խնդիր ունի պարզելու, թե արդյոք միջոցառումներն անց են կացվել հետապնդվող նպատակին համապատասխան (*Monnat ընդդեմ Շվեյցարիայի*, No 73604/01, § 57, CEDH 2006-X).

100. Հարկ է հիշեցնել այն մասին, որ Կոնվենցիայի հոդված 10-ի պարագրաֆ 2-ը բացարձակ տեղ չի թողնում քաղաքական ելույթների կամ ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցերի բնագավառում խոսքի ազատության սահմանափակման համար (*Wingrove ընդդեմ Մեծ Բրիտանիայի*, 25 նոյեմբեր 1996, § 58, *ժողովածու* 1996-V, *Lingens ընդդեմ Ավստրիայի*, 8 հուլիս 1986, § 42, série A No103 ; *Castells ընդդեմ Իսպանիայի*, 23 ապրիլ 1992, § 43, série A No236, et *Thorgeir Thorgeirson ընդդեմ Իսլանդիայի*, 25 հունիս 1992, § 63, série A No239):

101. Դատարանը նաև նշում է, որ իր վերահսկողական իրավասությունն իրականացնելիս, նա պետք է վիճարկվող միջամտությունը դիտարկի ամբողջ գործի լույսի ներքո՝ ներառյալ դիմումատուի հայտարարությունների ամբողջ ծավալը և համատեքստը, որին նա հետևել է գործի ամբողջ ընթացքում (*Lingens*, վերը նշված § 40, և *Chauvy և այլք*, վերը նշված § 70):

102. Նշված սկզբունքը, համաձայն որի 10-րդ հոդվածը պաշտպանում է նաև վիրավորելու, ցնցելու կամ անհանգստություն պատճառելու ընդունակ տեղեկատվությունը կամ գաղափարները նույնպես իրենց տեղն ունեն պատմական բանավեճերի շրջանում, «բնագավառ, որտեղ վստահությունը քիչ հավանական է», ինչպես տվյալ դեպքում (տես, *Monnat*, վերը նշված § 63), և տարաձայնությունները միշտ առկա են (*Lehideux և Isorni*, վերը նշված § 55):

103. Ինչ վերաբերում է պատմության հարցերին վերաբերող բանավեճերին, Դատարանը արդեն առիթ ունեցել է նշելու, որ նա չպետք է բազմաթիվ տարիներ անցնելուց հետո պատմական իրադարձությունների վերաբերյալ որոշակի դատողություններ անի այն նույն խստությամբ, ինչ միայն մի քանի տարի առաջ կատարվածի վերաբերյալ: Նա միայն մասնակցում է այն ջանքերին, որ բոլոր պետություններին կոչ է արվել իրագործելու՝ իրենց պատմությունը ազատ և անաչառորեն քննարկելու նպատակով: (*Monnat*, վերը նշված § 64, և *Lehideux և Isorni*, վերը նշված § 55 ; տե՛ս նաև, *համապատասխան փոփոխություններով*, Editions Plon ընդդեմ Ֆրանսիայի, No58148/00, § 53, CEDH 2004-IV; այս վերջին որոշման մեջ Դատարանը հաստատեց այն սկզբունքը, որ ժամանակը պետք է անպայման հաշվի առնվի՝ գնահա-

տելու համար խոսքի ազատության արգելքի համատեղելիությունը, օրինակ՝ գրքինը):

104. Ինչ վերաբերում է միջամտության «համաչափությանը», Դատարանը նշել է, որ կիրառվող պատիժների բնույթն ու ծանրությունը նույնպես ուշադրության արժանի տարրեր են (տես, օրինակ, *Chauvy և այլք*, վերը նշված § 78):

Կ) Ատելության կոչերի, բռնություններ քարոզելու և հայկական հարցի վերաբերյալ Թուրքիայի դեմ գործերի իրավագիտությունը:

105. Բազմաթիվ գործերում, մասնավորապես ընդդեմ Թուրքիայի, դիմումատուները դժգոհում էին ատելության ելույթներով հանդես գալու կամ բռնություն հրահրելու համար իրենց դատապարտելուց: Ստորև բերվում են տվյալ գործի հետ կապ ունեցող մի քանի օրինակներ:

106. *Erdoğdu և İnce ընդդեմ Թուրքիայի* ([GC], No^s 25067/94 et 25068/94, CEDH 1999-IV) գործի ժամանակ ամսագրի միջոցով պառակտող քարոզչություն տարածելու համար դիմումատուները մեղավոր ճանաչվեցին, որոնցից մեկը ամսագրի գլխավոր խմբագիրն էր, իսկ մյուսը լրագրողը (§ 48): Դատարանը որոշեց, որ ամսագիրը հրապարակել է մի թուրք սոցիոլոգի հետ հարցազրույց, որում նա իր կարծիքն է արտահայտում թուրքական հանրապետությունում քրդական հարցի վերաբերյալ հնարավոր փոփոխությունների շուրջ: Նա գտել է, որ հարցազրույցը վերլուծական բնույթ է կրել և այնպիսի բովանդակություն չէր պարունակում, որը կարող էր բռնության հրահրում համարվել: Նա հայտնեց, որ այդ դեպքում ազգային իշխանությունները բավականաչափ հաշվի չեն առել հանրային իրավունքները, որպեսզի այլ տեսանկյունից ներկայացնեն Թուրքիայի հարավ-արևելքի իրադրությունը նույնքան տհաճ, որքան կարող է լինել իրենց համար:

Դատարանի կարծիքով, ի պաշտպանություն Ստամբուլի՝ պատճառներն առաջ են քաշվել դատարանի կողմից դիմումատուներին դատապարտելու համար, չնայած տեղին լինելուն, չեն կարող բավարար համարվել իրենց խոսքի ազատությանը միջամտելու արդարացման համար (§ 52):

37. *Gündüz ընդդեմ Թուրքիայի* (No 35071/97, CEDH 2003-XI) գործով դիմումատուն պատժվեց միջազգային իրավագիտության կողմից «ատելության կոչ» որակված հայտարարությունների համար: Միջազգային փաստաթղթերի և սեփական իրավագիտության լույսի ներքո

Դատարանն ընդգծեց մասնավորապես, որ հանդուրժողականությունը և բոլոր մարդկանց հավասար արժանապատվության հարգումը կազմում է ժողովրդավարական և բազմակարծ հասարակության հիմքն են: Սկզբունքորեն կարող է անհրաժեշտ համարվել ժողովրդավարական հասարակությունում սանկցավորել կամ նույնիսկ կանխել բոլոր այն արտահայտման ձևերը, որոնք տարածվում, հրահրում, նպաստում կամ արդարացման են անհանդուրժողականության վրա հիմնված ատելությունը (այդ թվում նաև կրոնական անհանդուրժողականությունը), եթե դա ապահովում է, որ ընդունված «ձևակերպումները», «պայմանները», «սահմանափակումները» կամ «պատիժները» կլինեն իրավական նպատակներին համապատասխանեցված (§ 40): Դատարանը նշել է, որ քննարկվող հարցը նվիրված է եղել մի աղանդի ներկայացնելուն, որի հետևորդները գրավել են հասարակության լայն շերտերի ուշադրությունը: Նրանց մոտ դիմումատուի կողմից հնչեցրած մեկնաբանությունները առաջ են բերել անզիջում վարքագիծ և խոր դժգոհություններ Թուրքիայի ժամանակակից ինստիտուտների նկատմամբ, ինչպիսիք են աշխարհիկությունը և ժողովրդավարությունը: Համատեքստում ուսումնասիրվելով, սակայն, դրանք չեն կարող համարվել ոչ բռնության կոչ և ոչ էլ կրոնական անհանդուրժողականության վրա հիմնված ատելության քարոզչություն (§ 48): Շարիաթի պաշտպանության գուտ փաստը, առանց դրա սահմանման համար բռնության կոչերի, չի կարող համարվել «ատելության քարոզչություն» (§ 51):

108. *Erbakan ընդդեմ Թուրքիայի* (No 59405/00, 6 juillet 2006) գործով դիմումատուն մեղավոր է ճանաչվել հրապարակային ելույթի համար, որի ժամանակ նա իբր մասնավորապես ատելություն և կրոնական անհանդուրժողականություն հրահրող հայտարարություններ է արել (§ 59): Դատարանը գտավ, որ ենթադրաբար իրականում հրապարակայնորեն արված հայտարարությունները հայտնի քաղաքական գործչի կողմից հանրահավաքի ժամանակ հետազայում ցույց են տվել հասարակության՝ բացառապես կրոնական արժեքների շուրջ ձևավորված տեսակետը, որը հետևաբար դժվարությամբ համատեղելի կլինի բազմակարծության հետ, որը բնութագրում է ժամանակակից հասարակությունը, որտեղ միմյանց դեմ հակամարտում են ծայրահեղ տարբեր խմբեր (§ 62): Ընդգծելով, որ անհանդուրժողականության բոլոր դրսևորումների դեմ պայքարը մարդու իրավունքների պաշտպանության բաղադրիչ տարր է, դատարանը գտել է, որ շատ կարևոր է, որ քաղաքա-

կան գործիչները իրենց հրապարակային ելույթների ժամանակ խուսափեն այնպիսի հայտարարություններ կատարելուց, որոնք կարող են նպաստել անհանդուրժողականության առաջացմանը (§ 64): Սակայն, հաշվի առնելով ժողովրդավարական հասարակությունում քաղաքական բանավեճերի ազատության հիմնական բնույթը, Դատարանը եզրակացրեց, որ դիմումատուի նկատմամբ իրականացվող հետապնդումն արդարացնելու նպատակով առաջ բերած պատճառները բավարար չէին համոզելու համար, որ անձի՝ գոյություն ունեցող խոսքի ազատությանը միջամտելը «անհրաժեշտ էր ժողովրդավարական հասարակությունում»:

109. *Դինքն ընդդեմ Թուրքիայի* (No^s 2668/07, 6102/08, 30079/08, 7072/09 և 7124/09, 14 սեպտեմբեր 2010) գործով դիմումատուն մեղավոր է ճանաչվել «թրքությունն» արատավորելու համար (*Türklük*): Դատարանն առաջին հերթին նշեց այն հոդվածների տեսակի ուսումնասիրությունը, որում դիմումատուն վիճարկվող հայտարարությունը կատարել էր, և հստակեցրեց, որ այն, ինչ նա որակել էր որպես «թույն» իրականում թուրքերի նկատմամբ հայերի «ընկալումն է», ինչպես նաև հայկական սփյուռքի քայլերի «հետապնդող» բնույթը՝ ուղղված Թուրքիայի կողմից 1915 թվականի իրադարձությունները ցեղասպանություն ճանաչելուն:

Դատարանը գտնում է, որ Ֆիրաթ Դինքը պնդում էր, որ այդ հետապնդումը, որով հայերը միշտ իրենց զգացել են որպես «զոհեր», թունավորել է հայկական սփյուռքի անդամների կյանքը և խոչընդոտել նրանց ինքնության զարգացումը ամուր հիմքի վրա: Դատարանը, ի տարբերություն թուրքական կառավարության դիրքորոշման, հանգեց այն եզրակացության, որ տվյալ հայտարարությունները, որոնք ուղղված չէին «թուրքերին», չեն կարող դիտարկվել որպես ատելության քարոզչություն (§ 128): Դատարանը նաև հաշվի է առել այն հանգամանքը, որ դիմումատուն խոսել է որպես թուրքական քաղաքական կյանքում իր դերն ունեցող հայկական փոքրամասնությանը վերաբերող հարցերն ընգրկող հայ-թուրքական երկլեզու թերթի գլխավոր խմբագիր և լրագրող: Երբ Ֆիրաթ Դինքը հայտնում էր իր դժգոհությունը ի դեմս այն վերաբերմունքի, որ համարվում է 1915 թվականի իրադարձությունների հերքում, նա ոչինչ չէր անում բացի ժողովրդավարական հասարակությունում ընդհանուր շահերին անվերապահորեն վերաբերող հարցի շուրջ իր գաղափարներն ու կարծիքները հայտնելուց:

Նախ և առաջ Դատարանը վճռեց, որ այնպիսի հասարակության մեջ, որտեղ որոշակի կշիռ ներկայացնող պատմական փաստերի վերաբերյալ բանավեճերը դեռ շարունակվում են, պետք է իրականացվեն ազատորեն: Նա նաև նշել է, որ «պատմական ճշմարտության փնտրտուքը հանդիսանում է խոսքի ազատության անբաժանելի մասը» և այն պատմական հարցը, որի շուրջ շարունակ ընթանում են քաղաքական քննարկումներ «իր միջամտության առարկա չէ»: Բացի դրանից, ըստ Դատարանի, Ֆիրաթ Դինքի կողմից գրված հոդվածները չունեն ոչ մի «անհիմն մեղադրական» և վիրավորական բնույթ և դրանք ոչ անհարգալից վերաբերմունք են հրահրում և ոչ էլ ատելություն (§ 135, հղումներով նախադեպային իսկություններ):

Այդ իսկ պատճառով, Ֆիրաթ Դինքին «թրքությունը» արատավորելու համար մեղավոր ճանաչելը չի համապատասխանում և ոչ մի «հանրային գերակա շահի»:

110. Մնում է քննարկել *Cox c. Turquie* (No 2933/03, մայիսի 20, 2010թ.) գործը, չնայած այն տարբերվում է վերոհիշյալ գործերից: Գործը հարուցվել էր 1980-ականներին՝ ԱՄՆ մի քաղաքացու կողմից, ով դատավանդում էր թուրքական երկու համալսարաններում: 1986 թվականին նա արտաքսվել է Թուրքիայից, որի պատճառն այն էր, որ նա, ուսանողների և գործընկերների առջև հայտարարել էր, որ «թուրքերը ձուլել էին քրդերին» և «արտաքսել ու կոտորել հայերին»:

Նա ևս երկու անգամ է արտաքսվել: 1996 թվականին նա քրեական գործ հարուցեց, որպեսզի իր վրայից հանվեր այդ արգելքը, բայց ապարդյուն: Դատարանը պնդել է, որ դիմումատու չէր կարող երկիր վերադառնալ իր քրդերի ու հայերի վերաբերյալ կատարած այն հայտարարությունների պատճառով, որոնք ոչ միայն Թուրքիայում, այլև միջազգային մակարդակի բոլոր քննարկումների տեղիք էին տվել:

Այնուամենայնիվ, Դատարանը եզրակացրել է, որ անհնար է որոշել, թե ազգային դատարանները ինչ պատճառաբանությամբ էին շահագրգիռ անձի կարծիքները վնասակար համարում Թուրքիայի ազգային անվտանգության համար: Բացի դրանից, Դատարանը չէր կարող ընդունել, որ «վիճարկելի իրավիճակը չի ընկնում դիմումատուի հիմնարար իրավունքի կիրառման տիրույթում»: Քանի որ շահագրգիռ անձը երբևէ ոչ որևէ խախտում է կատարել, ոչ մասնակից եղել այնպիսի մի գործողության, որն ակնհայտորեն կարող էր վնասակար դիտվել Թուրքիայի համար, ազգային դատարանների կողմից առաջ քաշված

պատճառաբանությունները խոսքի ազատության նրա իրավունքին միջամտելու բավարար և համապատասխան արդարացում համարվել չէին կարող:

- *Սկզբունքների կիրառումը սույն գործի նկատմամբ*

111. Դատարանը կարևոր է համարում նախ ճշգրտել այն, որ Օսմանյան Կայսրության կողմից 1915 թվականին հայ ժողովրդին բռնի տեղահանությունների և զանգվածային ջարդերի ենթարկելու էության վերաբերյալ որոշում ընդունել պետք չէ, ինչպես նաև քրեական օրենսգրքի 261-րդ հոդվածի 4-րդ կետի իմաստով իրավաբանորեն որակել «ցեղասպանության» այս փաստերը: Առաջին հերթին ազգային իշխանությունները, մասնավորապես դատարանները պետք է մեկնաբանեն և կիրառեն միջազգային իրավունքը (շատերի միջև տե՛ս *Lehideux et Isorni*, վերը նշված § 50): Դատարանի խնդիրը միայն 10-րդ հոդվածի տեսանկյունից ազգային դատարանների կողմից իրենց համոզմունքի հիման վրա կայացված որոշումները վերահսկելն է:

Պարզելու համար արդյո՞ք դիմումատուի դատապարտումը բխում է «հրատապ սոցիալական անհրաժեշտությունից», անհրաժեշտ է հավասարակշռել մի կողմից երրորդ անձանց՝ մասնավորապես վայրագությունների ենթարկված զոհերի ընտանիքների և բարեկամների արժանապատվության պաշտպանության պահանջները, մյուս կողմից՝ դիմումատուի խոսքի ազատության իրավունքը: Պետք է, մասնավորապես, ուսումնասիրել, թե վիճարկելի միջամտությունը, գործի հանգամանքների ամբողջության լույսի ներքո, համաչափ էր արդյոք հետապնդվող իրավաչափ նպատակին և արդյո՞ք ազգային իշխանությունների կողմից այն արդարացնելու համար բերված շարժառիթները տեղին էին և բավարար:

ա) Դիմումատուի խոսքի բնույթը և ներպետական դատարաններին օժտած հայեցողության սահմանը

112. Դատարանը նշում է, որ վիճարկելի չէ այն, որ 1915 թվականի և դրան հաջորդող տարիների դեպքերը որպես «ցեղասպանություն» որակելու թեման հանրության համար կարևոր հետաքրքրություն է առաջացնում: Դիմումատուի միջամտությունները հակասական և բուռն քննարկման մասն են կազմում: Ինչ վերաբերում է իր կողմից առաջ քաշված քննարկմանը, Դատարանը հիշեցնում է, որ նա իրավաբանական գիտությունների դոկտոր է և Թուրքիայի Աշխատավորական կուսակցության նախագահը: Բացի դրանից, նա իրեն համարում է գրող և

պատմաբան: Չնայած նրան, որ ներպետական դատարանները նրա այս դիտարկումները ավելի «ռասիստական» և «ազգայնական» են համարել, քան թե պատմական (Դաշնային դատարանի դիտ. 5.2, վերոնշյալ 13-րդ կետ), դիմումատուի հայտարարությունների և փաստարկների էությունն, այնուամենայնիվ, պատմության համատեքստում են գտնվում, ինչպես ցույց է տալիս, մասնավորապես, այն փաստը, որ միջամտություններից մեկն էլ տեղի է ունեցել 1923 թվականի Լոզանի պայմանագրին նվիրված գիտաժողովի ընթացքում: Բացի դրանից, դիմումատուն նաև որպես քաղաքական գործիչ է արտահայտվել այն հարցի մասին, որը վերաբերում էր Պետությունների միջև եղած հարաբերություններին, այն է՝ մի կողմից Թուրքիայի, մյուս կողմից՝ Հայաստանի, պետություն, որի ժողովուրդը գանգվածային ջարդերի և բռնի տեղահանությունների զոհ է դարձել: Ինչ վերաբերում է հանցագործության որակմանը, այս հարցը նույնպես իրավական բնույթի էր: Ըստ այդմ, դատարանը գտնում է, որ դիմումատուի ելույթը, ամենայն հավանականությամբ, պատմական, իրավական և քաղաքական բնույթի է եղել:

113. Հաշվի առնելով վերոշարադրյալը և, մասնավորապես, դիմումատուի ելույթի հանրային շահը, Դատարանը գտնում է, որ ներպետական իշխանությունների հայեցողությունը կրճատված է եղել:

Բ) Ներպետական դատարանների կողմից ընդունված մեթոդը ուղղված դիմումատուի դատապարտման հիմնավորմանը. «կոնսետուսի» հասկացությունը

114. Շվեյցարական դատարանների և պատասխանող կառավարության կողմից առաջ քաշված էական շարժառիթը «ընդհանուր կոնսետուսն» է, որը, թվում է, գոյություն ունի, մասնավորապես, գիտական շրջանակում՝ կապված վիճարկելի իրադարձությունների իրավաբանական որակման հետ: Դատարանը չի վիճարկում այն, որ առաջին հերթին ազգային իշխանությունները, մասնավորապես դատարանները պետք է մեկնաբանեն և կիրառեն ներպետական իրավունքը (*Winterwerp c. Pays-Bas*, 1979 թ, հոկտեմբերի 24-ի որոշում, série A No 33, § 46): Նա, այնուամենայնիվ, նպատակահարմար է համարում ներպետական դատարանների կողմից «կոնսետուս» հասկացության կիրառման վերաբերյալ ավելացնել հետևյալը:

115. Դաշնային դատարանն ինքնին ընդունում է, որ վիճարկելի իրավաբանական որակման վերաբերյալ համայնքի ներսում միաբա-

նություն չկա: Դիմումատուն և թուրքական կառավարությունը պատասխանող կառավարության կողմից չվիճարկվող բազմաթիվ աղբյուրներ են առաջ քաշում, որոնք տարբեր կարծիքների տեղիք են տալիս: Ըստ նրանց՝ մի «ընդհանուր կոնսետուսի» մասին խոսելն այդքան էլ դժվար չէ: Դատարանը կիսում է այս կարծիքը՝ հիշեցնելով, որ նույնիսկ Շվեյցարիայի քաղաքական մարմինների շրջանակներում կան տարբեր տեսակետներ. Մինչդեռ Ազգային խորհուրդը, այսինքն՝ դաշնային խորհրդարանի ստորին պալատը, պաշտոնապես ընդունել է Հայոց Ցեղասպանությունը, Դաշնային խորհուրդը բազմիցս մերժել է դա անել (տե՛ս Դաշնային դատարանի դիտ. 4.2 և 4.5, վերոհիշյալ 13-րդ կետը): Բացի դրանից, պարզվում է, ներկայումս (աշխարհի 190 պետություններից) միայն քսան պետություններ են պաշտոնապես ճանաչել Հայոց Ցեղասպանությունը: Երբեմն, ինչպես Շվեյցարիայում, ճանաչումը կախված չէ տվյալ պետությունների կառավարություններից, այլ միմիայն նրանց խորհրդարանից կամ վերջինիս պալատներից մեկից (այս առումով տե՛ս Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի որոշ անդամների՝ 2013 թվականի ապրիլի 24-ին թվագրված հռչակագիրը, վերոնշյալ 29-րդ կետը):

116. Ավելին՝ Դատարանը, համաձայնելով դիմումատուի հետ, գտնում է, որ «ցեղասպանությունը» իրավաբանորեն սահմանված հասկացություն է: Այն միջազգայնորեն անիրավ արարք է, որը մեր օրերում կարող է պատասխանատվություն առաջացնել թե՛ պետության համար՝ 1948 թվականի Կոնվենցիայի 2-րդ հոդվածով (վերոհիշյալ 18-րդ կետ), թե՛ անհատի համար, մասնավորապես, Հռոմի Կանոնադրության հիման վրա (վերոհիշյալ 20-րդ կետ): Ըստ ՄՔԴ-ի և Ռվանդայի Միջազգային քրեական տրիբունալի դատական պրակտիկայի՝ (վերոհիշյալ 21-23-րդ կետերը), որպեսզի հանցանքը համարվի ցեղասպանություն, խմբի անդամները, որոնց դեմ այն ուղղված է, ոչ միայն պետք է թիրախ դառնան իրենց՝ այդ խմբին պատկանելու պատճառով, այլև այդ գործողությունները պետք է կատարված լինեն նման խմբին լրիվ կամ մասնակի ոչնչացնելու մտադրությամբ (*dolus specialis*):

Հետևաբար, այն վերաբերում է իրավաբանական շատ նեղ հասկացության, որի ապացուցումն, ընդ որում, շատ բարդ է: Դատարանը համոզված չէ, որ «ընդհանուր կոնսետուսը», որին անդրադարձել են շվեյցարական դատարանները՝ արդարացնելու համար դիմումատուի դատապարտումը, կարող է ուղղվել օրենքի այդ խիստ առանձնահա-

տուկ կետերին:

117. Ամեն դեպքում նույնիսկ կասկածելի է, որ այնտեղ կարող է «ընդհանուր կոնսետուս» լինել մասնավորապես առանձնահատուկ այն իրադարձություններում, որոնք այստեղի հարցն են կազմում, ինչպես պատմական հետազոտությունները հակասական են և վիճելի իրենց սահմանմամբ, որոնց որոշակի հստակ եզրակացություններ կամ օբյեկտիվ ու բացարձակ ճշմարտություններ չեն տրվում (տե՛ս, այս առումով, Իսպանիայի սահմանադրական դատարանի No 235/2007 որոշումը, վերոնշյալ 38-40 կետերը): Այս առումով, սույն գործը հստակ տարանաջատում է Հոլոքոստը հերքելու հանցագործության վերաբերյալ գործերը (տե՛ս, օրինակ, *Robert Faurisson c. France* գործը, որոշված 1996 թվականի նոյեմբերի 8-ին Միավորված ազգերի Մարդու իրավունքների հանձնաժողովի կողմից, ծանուցում թիվ 550/1993, փաստաթուղթ CCPR/C/58/D/550/1993 (1996)): Առաջին, դիմումատուներն այդ գործերում չեն վիճարկել զուտ մեկ հանցագործության իրավաբանական որակումը, այլ մերժել են պատմական փաստեր, երբեմն շատ կոնկրետ, օրինակ՝ գազի խցիկների գոյությունը: Երկրորդ, նացիստական ռեժիմի կողմից կատարված հանցագործությունների հերքումը, որոնց գոյությունը այս անձինք հերքում էին, ուներ հստակ իրավական հիմք, այն է 1945 թվականի հուլիսի 8-ի Լոնդոնյան համաձայնագրին կցված Միջազգային զինվորական դատարանի կանոնադրության 6-րդ հոդվածով (վերոհիշյալ 19-րդ կետը): Երրորդ, շահագրգիռ անձանց կողմից կասկածի տակ առնված պատմական փաստերը դատվել են հստակ սահմանված միջազգային արդարադրության դատարանի կողմից:

118. Հետևաբար, Դատարանը գտնում է, որ ներպետական դատարանների կողմից դատապարտումը հիմնավորելու մեթոդը կասկածի տեղիք է տալիս:

γ) Հրատապ սոցիալական անհրաժեշտության լինելու կամ չլինելու վերաբերյալ

119. Դատարանը, հարցը դիտարկելով Գոնվենցիայի 17-րդ հոդվածի կիրառելիության տեսանկյունից, գտել է, որ դիմումատուն, հավանաբար, ատելություն կամ բռնություն չի հրահրել(վերոհիշյալ 51-54-րդ կետերը): Բացի դրանից նա կիսում է թուրքական կառավարության կարծիքը, որի համաձայն Հոլոքոստի հերքումն այսօր հակասեմիտականության հիմնական շարժիչն է: Իրականում նա գտնում է, որ

այն վերաբերում է մի երևույթի, որը կրկին արդիական է և ընդդեմ որի միջազգային հանրությունը պետք է ամուր և զգոն կանգնի: Չենք կարող հաստատել, որ «ցեղասպանության» իրավաբանական որակման հերքումը 1915 թվականին և դրան հաջորդող տարիներին տեղի ունեցած ողբերգական իրադարձությունների համար չի կարող նույն ազդեցությունն ունենալ:

120. 2006 թվականի դեկտեմբերի 19-ին Շվեյցարիայի համեմատական իրավունքի ինստիտուտի կողմից տարված վերոհիշյալ հետազոտությունը (վերոշարադրյալ 30-րդ կետը), որն իրականացվել է Դատարանի առջև շվեյցարական կառավարության կողմից, նաև պարզում է, որ վերլուծված 16 պետությունների մեջ միայն երկուսը, այն է՝ Լյուքսեմբուրգն ու Իսպանիան էին, որ ընդհանուր առմամբ, առանց սահմանափակվելու նացիստական ռեժիմի կողմից կատարված հանցագործություններով, քրեականացնում էին ցեղասպանության հերքումը:

Մնացած բոլոր պետությունները, ըստ երևույթին, չեն զգացել «հրատապ սոցիալական անհրաժեշտությունը»՝ նման օրենսդրություն ապահովելու համար: Այս առումով Դատարանը գտնում է, որ թուրքական կառավարության առջև Շվեյցարիան, 1915 թվականին նախկին Օսմանյան Կայսրության տարածքում տեղի ունեցած իրադարձությունների հետ կապված չի ապացուցել, թե ինչպես ինքն ուներ ավելի ուժեղ «հրատապ սոցիալական անհրաժեշտություն», քան մյուս երկրները՝ պատժելու մի մարդու, ով հաշվի առնելով այս փաստերը, ռասայական խտրականության նկատառումով «ցեղասպանության» իրավաբանական որակումը վիճարկող հայտարարություններ է արել:

121. Բացի դրանից, սկսած այդ հետազոտության հրապարակումից՝ 2006 թվականից, երկու կարևոր զարգացումներ են տեղի ունեցել: Ամենից առաջ, 2007 թվականի նոյեմբերի 7-ի որոշմամբ (No 235/2007), Իսպանիայի սահմանադրական դատարանը ցեղասպանության «հերքման» հանցագործությունը հակասահմանադրական է ճանաչել՝ քրեական օրենսգրքի 607.2 հոդվածի առաջին ենթակետով (վերոնշյալ 36-38 պարբերությունները): Այն, մասնավորապես, գտել է, որ զուտ ցեղասպանության հանցագործության ժխտումը չի ենթադրում բռնության անմիջական հրահրում և որ գիտական փաստերի առկայության կամ բացակայության վերաբերյալ սովորական եզրահանգումների տարածումը, առանց դրանց արժեքի կամ անօրինական բնույթի մասին որոշում կայացնելու, պաշտպանված էր գիտական ազատությամբ (նույ-

նը):

122. Այնուհետև, Ֆրանսիայի Մահմանադրական խորհուրդը հակասահմանադրական է ճանաչել օրենսդրությամբ ճանաչված ցեղասպանությունների գոյության վիճարկումը ճնշող օրենքը (վերոնշյալ 33-րդ պարբերությունը): Նա այն մասնավորապես հակասող է ճանաչում խոսքի և հետազոտություններ կատարելու ազատություններին՝ հստակեցնելով, որ «խոսքի և տեղեկատվության ազատությունը շատ ավելի արժեքավոր է, քան դրա իրականացումը, այն ժողովրդավարության նախապայման է և այլոց իրավունքների ու ազատությունների հարգման երաշխիքներից մեկը, որ այդ ազատության իրականացման խախտումը հետապնդած նպատակի համար պետք է լինի անհրաժեշտ, տեղին և համաչափ և որ «պատժելով նաև հանցագործություն համարելով այլակարծությունը՝ օրենսդիրը խոսքի և տեղեկատվության իրականացման հակասահմանադրական խախտում է թույլ տվել» (դիտ.6):

123. Եթե նույնիսկ այն ձևականորեն չվերաբերեր իր պահանջած նախադեպերին, Դատարանը չէր կարող անտարբեր մնալ այդ զարգացումների նկատմամբ: Այդ առումով նա հիշեցնում է, որ Ֆրանսիան 2001 թվականի մի օրենքով ուղղակիորեն ճանաչել է Հայոց ցեղասպանությունը: Նա գտնում է, որ Մահմանադրական խորհրդի որոշումը հիանալի ցույց է տալիս, որ *a priori* հակասություն չկա մի կողմից որոշակի իրադարձությունների, ինչպիսին է ցեղասպանությունը պաշտոնական ճանաչման, մյուս կողմից՝ պաշտոնական կարծիքը հարցականի տակ դնող մարդկանց համար քրեական պատիժների հակասահմանադրականության միջև: Հայոց ցեղասպանությունը ճանաչած պետությունները, մեծ մասը դա անելով իրենց խորհրդարանների միջոցով, անհրաժեշտ չեն համարել քրեական պատիժ նախատեսող օրենքի ընդունումը գիտակցելով, որ խոսքի ազատության հիմնական նպատակներից մեկն էլ փոքրամասնության տեսակետը պաշտպանելն է, որոնք, հնարավոր է, խթանեն ամբողջովին չսահմանված, հանրային շահ հետապնդող հարցերի մասին քննարկումը:

124. Բացի դրանից, Դատարանը հիշեցնում է, որ ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովը 2011 թվականին կարծիքի ու խոսքի ազատությանը նվիրված իր Քաղաքական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 19-րդ հոդվածին համապատասխան, թիվ 34 Ընդհանուր դիտարկման շրջանակներում արտահայտել է իր համոզ-

մունքն, որի համաձայն՝ «այն օրենքները, որոնք քրեականացնում են կարծիքի արտահայտումը պատմական փաստերի վերաբերյալ, անհամատեղելի են Դաշնագրի կողմից անդամ պետությունների առջև դրված պարտավորությունների հետ (...) «(Ընդհանուր դիտարկման 49-րդ պարբերություն՝ վերոնշյալ 27-րդ կետը): Հանձնաժողովը նաև հայտնել է իր այն համոզմունքը. «Դաշնագիրը չի ընդունում թյուր կարծիքի արտահայտման ընդհանուր արգելքները կամ անցյալի իրադարձությունների սխալ մեկնաբանումը» (նույնը):

125. Վերջապես, պետք է նաև նշել, որ տվյալ դեպքը հայկական հարցի համատեքստում Քրեական օրենսգրքի հոդված 261՝ ի վրա հիմնված անձի առաջին դատապարտումն է: Դեռ ավելին՝ դիմումատուն 11 այլ թուրք քաղաքացիների հետ միասին արդարացվեց 2001 թվականի սեպտեմբերի 14-ին Berne-Laupen-ի շրջանային դատարանում տվյալ դրույթի ցեղասպանության հերքման մեղադրանքով:

126. Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ Դատարանը կասկածում է, որ դիմումատուի դատապարտումը պահանջված է եղել «հանրային գերակա շահով»:

ձ) Նշված նպատակին հասնելու միջոցների համաչափությունը:

127. Դատարանը նաև նշել է, որ իրականացված պատիժների բնույթն ու ծանրությունը նաև այնպիսի գործոններ են, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել միջամտության համաչափությունը գնահատելու ժամանակ (տես, օրինակ, *Chauvy* և այլոք ընդդեմ Ֆրանսիայի, վերը նշված § 78): Բացի դրանից, Դատարանը պետք է համոզվի, որ պատիժը չի պարունակում գրաքննության որևէ տեսակ, որը կհանգեցնի քննադատություն արտահայտելուց ձեռնպահ մնալուն: Հանրային շահերի թեմայով բանավեճերի համատեքստում նմանատիպ պատիժը վտանգ է ներկայացնում խանգարել հանրության կյանքին վերաբերող հարցերի հրապարակայնորեն քննարկումներին (*Stoll*, վերը նշված § 154): Այս առումով հնարավոր է, որ նույն դատապարտումը ավելի մեծ կարևորություն ներկայացնի քան կիրառված պատժի բնույթն է (տես, օրինակ, *Jersild*, վերը նշված § 35 կամ *Lopes Gomes da Silva* ընդդեմ Պորտուգալիայի, թիվ 37698/97, § 36, ECHR 2000 X):

128. Այս դեպքում դիմումատուն դատապարտվել էր 90 օր-յա 100-ական ՇՖ տուգանք վճարելու, որը կասեցվել էր 2 տարով՝ որպես 3000 ՇՖ տուգանք, որը փոխարինելի էր 30 օրվա ազատազրկումով, ինչպես նաև՝ 1000 ՇՖ բարոյական վնասի հատուցմամբ՝ հայ-շվեյցարական ա-

սոցիալական օգտին: Դատարանը գտավ, որ չնայած այս սանկցիաները, որոնցից մեկը կարող է փոխարինվել ազատազրկմամբ, հանդիսանում են համեմատական ծանրության սանկցիաներ, դրանք ամեն դեպքում կարող են ունենալ վերը շարադրված խոչնդոտները:

ե) Եզրակացություններ:

129. Հաշվի առնելով շարադրվածը և հատկապես, համեմատական իրավունքի տարրերի լույսի ներքո Դատարանը գտնում է, որ ազգային իշխանությունների կողմից դիմումատուին դատապարտելու համար առաջ քաշված պատճառաբանություններից ոչ բոլորն են տեղին և միասին վերցրած՝ բավարար չեն: Ներպետական մարմինները չեն ցուցադրել մասնավորապես այն, որ դիմումատուի դատապարտումը հանդիսանում է «հանրային գերակա շահ» կամ այն անհրաժեշտ է եղել ժողովրդավարական հասարակությունում 1915 թվականին և հաջորդող տարիներին վայրագությունների գոհերի հետևորդների պատվի և զգացմունքների պաշտպանության համար: Ներպետական մարմինները գերազանցել են իրենց օժտած հայեցողությունների սահմանը, որը վերաբերվում է որոշակի հանրային շահի ներքո գտնվող բանավեճին:

130. Այսպիսով, տեղի է ունեցել Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԱՅԻ 7-ԸՂ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱՄՏՄԱՆ ՄԱՍԻՆ

131. Հաշվի առնելով, որ Շվեյցարիայի Քրեական օրենսգրքի 261-րդ հոդվածի 4-րդ կետի ձևակերպումը շատ անորոշ է, դիմումատուն պնդում է նաև, որ իր քրեական դատապարտումը խախտում է Կոնվենցիայի 7-րդ հոդվածով սահմանված «չկա պատիժ առանց օրենքի» սկզբունքը:

132. 7-րդ հոդվածի նկատմամբ այս բողոքը չի բարձրացնում Դատարանի կողմից Կոնվենցիայի 10-րդ հոդվածի դեմ բերված բողոքի տեսանկյունից քննված հարցերից և ոչ մեկը, մասնավորապես վիճարկվող միջամտության համար իրավական հիմքի գոյության վերաբերյալ հարցը (վերը շարադրված 66-72 պարբերություններ): Այն նաև չի վերաբերվել վարույթի մասնակիցներին:

133. Հետևաբար կարիք չկա քննելու Կոնվենցիայի 7-րդ հոդվածի նկատմամբ բողոքի առանձին թույլատրելիությունը և հիմնավորվածությունը:

III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԱՅԻ ԱՅԼ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱՄՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

134. Հղում կատարելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի վրա՝ դիմումատուն լրացուցիչ բողոք է ներկայացնում առ այն, որ շվեյցարական կառավարության կողմից չի ստացել վիզա և հետևաբար չի կարողացել հանդիպել իր պաշտպանին դատական քննության ժամանակ: Դիմումատուն նաև բողոքում է, որ Լուիզիանայի շրջանային դատարանը և Դաշնային դատարանը ձեռնպահ են մնացել իր կողմից ներկայացված որոշակի փաստաթղթեր քննելուց: Բացի այդ, թույլ է տրվել «ապացույցների գնահատման մեծ սխալ»։ նշված դատարանները անհիմն կերպով ձեռնպահ են մնացել Bern-Laupen-ի շրջանային դատարանի վճիռը հաշվի առնելուց (2001 թվականի սեպտեմբերի 14-ի որոշում, վերը շարադրված 17-րդ պարբերություն):

135. Վերջապես, դիմումատուն հղում կատարեց Կոնվենցիայի 14, 17 և 18-րդ հոդվածներին, որոնց համաձայն՝ շվեյցարական դատարաններն իրենց որոշումներում իր նկատմամբ խտրական տերմիններ են օգտագործել:

136. Դատարանը գտնում է, որ չնայած այդ բողոքները բավականաչափ փաստազրկված և հասկանալի էին, սակայն դրանք անհիմն են և/կամ ներպետական մարմինների կողմից չեն կիրառվել Կոնվենցիայի 35-րդ հոդվածի § 1-ի պահանջներին համապատասխան:

137. Այստեղից հետևում է, որ այդ բողոքները ակնհայտորեն անհիմն են և պետք է մերժվեն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին և 4-րդ մասի համապատասխան:

IV. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ԸՂ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ

138. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն:

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ նրան կից Արձանագրությունների խախտում, և եթե պայմանագրի Բարձր մասնակցի ներպետական մարմինների իրավունքները թույլ չեն տալիս ամբողջովին վերացնել այդ խախտման հետևանքները, Դատարանը անհրաժեշտության դեպքում տուժած կողմին տալիս է արդարացի փոխհատուցում»:

A. Վնաս

139. Դիմումատուն պահանջում էր 20 000 եվրո (EUR)՝ որպես նյութական վնասի հատուցում՝ առանց նշելու վնասի բնույթը: Բացի դրանից, նա պահանջում էր 100 000 եվրո այն բարոյական վնասի համար,

որ ինքը կրել է:

140. Պատասխանող կարավարությունը պնդեց, որ դիմումատուն չի ապացուցել, որ նա, փաստորեն կրել է նյութական վնաս, առավել ևս, որ նա ցույց չի տվել, որ իրականում վճարել է 3000 շվեյցարական ֆրանկ (CHF) և 1000 ՇՖ, որն ինքը պետք է վճարեր Հայաստան-Շվեյցարիա ասոցիացիային: Ինչ վերաբերում է բարոյական վնասին, Կառավարությունը պնդեց, որ 10-րդ հոդվածի խախտման ուղղակի ճանաչումն ինքնին արդեն արդարացի փոխհատուցում է:

4. Դատարանը պատասխանող կառավարության հետ մեկտեղ գտնում է, որ նյութական վնասի հատուցման պահանջը բավականաչափ հիմնավորված չէ:

5. Ինչ վերաբերում է բարոյական վնասին, Դատարանը կարծում է, որ գործի բոլոր հանգամանքների լույսի ներքո վնասի հատուցման համար բավական է խախտման ճանաչումն այն մասին, որ կիրառված դատապարտումը հակասում է 10-րդ հոդվածին:

6. Այստեղից հետևում է, որ չկա վնասի հատուցման որևէ դրամական փոխհատուցում:

Բ. Ծախսեր և Պահումներ

7. Դիմումատուն պահանջել է նաև 20 000 եվրո պահումների և ծախսերի համար, որ նա կրել է իր, ինչպես նաև իր պաշտպանի և փորձագետների տեղաշարժերի պատճառով:

8. Կարավարությունը հետևում է իր հիմնական պնդմանը, ըստ որի՝ պետք չէ դիմումատուին որևիցե գումար վճարել, քանի որ պահանջները բավականաչափ հիմնավորվախ չեն: Որպես այլընտրանք՝ կարելի է 9000 ՇՖ համարել ներպետական դատարանների և Դատարանի վարույթի բոլոր ծախսերն ու պահումները մարդ գումար:

9. Դատարանի նախադեպի համապատասխան, դիմումատուն չի կարող իր ծախսերի և պահումների դիմաց փոխհատուցում ստանալ, բացի այն չափից, որն իրականում սահմանված է, անհրաժեշտ և իր բնույթով ողջամիտ: (*Philis ընդդեմ Հունաստանի (N1)*, 27 օգոստոս 1991, § 74, série A N209): Այս դեպքում և հաշվի առնելով այս և իր տիրապետման ու ընդդատության տակ գտնվող փաստաթղթերը՝ Դատարանը որոշեց, որ դիմումատուի պահանջները բավականաչափ հիմնավորված չեն: Ուստի նա մերժում է դրանք:

10. Այստեղից հետևում է, որ դատական ծախսերի և պահումների հատուցման որևիցե գումար չի վճարվում:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ

1. Հայտարարում է միաձայն բողոքի դիմումն ընդունելի է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի իմաստով և անընդունելի 6, 14, 17 և 18-րդ հոդվածների իմաստով:

2. Որոշում է հինգ ձայնը երկուսի դեմ հարաբերակցությամբ, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում:

3. Որոշում է միաձայն, որ կարիք չկա առանձին քննելու Կոնվենցիայի 7-րդ հոդվածի դեմ բերված բողոքի ընդունելիության հարցը և հիմնավորվածությունը:

4. Որոշում է հինգ ձայնը երկուսի դեմ հարաբերակցությամբ, որ 10-րդ հոդվածի խախտման փաստն ընդունելն ինքնին դիմումատուի կրած ցակացած ոչ նյութական վնասի բավականաչափ արդարացի փոխհատուցում է:

5. Մերժում է միաձայն մնացյալ արդարացի փոխհատուցման պահանջները:

Կատարված է ֆրանսերեն, գրավոր ծանուցվել է 2013 թվականի դեկտեմբերի 17-ին՝ համաձայն կանոնակարգի 77-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի:

Քարտուղար
Նախագահ

Այս որոշմանն են կցվում Կոնվենցիայի հոդված 45-ի 2-րդ մասի և կանոնակարգի հոդված 74-ի 2-րդ մասի համապատասխան հետևյալ առանձին կարծիքները՝

– Raimondiet և Sajó դատավորների միասնական, համընկնող կարծիքը

– Vučinić et Pinto de Albuquerque դատավորների մասնակիորեն չհամընկնող կարծիքները

G.R.A.
S.H.N.

ԴՍՏԱՎՈՐՆԵՐ ՌԱՅՄՈՆԴԻ ԵՎ ՍԱԺՈՒ ՄԻԱՄՆԱԿԱՆ, ՀԱՄԸՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔԸ

Կան դեպքեր, երբ դատավորները մարդու իրավունքների պաշտպանության հատուկ բարոյական պարտավորություն ունեն հստակեցնելու իրենց դիրքորոշումը այն անձանց նկատմամբ, որոնց վրա ազդում է վճիռը: Սույն գործը դրանցից մեկն է:

Ինչու՞ մենք նման հատուկ պարտավորություն ունենք հայերի նկատմամբ: Քանի որ մի կառավարության կողմից հովանավորվող մի ժողովրդի ոչնչացումը միշտ կոչ է անում հատուկ ուշադրություն դարձնել և մեզնից հատուկ պարտավորություններ է պահանջում է: 1915 - ից մինչև 1917 - ը, հայ ժողովուրդը կրել է աներևակայելի տանջանքներ: Այս դրաման երկարատև հետևանքներ է ունեցել անգամ Մեծ եղեռնից հետո եկած (Մեծ հանցագործություն) հինգերորդ սերնդի համար մասամբ այն պատճառով, որ անցյալի անարդարությունն ու տառապանքը երբեք լիովին չեն ճանաչվել:

Հայ համայնքի շատ անդամներ այս գործում մեծամասնության դիրքորոշման առջև կարող են իրենց անտեսված կամ դավաճանված զգալ: Միգուցե նրանք համարում են, որ իրենց՝ հարգանքի արժանի աղետները, որոնք հայ համայնքներին տառապանք են պատճառել անցյալում, հաշվի չեն առնվում:

Ակնկալելով այդ արձագանքը՝ մենք այստեղ արտահայտվում ենք:

Հայերի մի մեծ թիվ կարծում է, որ Մեծ եղեռնը փաստացի ճանաչվելու համար այն անկասկած, պետք է որպես ցեղասպանություն որակվի: Նամանավանդ որ հաճախ արդարացիորեն ասում են, որ պատմական ճշմարտությունը սահմանելը իրավունքին, առավել ևս դատարաններին չի պատկանում: Սա չի խանգարում դատավորին դատելու պատմական պարտականությունները: Դա անելու համար նրան անխուսափելիորեն անհրաժեշտ է մի հայացք գցել պատմության վրա, որն ընդգրկում է ավելին, քան մի փաստ: Մենք կարծում ենք, որ եթե հարցականի տակ գտնող այդ ժամանակահատվածն ըստ էության ուսումնասիրենք դրան նախորդած ջարդերի լույսի ներքո (այդ թվում, օրինակ, համիդյան ջարդերը), բավարար ապացույցներ կարող են երևան գալ (սույն համատեքստում չափազանց լեզալ արտահայտություն)՝ ցույց տալու համար, որ Օսմանյան կայսրության հայ քաղաքացիները ենթարկվել են մի այնպիսի պետական քաղաքականության, որի արդյունքում հարյուր հազարավոր անձինք են մահացել և տառա-

պել (գնահատումները տատանվում են 600,000-ից մինչև 1,500, 000), և որը տեղի հայ համայնքի բնաջնջման պատճառ է դարձել: Ճիշտ է՝ այն կոնկրետ գործոնները, որոնք հանգեցրեցին նման դեպքերի, մնում են վիճելի: Սակայն ոչ մի պատճառ չի կարող արդարացնել պետության այդ գործողությունները կամ անհրաժեշտության դեպքում՝ նաև անգործությունը, որն ընկած է այսքան ծանր ողբերգության, երեխաների և անմեղ մարդկանց մահվան հիմքում:

Մեզ մնում է այդ իրադարձությունները խորհրդանշական և բարոյական առումով սահմանելու և որակելու պարտականությունը, և հենց այստեղ է, որ առձակատման ենք հանդիպում իրավունքի, «բարոյական ճշմարտության» և պատմության հետ: Մենք գիտենք, որ երբ Ռաֆայել Լեմկինը (*Axis Rule in Occupied Europe*, 1944) ստեղծեց ցեղասպանություն տերմինը, նա 1915 թվականի զանգավաճային ձարդերն ու բռնի տեղահանումները նկատի ուներ: Այս տերմինի օգտագործումը արդի լեզվում համապատասխանում է այդ իրադարձությունների որակմանը և չի կարող որևէ պատասխանատվություն առաջացնել: Նման կերպ ենք մենք կարդում Դինքի գործը:

Ինչ վերաբերում է, ընդհակառակը, ցեղասպանության հերքմանը և դրա՝ պատմական որոշ դրվագներում պաշտոնապես որպես ցեղասպանություն որակելու ճանաչմանը, որոշ երկրներ սրան անդրադարձել են, երբ խոսքը նման առանձնահատուկ փաստերով պատասխանատվության ենթարկելու և միջազգային դատարանների գործունեությունը վերլուծելու մասին է եղել, մինչդեռ մյուսները, հիմնվելով ցեղասպանության արդի իրավաբանական սահմանման վրա, իրենց ներպետական օրենսդրության հատուկ դրույթներում սահմանում են, թե որոնք են ցեղասպանություններ համարվում, և դրանց հերքման համար պատասխանատվություն են նախատեսում:

Այս նեղ սահմանումը համապատասխանում է իրավական որոշակիության շահերին, որն ամենակարևորն է խոսքի ազատության համատեքստում: Այժմ այստեղ է, որ հայերը, ինչպես նաև մյուս համայնքները, որոնք ծայրահեղ անարդարության են ենթարկվել ցեղասպանության ժամանակակից հայեցակարգի բյուրեղացման առջև, կամ որոնք քաղաքական պատճառներով, պարզապես մի կողմ են դրվել 1948 թվականից հետո, ենթարկվում են լրացուցիչ անարդարության. Մեծ եղեռնը տեղի է ունեցել 1915 թվականին՝ մինչ ցեղասպանություն տերմինի սահմանումը, այնուհետև՝ համապատասխան դատական պրակտիկայի զարգացումը: Որոշ երկրներ, այսպիսով, հատուկ օրենք-

ներ են ընդունել, որոնք հստակ նշում են Հայոց ցեղասպանությունը և քրեականացնում դրա հերքումը:

Շվեյցարիան դա չի արել: Շվեյցարիայի դաշնային դատարանը որոշել է այդ խնդիրը ըստ էության հաղթահարել այս գործով ցեղասպանության սահմանումն տարածելով Մեծ եղեռնի վրա՝ նշելով որ «ընդհանուր առմամբ ընդունվել է», որ դա ցեղասպանություն է: Իրավական հասկացության նման ընդլայնումը խնդիր է առաջացնում քրեական իրավունքում և սույն գործի հանգամանքներում այն անհամատեղելի է խոսքի ազատության պահանջներին, որի պաշտպանությունը, Կոնվենցիայի շրջանակներում կոչված է ապահովելու մեր Դատարանը:

Որոշելու համար, թե արդյո՞ք խախտվել է խոսքի ազատությունը, Դատարանը պետք է պարզի, թե արդյո՞ք տվյալ ելույթում բերված միջամտությունը օրենքում սահմանված կարգով նախատեսված էր, հստակ և կանխատեսելի: Բայց ցեղասպանության սահմանումը միջազգային իրավունքի շրջանակներում պարզ է, և այն չի համընկնում այն նույն հասկացություններին, որոնք ընդունվում են հանրության կողմից: Իհարկե, նույնիսկ քրեական իրավունքի որոշ հասկացություններ են ընդհանուր առումով մեկնաբանությունների ենթարկվում, այնուամենայնիվ այստեղ խոսքը տվյալ ելույթը քրեականացնելու մասին է: Դաշնային դատարանի մեկնաբանությունը չափազանց լայն է, եթե դրան հետևենք, ելույթ ունեցող անձը երբեք չի կարող իմանալ, թե ինչն է արգելված և պատժելի: Ավելին՝ շվեյցարական իրավունքը ոչ ներում, ոչ բացառություն է նախատեսում գիտական հետազոտությունների կամ գեղարվեստական կատարումների շրջանակներում արված դիտարկումների համար:

Հստակության այն մակարդակը, որին պետք է հասնի ներպետական օրենսդրությունը, էականորեն կախված է վիճարկելի տեքստից այն ոլորտից, որը պետք է ծածկի, այն մարդկանց քանակից ու կարգավիճակից, որոնց այն ուղղված է (տե՛ս *Hashman et Harrup c. Royaume-Uni* [GC], No 25594/94, § 31, CEDH 1999-VIII, և *Groppera Radio AG et autres c. Suisse*, 1990թ, մարտի 28-ի որոշում, Série A No 173, p. 26, § 68): Այս դեպքում դիմումատուն չի կարող կանխատեսել, որ իր խոսքերը կարող են քրեական վարքագծի դրսևորում համարվել: Նախկինում նման հայտարարությունները հանգեցրել էին դատավարական հետապնդումների, սակայն դրանց հեղինակներն ազատվել էին, որից էլ կարելի է եզրակացնել, որ գոնե ստորին դատարանների դատական ակտերը, այ-

նուհետև Դաշնային դատարանի կողմից ցեղասպանության տերմինի՝ ընդհանուր կերպով ընդունման վերաբերյալ կանխավարկածն ակնհայտ չէր:

Նմանապես Շվեյցարիայի խորհրդարանի երկու պալատները չեն կարողանում հանաձայնության գալ այն հարցի շուրջ, թե արդյո՞ք հարկավոր է Մեծ եղեռնը որպես ցեղասպանություն որակել, թե՛ ոչ:

Դատարանը սովորաբար այլևս բողոքի հետագա քննարկում չի անում, եթե պնդում է, որ վիճարկելի միջամտությունը նախատեսված չի եղել օրենքով: Կարծում ենք՝ այստեղ պետք է շարունակել:

Սույն գործում Դատարանը խոսքի ազատության իրավունքի սահմանափակման նպատակը համարել է Մեծ եղեռնի գոհերի պատվի պաշտպանությունը:

Բայց այս նպատակը լավագույն դեպքում երկրորդական է, և նա վերլուծության արդյունքում հանգում է համաչափության խախտմանը՝ գոհվածների հիշատակը հարգելու պարտքն իհարկե կարևոր է, բայց ինչ էլ որ այն լինի, միգուցե այնքան էլ անհրաժեշտություն չի բխեցնում իր ելույթի համար պատժելու մի հեղինակի, որը ապրելով այսօր, գիտական հետազոտություն է կատարում:

Մնում է՝ Շվեյցարիայի կառավարությունը վիճարկի, որ ցեղասպանության հերքումը քրեականացնելը հետապնդում է հասարակական կարգը պահպանելու նպատակ, որը, մեր կարծիքով, տվյալ գործի հանգամանքների տեսանկյունից անվիճարկելի է:

Դատարանը մասնավորապես պետք է զգոն լինի, երբ միջամտության նպատակը առաջանում *a posteriori*, միայն այն փուլում, երբ գործն իր առջև է բերվել, բայց սա նման գործ չէ. ցեղասպանության վերաբերյալ դրույթն ամրագրված է քրեական օրենսդրությամբ՝ ուղղված 1965 թվականի *Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայով սահմանված պարտավորությունների իրականացմանը*:

Վերջապես, այս դիրքորոշմանն աջակցելու նպատակով, Դաշնային դատարանը հետևյալն է ասել. «Դիմումատուի դատապարտումը նաև ձգտում է պաշտպանելու հայկական համայնքի այն անձանց մարդկային արժանապատվությունը, որոնք 1915 թվականի գոհ են դարձել»:

Խորապես մտահոգիչ է, որ դիտարկումները քրեականացվել են՝ որոշ անհատների ինքնությունը վնասելու շարժառիթով, (այս առումով տե՛ս Դատարանի դիտարկումները թրքության մասին, մասնավորա-

պես *Դինքի* գործը), թեև մենք իրավասու չենք որոշում ընդունելու մի ժողովրդի ինքնության կամ մի ազգային համայնքի ձևավորման վերաբերյալ հիմնվելով ազգային ողբերգության վրա. խոսքն այստեղ քննարկման մի առարկայի մասին է (այս առումով տե՛ս Հրանտ Դինքի քննադատական դիրքը *Դինք* գործում):

Դաշնային դատարանը չի զարգացրել այս կետը: Նրա հիմնավորումը՝ մարդու իրավունքների սահմանափակումը արժանապատվության շարժառիթների հիմքով միանշանակ չէ, նույնիսկ եթե արժանապատվությունը հաճախ համարվում է մարդու իրավունքների պաշտպանության հիմնարար արժեք:

Մա անշուշտ կարող է համարվել անհատի արժանապատվության խախտում, քանի որ այն մարդկային խումբը, որին ինքը պատկանում է, հերքվում է կամ կրճատվում: Մա այն դեպքն է, որտեղ այդ անհատի պատկանելիությունը մարդկությանը կամ մեկ այլ ցանկացած խմբի, հերքվում է դրան պատկանելու ենթատեքստով, որը պետք է բացառվի:

Այնուամենայնիվ, մենք չենք տեսնում՝ ինչպես կարելի է ժխտել Թալեաթ Փաշայի և իր համախոհների կողմից ստեղծած բնաջնջման ծրագրի գոյությունը, որը ոտնահարում է հայկական համայնքի անդամների արժանապատվությունը, եթե նման հայտարարությունը չի կարելի հասկանալ և որակել որպես ցեղասպանության հետ կապված հայերի ինքնության նենգափոխում:

Բայց սա դիմումատուի կողմից փաստի իրավաբանական որակման ակնհայտ հակասում չէ և ոչ էլ իհարկե ունի այն իմաստը, որը նրան տվել են շվեյցարական իշխանությունները:

Նույնիսկ եթե դիմումատուի դիտարկումները անհարգալից կամ վիրավորական են եղել, դրանք մարդկային խմբի ինքնության մերժում չեն:

Իհարկե, հերքողական դիտարկումները կարող էին քրեականացվել, սակայն միայն այն առումով, որ դրանք ատելություն և բռնություն են հրահրել կամ իրական վտանգ են ներկայացրել տվյալ հասարակության մեջ գերիշխող պատմության և սոցիալական պայմանների համար: Բայց նման և ոչ մի տարր Շվեյցարիայում չի ներկայացվել:

Իրականում օրենքի առաջնային նպատակը և դիմումատուի խոսքի ազատության միջամտությունը հիմնված են ռասայական խտրականության վրա ("ռասայական" ասելով այստեղ հասկանում ենք նաև ազգային խտրականությունը, քանի որ ցեղասպանությունը կարող է ներառել ոչ միայն էթնիկ խմբին, այլև կրոնական կամ ազգային համայն-

քը):

Իրավական մոտեցումը, ինչպես կարելի է մեկնաբանել այս գործից, այն է, որ բոլոր դիտարկումները, որոնք հերքում են մի ժողովրդի ոչնչացման իրավաբանական որակումը, ռասիստական են կամ ռասիստորեն խտրական կամ վերլուծվում են որպես խտրականության ակտ: Իրավունքի մակարդակով նման անվերապահ քրեականացումը պրակտիկորեն անհնար է դարձնում դիտարկումների ասպեկտների ուսումնասիրումը, որոնք ծագում են խոսքի ազատությունից: Նույնիսկ անհարգալից գիտական ելույթի շրջանակներում տվյալ դիտարկումները մեխանիկորեն վերածվում են ռասայական խտրականության²³:

Դատարանը իրավացիորեն գտել է, որ իրեն անհրաժեշտ էր *sponte sua* վերլուծություն կատարել 17-րդ հոդվածի տեսանկյունից: Ցեղասպանության հերքման անվերապահ քրեականացումը տարածվում է 1915 թվականի իրադարձությունների վրա կամ համարվում կիրառելի՝ ըստ դրա ենթատեքստի՝ նշանակելով, որ վերլուծված հերքումը իրավունքների չարաշահում է (այս առումով տե՛ս ֆրանսիացի դատավորների դիրքորոշումը վերոհիշյալ *Faurisson* գործում, նրանք գտնում են, որ ռեիզիոնիստական հայտարարությունները վերաբերում են հարձակմանը և ոչ թե ելույթին):

Երբ Դատարանը պնդել է 17-րդ հոդվածի իմաստով իրականացրած չարաշահումը, այն դա արել է, քանի որ 10-րդ հոդվածը վկայակոչվել էր ամբողջատիրական շարժառիթներով ոգեշնչված խմբերի կողմից (*Vajnai c. Hongrie*, No 33629/06, § 24, CEDH 2008թ.), և որ դիսկուրսիվ գործողությունն ինքնին կործանարար ներուժ ուներ:

²³ Որպես այս մոտեցման հնարավոր հետևանք տե՛ս *Բերնարդ Լյուիսի* գործը. "Le monde" ամսագրին տված հարցազրույցի ժամանակ պրոֆեսոր Լյուիսը հայտարարել է. «հայ ազգը ոչնչացնելու վերաբերյալ օսմանյան կառավարության որոշումների և ծրագրերի մասին չկա որևիցե լուրջ ապացույց (...)»: 1995 թվականի հունիսի 21-ին նրան առաջադրելով «Ժխտողականության» մեղադրանք՝ դատապարտել են (քաղաքացիական վճիռ, Փարիզի Գերագույն դատարան) Քաղաքացիական օրենսգրքի 1382-րդ հոդվածի հիման վրա՝ բավարարելով հայցվոր կողմի պահանջները և հատուցելով վնասները: Որոշման մեջ դատարանը հայտնեց հետևյալը. «Դա իր դիրքորոշմանը հակառակ տարբերը թաքցնելն է (...) որ նա (...) կարիք է ունեցել իր օբյեկտիվ պահանջների և զուշավորության՝ արտահայտելով իր անվերապահ կարծիքները (...) [և,] իր խոսքում, որը անարդարացիորեն այրում էր հայ համայնքի ցավը, սխալ են և դրանց համար պետք է փոխհատուցում պահանջվի»:

Հաշվի առնելով 10-րդ և 17-րդ հոդվածների համատեքստում Դատարանի դատական պրակտիկան՝ նման ելույթը պետք է գործնականում լինի ոչ միայն կործանարար և տեսականորեն ցնցող:

Քրեական իրավունքում ելույթի մեկնաբանումը որպես բացարձակ հանցագործություն արտացոլում է 17-րդ հոդվածի հիմքում ընկած և ի սկզբանե խնդրահարույց նկատառումները մյուսների համեմատ, քանի որ այլևս հնարավոր չէ անվերապահ ուսումնասիրել քրեական իրավունքի շրջանակներում, և խոսքի ազատությանը վերաբերող ասպեկտները, երբ մի հասարակ փաստ թույլ է տալիս առաջ քաշելու, որ որոշակի դիտարկումներ ինքին իրավախախտում են, և առանց համապատասխան վերլուծությունների դրանք կարելի է քննության առնել:

Robert Faurisson c. France (ծանուցում No 550/1993, cote ONU CCPR/C/58/D/550/1993(1996)) գործի իր եզրահանգումներում Միավորված ազգերի մարդու իրավունքների Հանձնաժողովը հստակորեն ընդունել է *Gaysot*-ի օրենքի դրույթների կիրառումը, որը իրենց հետևանքներով քրեական իրավախախտում են բխեցնում,՝ կասկածի տակ դնելով Նյուրեմբերգի Միջազգային ռազմական դատարանի վճիռն ու եզրակացությունները, որոնք կարող էին հանգեցնել Դաշնագրին հակասող որոշումների կամ միջոցառումների:

Ըստ սույն որոշման՝ դիմումատուն իր գիտական տեսակետն է հայտնել պատմական քննարկման ենթակա մի թեմայի վերաբերյալ: Դաշնային դատարանը, կարծես, մի փոքր այլ մեկնաբանություն է տվել. «Ինչ վերաբերում է մտադրությանը, քրեական դատարանը վճռել է, որ դիմումատուն՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, քաղաքագետ, ինքնակոչ գրող և պատմաբան, գործել է գիտակցաբար՝ հայտարարելով, որ երբեք չի փոխի իր դիրքորոշումը, նույնիսկ եթե մի չեզոք հանձնաժողով օրերից մի օր հաստատի, որ Հայոց ցեղասպանությունը իրոք գոյություն է ունեցել»: Մեր կարծիքով, դիմումատուն՝ փորձել է դատարանի առջև պատմական փաստարկներ օգտագործել՝ ապացուցելու այն, ինչ ասել է, սակայն իր դիտարկումները գիտական քննարկման համատեքստից չեն բխում և իր վերաբերմունքն իրականում գիտական չէր, քանի որ բացառել էր իր հետազոտության այն բոլոր տվյալները, որոնք հակասում էին իր թեզերին: Վիճարկելի դիտարկումները հանրային հետաքրքրության թեմայի շուրջ ծավալված քաղաքական քննարկման մաս էին կազմում, որոնք շվեյցարական խորհրդարանի (օրենսդրի) քաղաքականության վրա ազդելու նպատակ էին հետապնդում: Այնուամենայնիվ, մենք համաձայն ենք, որ հետազոտելու ազատությունը ներգրաված է այս գործում:

տակ էին հետապնդում: Այնուամենայնիվ, մենք համաձայն ենք, որ հետազոտելու ազատությունը ներգրաված է այս գործում:

Դաշնային դատարանը, թվում է, ընդունում է, որ դիմումատուն չի վիճարկել զանգվածային ջարդեր իրեղությունը, և որ իր «հերքողականությունը» իրականում փորձ է այդ իրադարձություններին այլ պատճառ վերագրելու «դիմումատուն չի վիճարկում ու ժխտում ո՛չ զանգվածային ջարդերի, ո՛չ տեղահանումների գոյությունը, որոնք նույնիսկ զուսպ ձևակերպմամբ կարող են որակվել որպես ոչ այլ ինչ, քան մարդկության դեմ ուղղված հանցագործություններ: Մակայն նման հանցագործությունների արդարացումը նույնիսկ պատերազմի իրավունքի կամ ենթադրյալ պաշտպանության անվան տակ արդեն իսկ պատժվում է Քր. Օր. 261-րդ հոդվածի 4-րդ կետով»: Կարծում ենք, որ դիմումատուի փաստարկները, որոնք պնդում են, թե «հայկական ագրեսիան» է եղել այդ ողբերգական իրադարձությունների ծագման հիմքը, ավելի քան մտահոգիչ են: Որոշակի հանգամանքներում (տե՛ս *a contrario Fáber c. Hongrie գործը*, No 40721/08, 24 հուլիսի 2012թ.), հերքողական քննարկմամբ զուգորդված այս դիտարկումները կարող էին ատելության հրահրում պարունակել, որն իրենից հստակ և ուղղակի վտանգ է ներկայացնում և, այսպիսով համապատասխանում է այն չափանիշին, որով նմանատիպ դեպքերում Դատարանը համաչափ քրեական պատիժ է նշանակում (*Gül et autres c. Turquie*, No 4870/02, § 42, 8 հուլիսի 2010 թ.):

Ամեն դեպքում տվյալ պարագայում չկա որևէ բան, որը ցույց տա, որ կասկածի տակ առնված ելույթը խտրականություն պարունակող ատելության անմիջական հրահրում է եղել: Ժողովրդավարական հասարակությունում անհրաժեշտ էր արդյոք, որ Շվեյցարիան դիմումատուին պատժեր նման դիտարկումների համար: Մենք համաձայն ենք Դատարանի դիրքորոշմանը, որի համաձայն, 1915 թվականի իրադարձությունների իրավաբանական որակման հերքումն ինքնին հայ ժողովրդի հանդեպ ատելություն հրահրելու բնույթ չի ունեցել:

Faurisson-ի գործում վիճարկվում էր ռևիզիոնիստական ելույթի՝ ընթերցողներին հակասեմիտական ճանապարհով տանելու հարցը: Ըստ էության, սակայն, կարել է ասել, որ հակահայկական զգացմունքներից առավել դիմումատուն հակաիմպերիալիստական զգացմունքներ է արտահայտել՝ համահունչ իր քաղաքական հայացքներին. ավելի շուտ նա «միջազգային սուտ» անվանումը միջազգային իմպերիալիզմին է վերագրում, քան թե հայերին:

Ատելության հրահրումը սկզբունքորեն պետք է ուղղվի ընդդեմ ուրոշակի անհատների, այլ ոչ թե հասկացվի որպես տվյալ խմբի զրպարտանքի ձև: *Faurisson* գործով իրենց համընկնող կարծիքում Elizabeth Evatt-ը և David Kretzmer-ը, որոնց միացել էր նաև Eckart Klein-ը, բարձրացնում են մի բացառության²⁴ հնարավորության հարցը այս բառերով. «ամեն դեպքում հնարավոր է, որ այնպիսի հանգամանքներ լինեն, որոնցում անհատի՝ ռասայից, էթնիկական կամ կրոնական պատկանելության շարժառիթներից կախված խտրականության դեմ պաշտպանվելու իրավունքը չի կարող ամբողջովին երաշխավորվել մի նեղ, բացահայտ հրահրման վերաբերյալ օրենքով (...):»:

Այսպիսին է այն դեպքը, որտեղ հատկապես սոցիալական և պատմական համատեքստում կարելի է համոզվել, որ ուրոշակի հայտարարություններ, որոնք չեն համապատասխանում հրահրման այս խիստ լեզու սահմանմանը, գտնվում են ուրոշակի ռասայական, էթնիկական կամ կրոնական խմբի դեմ ուղղված սադրանքների համակարգի շրջանակներում. այդպիսին է նաև այն դեպքը, որտեղ անձինք, որոնք ատելություն և թշնամանք տարածելու միտում ունեն, արտահայտվելու այնպիսի նուրբ ձևեր են ընդունում, որոնք պատժելի չեն ռասայական հրահրումների դեմ ուղղված օրենքով, նույնիսկ եթե դրանց հետևանքները կարող են լինել հավասարաբար վնասակար բացահայտ հրահրումներին:

Մենք գտնում ենք, որ նմանատիպ հանգամանքները վիճարկվող գործում պետք է հստակ երևան: Նման հանգամանքների բացակայության դեպքում դիմումատուի ելույթի քրեականացումը, նույնիսկ եթե այն մոտ է եղել հերքողականությանը, չի համապատասխանում պատժի անհրաժեշտությանը, հետևաբար տվյալ դեպքում քրեական պատասխանատվությունը անհամաչափ է: Օրենքի օրինական նպատակը կարող էր իրագործվել մի նվազ կտրուկ դրույթով այլ ոչ թե օրենսդրական դոգմայով, որը կարելի է հարցականի տակ դնել, ինչ նպատակներ էլ որ այն հետապնդի, և ինչ հնարավոր հետևանքներ էլ որ այն ունենա:

²⁴ Մեր մտադրությունն այստեղ այս գործի փաստերի վերաբերյալ իրենց եզրակացություններին սատարելը չէ:

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ ՎՈՒՑԻՆԻՉ ԵՎ ՂԵ ԱԼՔՅՈՒՔԵՐՔ ՄԱՍՆԱԿԻՈՐԵՆ ՉՉԱՄԸՆԿՆՈՂ ԿԱՐԾԻՔՆԵՐԸ

1. Փերինչեքի գործը բարձրացնում է երկու հիմնական իրավական հարց, որոնց Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Դատարանը) երբևիցե չէր անդրադարձել՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը և այս ցեղասպանության հերքման քրեականացումը: Թեև մենք կարծում ենք, որ նման մասշտաբի հարցերը ենթակա են քննման Մեծ պալատում, մենք կցանկանայինք ներկայացված կարծիքի սահմաններում դրանք հնարավորինս մանրամասնորեն ուսումնասիրել: Թեև մենք մեծապես կասկածում էինք մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի (Կոնվենցիայի) 17-րդ հոդվածին համապատասխան դիմումատուի բողոքի թույլատրելիությանը, սակայն ի վերջո համաձայնեցինք քննարկել Կոնվենցիայի 10-րդ հոդվածի հիման վրա անձի կողմից առաջ քաշված բոլոր իրավական փաստարկները: Չենք ցանկանում ըստ էության խուսափել իրավական խրթին հարցերին անդրադառնալուց այն պատրվակով, որ վիճարկվող հայտարարություններն ինքնըստինքյան հակասում են Կոնվենցիայի հիմքում ընկած արժեքներին, ինչպիսիք, օրինակ՝ այս դեպքում, թվում է, թե գոյություն ունեն *anusghin hayagpphg (prima facie)*: Ամեն դեպքում մանրակրկիտ ուսումնասիրությունից հետո մենք եկանք այն եզրահանգման, որ տվյալ դեպքում 10-րդ հոդվածի խախտում չի եղել: Այնուամենայնիվ մենք համաձայն ենք ասելու, որ 7-րդ հոդվածին համապատասխան բողոքը առանձին քննելու անհրաժեշտություն չկա:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը

2. Ազգային խորհրդի կողմից 2003 թվականի դեկտեմբերի 16-ին հռչակված պաշտոնական հայտարարությամբ պատասխանող կառավարությունը 1915 թվականին Օսմանյան կայսրությունում հայերի հանդեպ իրադարձությունները ճանաչել է որպես «ցեղասպանություն»²⁵: Այդ պաշտոնական դիրքորոշման համաձայն քրեական դատարանը, Վճռաբեկ քրեական դատարանը և Դաշնային դատարանը գտան, որ հայերի ցեղասպանությունը շվեյցարական հասարակության

²⁵ Նախքան այս օրը օրենսդիրն արդեն նշել է, որ հայերի ցեղասպանությունն այն դեպքն է, որ պետք է գործ ունենանք Քրեական օրենսգրքի 261^{bis} հոդվածի 4-րդ կետով նախատեսված հանցագործության հետ (տե՛ս Դաշնային Վեհաժողովի պաշտոնական տեղեկագիր- Ազգային խորհուրդ 1993 թվական, էջ 1076):

և պետության կողմից Շվեյցարիայի քրեական օրենսգրքի 261 հոդվածի 4-րդ կետին նպատակով ընդունված պատմական փաստ է: Այսպիսով, նրանք գտան, որ շվեյցարական հասարակությունում առկա է եղել հայերի ցեղասպանությունը հերքելու քրեականացման իրավական հիմք: Տվյալ եզրակացությունը կամայական չէ:

3. Շվեյցարիան միակը չէ հայերի ցեղասպանության ճանաչման հարցում. այն ճանաչվել է հենց թուրքական պետության ներսում տարբեր անձանց, ինստիտուտների, ժամանակից կառավարությունների, հետագայում արդեն նաև միջազգային կառույցների, ազգային և կրոնական կազմակերպությունների և աշխարհի չորս կողմերի ներպետական դատարանների կողմից:

4. Ժամանակին հենց թուրքական պետությունն ընդունում է հայերի «ջարդերը» և դրանց համար պատասխանատուներից ոմանց ենթարկում է պատասխանատվության: Թուրքիայի կողմից զոջման նման գովելի արարքը հանգեցրեց երկու տիպի դատավարության: Որոշիչ նշանակություն ունեւ Օսմանյան կայսրության նախկին Մեծ վեզիր Թալեաթ փաշայի, նախկին ռազմական նախարար Էնվեր փաշայի, նախկին ռազմածովային ուժերի նախարար Ջեմալ փաշայի, նախկին կրթության նախարար Նազիմ բեյի և այլ նախկին նախարարների և Միություն ու առաջադիմություն (İttihat ve Terakki Cemiyeti) կուսակցության բարձրաստիճան պաշտոնյաների դատավարությունը ռազմական դատարանում, որտեղ ամբաստանյալներից ոմանք դատապարտվեցին առանց իրենց անմիջական ներկայության: Ռազմական դատարանը վճիռը կայացրեց 1919 թվականի հուլիսի 5-ին, մեղադրայիններից ոմանց մահապատժի ենթարկելով տարբեր հանցագործությունների՝ այդ թվում նաև հայերի «կոտորածի» համար, դրանով իսկ հաստատելով մեղադրանքում արտահայտած իր դիրքորոշումը, ըստ որի՝ «հայերի ջարդերն ու սպանությունները İttihat-ի²⁶ գլխավոր կոմիտեի որոշման արդյունք էին»: Նշված դատապարտումների և պատիժ-

²⁶ Տե՛ս Վահագն Տատրյանի առարկայական տեքստը թուրքական ռազմական դատարանի կողմից հավաքված ապացույցների մասին, որոնք հաստատում են ծրագրված զանգվածային կոտորածների, համակարգված խոշտանգումների և հայ ժողովրդի կազմակերպված տեղահանումների փաստը (“The documentation of the World War I Armenian Massacres in the proceedings of the Turkish Military Tribunal”, *in* Int. J. Middle East Stud. 23 (1991), pp. 549-576) ինչպես նաև *Journal of Political and Military Sociology*–ի հատուկ համարը (vol. 22 No 1, 1994) *Revue d’Histoire de la Shoah*–ի հատուկ համարը (No 177-178, 2003):

ների իրավական հիմք են եղել թուրքական քրեական օրենսգրքի 45 և 55 հոդվածները:

5. Քրեական դատավարության երկրորդ տեսակը բաղկացած էր տասնյակ ամբաստանյալների դեմ բազմաթիվ գործողություններից. դատավարություններ կուսակցության շրջանային առաջնորդների դեմ (վճիռը կայացվել է 1920 թվականի հունվարի 8-ին)՝ Սանջակի և Յոզգատի ջարդերի և տեղահանությունների վերաբերյալ (վճիռը կայացվել է 1919 թվականի ապրիլի 8-ին, ի թիվս այլ հարկադրանքի միջոցների՝ նախկին քաղաքապետ Մեհմեդ Քեմալ բեյին մահատժի ենթարկելով), Տրապիզոնի վիլայեթի ջարդերի և տեղահանությունների վերաբերյալ (վճիռը կայացվել է 1919 թվականի մայիսի 22-ին՝ ի թիվս այլ հարկադրանքի միջոցների՝ Ջեմալ Ազմի բեյին և Նաիլ բեյին մահատժի ենթարկելով), *Beysik Dere*-ի ջարդերի և տեղահանությունների վերաբերյալ (վճիռը կայացվել է 1919 թվականի մայիսի 24-ին), *Խարխուր*ի վիլայեթի ջարդերի և տեղահանությունների վերաբերյալ (վճիռը կայացվել է 1920 թվականի հունվարի 13-ին՝ ի թիվս այլ հարկադրանքի միջոցների, նախկին Հատուկ կազմակերպության նախարար և միութենական կուսակցության կենտրոնական հանձնաժողովի անդամ Բեհաեդդին Շաքիրին մահատժի ենթարկելով), Ուրֆայի ջարդերի և տեղահանությունների վերաբերյալ (վճիռը կայացվել է 1920 թվականի հուլիսի 20-ին՝ ի թիվս այլ հարկադրանքի միջոցների՝ Բեհրամզադե Նուսրեթ բեյին մահատժի ենթարկելով) և *Erzincan*-ի ջարդերի ու տեղահանությունների վերաբերյալ (վճիռը կայացվել է 1920 թվականի հուլիսի 27-ին՝ ի թիվս այլ հարկադրանքի միջոցների՝ ժանդարմայի նախկին ղեկավար Աբդուլա Ավնիին մահատժի ենթարկելով): Մեհմեդ Քեմալ բեյին, Բեհրամզադե Նուսրեթ բեյին և Աբդուլա Ավնիին առաջադրված մահապատիժները ի կատար ածվեցին:

6. Այն փաստը, որ Թուրքիան հետագայում ազատել է մեղադրյալներից ոմանց, հարցականի տակ չի դնում այդ որոշումների միջազգային վավերականությունը, որոնք կայացվել են այդ ժամանակի²⁷ մի-

²⁷ Ինքը՝ Մուստաֆա Քեմալը 1926 թվականի օգոստոսի 1-ին *Los Angeles Examiner*-ում հրապարակված հարցազրույցում դա բացատրում է այսպես. «Նախկին երիտթուրքական կուսակցության մնացորդները, որոնք չէին ցանկանում ենթարկվել հանրապետական կարգերին, նրանք են, որ պետք է պատասխան տան մեր քրիստոնյա հպատակների զանգվածային տեղահանությունների և կոտորածների համար: Չնայած, որ արդար Թուրքերը դեմ էին նման գործողություններին և նույնիսկ փրկել են հայերին»: (Տե՛ս «Turks who saved Armenians: an Introduction»

ջազգային իրավունքի նորմերին համապատասխան: Բացի դրանից, սկսած այն ժամանակից, երբ միջազգային հանրությունը փաստեր ճանաչեց, այն անմիջապես պաշտոնական արձագանքի արժանացավ Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի կողմից 1915 թվականի մայիսի 15-ին թվագրված մի ընդհանուր հռչակագրով, որում երեք պետությունները, դատապարտեցին նրանց դեմ «Թուրքիայի՝ մարդկության և քաղաքակրթության դեմ ուղղված հանցագործությունները», որի համար «Օսմանյան կառավարության բոլոր անդամները և այդ զանգվածային ջարդերում ներգրավված մյուս գործակալները» պետք է պատասխան տային:

Այս արձագանքին հաջորդեց իրականացված վայրագությունների քաղաքական և դիվանագիտական ճանաչումը՝ սահմանված մասնավորապես 1916 թվականի փետրվարի 9-ի Մենատի և ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի համատեղ բանաձևում, որը ավստասնք է արտահայտում հազարավոր հայերի «լուռ տառապանքների» և «սարսափելի պատուհասի» վերաբերյալ, և 1919 թվականի գեկույցում պատերազմի հանցագործությունների կատարման հեղինակների պատասխանատվության և պատիժների կիրառման մասին, որը եզրակացնում էր, որ հայերի նկատմամբ իրենց տարածքում Օսմանյան կայսրության կողմից դրսևորած վերաբերմունքը խախտել էր «պատերազմի սահմանված կանոններն ու ավանդույթները և մարդկության տարրական օրենքները», և որը հռչակել էր, որ այդ գործողությունների համար պա-

www.zoryaninstitute.org): Օրինակ՝ Մեհմեդ Ջելալ բեյը՝ Հալեպի և Կոնյայի քաղաքապետը, որը փրկել է բազմաթիվ հայերի, մի առիթով ասել է. «նպատակը նրանց ոչնչացնելն էր, և նրանք ոչնչացվեցին: Անհնար է թաքցնել և քողարկել *İttihat ve Terakki*-ի կողմից իրակացնած քաղաքականությունը, որը մշակվել էր կուսակցության ղեկավարների և ի վերջո ընդունվել հանրության լայն շերտի կողմից»: 1917-1918 թվականներին Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարար Մուստաֆա Արիֆը միևնույն ժամանակ ասել է. «Դժբախտաբար նրանք, ովքեր եղել էին մեր ղեկավարները պատերազմի ժամանակ, սոցորված են ավազակային ոգով, նրանք ընդունեցին տեղահանման մասին օրենքը այնպիսի եղանակով, որն հնարավոր դարձրեց արյունոտ հրոսակախմբերին վերացնել տեղանվորներին: Նրանք որոշեցին բնաջնջել հայերին, և նրանք դա ի կատար ածեցին»: 1918 թվականի հոկտեմբերի 21-ին թուրքական Մենատի նախագահ Ահմեդ Ռիզան նույնպես ընդունեց, որ հայերի զանգվածային կոտորածները, պաշտոնապես հաստատված հանցագործություններ էին: Վերջին ժամանակներից կարող ենք մեջբերել մարդու իրավունքների թուրքական ասոցիացիայի 2006 թվականի ապրիլի 20-ի ուղղակի և համարձակ հայտարարությունը:

տասխանատու օսմանյան պաշտոնատար անձինք պետք է քրեական հետապնդման ենթարկվեին:

Այնուհետև՝ 1920 թվականի օգոստոսի 10-ին, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի, Հայաստանի, Բելգիայի, Հունաստանի, Շեջազի, Լեհաստանի, Պորտուգալիայի, Ռումինիայի, Մլովենիայի, Խորվաթիայի և Սերբիայի, Չեխոսլովակիայի և Թուրքիայի կողմից ստորագրված Սևրի պայմանագրի 226, 227 և 230-րդ հոդվածները ամրագրեցին Դաշնային ուժերի իրավունքը՝ միջազգային զինվորական դատարանների առջև կանգնեցրել են այն անձանց, ովքեր իրականացրել էին պատերազմի օրենքներին և ավանդույթներին հակասող գործողություններ «անկախ Թուրքիայի դատարանի առջև իրականացրած վարույթի և հետապնդման», այնպես որ Թուրքիան պարտավորություն ուներ պատասխանատվության ենթարկելու «1914 թվականի օգոստոսի 1-ին Թուրքական կայսրության մասը կազմող տարածքում շարունակվող պատերազմի ընթացքում իրականացրած զանգվածային ջարդերի» ակունքներում կանգնած անձանց՝ ապահովելով նրանց դատապարտումը:

Չնայած Սևրի պայմանագիրը այդպես էլ ուժի մեջ չի մտել, սակայն փաստը մնում է փաստ, որ այդ դրույթները համապատասխանում էին այդ ժամանակների միջազգային սովորության իրավունքին այնքանով, որքանով որ դրանք ճանաչվել էին միջազգային հանցագործություն՝ դատապարտելով պատասխանատու անձանց:

Չնայած քրեական պատասխանատվության սկզբունքը չի գերակշռել հետագա բանակցություններում, որոնք Լոզանի պայմանագրին էին տանում, պատմական փաստը՝ ինքնին հայտնի որպես Օսմանյան կայսրության պետական քաղաքականության շրջանակներում զանգվածային ջարդերի իրագործում՝ հակառակ մարդկության օրենքներին, որը ճանաչվել է 1915²⁸ թվականի մայիսի 15-ի Համատեղ հռչա-

²⁸ Ցեղասպանության օսմանյան քաղաքականությունը աշխարհին հայտնի է դարձել իրադարձությունների անմիջական վկաների միջոցով: Այսպիսով, 1913-ից 1916 թվականներին Թուրքիայում Միացյալ Նահանգների դեսպան Շեքի Սորգենթաուն ասել է «Անցյալի հալածանքները և ջարդերը 1915 թվականի հայ ժողովրդի տանջանքների հետ համեմատած գրեթե աննշան են թվում (...) Երբ թուրքական իշխանությունները տեղահանման հրաման արձակեցին, նրանք ուղղակիորեն մահապատժի ենթարկեցին մի ամբողջ ռասայի, և նրանք շատ լավ տեղեկացված էին ու ինձ հետ իրենց գրույցների ժամանակ ղեկավարները երբեք չեն փորձել թաքցնել այդ փաստը (...) միակ դրդապատճառը եղել է պետության կողմից սառնասրտորեն

կազմին համապատասխան կնքված Սևրի պայմանագիրը ստորագրողների կողմից: Սևրի պայմանագրի 230-րդ հոդվածը նույնիսկ անժխտելիորեն նախորդում է Նյուրենբուրգի խարտիայի հոդված 6 գ-ին և Տոկիոյի խարտիայի հոդված 5 գ-ին, որոնք նշում են «մարդկության դեմ ուղղված հանցագործությունները» այն նույն իմաստով, ինչպես այդ հասկացությունը ըմբռնվել գոնե մինչև 20-րդ դարը²⁹:

7. Այս կետ մտած 1923 թվականի հուլիսի 24-ի Լոզանի պայմա-

հաշվարկված քաղաքանությունը»: Ինչ վերաբերում է Օսմանյան կայսրությունում Գերմանիայի դեսպան Wolff Metternich-ին, նա 1916 թվականի հուլիսի 10-ին Գերմանիայի կանցլերին ուղարկել է հետևյալ հաղորդագրությունը. «Հայկական հարցի լուծման իր նպատակին հասնելու համար հայկական ռասայի ոչնչացման քաղաքականությունը որդեգրած թուրքական կառավարությունն իր մտադրություններից էտ չի կանգնում ոչ մեր, ոչ Միացյալ Նահանգների, ոչ Հռոմի Պապի ներկայացուցչի բողոքների, ոչ դաշնակից երկրների սպառնալիքների և ոչ էլ արևմտյան կողմի հասարակության կարծիքի առաջ, որն, ըստ երևույթին, հանդիսանում է երկրի կեսը»: Տրապիզոնում գլխավոր հյուպատոս Giacomo Gorriani-ն 1915 թվականի օգոստոսի 25-ին տրված հարցազրույցի ժամանակ արտահայտվել է հետևյալ կերպ. «Ի տարբերություն այլ վիլայեթների՝ հայերի նկատմամբ այլ վերաբերմունք էր ցուցաբերվում: Նրանք կասկածանքի տակ էին, նրանց ամենուր հետևում էին, և այս «հայկական վիլայեթներում» նրանք կատարում էին սովորական սպանություններից ավելի վատ արարքներ, որոնք հավասարազոր էին իրական բնաջնջման»: Կոստանդնուպոլսում դանիական դիվանագետ Carl Ellis Wandel-ը 1915 թվականի սեպտեմբերի 4-ին կազմեց «թուրքերի մուրթ գործերի՝ հայ ժողովրդի ոչնչացման» մասին ծավալուն և մանրամասն հաշվետվություն: Նրա վկայությունները հաստատվեցին փախստականների գործերով Ազգերի լիգայի Գերագույն հանձնակատար Ֆրիտյոֆ Նանսենի կողմից, որը հայտարարեց. «Ոչնչացման ամբողջ ծրագիրը ոչ այլ ինչ էր, քան սառնասրտորեն հաշվարկված քաղաքականություն, որի նպատակն էր հասարակության վերին շերտի ոչնչացումը, որը կարող էր խնդիրների առաջացման պատճառ հանդիսանալ, և արան կարելի է ավելացնել նաև ազգային շարժառիթը»: Այս իմաստով Ուիլսոնը Չերչիլը հավելել է. «Թուրքական կառավարությունը անամոթաբար ձեռնարկել և անց է կացրել խայտառակ գործողություններ, ինչպիսիք են Փոքր Ասիայում հայերի ջարդերն ու տեղահանությունները: Այդ ռասայի ոչնչացումը Փոքր Ասիայում նաև իրականացվել է գործողությունների կատարման մասշտաբների հնարավոր ընդլայնմամբ»: (Տե՛ս www.armenocide.de և www.genocide-museum.am կայքերում հասանելի փաստաթղթերը):

²⁹ Նույն կերպ, ինչպես Սևրի պայմանագրի 226 և 227 հոդվածները, Վերսալյան պայմանագրի 228 և 229 հոդվածները, «Մեն Ժերմեն ան Լե» -ի պայմանագրի 176 և 177 հոդվածները, Տրիանոնի պայմանագրի 157 և 158 հոդվածները և «Լեյն Սյուր Սեն»-ի պայմանագրի 118 և 119 հոդվածները Նյուրենբերգյան կանոնադրության 6 b) հոդվածի նախորդներն են, և ինչպես Վերսալյան պայմանագրի 227 հոդվածը Նյուրենբերգյան կանոնադրության 6 a) հոդվածի նախորդն է:

նագիրը ոչ պատերազմի հանցագործությունների, ոչ պատիժների էր վերաբերում, ոչ որևէ հղում պարունակում ռազմական դրության ընթացքում իրականացված «զանգվածային ջարդերի» մասին, այլ այն ուղեկցվում էր «համաներման հոչակագրով», որի ներքո համապատասխանաբար Թուրքիայի և Հունաստանի կառավարությունների կողմից «ամբողջական և լրիվ համաներում է» շնորհվել բոլոր այն հանցագործությունների և իրավախախտումների համար, որոնք իրականացվել են տվյալ ժամանակահատվածում (1914 թվականի օգոստոսի 1-ից մինչև 1922 թվականի նոյեմբերի 20-ը), որոնք «ակնհայտորեն կապված էին պատմական այն իրադարձությունների հետ», որոնք տեղի էին ունեցել այդ ժամանակահատվածում: Համաներման հոչակագրի 3-րդ դրույթի անձնական և նյութական ոլորտը, ինչպես նաև ինքը՝ հոչակագիրը, ակնհայտորեն չի տարածվում Օսմանյան կայսրության հայ բնակչության «զանգվածային ջարդերի» վրա: Ամեն դեպքում «մարդկության և քաղաքակրթության դեմ ուղղված հանցագործությունները», որոնք նկարագրված են 1915 թվականի մայիսի 15-ի Համատեղ հոչակագրում, չեն կարող համաներման ենթարկվել, և դրանք անօտարելի են հաշվի առնելով ցեղասպանության և մարդկության դեմ ուղղված այլ հանցագործությունների պարտադիր և անվերապահ բնույթը՝ միջազգային սովորության իրավունքի և պայմանագրային³⁰

³⁰ Ցեղասպանության և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների համար հետապնդման սահմանափակումների մասին տես՝ միջազգային քրեական Դատարանի (1998 թ.) Հռոմի կանոնադրության հոդված 29, որն ունի 122 անդամ պետություն, այդ թվում և Շվեյցարիան, Պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների վաղեմության ժամկետների մասին Կոնվենցիան (1968 թ., 54 անդամ պետություն), Պատերազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների վաղեմության ժամկետների մասին Եվրոպական Կոնվենցիան (1974 թ., 7 անդամ պետություն) և Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից իր՝ 2005 թվականի դեկտեմբերի 16-ին 60/147 որոշման մեջ ընդունված մարդու միջազգային իրավունքների և միջազգային մարդասիրական իրավունքների կրպիտ խախտումների գոհերի իրավական պաշտպանության և վնասի հատուցման իրավունքի վերաբերյալ հիմնական սկզբունքների 6-րդ մասը: ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար Քոֆի Անանը 2004 թվականի օգոստոսի 23-ի՝ «Օրենքի և արդարության գերակայությունը անցումային ժամանակաշրջանում գտնվող, կոնֆլիկտից տուժած կամ կոնֆլիկտից դուրս եկող հասարակություններում» վերնագրով իր գեկույցում առաջարկել է, որ Անվտանգության խորհրդի կողմից ընդունված խաղաղ համաձայնագրերն ու որոշումները և հաստատված մանդատները դատապարտեն համաներում հայտարարելու բոլոր միջոցները ցեղասպանության, պատերազմական և մարդկության դեմ

իրավունքի սահմանված սկզբունքին համապատասխան:

8. Հայոց ցեղասպանության իրականությունը հետագայում ճանաչվել է մի շարք միջազգային կազմակերպությունների կողմից, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի կողմից 1998 թվականի ապրիլի 24-ի հռչակագրում, 51 խորհրդարանների կողմից՝ 2001 թվականի ապրիլի 24-ի հռչակագրում, և 66 խորհրդարանների կողմից՝ 2013 թվականի ապրիլի 24-ի հռչակագրում, 26 խորհրդարանների կողմից ; Եվրախորհրդարանի կողմից իր 1987 թվականի հունիսի 18-ի, 2000 թվականի նոյեմբերի 15-ի, 2002 թվականի փետրվարի 28-ի և 2005 թվականի սեպտեմբերի 28-ի բանաձևերում, ՄԵԻԿՈ-ՍՈԻԲ-ի կողմից (Հարավային ընդհանուր շուկա՝ Հարավային Ամերիկայի պետություններն ընդգրկող կազմակերպություն) 2007 թվականի նոյեմբերի 19-ի իր խորհրդարանական բանաձևում, Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի կողմից իր՝ 2003 թվականի փետրվարի 10-ի անկախ հուշագրում՝ ստեղծված Հայ- թուրքական

հանցագործությունների համար (§ 64 c): Նա կրկնեց այդ առաջարկությունը 2011 թվականի հեկտեմբերի 12-ի իր հաջորդ զեկույցում (§§ 12 և 67): Ցեղասպանության և մարդկության դեմ հանցագործությունների համար համաներում հայտարարելու արգելքի մասին տես նաև՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների Գլխավոր գրասենյակ, Օրինականության գործիքները հետևողականության հասարակություններում, Համաձայնագրում, HR/PUB/09/1, Մարդու իրավունքների կոմիտե, Դաշնագրի (2004 թ. § 18) անդամ պետությունների համար նախատեսված ընդհանուր իրավական պարտավորությունների բնույթի մասին № 31 ընդհանուր դիտարկում, ինչպես նաև միջազգային դատարանների նախադեպեր (Sierra Leone Հատուկ դատարան, *դատախազ v. Morris Kallon* (որոշում No SCSL-2004-15-AR72(E)), դատախազ *Brima Bazzy Kamara* (որոշում No SCSL-2004-16-AR72(E)), վերաքննիչ պալատի որոշման մարտահրավեր նետելու իրավասություն՝ *Lomé Accord Amnesty* (13 մարտ 2004, §§ 67-73) և դատախազ *v. Anto Furundžija* (որոշում No IT-95-17/1-T, 1998 թվականի դեկտեմբերի 10-ի գործ, § 155) ; մարդու իրավունքների միջամերիկյան Դատարան, *Almonacid-Arella No et al. v. Chile* (2006 թվականի սեպտեմբերի 26-ի որոշում, § 114) և *Velásquez-Rodríguez-ի գործը* (1988 թվականի հուլիսի 29-ի որոշում, § 172), և Մարդու իրավունքների միջամերիկյան հանձնաժողով *Alicia Consuelo Herrera et al. v. Argentina* (զեկույց 28/92, 2 հոկտեմբեր 1992), *Santos Mendoza et al. v. Uruguay* (զեկույց 29/92, 2 հոկտեմբեր 1992), *Garay Hermosilla et al. v. Chile* (զեկույց 36/96, 15 հոկտեմբեր 1996), *Las Hojas-ի կոստարիկացի գործը* (c. El Salvador, Ջեկույց 26/92, 24 սեպտեմբեր 1992) և *Ignacio Ellacuría et al. v. El Salvador* (Ջեկույց 136/99, 22 դեկտեմբեր 1999), ինչպես նաև համաներման հետ կապված մարդու իրավունքների Կոնվենցիայի 3-րդ հոդվածով սահմանված խախտումների վերաբերյալ Եվրոպական դատարանի սկզբունքային դիրքորոշումը *Okkali ընդդեմ Թուրքիայի* (No 52067/99, 13 հոկտեմբեր 2006, § 76)) գործով:

հաշտեցման հանձնաժողովի խնդրանքով, Երիտասարդ Մարդկանց Քրիստոնեական Ասոցիացիայի կողմից (ԵՄՔԱ) 2002 թվականի հուլիսի 20-ի իր հռչակագրում, Մարդու իրավունքների լիգայի կողմից՝ 1998 թվականի մայիսի 16-ի իր բանաձևում, Ցեղասպանագետների ասոցիացիայի կողմից՝ 1997 թվականի հունիսի 13-ի իր բանաձևում, Քուրդիստանի խորհրդարանի կողմից՝ 1986 թվականի ապրիլի 24-ի արքունի իր բանաձևում, Հրեական-ամերիկյան կոնգրեսագիտների միության կողմից՝ 1989 թվականի նոյեմբերի 7-ի իր հռչակագրում, Փոքրամասնությունների խտրականության կանխման և պաշտպանության ենթահանձնաժողովի կողմից (Միավորված ազգեր)՝ 1985 թվականի հուլիսի 2-ի իր զեկույցում, Եկեղեցիների համաշխարհային խորհուրդի կողմից՝ 1983 թվականի օգոստոսի 10-ի իր հռչակագրում և ՄԱԿ-ի ռազմական հանցագործությունների հանձնաժողովի կողմից 1948 թվականի մայիսի 28-ի իր զեկույցում:

9. Հայոց ցեղասպանությունը ճանաչվել է նաև բազմաթիվ երկրների ներպետական դատարանների կողմից: Այսպես, ԱՄՆ-ում Ninth Circuit Court-ը 2010 թվականի դեկտեմբերի 10-ի իր որոշման մեջ (գործ *Movsesian v. Victoria Versicherung AG*) ասել է. «չի եղել դաշնային մի քաղաքականություն, որն ուղղակիորեն արգելեր պետություններին կիրառելու «Հայոց ցեղասպանություն» արտահայտությունը, First Circuit Court-ը 2010 թվականի օգոստոսի 11-ի իր որոշման մեջ հաստատել է (գործ *Griswold, et al. v. David P. Driscoll*) “հայերի ցեղասպանության” մասին խոսելու իրավունքը՝ ճանաչված մարդու իրավունքների վերաբերյալ ուսումնական ծրագրերի՝ ուսուցիչների համար նախատեսված ուղեցույցում 2009 թվականի հունիսի 10-ին District Court of Massachusetts-ի կողմից, նույն գործով և District of Columbia Circuit Court-ը իր 1993 թվականի հունվարի 29-ի գործում (գործ *van Krikorian v. Department of State*) ասել է, որ Միացյալ Նահանգների քաղաքականությունը արդեն վաղուց ճանաչում էր հայերի ցեղասպանությունը: Եվրոպայում փարիզյան մի դատարան իր 1995 թվականի հունիսի 1-ի որոշման մեջ դատապարտել է Բերնարդ Լյուիսին՝ Հայոց ցեղասպանությունը հերքելու համար, և որ ավելի կարևոր է, բեռլինյան մի դատարան 1921 թվականի հունիսի 3-ի իր որոշման մեջ արդարացրել է Սողոմոն Թեիլերյանին՝ Օսմանյան Թուրքիայի նախկին եպարքոս Թալեթ Փաշային սպանողին, կոտորածների հետևանքով ժամանակավոր մտազարության համար (որը նա վերապրել է):

10. Վերջապես, Հայոց Ցեղասպանությունը ճանաչվել է հետևյալ պետությունների և տարածքային իշխանությունների կողմից՝ Գերմա-

նիա (Խորհրդարանի բանաձև 15 հունիսի 2005 թ.), Արգենտինա (2004թ. մարտի 14-ի և 2007 թ. հունվարի 15-ի օրենքներ), Բելգիա (Սենատի բանաձև, մարտի 26, 1998), Կանադա (Սենատի 2002 թվականի հունիսի 13-ի բանաձև և Համայնքների պալատի 1996 թ. ապրիլի 23-ի և 2004թ. ապրիլի 21-ի բանաձևեր), Չիլի (2007 թ հունիսի 5-ի Սենատի բանաձև), Կիպրոս (Ներկայացուցիչների պալատի բանաձևերը՝ 24 ապրիլի 1975թ, 29 Ապրիլի 1982թ և 19 Ապրիլի 1990 թ.), Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Ներկայացուցիչների պալատի բանաձևերը, ապրիլի 9, 1975, սեպտեմբեր 12, 1984թ. և հունիսի 11, 1996 թ.³¹), Ֆրանսիա (29 հունվար 2001-ի օրենք³²), Հունաստան (Խորհրդարանի բանաձևը՝ 25 ապրիլ 1996), Իտալիա (Ներկայացուցիչների պալատի բանաձև՝ նոյեմբերի 16, 2000 թ.), Լիբանան (Խորհրդարանի բանաձև, մայիսի 11, 2000 թ. և Պալատի պատգամավորների բանաձև, 3 ապրիլի 1997 թ.), Լիտ-

³¹ 2012 թվականի ապրիլի 24-ին նախագահ Բարաք Օբաման նշել է. «Այսօր մենք նշում ենք Մեծ եղեռնը, XX-րդ դարի ամենասարսափելի վայրագություններից մեկը: Եվ մենք հարգանքի տուրք ենք մատուցում 1.5 միլիոն հայերի հիշատակին, որոնք դաժանաբար կոտորվել կամ մահվան են հասցվել Օսմանյան կայսրության վերջին տարիներին (...) Ես միշտ ասել եմ, թե որն է 1915 թվականի դեպքերի հետ կապված իմ կարծիքը: Այն չի փոխվել»: 2008 թվականի ապրիլի 28-ին նշվել է. «Շատ անհրաժեշտ է ընդունել, որ հայ ժողովրդին հասցրած սարսափելի երևույթները ցեղասպանություն էին»: 1990 թվականի ապրիլի 20-ին նախագահ Ջորջ Բուշն այսպես է արտահայտվել. «[մենք միանում ենք] ամբողջ աշխարհի հայերի սարսափելի կոտորածների [հիշատակին], որ տեղի են ունեցել 1915-ից 1923 թվականները Օսմանյան կայսրության առաջնորդների ձեռքով: Միացյալ Նահանգները արձագանքել են այս մարդկության դեմ հանցագործությանը՝ ջանքեր գործադրելով մասնավոր և դիվանագիտական մակարդակներով նվազեցնելու վնասները»: Նրանից առաջ, 1981 թվականի ապրիլի 22-ին, նախագահ Ռոնալդ Ռեյգանը հայտարարել էր. «Ինչպես դրանից առաջ տեղի ունեցած հայերի ցեղասպանությունը և դրան հաջորդող կամբոջացիների ցեղասպանությունը և ինչպես այլ ժողովուրդների բազում նմանատիպ հետապնդումները, Հոլոքոստը նույնպես պետք է մեզ համար դաս լինի, որը երբեք չի մոռացվի»: Մինչդեռ նախագահ Ջիմի Քարթերը 1978 թվականի մայիսի 16-ին հայտարարել է. «հասարակությունն ընդհանրապես անտեսում է, որ 1916 թվականին նախորդող տարիներին կազմակերպված փորձեր են արվել ամբողջ հայ ժողովուրդին վերացնելու նպատակով, որը կրել է թերևս մարդկությանը հայտնի ամենասարսափելի ողբերգություններից մեկը, և այս գործողությունների վերաբերյալ Նյուրեմբերգյան ոչ մի դատավարություն տեղի չի ունեցել»:

³² Նախագահ Ֆրանսուա Միտերանն ասել է. «հնարավոր չէ կորցնել ցեղասպանության հետքերը, որը ձեզ է հարվածել»: Մինչդեռ նախագահ Շառլ դե Գոլը հայտարարել է. «Ես խոնարհվում եմ ձեր խաղաղ ժողովրդին վերացնելու նպատակով թուրքական կառավարության իրագործած ջարդերի զոհերի առաջ»:

վան (Ասամբլեայի բանաձևը՝ դեկտեմբերի 15, 2005 թ.), Նիդեռլանդներ (խորհրդարանի բանաձևը՝ դեկտեմբերի 21, 2004 թ.), Լեհաստան (խորհրդարանի բանաձև՝ 19 ապրիլ, 2005 թ.), Ռուսաստան (Դումայի բանաձև՝ ապրիլ 14, 1995թ.), Մլովակիա (բանաձև 30 նոյեմբերի, 2004 թ.), Շվեդիա (Խորհրդարանի բանաձև՝ 11 մարտ, 2010թ.), Ուրուգվայ (Սենատի և Ներկայացուցիչների պալատի բանաձև՝ ապրիլ 20, 1965 թ. և օրենք՝ 26 մարտի, 2004 թ.), Վատիկան (Նորին Սրբություն Հռոմի Պապ Հովհաննես Պողոս II-ի եւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Կաթողիկոսի համատեղ հայտարարությունը՝ 10 հունվար, 2000թ.), Վենեսուելա (Ազգային ժողովի որոշում՝ հուլիսի 14, 2005 թ.), Միացյալ Նահանգների 43 նահանգներ, Բասկերի երկիր, Կատալոնիա, Բալեարյան կղզիներ (Իսպանիա), Ուելս, Շոտլանդիա, Հյուսիսային Իռլանդիա (Մեծ Բրիտանիա), Նոր Հարավային Ուելս (Ավստրալիա):

Ցեղասպանության հերքման քրեականացման օրինականությունը

11. Հայոց Ցեղասպանությունը, ճանաչվելով միջազգային հանրության և պատասխանող պետության կողմից, դիմումատուի խոսքի ազատության միջամտությունը եղել է օրինական, քանի որ Հայոց ցեղասպանության հերքման քրեականացումը բավարար չափով սահմանված է եղել շվեյցարական իրավունքում, և քանի որ համապատասխան օրենքի դրույթը սահմանված է ոչ չափ լայն, ոչ անորոշ ձևով:

12. Շվեյցարիայի քրեական օրենսգրքի 261-րդ հոդվածի չորրորդ կետը հարգում է օրինականության սկզբունքը, քանի որ «ցեղասպանություն կամ մարդկության դեմ ուղղված հանցագործություններ» արտահայտության մեջ այն անդրադառնում է միջազգային իրավունքում և Շվեյցարիայի քրեական օրենսգրքում սահմանված հանցագործությունների, և այդ հանցագործությունները բավականաչափ սահմանափակված են շվեյցարական և միջազգային իրավունքով, մասնավորապես Ցեղասպանության մասին Կոնվենցիայով և Միջազգային քրեական դատարանի Կանոնադրությամբ³³: Այս քրեականացումը համապատասխանում է նաև եվրոպական մի ընդհանուր նորմի³⁴: Ավելին՝

³³ Այս կետը սահմանված է Շվեյցարիայի քրեական իրավունքի վերլուծությունների մեջ (Niggli, *Rassendiskriminierung, Ein Kommentar zu Art. 261bis StG und Art. 171c MStG*, 2 Auflage, 2007, No 1363; Vest, *Zur Leugnung des Volkermordes an den Armeniern 1915*, in *AJP* 2000, pp. 66-72; Aubert, *առասպական խորհրդանշանների և Դաշնային Մահմադրության մասին հոդված*, in *AJK*, 9/1994; Dorrit Mettler, *261bis հոդվածի ծանոթություն 63*, in Niggli/Wiprächtiger, *Strafrecht II*, 3 auflage, 2013):

³⁴ Ցեղասպանությունը հերքելու մասին քրեական դրույթներ կարելի է գտնել Անդորրայի քրեական օրենսգրքի հոդված 458-ում, Հայաստանի քրեական օրենսգրքի

Շվեյցարիայի օրենսդրի կողմից ցեղասպանության կամ մարդկության դեմ ուղղված հանցագործությունների մասին դրույթում օգտագործած իրավաբանական տեխնիկական արտառոց չէ, և այն կարող է համեմատվել Շվեյցարիայի քրեական օրենսգրքի 259-րդ հոդվածի դրույթի հետ («հանցագործություն կամ բռնության հրապարակային հրահրում»), որն ընդհանուր կերպով նշում է «հանցագործությունը» իր 1-ին պարբերությունում և ավելի առանձանահատուկ կերպով ցեղասպանության հանցագործությունն իր 1-ին պարբերության ա)-ում: Ավելի կարևոր է Շվեյցարիայի քրեական օրենսգրքի 261-րդ հոդվածի չորրորդ կետը, որը սահմանափակում է ներառում շատ կարևոր սահմանման մեջ, այն է խտրական, այսինքն՝ ռասայի, էթնիկական պատկանելիության կամ կրոնի³⁵ խտրականության դրդապատճառներով ոգեշնչված գոր-

հոդված 397-ի 1-ին մասում, Ավստրիայի՝ նացիոնալ-սոցիալիզմն արգելելու մասին օրենքի հոդված 1-ի 3-րդ մասում (1947 թ., փոփոխված 1992 թվականին), Բելգիայի՝ 1995 թվականի մայիսի 23-ի օրենքի հոդված 1-ում (փոփոխված 1999 թվականին), Չեխիայի քրեական օրենսգրքի հոդված 405-ում, Ֆրանսիայի 1881 թվականի հուլիսի 29-ի օրենքի հոդված 24-ում, որը փոփոխվել է 1990 թվականի հուլիսի 13-ի օրենքով, Գերմանիայի քրեական օրենսգրքի հոդված 130-ի 3-րդ մասում, Հունգարիայի քրեական օրենսգրքի հոդված 269-ի գ)-ում, Խորվաթիայի քրեական օրենսգրքի հոդված 325-ի 4-րդ մասում, Լիխտենշտեյնի քրեական օրենսգրքի հոդված 283-ում, Լիտվայի քրեական օրենսգրքի հոդված 170-ի 2-րդ մասում, Մալթայի քրեական օրենսգրքի հոդված 82-ի Բ-ում, Լյուքսեմբուրգի քրեական օրենսգրքի հոդված 457-ի 3-րդ մասում, Մակեդոնիայի քրեական օրենսգրքի հոդված 407-ի ա)-ում, Մոնտենեգրոյի քրեական օրենսգրքի հոդված 370-ի 2-րդ մասում, Լեհաստանի՝ 1998 թվականի դեկտեմբերի 18-ի՝ Ազգային հիշատակի ինստիտուտի մասին օրենքի հոդված 55-ում, Սլովակիայի քրեական օրենսգրքի հոդված 422-ի դ)-ում, Սլովենիայի քրեական օրենսգրքի հոդված 297-ի 2-րդ մասում, Պորտուգալիայի քրեական օրենսգրքի հոդված 242-ի 2-րդ մասի բ)-ում և 2002 թվականի մարտի 13-ի՝ Ռումինիայի արտակարգ թիվ 31 որոշման 5-րդ և 6-րդ հոդվածներում: Իտալիայի՝ 1967 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 962 օրենքի 8-րդ հոդվածը արգելում է ցեղասպանության արդարացումը: Իսպանիայի քրեական օրենսգրքի արդի տարբերակի 607-րդ հոդվածի 1-ին մասը անդրադառնում է բացառապես ցեղասպանության արդարացմանը: Վերջապես, եվրոպական որոշ պետություններում քրեական հատուկ դրույթ չկա, բայց դատարանները կիրառում են աստվածություն և խտրականություն հրահրելու վերաբերյալ ավելի ընդհանրական դրույթ, մասնավորապես, Նիդերլանդների դեպքում, որտեղ քրեական օրենսգրքի 137 գ և 137 դ հոդվածները կիրառվում են ցեղասպանության հերքման դեպքերում (1987 թվականի հոկտեմբերի 27-ի *Hoog Raad-ի որոշումը*):

³⁵ Շվեյցարական որոշ համալսարանների գտնում են, որ միայն ցեղասպանության հերքումը խախտում է զոհերի հիշատակը, բայց այն նաև ներառում է հետևյալ

ծողությունների հակաիրավական վարքագիծը:

13. Այս եզրակացությունը առավել անհրաժեշտ է Հայոց ցեղասպանությունը հերքելու դեպքում, քանի որ Շվեյցարիայի քրեական օրենսգրքի 261-րդ հոդվածի չորրորդ կետը մեկնաբանված է 2006 թվականի դեկտեմբերի 16-ի՝ Ազգային խորհուրդի հռչակագրին համապատասխան, որը բացարձակապես կասկած չի հարուցում 20-րդ դարում³⁶ Թուրքիայի կողմից հայերի նկատմամբ իրականացված զանգվածային ջարդերի և բռնի տեղահանությունների իրավաբանական որակման վերաբերյալ Շվեյցարիայի և ներպետական իրավունքի պաշտոնական դիրքորոշման առնչությամբ: Բայց այն, որ այս քրեական դրույթը, ինչպես նաև Ազգային խորհուրդի հռչակագիրը հանրային բնույթի էին, և դիմումատուն տեղյակ էր դրանց մասին, ընդունում է հենց ինքը:

Ցեղասպանության հերքման քրեականացման համաչափությունը

14. Բացի օրինականությունից, անհատի խոսքի ազատությանը միջամտությունը արդացված հմարվելու համար պետք է համապատասխանի երկու չափանիշների՝ այն մի կողմից պետք է հետապնդված նպատակի համար անհրաժեշտ լինի, մյուս կողմից՝ համաչափ: Այս երկու չափանիշների առնչությամբ միջամտության հարցն ուսումնասիրելիս Դատարանը պետք է որոշի, թե արդյոք քրեականացման վի-

խտրականության հրահրում (Aubert, précité, No 36 ; Niggli, *Es gibt kein Menschenrecht auf Menschenrechtsverletzung, in Völkermord und Verdrängung*, 1998, p. 87; Niggli/Exquis, *Recht, Geschichte und Politik, in AJP* 4/2005, 436):

³⁶ Իրականում, Դաշնային դատարանը շարունակ սահմանում է ցեղասպանության հերքման մասին դատական նախադեպեր (տես հետևյալ որոշումները՝ 1997 թվականի դեկտեմբերի 5-ի (BGE 123 IV 202), 1998 թվականի ապրիլի 30-ի (BGE 124 IV 121), 1999 թվականի նոյեմբերի 3-ի (BGE 126 IV 20), 2002 թվականի նոյեմբերի 7-ի (BGE 129 IV 95), 2010 թվականի սեպտեմբերի 16-ի (No 6B.297/2010) և 2011 թվականի փետրվարի 24-ի (No 6B 1024/2010)): Այն գտնում է, որ քրեական դրույթը Հոլոքոստից բացի նաև այլ ցեղասպանությունների է վերաբերում, քանի որ այն ընդգրկում է առնչվող բոլոր փաստերը, ըստ «շատ ընդհանուր մի կոնստեուսի», ինչպիսին ցեղասպանությունն է, և որ քրեականացումով պաշտպանված իրավաբանական արժեքները (*geschützte Rechtsgüter*) երկուսն են. մի կողմից դրանք անմիջականորեն վերաբերում են մարդկային արժանապատվությանը և հասարակական անվտանգությանը (*öffentliche Sicherheit*), ինչպես նաև խաղաղությանն ու հասարակական կարգին (*öffentliche Friede*), մյուս կողմից դրանք ոչ անմիջականորեն ներառում են զոհ ժողովրդի յուրաքանչյուր անհատի անվտանգությունն ու արժանապատվությունը: Ինչ վերաբերում է այս կարիքի հետագա հստակեցմանը, այս մեկնաբանությունը չի համարվում կամայական:

ճարկելի շարժառիթներն այդքան զարգացած էին, և արդյոք միջամտությունը համապատասխանում էր սոցիալական հրատապ անհրաժեշտությանը:

15. Ներպետական դտարանների որոշումները պետք է գնահատվեն Կոնվենցիայի 10-րդ հոդվածի համապատասխան բացասական պարտավորությունների տեսանկյունից, որոնք սահմանափակում են պետության հայեցողությունների շրջանակը: Ավելին՝ պետություններն ունեն հանրային տարածքներում քաղաքական բնույթի արտահայտությունների հետ կապված հայեցողությունների նեղ շրջանակի սկզբունք: Ամեն դեպքում, մարդկության պատմության ողբերգական իրադարձությունները կարող են համարվել խոսքի ազատության՝ իշխանությունների կողմից սահմանափակումը արդարացնելու համապատասխան գործոն, որը, այսպիսով, լայնացնում է պետության հայեցողությունների շրջանակը³⁷: Հանուն հիմնավորումների անհրաժեշտության՝ ընդունելով, որ դիմումատուի դիտարկումներն ընկնում են հոդված 10-ի պաշտպանության ներքո, մնում է միայն ասել, որ արտահայտման այդ ձևը այլևս չի կարող պաշտպանության տակ առնվել, երբ հասարակական անկարգության, խախտումների կամ այլոց իրավունքների խախտման վտանգի աղբյուրը պարզ է և անմիջական, օրինակ՝ երբ այն իրականացվում է բռնություն կամ ատելություն³⁸ հրահրելով: Ընդհանուր առմամբ նպատակահարմար է եղել այս գործում լայն հայեցողություններ կիրառել:

16. Ցեղասպանության հերքման քրեականացումը համատեղելի է խոսքի ազատությանը և դա նույնիսկ պահանջվում է մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական համակարգի շրջանակներում: Իրականում Կոնվենցիայի անդամ պետությունները ունեն ռասիզմի, այլատյացության կամ էթնիկական անհանդուրժողականության շարժառիթներով լի ելույթները և հավաքները, ինչպես նաև նման գաղափարների բոլոր այլ ձևերը արգելելու և դրանք պաշտպանող ցանկացած խումբը, ասոցիացիան և կուսակցությունը լուծարելու պարտավորություն: Միջազգային այդ պարտավորությունը պետք է ճանաչվի որպես բոլոր պետությունների համար միջազգային սովորու-

³⁷ Տե՛ս նաև դատավոր Պինտո դե Ալբուքերքի հատուկ կարծիքը *Vona c. Hongrie* գործում (No 40721/08, 24 հուլիսի, 2012թ.):

³⁸ Կարող ենք գտնել հայեցակարգի պարզ ու անմիջական վտանգի ներածությունը դատավոր Պինտո դե Ալբուքերքի հատուկ կարծիքում *Mouvement Raëlien Suisse c. Suisse (GC)* գործով (No 16354/06, 13 հուլիսի, 2012թ.):

թային իրավունքի սկզբունք և որպես իմպերատիվ նորմ, որին ոչ մի ներպետական կամ միջազգային իրավունք չպետք է հակասի³⁹: Եվրոպայի խորհրդի շրջանակներում ցեղասպանության հերքումը համարվում է ռասիզմի, այլատյացության կամ էթնիկական անհանդուրժողականության ձև կամ ատելություն պարունակող ելույթ: Իսկապես, Կիբերհանցագործության մասին կոնվենցիայի Լրացուցիչ արձանագրության 4-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում ցեղասպանության, օրինակ՝ Հոլոքոստի⁴⁰ հերքման համար, ինչպես նաև 1945 թվականի օգոստոսի 8-ի Լոնդոնյան համաձայնագրով ստեղծված Միջազգային ռազմական դատարանի կամ միջազգային փաստաթղթերի հիման վրա ստեղծված որևէ այլ միջազգային դատարանի կողմից, որի իրավասությունը ճանաչվում է անդամ պետության կողմից, վերջնական և պարտադիր որոշումներով ճանաչված ցեղասպանության հանցագործությունը պետք է քրեականացվի⁴¹: Այս պարտավորությունն էլ ավելի ուժեղ է, քանի որ սովյալ գործում հերքված ցեղասպանությունը ճանաչվել է ինչպես Պետության դատարանների կողմից, որում այն կատարվել է, այնպես էլ Պետության մի սահմանադրական մարմնի կողմից, որում տեղի է ունել հերքումը:

³⁹ Տե՛ս նաև դատավոր Պինտո դե Ալբուքերքի հատուկ կարծիքը *Vona c. Hongrie* գործում (No 35943/10, 9 հուլիսի, 2013 թ.):

⁴⁰ STE No 189. Ճիշտ է, պատասխանող պետությունը միմիայն ստորագրել է, այլ ոչ թե վավերացրել Լրացուցիչ արձանագրությունը, սակայն այդ հանգամանքը չի արդարացնում միայն Եվրոպայի խորհրդի նորմերից շեղումը, քանի որ այդ արձանագրությունն արդեն ուժի մեջ է մտել և վավերացվել 20 պետությունների կողմից: Ճիշտ է նաև, որ պետությունները կարող են իրենց իրավունք վերապահել չկիրառելու հոդված 6-ի 1-ին մասը, սակայն այս իրավունքը միայն ցույց է տալիս, որ այս դրույթը դեռևս միջազգային սովորության իրավունքի նորմ չի արտացոլում: Այլ կերպ ասած՝ ցեղասպանությունը հերքելու արգելքը դեռևս չի ներառվել ռասիզմի, այլատյացության և անհանդուրժողականության արտահայտման պարտադիր քրեականացում պահանջող սովորության նորմում: Այնուամենայնիվ կարելի է ասել, որ, գոնե Եվրոպայում, կա միջազգային պարտավորություն՝ քրեականացնելու ցեղասպանության հերքումը, և այդ պարտավորությունը զարգացում է ապրում:

⁴¹ Հստակ լինելու համար Նյուրեմբերգի վարույթների մեղադրյալներից և ոչ մեկը մեղավոր չի ճանաչվել ցեղասպանության հանցագործության համար: Այսպիսով, ցեղասպանության հանցագործության հղումը՝ ճանաչված որպես «Միջազգային ռազմական դատարանի վերջնական և պարտադիր որոշում», իրականում հղում է կատարում ցեղասպանության հանցագործությանը, քանի որ այն այսպիսով ընկալվում է որպես մարդկության օրենքների դեմ հանցագործության տեսակ, և քանի որ այն այնուհետև ամրագրվել է Ցեղասպանության մասին կոնվենցիայում:

17. Ավելին՝ Եվրոպական միության խորհրդի 2008/913/JAI՝ ռասիզմի և այլատյացության որոշ դրսևորումների և ձևերի դեմ պայքարի մասին շրջանակային որոշմամբ՝ քրեական պատասխանատվություն է նախատեսվում Միջազգային քրեական դատարանի Կանոնադրության 6, 7 և 8-րդ հոդվածներով, Միջազգային ռազմական դատարանի խարտիայի 6-րդ հոդվածով սահմանված ցեղասպանության, մարդկության դեմ ուղղված և պատերազմի հանցագործությունների հանրայնորեն արդարացումը, հերքումը կամ կոպտորեն նսեմացումը, երբ վարքագիծն իրականացվում է անձանց խմբի կամ այդ խմբի մի անդամի վերաբերյալ բռնության կամ ատելության հրահրման հավանական վտանգով պայմանավորված նրանց ռասսավ, գույնով, կրոնով, ազգային ծագումով կամ էթնիկական պատկանելությամբ: Շրջանակային որոշումը անդամ պետությունների համար հնարավորություն է նախատեսում՝ հայտարարելու, որ դրա ընդունումից առաջ կամ հետագայում հանցագործությունների վերոշարադրյալ հերքումը կամ խիստ նսեմացումը ենթակա է դատապարտման՝ իրենց ներպետական և/կամ միջազգային դատարանների վերջնական որոշման կամ բացառապես մեկ միջազգային դատարանի վերջնական որոշմամբ:

18. Այսպիսով, մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական համակարգում ցեղասպանության հերքումը վերաբերում է ցեղասպանության այն բոլոր փաստերին, որոնք ճանաչվել են՝ 1) 1945 թվականի օգոստոսի 8-ի Լոնդոնյան համաձայնագրով ստեղծված Միջազգային ռազմական դատարանի կողմից, 2) ցանկացած այլ միջազգային դատարանի կողմից, 3) այն պետության դատարանի կողմից, որում իրականացվել է ցեղասպանությունը, կամ այն պետության, որում տեղի է ունեցել դրա հերքումը, կամ 4) ցանկացած այլ սահմանադրական ատյանի, օրինակ՝ նախագահի, Ազգային ժողովի կամ պետության կառավարության կողմից, որում իրականացվել է ցեղասպանությունը, կամ այն պետության, որում տեղի է ունեցել դրա հերքումը: Ավելին պետությունները նաև կարող են, այդ ոլորտում իրենց հայեցողությունների շրջանակում, քրեականացնել ցեղասպանության հերքումը, 5) երբ կա այդ կամ մեկ այլ պետությունում⁴² իրականացված ցեղասպանության իրականության մասին հասարակական կոնսենսուս, նույնիսկ եթե բացակայում է այդ կամ այլ պետության սահմանադրական

⁴² Դատարանի խոսքերով՝ համապատասխանում է «մի սահմանված պատմական փաստի» (*Lehideux և Isorni c. France*, սեպտեմբերի 23, 1998թ., No 24662/94, § 47, *Recueil* 1998-VII, և *Garaudy c. France (déc.)*, No 65831/01, CEDH 2003-IX):

մարմնի կամ ներպետակ կամ միջազգային դատարանի նախնական հոչակագիրը կամ որոշումը: Այս հինգ դեպքերում բռնություն, ատելություն կամ խտրականություն հրահրելու ձևով հերքված փաստի քրեականացումը համապատասխանում է սոցիալական հրատապ անհրաժեշտությանը:

19. Իսպանիայի սահմանադրական դատարանը տարանջատում է սահմանադրորեն ընդունելի ցեղասպանության հերքումը սահմանադրորեն անընդունելի ցեղասպանության արդարացումից, նվազագույնի հասցնելուց և հարաբերականացումից: Այս *distinguo*-ն ընդունելի է ինչպես Գիբերիանցագործության մասին Կոնվենցիայի Լրացուցիչ արձանագրության, այնպես էլ 2008/913/JHA43 շրջանակային որոշման առումով: Իրականում սովորական հերքման և նվազագույնի հասցնելու կամ արդարացնելու միջև լեզվաբանական տերմիններով տարանջատում մտնելը արհեստական մի բան է և կարող է հեշտությամբ շրջանցվել մի հմուտ հռետորի կողմից էֆեմիստական կամ պատրաստված ելույթի շնորհիվ, ինչպես տվյալ դեպքում, որտեղ ցեղասպանության հերքումն ուղեկցվել է հայկական ենթադրյալ «հարձակումներին» վերաբերյալ թուրքական «արձագանքով»:

Ավելին, ամենակարևոր կետն այն է, որ այս *distinguo*-ն (տարանջատումը) էթնիկորեն կենսունակ չէ, քանի որ ցեղասպանության արդարացումը կամ հերքումը նվաստացնում է գոհերին և նրանց ընտանիքներին, վիրավորում զանգվածային ջարդերի ենթարկված անձանց հիշատակը, արդարացնում ջարդերի հեղինակներին, ինչպես նաև իրենից ատելության և խտրականության լուրջ հրահրում է ներկայաց-

⁴³ Տե՛ս Սահմանադրական դատարանի 2007 թվականի նոյեմբերի 7-ի No 235/2007 գործը՝ չորս խիստ իրարամերժ կարծիքներով: Կարևոր է ընդգծել նախ, որ Իսպանիան դեռևս չի վավերացրել վերը նշված Լրացուցիչ արձանագրությունը, որի համար էլ նա հաշվի չէր առել, որ այդ որոշումը նախորդում է 2008/913/JHA շրջանակի որոշմանը, որը անվավեր է ճանաչել տվյալ տարբերակը: *Abogado del Estado-ն* (Գլխավոր պաշտպան) և *Fiscal General del Estado-ն* (Գլխավոր դատախազ) մեկը մյուսի նման արտահայտել է մեծամասնության հակառակ տեսակետը: Ինչպես ասել է *Abogado del Estado-ն*, ցեղասպանության պարզ հերքում կարող է լինել «Առավել անմիջական հրահրումը» (*impulso directissimo*), ուղղված լուրջ իրավախախտումների կատարմանը, և այդ կանխավարկածը ոչ չանխոհեմ է, ոչ չափազանց, այն պատմական ցավոտ փորձի արդյունք է: Այն նաև, ինչպես նշել է *Fiscal General-ը*, հողը պատմական լուրջ փաստերի «ընդունման և մոռացության կլիմա է» (*un clima de aceptacion y olvido*), որը կարող է բռնության աղբյուր դառնալ:

նում և այդպիսով գոհ⁴⁴ ժողովրդի անդամների հանդեպ խտրական և բռնի գործողությունների ճանապարհ է բացում:

Գիտական հետազոտությունների և տեղեկատվության ազատությունը չէր կարող վկայակոչվել օրինական դարձնելու վիճարկվող *distinguo*-ն հակառակ այն բանի, թե ինչ կարծիքի էր Իսպանիայի սահմանադրական դատարանի դատավորների մեծամասնությունը: Եթե դա այդպես լիներ, անբարեխիղճ բանախոսի համար հեշտ կլիներ ռասիզմին, այլատյացությանը և անհանդուրժողականությանը նպաստելը՝ թաքցվելով պատմական և գիտական⁴⁵ հետազոտության հետևում: Կոպիտ ասած՝ հանդուրժել հերքողականությունը, Wiesel-ի խոսքերով, նշանակում է «երկրորդ անգամ սպանել» զոհերին: Կամ, ինչպես 2006 թվականի ապրիլի 24-ի հռչակագրում այն ձևակերպել է Մարդու իրավունքների թուրքական ասոցիացիան՝ «հերքումն ինքնին ցեղասպանության և դրան հաջորդած ցեղասպանության բաղկացուցիչ մասն է կազմում: Ցեղասպանության հերքումն ինքնին մարդու իրավունքների խախտում է»:

Ցեղասպանության հերքման քրեականացման անհրաժեշտությունը

20. Ֆրանսիայի սահմանադրական խորհուրդը գտել է, որ «ցեղասպանություն հանցագործությունը «ճանաչելու» նպատակ ունեցող օ-

⁴⁴ Այս իմաստով տե՛ս Գերմանիայի դաշնային սահմանադրական դատարանի՝ 1994 թվականի ապրիլի 13-ի (1 BvR 23/94, § 34), 2008 թվականի մարտի 25-ի (1 BvR 1753/03, § 43) և 2011 թվականի նոյեմբերի 9-ի (1 BvR 461/08, § 22) որոշումներն այն փաստի մասին, որ «Auschwitz-ի սուտը» (*Auschwitzlüge*) պաշտպանված չէ խոսքի ազատության իրավունքով: Կանադայի գերագույն դատարանի՝ *R. c. Keegstra* (1996, 3 S.C.R. 667) գործի որոշումը՝ ռասիստական ատելության քարոզի խթանման հանցագործության աճը՝ նախատեսված Կանադայի քրեական օրենսգրքի 319-րդ հոդվածի 2-րդ մասով: Ռասայական խտրականության վերացման հանձնաժողովի 2013 թվականի սեպտեմբերի 26-ի թիվ 35 Ընդհանուր հանձնարարականը (§ 14): Ընդգծվել է, որ Ռասայական խտրականության վերացման հանձնաժողովը չի պահանջում, որ ցեղասպանությունը կամ մարդկության դեմ ուղղված այլ հանցագործությունները սահմանվեն ազգային կամ միջազգային դատարանների վերջնական որոշումներում:

⁴⁵ Գիտական տեղեկատվության տարածումը, որը հիմնվում է բարեխիղճ բանախոսի համապատասխան ասածների վրա, ակնհայտորեն կարող է ցեղասպանության մասին գիտական քննարկման առարկայի պաշտպանության միջոց լինել:

րենսդրական դրույթը չի կարող ինքնին ունենալ օրենքին⁴⁶ վերապահված նորմատիվ նշանակություն»: Այլ կերպ ասած՝ դա անհրաժեշտության սկզբունքի խախտում կլիներ, եթե ցեղասպանություն ստիպված լիներ ճանաչվել օրենսդրի պաշտոնական ակտով: Այս կարծիքը ճիշտ չէ, քանի որ այն ենթադրում է, որ, այսպես կոչված «հիշողության» օրենքների առարկան պատկանում է պատմաբաններին, և որ այս օրենքները այդպես զրկվում են իրավական հետևանքներ ունենալուց (այսինքն՝ նորմատիվ) այն ակնհայտ պատճառով, որ ցեղասպանություն հանցագործության փաստի իրավաբանական որակումը իրավական հետևանքներ ունի ինչպես քրեական իրավունքում, այնպես էլ քաղաքացիականում:

Այն այնուհետև առաջ է քաշել այն հարցը, թե արդյոք հիշողության օրենքները ոտնձգում են դատավորների իրավասությանը և այդպիսով կազմում օրենսդրական իշխանության չարաշահում, որը խախտում է իշխանությունների բաժանման սկզբունքը այն պարզ պատճառով, որ ցեղասպանության փաստի իրավաբանական որակումը չի ենթադրում դրա վերագրումը կոնկրետ անձանց կամ անձանց խմբին. սա դատավորների խնդիրն է: Այս եզրակացությունը վերաբերում է *a fortiori* իշխանության մյուս թևերի անդամների օրինակ՝ պետության ղեկավարի կամ կառավարության կայացրած ցանկանացած պաշտոնական հռչակագրի, որով նրանք պետք է իրականացնեն իրենց սահմանադրական լիազորությունները: Օրենսդիրը, պետության ղեկավարը կամ կառավարությունը կարող են նաև պաշտոնական հռչակագրեր ընդունել, նույնիսկ օրենքներ հաստատել մի փաստի վերաբերյալ, սակայն սա չի ենթադրում, որ նրանք գնահատում են տվյալ⁴⁷ անհատի վարքագծի օրինականությունը կամ անձնական մեղավորությունը:

21. Այնուամենայնիվ, ցեղասպանության հերքման քրեականացումը համապատասխանում է պետական մի քաղաքականության, որն

⁴⁶ Ֆրանսիայի սահմանադրական խորհուրդի, 2012 թվականի փետրվարի 28-ի որոշում:

⁴⁷ 2012 թվականի փետրվարի 28-ի որոշման մեջ Սահմանադրական խորհուրդն ավելացրել է հետևյալը. «օրենսդիր խոսքի և հաղորդակցման ազատությունը կիրառելիս հակասահմանադրական խախտում է թույլ տվել»: Այս համառոտ հայտարարությունը չի բավարարում ապացուցելու, որ տեղի է ունեցել խոսքի ազատության խախտում: Նա անգամ մի բառ չի ասել խոսքի ազատության վիճարկելի սահմանափակման անհրաժեշտության և համաչափության մասին՝ կապված ցեղասպանության հերքման քրեականացմամբ հետապնդած քաղաքական նպատակների հետ:

անհրաժեշտ է լիարժեք իրականացնելու Ցեղասպանության մասին կոնվենցիայի 1-ին հոդվածի տառն ու ոգին, որը պետությունների համար պարտականություն է ստեղծում՝ կանխելու ցեղասպանության հանցագործության կատարումը, և Միավորված ազգերի Գլխավոր ասամբլեայի 2007 թվականի հունվարի 26-ի բանաձևը, որը ՄԱԿ-ի անդամ պետություններին կոչ է անում «անվերապահորեն մերժել Հոլոքոստի՝ որպես պատմական իրադարձության հերքումը, անկախ նրանից այդ հերքումը կլինի լրիվ թե մասնակի կամ այս ուղղությամբ տարված ցանկացած գործողություն»:

Առնվազն Եվրոպայում՝ մայրցամաք, որի հողում 20-րդ դարի ընթացքում արյան գետեր են հոսել՝ իրականացնելու ողջ ժողովուրդների բնաջնջման սարսափելի ծրագրերը, ցեղասպանության հերքումը պետք է դիտվի որպես լքողրեն սպառնացող և ցնցող ելույթ, ինչպես նաև որպես «մարտահրավերի խոսքեր» (fighting words), որոնք արժանի չեն պաշտպանության⁴⁸: Ավելին՝ հայերի ցեղասպանության հերք-

⁴⁸ Ամերիկայի Գերագույն դատարանը դեռևս *Chaplinsky v. New Hampshire* (315 U.S. 568, 1942) գործի ժամանակվանից բազմիցս է անդրադարձել «մարտահրավերի խոսքերի» և «արտահայտիչ վարքագծի» հարցին, որոնք ունեն նույն վիրավորական կամ սպառնացող իմաստը (կազմված, օրինակ, դրոշ սրբապաշտելը կամ խաչ վառելը): *Cohen v. California* (403 U.S. 15, 1971) գործում, նա ընդունել է «Fuck the draft» արտահայտությունը, որը հնչել է Սահմանադրությամբ պաշտպանված ելույթից, քանի որ ոչ մի մասնակցող կամ հավանաբար մասնակցող անհատ չէր կարող ողջամտորեն մտածել, որ բողոքարկողի բաճկոնի վրայի բառերը անմիջական անձնական վիրավորանք էին և չկան ապացույցներ, որ դրանց օգտագործումն իրենց եռությամբ, ամենայն հավանականությամբ, կարող էր բռնի գործողությունների արդյունք դառնալ կամ բռնություն հրահրել. նա, հետևաբար, գտել է, որ դա չէր վերաբերում հակասահմանադրական «մարտահրավերի խոսքերի»:

Street v. New York (394 U.S. 576, 1969) գործում Գերագույն դատարանը գտել, որ դրոշի դեմ հնչած դիտարկումները, լինելով հասարակ փաստ, ցնցող էին, այլևս թույլ չէին տալիս դրանք որպես «մարտահրավերի խոսքեր» որակել: Նա նույն եզրակացությանն է եկել դրոշը վառելու արտահայտիչ վարքագծի առումով՝ գտնելով, որ նման վարքագիծը միշտ չի անօրինական գործողության անմիջական սպառնալիք հանդիսացել՝ ըստ Բրանդեբերգի չափանիշի (*Texas v. Johnson*, 491 U.S. 397, 1989): *R.A.V. v. City of St. Paul* (505 U.S. 377, 1992) գործում նա հակասահմանադրական է ճանաչել խաչը վառելու կամ հանրային կամ մասնավոր սեփականության վրա նացիստական սվաստիկա կամ ցանկացած այլ խորհրդանիշ տեղադրելու գործողությունները, որոնք գիտեն կամ ողջամիտ դրոշապատճառների ուժով թույլ են տալիս մտածելու, որ դրանք զայրույթ, վախ կամ վրդովմունք են առաջացնում այլոց նկատմամբ՝ կախված իրենց ազգությունից, գույնից, դավանանքից, կրոնից կամ սեռից, քանի որ նա գտնում է, որ այս քրեականացումը չափազանց մեծ էր՝ ար-

ման տվյալ դեպքում կա լրացուցիչ հրատապ անհրաժեշտություն՝ խոչընդոտելու ատելությանը և խտրականությանը, որոնք երբեմն ուղղվում են հայերի նկատմամբ, ովքեր որոշ երկրներում խոցելի փոքրամասնություն են կազմում, և որոնք, ինչպես մյուս խոցելի փոքրամասնությունները, անհրաժեշտության դեպքում քրեական⁴⁹ դրույթների միջոցով պետք է օգտվեն հատուկ ուշադրությունից և պաշտպանությունից:

22. Ինչպես նշել է Դատարանը *Garaudy*-ի գործում, մեղադրել գոհերին պատմությունը խեղաթյուրելու մեջ, ինքնին «նրանց հանդեպ

գելելով նաև «մարտահրավերի խոսքերը», որ ելույթները պաշտպանված են, և քանի որ կասկածի տակ առնված դրույթները հիմնված էին այն հաղորդագրության բովանդակության վրա, որը չէր արգելում այն վարքագիծը, որը տարբեր թեմաների շուրջ հաղորդագրություններ էր տարածում: Այնուամենայնիվ, *Virginia v. Black* (538 U.S. 343, 2003) գործում նա գրեթե հակադարձող նախադեպ է իրականացրել՝ գտնելով, որ նրանք, ովքեր խաչեր էին վառում, կարող էին պատժվել քրեական հացագործություն կատարելու համար, եթե իրոնց վարքագիծը ահաբեկման անմիջական ազդանշան է եղել, և պետությունը ապացուցել է ահաբեկելու մտադրությունը:

Նա, այնուամենայնիվ, գտել է, որ ցանկացած դեպքում ապացուցման բեռը չպետք է ընկեր մեղադրյալի վրա, որ նա չպետք է պարտավոր լիներ ցույց տալու, որ նա խաչը վառելիս մտադիր չէր ահաբեկելու որևէ մեկին: Իր չհամընկնող կարծիքում դատավոր Թոմասը ավելի հեռուն էր գնացել՝ բացատրելով, որ խաչ վառելու փաստը միշտ այս կամ այն ձևով սպառնալիք է եղել, և որ այդ գործողությունը, հետևաբար, ըստ նրա, պաշտպանված չի եղել առաջին փոփոխությամբ: Հետևաբար, կարող ենք ասել, որ մի նյութական տեսանկյունից Եվեյցարիայի դաշնային դատարանի ցեղասպանության հերքման մասին կարծիքը համընկնում էր Ամերիկայի Գերագույն դատարանի *Virginia v. Black* գործում մեծամասնության կարծիքին այնպես, ինչպես Կանդայի Գերագույն դատարանինը *R. v. Keegstra* գործում:

⁴⁹ Տե՛ս հայերի մտահոգիչ իրավիճակը Թուրքիայի մասին ECRI-ի չորրորդ զեկույցում (2011, §§ 90-91 և 142), Ադրբեջանի մասին ECRI-ի երրորդ զեկույցում (2011, § 101), Վրաստանի մասին ECRI-ի երրորդ զեկույցում (2010, § 74) և Թուրքիայի մասին ECRI-ի երրորդ զեկույցում (2005, §§ 35 և 89-93): Հետևաբար մենք համաձայն չենք մեծամասնության պատճառաբանության հիմքում ընկած կանխավարկածի հետ, որը մտածել է տալիս, որ քրեական օրենքի պաշտպանության անհրաժեշտությունը ժամանակի ընթացում նվազել է: Ցեղասպանության հերքման քրեականացման անհրաժեշտության այս ասպեկտը անտեսվել է թե՛ Ֆրանսիայի սահմանադրական խորհրդի, թե՛ Իսպանիայի սահմանադրական դատարանի կողմից, բայց ոչ տարասկարծիք դատավորների և Գլխավոր դատախազի կողմից, ով գտել է, որ Եվրոպայում ռասիստական և այլատյացության շարժումների հաստատականությունը բավարար դրոշապատճառ էր ցեղասպանության հերքման քրեականացումն արդարացնելու համար:

ռասայական գրպարության և ատելության հրահրման ամենատար ձևերից է» և հետևաբար «հասարական կարգը լքողներն խախտելու բնույթի է» և վնասում է այլոց⁵⁰ իրավունքները: Այս դիտարկումը պետք է կիրառվի նաև հայերի նկատմամբ: Հայերի Օսմանյան կայսրության ցեղասպան քաղաքականության արդյունքում կրած տառապանքները պակաս չեն նացիստական ցեղասպան քաղաքականության արդյունքում հրեաների կրածից: Եվ Hayots Tseghaspanutyun (Հայոց Ցեղասպանության) կամ Meds Yeghern (Մեծ Եղեռնի) հերքումը պակաս վտանգավոր չէ Shoah-ի հերքումից:

23. Եվրոպական չափորոշիչների կիրառումը գործի փաստերի նկատմամբ

Ցեղասպանության հերքման քրեականացումը կազմող փաստերը ապացուցված են՝ կապված ինչպես actus reus-ի, այնպես էլ mens rea-ի հետ: Ինչ վերաբերում է actus reus-ին, դիմումատուին հրապարակավ հերքել Հայոց ցեղասպանությունը՝ այն որակելով «միջազգային սուտ», նա մեղադրել է հայ ժողովրդին Թուրքիայի վրա հարձակվելու մեջ, և նա համաձայնել է Մեծ եպարքոս Թալեաթ Փաշայի գաղափարներին,

⁵⁰ Վերոհիշյալ *Garaudy* և Մարդու իրավունքների հանձնաժողովի առջև *Robert Faurisson c. France*, ծանուցում No 550/1993, նոյեմբերի 8, 1996 թ.: Այսպիսով, Մարդու իրավունքների հանձնաժողովի թիվ 34 ընդհանուր հետազոտության 49-րդ պարբերությունում չի արտացոլվում ոչ Մարդու իրավունքների հանձնաժողովի ավելի վաղ դատական պրակտիկան, ոչ Դատարանի համապատասխան դատական պրակտիկան: Ավելին՝ այն չի վերաբերում անցյալում իրականացրած հանցագործության հիմնավորմանը կամ ներմանը, որն անտարակույս քրեական պատիժ է առաջացնում: Վերջապես, այն ուղղված է միայն «սխալ կարծիքի արտահայտմանը» և «անցյալի իրադարձությունների սխալ մեկնաբանմանը»: Այդ արտահայտությունները ոչ միանշանակ են և ապակողմնորոշող: Անշուշտ, Հանձնաժողովը դրանում «հանցագործության գոյության վերաբերյալ միտումնավոր կեղծ հայտարարություններ» ներառելու մտադրություն չի ունեցել, շատ ավելի քիչ է եղել վատթարագույն հանցագործությունների, ցեղասպանության գոյության վերաբերյալ միտումնավոր կեղծ հայտարարություններինը: Եթե դա այդպես լիներ, նա նաև կձանաչեր անպատիվ սպանության կամ այդ գործողությունների հիմնավորումն ու ներումը կապված խոսքի ազատության ելույթի ներքո Հոլոքոստի դիտավորյալ հերքման հետ: Այս կետը պետք է ցավալի ձևակերպում լինի, քանի դեռ այն չի վերանայվել, խստորեն մեկնաբանվել կամ համապատասխանացվել Մարդու քաղաքացիական և քաղաքական իրավունքների վերաբերյալ միջազգային դաշնագրի 19-րդ հոդվածի 3-րդ մասին և 20-րդ հոդվածին: Սա, ի դեպ, հենց այն է, ինչ արել է Հանձնաժողովն իր վերոհիշյալ թիվ 35 ընդհանուր հանձնարարականում՝ վերացնելու ռասայական խտրականությունը:

որը 1919 թվականին մի թուրքական ռազմական դատարանի կողմից մեղավոր է ճանաչվել հայ ժողովրդի «զանգվածային ջարդերի» մեջ:

Այս խոսքերը օբյեկտիվորեն չեն նպաստել այս հարցին վերաբերող հանրային և ժողովրդավարական ելույթին, ընդհակառակը դրանք անհանդուրժողականության և ատելության լուրջ հրահրումներ են ուղղված խոցելի մի փոքրամասնության: Իրականում դիմումատուին որևէ ապացույց չի ներկայացրել կամ վերլուծել վայրագությունների և դրանց նպատակների վերաբերյալ, նա նույնիսկ հայտարարել է, որ երբեք չի ընդունի Հայոց Ցեղասպանության գոյությունը, նույնիսկ եթե գիտական մի չեզոք հանձնաժողով օրերից մի օր հաստատի այն:

24. Ինչ վերաբերում է mens rea-ին, իրավասու ներպետական դատարանները հաստատել են, որ դիմումատուին «ռասիստական և ազգայնական» շարժառիթներով է ներշնչված եղել (գործի 52-րդ պարբերություն): Նրանք ոչ մի գիտական, պատմական կամ քաղաքական նպատակ չեն գտել իր ելույթում: Այդպես գործելով՝ դիմումատուին բազմիցս ցույց է տվել և գիտակցաբար անտեսել այն իրավական դաշտը, որը գոյություն ուներ մի օտար երկրում, որտեղ նա գնացել էր իր հայտարարությունն կանխամտածված ձևով անելու նպատակով, ինչպես նաև մարտահրավեր նետելու ներպետական իրավունքին: Օսմանյան ռեժիմը մաքրագրվելու համար նա, դրա ցեղասպան քաղաքականությունը հերքելով և արդարացնելով, իր կատարած հայտարարություններով ավելացրել է անհանդուրժողականության, խտրականության և բռնության հիմքերը:

25. Դիմումատուի փաստացի շարժառիթը այն տարրն է, որը կարող էր սահմանվել միայն ներպետական դատական ատյանի կողմից, որն էլ հավաքել էր ապացույցները և լսել նրան: Դատարանը փաստի հիման վրա սահմանել էր, որ նա ներշնչված է եղել «ռասիստական»⁵¹ շարժառիթով, նա չէր կարող փոխել այս փաստը: Մակայն այդ փաստը չափազանց կարևոր է: Նա ցույց է տալիս, որ դիմումատուին ուներ ոչ

⁵¹ Հետևապես մենք չենք կարող հանգել 52-րդ պարբերությունում մեծամասնության արտահայտած կարծիքին, քանի որ այն ասում է, որ «չի երևում, որ դիմումատուին արհամարհանք է արտահայտել իրադարձությունների գոհերի նկատմամբ»: Այս հայտարարությունը ոչ միայն չի վերաբերում որևէ ապացուցված տարրի, այլև հակասում է ներպետական դատարանների սահմանած փաստերին: Մեծամասնությունը այստեղ իրեն դրսևորում է որպես փորձնական դատարան՝ վերագնահատելով դիմումատուի մտադրությունը, մինչդեռ նա անձամբ նրան հարցաքննելու և լսելու առիթ չի ունեցել:

միայն Հայոց ցեղասպանությունը հերքելու, այլև զոհերին և աշխարհին պատմությունը խեղաթյուրելու մեջ մեղադրելու, հայերին հարձակվողներ համարելու և Օսմանյան Թուրքիայի ցեղասպանական քաղաքականությունը արդարացնելու մտադրություն՝ այն ներկայացնելով որպես օրինական պաշտպանության ակտ, նվազագույնի հասցնելու հայ ժողովրդին Թուրքիայի կողմից պատճառված վայրագություններն ու տառապանքը և զրպարտելու ու վիրավորելու Շվեյցարիայի և աշխարհի հայերին միտումնավոր ատելության և «ռասիստական» խոսքերով: «Միջազգային սուտի» մասին արտահայտությունները, որոնք նա օգտագործել է, ակնհայտորեն անցել են խոսքի ազատության թույլատրելի սահմանները, քանի որ դրանք գալիս էին սուտասան⁵² զոհերին բուժելու: Այս առումով դիմումատուն գործել է նույն անընդունելի *dolus*-ով, որը արել էր պրն Գարոդին: Նա նույնիսկ հանդես է եկել շատ ավելի զզվելի կերպով՝ ինքն իրեն կոչելով այն անձի անունով՝ որը, ըստ թուրքական իրավասու ռազմական դատարանների, հրահրել է Հայոց ցեղասպանությունը՝ Թալեաթ Փաշա⁵³:

26. Հաշվի առնելով, որ փաստերը հստակ սահմանված են ներպետական դատարանների կողմից, և որ ցեղասպանության հերքումը քրեականացնող դրույթներն օրինական են, համաչափ հետապնդած

⁵² Տե՛ս դատախազի առջև դիմումատուի կատարած հայտարարությունները (23 հուլիսի, 2005թ.), քննող դատավորը (20 սեպտեմբերի, 2005թ.) և ոստիկանական դատարանը (8 մարտի, 2007թ.), որոնք առկա են գործի նյութերում: 1999 թվականի ապրիլի 20-ի *Witzsch c. Allemagne* որոշման մեջ (No 41448/98) Դատարանը գտել է, որ «պատմական ստերը» արտահայտությունը, որը վերաբերում էր նացիստների կողմից իրականացված զանգվածային կոտորածներին, պաշտպանված չէր 10-րդ հոդվածով: Նա հաստատել է այս հիմնավորումը *Schimanek c. Autriche* (No 32307/96, 1 փետրվարի, 2000 թ.) և *Witzsch c. Allemagne* 13 դեկտեմբերի, 2005թ. (No 7485/03) որոշումներում:

⁵³ Այս կարևոր փաստը ընդգծվել է նաև Դաշնային դատարանի (2007 թվականի դեկտեմբերի 12-ի որոշման 5.2 կետ), ինչպես նաև պատասխանող կառավարության կողմից Դատարանում կատարած իր դիտարկումներ մեջ (§ 25): Հետևաբար մենք չենք կարող ընդունել այս փաստարկը, որը պնդում է, թե դիմումատուի հայտարարությունների առարկան եղել է հարցականի տակ գտնվող իրադարձությունների իրավաբանական որակումը, այլ ոչ թե ինքնին այդ իրադարձությունները: Այս փաստարկը հակասում է ընդհանուր իմաստին: Դիմումատուն ոչ միայն վիճարկել է փաստերի իրավաբանական որակումը, այլև հայերի զանգվածային ջարդերը նույն հարթության վրա է դրել թուրքերի կողմից պատերազմի ենթարկվածների կորուստների հետ և արդարացրել է Թալեաթ Փաշայի ցեղասպան քաղաքականությունը՝ այն հայերի ագրեսիայի դեմ պաշտպանվելու օրինական ակտ դիտելով:

նպատակներին և անհրաժեշտ այն սկզբունքների առումով, որոնք սահմանվել են Եվրոպայի խորհրդի, Եվրոպական Միության, Ռասայական խտրականությունը վերացնելու Հանձնաժողովի, Գերմանիայի սահմանադրական դատարանի և Միացյալ Նահանգների ու Կանադայի Գերագույն դատարանների կողմից, հարցը, որ մնում է, դիմումատուի հանդեպ կիրառած սանկցիայի համաչափության մեջ է, որը, հաշվի առնելով հանրային շահի լույսի ներքո հանրային քաղաքական հանդիպման շրջանակներում կատարած իր ելույթում խոսքի ազատությունը՝ պնդում էր, որ պետք է որոշվեր, թե արդյոք, ինչպես ինքն էր պնդում, իր պատիժը չափազանցված էր:

27. Քաղաքակիրթ աշխարհում չկա հանրային շահ՝ ուղղված պաշտպանելու այն հայտարարությունները, որոնք նսեմացնում և նվաստացնում են հանցագործությունների զոհերին, արդարացնում կամ իրենց նույնացնում են հանցագործների հետ և ատելություն ու խտրականություն հրահրում, նույնիսկ եթե այդ սարսափելի հանցագործություններին վերաբերող հայտարարությունները տեղի են ունեցել 70 (հրեաների ցեղասպանությունը) կամ 90 (հայերի ցեղասպանությունը) տարի առաջ: Բացի դրանից, քրեական քաղաքականության նպատակները, որոնք հետապնդում էին պատասխանող պետության դատարանները, որտեղ նրանք քրեականացրել էին Հայոց ցեղասպանության հերքումը, ի դեմս դիմումատուի «սադրանքի» հասարակական կարգի խախտման, կանխում է՝ ուղղված Դաշնային դատարանի տերմինի օգտագործմանը և զոհերի ու ընդհանրապես հայ ժողովրդի արժանապատվությունն ու պատիվը պաշտպանելուն: Մրանք Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասին առնչվող խոսքի ազատության սահմանափակման համապատասխան գործոններն են: Ի հավասարակշռում համաչափության փորձի բոլոր համապատասխան գործոնների նժարը ակնհայտորեն հօգուտ պետության միջամտության նպատակին է և ոչ թե տարածաժամանակային⁵⁴ տարրինը: Այսպիսով, այն շարժառիթները, որոնց վրա հիմնվում էր վիճարկվող դատապարտումը, միա-

⁵⁴ Այն փաստը, որ քաղաքական քննարկման կամ քաղաքական հանդիպման շրջանակներում ելույթ է տեղի ունեցել, անկասկած չի ազդում դրա ռասիստական կամ խտրական բնույթի վրա: Տե՛ս դատավոր Պինտո դե Ալբուքերքի առանձնացված կարծիքը վերոհիշյալ *Vona c. Hongrie* գործով, ինչպես նաև *Féret c. Belgique* գործը (No 15615/07, §§ 75-76, 2009 թվականի հուլիսի 16) և Ռասայական խտրականության վերացման հանձնաժողովի առջև No° 34/2004 (§ 7.5), 43/2008, (§ 7.6) et 48/2010 (§ 8.4) ծանուցումը:

Ժամանակ տեղին և բավարար էին, և պետության միջամտությունն իսկապես համապատասխանում էր սոցիալական հրատապ անհրաժեշտությանը:

28. Վերջապես, պատիժը փաստերի ծանրության առումով բացարձակապես անհամաչափ չէ: Դիմումատուն դատապարտվել է երկու տուգանքի՝ 90-օրյա պայմանական տուգանք և 2500 եվրո տուգանք կամ դրան փոխարինող 30-օրյա ազատազրկում: Նա ազատազրկման չի դատապարտվել, մինչդեռ այն հանցագործության համար, որում նա մեղավոր է ճանաչվել, նախատեսված էր 30 տաի ազատազրկում: Շվեյցարիայում նա ոչ կալանավորվել է, ոչ բանտարկվել, շվեյցարական դատարանները այս գործում զգալի զսպվածություն են ցուցաբերել:

Եզրափակում

1949 թվականին CBS-ին տրված և համացանցում հասանելի իր հարցազրույցում Ռաֆայել Լեմկինը, ով «ցեղասպանություն» տերմինի հեղինակն է և Ցեղասպանության մասին կոնվենցիան քաջալերողը, ասել է հետևյալը. «Ես սկսել եմ հետաքրքրվել ցեղասպանությամբ, քանի որ այն տեղի է ունեցել հայերի հետ, և քանի որ նրանց ճակատագիրը լիովին անտեսվել էր Վերսալի գիտաժողովին. նրանց դահիճները մեղավոր էին ցեղասպանության մեջ, բայց նրանք չեն պատժվել»: Արդեն բազմաթիվ տասնամյակներ Թուրքիայում հայերի ծրագրված զանգվածային սպանությունները, սիստեմատիկ խոշտանգումները և կազմակերպված տեղահանությունները և քրիստոնեության կանխամտածված վերացումը, որոնք տեղի են ունեցել 20-րդ դարի սկզբին, համարվում են «մոռացված ցեղասպանություն»: Մակայն այս կարծիքի հեղինակները դա չեն մոռանում: Այսպիսով, մենք գտնում ենք, որ ցեղասպանության հերքման քրեականացումը և դիմումատուի նկատմամբ սահմանված պատիժը, լիովին համապատասխանելով պատասխանող պետությունում գործող Հայոց ցեղասպանության գոյությունը հերքելու համար նախատեսված օրենքին, չեն խախտել Կոնվենցիայի 10-րդ հոդվածը:

Վ. Քոչարյան
Հայոց ցեղասպանությունը միջազգային
իրավական փաստաթղթերում

Vigen Kocharyan
Armenian Genocide in International Legal Documents

Виген Кочарян
Геноцид армян в международно-правовых документах

Խմբագիր՝ Լ. Ավետիսյան
Թարգմանիչ՝ Ա. Մայադյան
ձևավորում՝ Ա. Պետրոսյան

Տպագրված է ԼԻՄՈՒՇ ՄՊՀ-ի կողմից
Տպաքանակը՝ 250 օրինակ: